ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ им. МАШТОЦА
ПРИ СОВЕТЕ МИНИСТРОВ АРМЯНСКОЙ ССР

# НЕРСЕС ШНОРАЛИ

## ПЕСНИ И ГАНДЗЫ

Подготовка текста,
предисловие и комментарии
АРМИНЕ КЕШКЕРЯН

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1987

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ

## ՏԱՂԵՐ ԵՎ ԳԱՆՁԵՐ

Աշխատասիրությամբ
ԱՐՄԻՆԵ ՔՅՈՇԿԵՐՅԱՆԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1987

ԳՄԴ 84 Հ1—5
Ն 630

Տպագրվում է Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
բանասիրական գիտությունների թեկնածու
Պ. Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել
գրախոսներ՝ արվեստագիտության դոկտոր
Ն. Կ. ԹԱՀՄԻԶՅԱՆԸ
և բանասիրական գիտությունների թեկնածու
Պ. Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

Ներսես Շնորհալի։
Ն 630 Տաղեր և գանձեր /Ներսես Շնորհալի; Աշխատասիրությամբ Ա. Քյոշկերյանի; [Պատ. խմբ.՝ Պ. Մ. Խաչատրյան]; Մատենադարան—ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Մաշտոցի անվ. հին ձեռագրերի ին-տ.—Եր.։ ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987. 447 էջ, 2 թերթ նկ.

Գիրքն ընդգրկում է Ներսես Շնորհալու գանձարանային բանաստեղծությունները (տաղեր և գանձեր) գիտաքննական բնագրերով՝ լրացված շուրջ չորս տասնյակ նորահայտ միավորներով։ Բնագրերի համար օգտագործված են Մաշտոցի անվան Մատենադարանի և արտասահմանյան ձեռագրական հավաքածուների հնագույն և լավագույն ընդօրինակությունները։ Աշխատությունն ունի ներածություն և ծանոթագրություններ։

Գիրքը նախատեսված է հայ հին գրականության մասնագետների և բանասերների համար։

Ն 4702080000 / 703(02)—87 113—87

ԳՄԴ 84 Հ1—5

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1987



Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 591, թերթ 3ր (1352 թ.)

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## Ա

Անիի գրավումով և Բագրատունյաց թագավորության անկումով Հայաստանի զգալի մասն անցել էր Բյուզանդիայի տիրապետության տակ: Նվաճված երկրամասերը վերածվել էին բյուզանդական նահանգի ու կառավարվում էին Կայսրության կողմից նշանակված պաշտոնյաներով: Այդ տարիներին մեծ չափերի հասավ ժողովրդի գաղթը դեպի Փոքր Ասիա և Բալկանյան երկրներ, որի շնորհիվ հայացան «բուն հայկական այն շրջանները (Փոքր Հայք), որոնք հռոմեական և բյուզանդական, ապա և արաբական երկարատև տիրապետության հետևանքով սկսել էին կորցնել իրենց ազգային դեմքն ու նկարագիրը: Այդ գաղթեցումներով նախապայմաններ ստեղծվեցին նաև Կիլիկիայում հայ տարրի ուժեղացման համար»[1]:

Կիլիկիան Առաջավոր Ասիայի երկրներից է, ուր միջին դարերում ապրում էին հայեր, հույներ, ասորիներ, հրեաներ ու արաբներ: Հայերն այնտեղ բնակություն էին հաստատել շատ վաղ ժամանակներից: Սելջուկ թուրքերի հրոսակային ասպատակությունները և Մեծ Հայքում տիրող քաղաքական անապահովությունն ու տնտեսական քայքայումը ավելի ուժեղացրին արդեն սկսված զանգվածային արտագաղթը դեպի Կիլիկիա, ուր Ժ—ԺԱ դարերում հայերը ձեռք բերին թվական բացարձակ գերակշռություն և քաղաքականապես այնքան հզորացան, մինչև որ հասան պետական անկախության: ԺԱ դարի քառասնական թվականներին այստեղ կային մի շարք մանր իշխանություններ. դրանցից առավել աչքի ընկավ Ռուբինյան իշխանությունը, որը կարողացավ դիմակայել ծանր փորձություններին ու տոկալ թշնամիների դեմ մղվող ծանր, երկարատև պայքարին: Ի վերջո, 1080 թվականին Ռուբեն իշխանին հաջողվեց Լեռնային Կիլիկիայում ապ-

---

1 *«Հայ ժողովրդի պատմություն», հ. 3, Երևան, 1976, էջ 431։*

րող հայերին համախմբելով՝ թոթափել Բյուզանդիայի լուծը և հիմք դնել Ռուբինյան իշխանությանը Կիլիկիայում: Մեկ հարյուրամյակ հետո, 1198 թվականին, Լևոն Բ-ի օրոք իշխանությունը դարձավ թագավորություն:

Շուրջ երեք հարյուր տարի գոյատևած (1080—1375 թթ.) այդ պետականությունը հայ ժողովրդի պատմության կարևոր ու խիստ հետաքրքրական մի ժամանակահատված է, որն աչքի ընկավ քաղաքական փոթորկալի իրադարձություններով: Ծնունդ առնելով Լեռնային Կիլիկիայում, այն շատ շուտով նվաճեց նաև երկրի դաշտային մասը ու հասավ մինչև Միջերկրականի ափերը և կարճ ժամանակում ձեռք բերեց քաղաքական ու տնտեսական հզորություն: Հայերի նորաստեղծ պետության ամրապնդմանը նպաստեցին, անշուշտ, երկրի աշխարհագրական հիանալի դիրքն ու Մերձավոր արևելքում ԺԱ—ԺԲ դարերում տեղի ունեցող դեպքերը: Տավրոսյան ու Ամանոսյան լեռնաշղթաներն իրենց անանցանելի կիրճերով բնական ամուր պատվար էին ստեղծել ու պահպանում էին երկրի հյուսիսային, արևմտյան և հարավարևելյան սահմանները: Մայրաքաղաքն էր Սիսը, որի անունով երկիրը կոչվեց նաև «Սիսուան»[2]: Խոշոր քաղաքներից էին Տարսոնը, Ադանան, Մամեստիան, Անարզաբան, իսկ Միջերկրականի ափին ծաղկում էին Այաս ու Կոռիկոս նավահանգիստները, որոնք Կիլիկիան կապում էին Եվրոպայի ու հեռավոր այլ երկրների հետ: Պետության տարածքը, բացի բուն Կիլիկիայից, ընդգրկում էր սահմանակից այլ շրջաններ: ԺԱ դարի ութսունական թվականներին արևելյան մասում հայտնի էր Գող Վասիլի իշխանական տունը, որի կենտրոնն էր Քեսունը: Բյուզանդացիների, սելջուկների, ավելի ուշ՝ խաչակիրների հաճախակի հարձակումներից աստիճանաբար կործանվեցին իշխանական տները, այնուհանդերձ նրանց տիրույթները շարունակեցին գոյատևել իբրև հայաբնակ գաղթավայրեր, ինչպիսիք էին, օրինակ, Ծուղրը, Կարկառը, Տլուքը, Ծովքը և այլն:

---

[2] *Այս անունով է կնքել Կիլիկիան Ղ. Ալիշանը, որն իր համանուն գրքում վկայակոչելով Գրիգոր Տղա կաթողիկոսին՝ գրում է. «Կաթողիկոս մեր Գրիգոր Տղայ թերևս առ ի լնուլ զժամանակ չափական բանիցն, յերկարելով զփոքրիկ անունն [իմա՝ Սիս]* գրէ Սիսուան.

*— Ապա ընդ լեառըն Տաւրոսին՝*
*Մըտին յաշխարհըն Սիսուանին։*

*Յայս անուն նուիրական համարեալ և՛ ի կաթողիկոսէն մեծէ, և՛ ի շնորհաց Սսոյ՝ կնքեցի և ես զտեղագրութիւնս» (տե՛ս Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 59)։*



Կիլիկյան պետության հզորացմանը նպաստեցին մի շարք քաղաքական հանգամանքներ՝ Արաբական խալիֆայության վերջնական քայքայումը, սելջուկյան երբեմնի հսկա տերության տրոհումը մանր իշխանությունների, նաև Բյուզանդական կայսրության թուլացումը: Վերջինս, վախենալով հայերի հետզհետե աճող հզորությունից ու ջանալով վերականգնել իր կորցրած գերիշխանությունը, սկսեց պայքար մղել գաղափարական ճակատով՝ հարուցելով կրոնադավանաբանական խնդիրներ ու ծավալելով հայերին քաղկեդոնական դարձնելու եռանդուն գործունեություն: Մյուս կողմից, եկեղեցիների միաձուլման փորձ էր կատարում նաև Հռոմի պապը: Իր գոյության հենց սկզբից Կիլիկյան հայկական իշխանությունը ստիպված եղավ բախվել մի նոր թշնամու՝ Իկոնիայի մահմեդական սուլթանության հետ, որն ասպատակ էր իջել երկրի սահմանների մոտ ու սպառնում էր նրա քաղաքական անկախությանը: Նույնքան ու թերևս ավելի լուրջ վտանգ էին ներկայացնում խաչակիրները, որոնք, Երուսաղեմն ազատագրելու պատրվակի տակ, ԺԱ դ. վերջերին թափանցեցին Արևելք՝ այն նվաճելու ու կողոպտելու: Այսպիսի բարդ իրադրության պայմաններում հայ իշխանները, մասնավորապես Ռուբինյանները, իրենց դրսևորեցին իբրև խելամիտ քաղաքական գործիչներ ու ճշմարիտ հայրենասերներ: Պակաս կարևոր դեր չխաղացին ազգային ինքնուրույնության պահպանման նախանձախնդիրները գաղափարական ճակատում ծավալվող պայքարում: Այս բնագավառում իրենց նուրբ դիվանագիտությամբ աչքի ընկան Ներսես Շնորհալին, Գրիգոր Տղան, Ներսես Լամբրոնացին և ուրիշներ:

Մեծ Հայքում միասնական պետականության վերացումից հետո կրթական-լուսավորական կյանքը կենտրոնացել էր երկրի համեմատաբար քիչ ավերված ու անառիկ վայրերում: Այդ ծանր ու դժվարին ժամանակներում հայ մշակույթն, այնուամենայնիվ, շարունակում էր ծաղկել ու բարգավաճել: ԺԱ—ԺԴ դարերում իրենց աշխույժ գործունեությամբ աչքի ընկան Հաղպատն ու Սանահինը, Խորանաշատն ու Այրիվանքը, Նոր Գետիկն ու Գլաձորը, որոնց գիտական նվաճումները անգնահատելի ավանդ հանդիսացան ազգային մշակույթի անդաստանում: Շատ ավելի բարվոք էր վիճակը Կիլիկիայում, մանավանդ ԺԲ—ԺԴ դարերում: Այստեղ, շնորհիվ պետական անկախության, երկիրը հասել էր քաղաքական ու տնտեսական այնպիսի բարձր մակարդակի, որը պայմանավորեց նաև հոգևոր կյանքի բուռն վերելքը. արագ թափով սկսեցին ծաղկել արհեստներն ու գիտությունը, ար-

վեստն ու գրականությունը. կառուցվեցին ճարտարապետական հոյակապ կոթողներ, արվեստի հիանալի գործեր. հիմնվեցին դպրոցներ, վարդապետարաններ: Կիլիկիայի ուսումնագիտական առավել կարևոր կենտրոնները խմբվել էին Սև լեռան շուրջը: Կարճ ժամանակում մեծ հռչակ սկսեցին վայելել Հռոմկլան, Դրազարկը, Մաշկևորը, Ծուղրը, Կարմիր վանքը: Սրանք, պահպանելով կապը մայր հայրենիքի հետ ու ժառանգելով դարերի ընթացքում այնտեղ ստեղծված ավանդները, դրանք հասցրին մի նոր, առավել բարձր աստիճանի: Գրչության այդ դպրոցներում աննախընթաց զարգացում ապրեցին պատմագրությունն ու փիլիսոփայությունը, գրչության արվեստն ու մանրանկարչությունը, բանաստեղծությունն ու երաժշտությունը: Ստեղծվեցին գրական բարձրարժեք երկեր, որոնք աչքի էին ընկնում բովանդակության բազմազանությամբ, գեղարվեստական մշակվածությամբ ու լեզվի մատչելիությամբ: Գրականությունն ավելի ու ավելի էր գնում դեպի աշխարհիկացում:

Քննվող ժամանակաշրջանի ծնունդն է Ներսես Շնորհալին՝ հայ եկեղեցու և մշակույթի կարկառուն ներկայացուցիչներից մեկը, որն ապրել ու ստեղծագործել է Կիլիկյան Հայաստանում, ԺԲ դարում:

Ներսես Շնորհալի-Կլայեցին՝ երրորդ արու զավակը Ապիրատ Պահլավունի իշխանի, ծնվել է Կիլիկիայի Տլուք գավառի Ծովք դղյակում, 1101 կամ 1102 թ.[3]: Նա և իր ավագ եղբայր Գրիգորը մանկուց կրթվում ու դաստիարակվում են Քեսունի Կարմիր վանքում Գրիգոր Բ Վկայասեր կաթողիկոսի (որը Ապիրատ իշխանի մորեղբայրն էր), իսկ նրա մահից հետո՝ Բարսեղ կաթողիկոսի հովանավորության ներքո: Կիլիկիայում մեծ հռչակ վայելող Կարմիր վանքում Ներսեսն ստանում է այդ ժամանակի համար բարձր ու կատարյալ կրթություն, իբրև ուսուցիչ ունենալով հմուտ գիտնական ու մանկավարժ Ստեփանոս Մանուկ Կարմիրվանեցի եպիսկոպոսին: 1113 թ. Բարսեղ կաթողիկոսը վախճանվում է, և Ներսեսի եղբայր 18-ամյա Գրիգորը ձեռնադրվում է կաթողիկոս (Գրիգոր Գ Պահլավունի): Վերջինս հայտնի է նաև գրական գործունեությամբ. հորինել է շարականներ, տաղեր, մեկնություններ, սատարել է գրական-թարգմանչական գործին, զարկ տվել սրբախոսական ու մեկնաբանական գրականության զարգացմանը, որի համար կոչվել է Գրիգոր Փոքր Վկայասեր: Այդ տարիներին Ներսեսը շարունակում է հմտանալ եղբոր անմիջական հսկողության տակ. դեռ երիտասարդ, հազիվ 17—18 տարեկան, նա ձեռնադրվում է քահանա, իսկ հայրապետական Աթոռը Ծովք տեղափոխվելուց (1116 թ.) մի քանի տարի անց արդեն Մամեստիայի եպիսկոպոս է, թեև միաժամանակ շարունակում է ապրել հայրապետանոցում և զբաղվել եկեղեցական գործերով: Ծուտով քաղաքական խռովությունները և Ծովքի մեկուսացած դիրքը ստիպում են մտածել առավել ապահով մի վայր տեղափոխվելու մասին, և այս անգամ աստանդական հայրապետական Աթոռը հանգրվանում է Հռոմկլայում (1150 թ.)՝ ուր մնում է շուրջ մեկուկես դար, համեմատաբար անխռով ու խաղաղ պայմաններում: Իր առավել բեղուն գրական-հասարակական գործունեությունը Ներսես Շնորհալին ծավալել է այստեղ, որի համար էլ կոչվել է նաև Կլայեցի: Արդեն ծերացած ու հիվանդ Գրիգոր Գ Պահլավունին, 1166 թ. ապրիլի 17-ին, իր եղբորը՝ Ներսեսին ձեռնադրում է կաթողիկոս ու երեք ամիս հետո վախճանվում: Ներսես Շնորհալին, որ դեռ մինչ այդ վարում էր հայրապետանոցի գործերը, կաթողիկոսական Աթոռին մնում է ընդամենը յոթ տարի: 1173 թ. օգոստոսին[4] նա վախճանվում է և թաղվում Հռոմկլայում:

---

[3] *Ոմանց կարծիքով Ներսես Շնորհալին ծնվել է ոչ թե Կիլիկիայում, այլ Ծոփաց աշխարհի Անձիտ գավառում (այժմ՝ Խարբերդի գավառ) ուր և, նրանց համոզմամբ, գտնվել է Պահլավունիների սեփականությունը հանդիսացող Ծովք դղյակը (տե՛ս* Գ. Սրվանձտյանց, *Թորոս աղբար, Բ, Կ. Պոլիս, 1884, էջ 95—101,* Ս. Էփրիկյան, *Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Բ, Գիրք Ա, Վենետիկ, 1907, էջ 250 և ուրիշներ): Ծովքի՝ Խարբերդում գտնվելու մասին գրում է նաև Մ. Չամչյանը. «Իսկ ազգն Սկիւթացւոց... եկեալ ի ծովակն Խարբերդու մերձ յեկիլ պաշարեցին զամուր դղեակն Ծովք կոչեցեալ, յորում նստէր և իշխէր մեծ իշխանն Հայոց Ապիրատ Պահլաւունի՝ հայր Գրիգորիսի և Ներսեսի Շնորհալւոյն, որդի դստեր Գրիգորի Մագիստրոսի...»* (Մ. Չամչյան, *Պատմութիւն Հայոց, Գ, Վենետիկ, 1786, էջ 32): Ծովքը Կիլիկիայում տեղադրող մասնագետներից Բ. Կյուլեսերյանը քննադատում է վերոհիշյալ տեսակետը՝ իր առարկությունները հիմնավորելով լուրջ փաստարկումներով* (Բ. Կյուլեսերյան, *Ծովք, Վիեննա, 1904):*

*Ներսես Շնորհալու կյանքին ու ստեղծագործությանը վերաբերող առավել մանրամասն տեղեկությունների համար տե՛ս «Սրբոյն Ներսեսի Շնորհալւոյ Պատմութիւն վարուց», «Սոփերք Հայկականք», ԺԴ, Վենետիկ, 1854 (այսուհետև՝ «Սոփերք»):* Ներսես Լամբրոնացի, *Գովեստ Ներբողական... (տե՛ս* Ներսես Շնորհալի, *Թուղթ ընդհանրական, Էջմիածին, 1865, էջ 461—497):* Ղ. Ալիշան, *Շնորհալի և պարագայ իւր, Վենետիկ, 1873:* Գ. Զարբհանալյան, *Հայկական հին դպրութեան պատմութիւն, Վենետիկ, 1886, էջ 602—622:* Հր. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան, Դ, Երևան, 1948, էջ 44—46:* Մ. Աբեղյան, *Երկեր, Դ, Երևան, 1970, էջ 96—156:* Գր. Հակոբյան, *Ներսես Շնորհալի, Երևան, 1964 և այլուր:*

[4] *Ներսես Շնորհալու մահվան տարին գրեթե բոլորը ընդունում են 1173 թվականը, բայց ամսաթվի հարցում մասնագետները տարակարծիք են: Ժամանակի առումով*

Ներսես Շնորհալին ստեղծագործել է ավելի քան հիսուն տարի՝ 1120—1173 թթ., այն ժամանակաշրջանում, երբ դեռ նոր էր կազմավորվում Կիլիկյան հայկական պետությունը, երբ երկիրը գտնվում էր անընդհատ կռիվների ու իշխանական տների գժտությունների խառնակ ու շփոթ վիճակում: Նա թողել է մատենագրական չափազանց հարուստ և բազմաստ ժառանգություն, որն իր լայն ընդգրկումներով, բերած նորույթներով, գրական հնարանքներով, վարպետ շարադրանքով ու բարձր արվեստով բացահայտում է մեծ մտածողի և ստեղծագործողի տաղանդն ու հոգին: Այդ բանը նկատվել և ըստ արժանվույն գնահատվել է թե՛ իր ժամանակ, թե՛ հետագայում. «Ցուցանէր զվարս սուրբս և զիմաստութիւն գիտութեանն յոքունց առաքինեաց և գիտնոց վեհագոյն»,—ասում է նրա մասին վարքագիրը[5], իսկ Հայսմավուրքում կարդում ենք. «Էր այր սուրբ և ընտիր, զարդարեալ ամենայն առաքինութեամբ, լցեալ գիտութեամբ ի շնորհաց Հոգւոյն, զի որպէս զգետ յորդառատ բղխէր ի բերանոյն զբանս աստուածայինս. մինչ զի ոչ ոք յառաջնոց հայրապետացն գտաւ նման նմա և ոչ յետ նորա մինչև ի ժամանակս մեր»[6]: Ներսես Շնորհալու անձնավորությունը

———

Շնորհալուն առավել մոտ կանգնած Ներսես Լամբրոնացին, նաև Վարքի հեղինակը գտնում են, որ Շնորհալու մահը տեղի է ունեցել օգոստոսի 13-ին, հինգշաբթի օրը (Ներսես Շնորհալի, Ընդհանրական թուղթք, Երուսաղեմ, 1871, էջ 165։ «Սոփերք», էջ 82)։ Այդպես է նաև Հայսմավուրքում («Յայսմաւուրք», 1834, էջ 74—75)։ Կա մի այլ վարկած՝ օգոստոս 8-ը, օրը կրկին հինգշաբթի (Միխայել Ասորի, Ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1871, էջ 471։ Ղ. Ալիշան, Շնորհալի և պարագայ իւր, էջ 483)։ Մ. Օրմանյանը, պահպանված տեղեկությունների և տոմարական հաշվումների հիման վրա փորձել է պարզել, թե ո՞րն է ճիշտը, բայց դրական արդյունքի չի հասել, քանի որ առաջադրված ամսաթվերից ոչ մեկը հինգշաբթի չէ. ըստ այդմ, նա ենթադրաբար հնարավոր է համարել օգոստոս 16-ը, որը հինգշաբթի է (Մ. Օրմանյան, Ազգապատում, Բեյրութ, 1959, էջ 1436)։ Հետաքրքրական է, որ նշված ամսաթվերից առավել հավանականը՝ օգոստոսի 8-ը համընկնում է հինգշաբթի օրվան՝ 1174 թ., այսինքն՝ երբ Շնորհալու մահվան ՈԻԲ(622) հայկական թվականին գումարում ենք ոչ թե 551, ինչպես սովորաբար արվում է, այլ 552։ Այդպիսի հաշվարկ կատարելու հիմքը Ա. Աբրահամյանի այն տեսակետն է, թե՝ «ԺԱ—ԺԳ դարերի հայկական թվականները հաշվելիս պիտի գումարել ոչ թե 551, այլ 552» (տե՛ս Ա. Աբրահամյան, Տարեթվերի և ամսաթվերի գործածությունը հայ մատենագրության մեջ, «Էջմիածին», 1956, Ա, էջ 57)։ Նման տեսակետ պաշտպանում են նաև ուրիշներ։ Այսուհանդերձ, քանի որ հայոց տոմարին վերաբերող հարցերը դեռ լիովին չեն պարզաբանված, մեզ հետաքրքրող թվականը առայժմ կարոտ է ճշգրտման։

[5] «Սոփերք», էջ 33։

[6] «Գիրք որ կոչի Այսմաւուրք», Կ. Պոլիս, 1730, էջ ՋԾԺԲ։



գովաբանող և նրա արդյունաշատ գործունեությունը դրվատող խոսքեր է շռայլում նաև Ներսես Լամբրոնացին, Շնորհալուն նվիրված իր չափածո ներբողում.

Հոմերական տաղից չափող,
Ոտանաւոր տառից գըտօղ…
Ներսէս՝ տօնիցըն զարդարող,
Եկեղեցւոյ կարգաց գըտիչ…
Ծարականաց կարգ անեցնէր,
Տաղերգութիւնս ի ճահ առնէր.
Քաղցր ձայնիւք անչըրպետէր,
Որ երաժիշտ Սուրբ Հոգւոյն էր…[7]

Չափազանց մեծ է եղել բազմաշնորհ հայրապետի վայելած հարգանքը նաև օտարների շրջանում: Ահա թե ինչ է ասում այդ մասին պատմիչը. «Այս Ներսէս առաւելեալ էր իմաստութեամբ քան զյոլովս ի ժամանակի անդ ոչ միայն քան զվարդապետս հայոց, այլև քան զյունաց և զասորւոց, այնքան՝ մինչ զի համբաւ իմաստութեան նորա տարածեցաւ ընդ ամենայն ազգս»[8]: Եվ ամենևին պատահական չէ, որ նրան անվանել են «երկրորդ Գրիգոր Աստուածաբան»[9]:

Ներսես Շնորհալու գրական վաստակը ներկայանում է և՛ արձակ, և՛ չափածո ստեղծագործություններով՝ ընդգրկելով կրոնական, քարոզչական, մեկնողական, նամակագրական, մանկավարժական, երաժըշտական, բանաստեղծական և այլ բնույթի բարձրարժեք երկեր: Դրանց քննությունը մեր նպատակից դուրս է, այնուամենայնիվ հարկ ենք համարում ընդհանուր գծերով տալ հեղինակի գրական-հասարակական գործունեության ամփոփ նկարագիրը:

Ներսես Շնորհալու արձակ գրությունների շարքին են պատկանում կաթողիկոս ընտրվելու առթիվ արտասանած փայլուն ճառը՝ «Ատենաբանութիւն»-ը (1166 թ.), ինչպես և դրանից երեք ամիս անց գրված հայրապետական առաջին կոնդակը՝ հանրահայտ «Թուղթ ընդհանրական»-ը: Այստեղ իրեն հատուկ պարզ ու հստակ լեզվով, գեղեցիկ պատկերներով ու վայելուչ ոճով հեղինակը հորդորում է հեռու մնալ մարդկային արատներից, պախարակելով հոգևորականու-

———

[7] Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, էջ 471—497։

[8] Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 118։

[9] «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1834, Բ, էջ 75։

թյան և մյուս դասերի արարքները: «Թուղթ ընդհանրական»-ը ունեցել է բազմաթիվ հրատարակություններ[10], իսկ 1833 թ. լույս է տեսել նաև լատիներեն թարգմանությամբ[11]: Շնորհալու արձակ գործերի մեջ առանձին կարևորություն ունեն նրա ինչպես անձնական, այնպես էլ պաշտոնական նամակները: Դրանցից ուշագրավ են եկեղեցիների միության խնդրին վերաբերող և հատկապես Բյուզանդիայի Կիր Մանվել կայսերն ուղղված թղթերը, որոնցում շոշափվում են դավանաբանական բնույթի հարցեր: Այդ նամակներում ի հայտ է գալիս հայ եկեղեցու ծեսերին ու կանոններին հավատարիմ մնալու և խոհեմությամբ իր թեզերը շարադրելու հեղինակի հմտությունը: Ներսես Շնորհալին թողել է նաև թարգմանական ու մեկնողական աշխատություններ. նրա գրչին են պատկանում սրբոց վարքերի թարգմանություններ[12], Կաթողիկյայց թղթերի մեկնությունը[13], Մատթեոսի Ավետարանի մեկնությունը (որը մնացել է թերի և շարունակել ու ավարտել է Հովհաննես Ծործորեցին):

Խիստ հետաքրքրական ու կարևոր են Շնորհալու արձակ գործերն իբրև պատմական վավերագրեր ու գեղարվեստորեն բարձրարժեք երկեր[14], սակայն Ներսես Շնորհալին շատ ավելի մեծ է որպես բանաստեղծ: Նա թողել է չափածո խոսքի մի անգնահատելի ժառանգություն, որն աչքի է ընկնում պատկառելի քանակով, նյութի բազմազանությամբ, տաղաչափական և լեզվաոճական առանձնահատկություններով: Իր ոտանավորներով Ներսես Շնորհալին ոչ միայն նպաստել է ազգային բանաստեղծության հարստացմանն ու զարգացմանը, այլև նոր թափ հաղորդել արդեն աշխարհականացող գրականության ընդհանուր առաջընթացին: Սկսելով գրել շատ վաղ հասակից՝ նա չի դադարել ստեղծագործելուց իր ամբողջ կյանքի ընթացքում, նաև կաթողիկոսության տարիներին, ծնունդ տալով մեծածավալ քերթվածների, ներբողների, խրատների, առակ-հանելուկների, գան-

[10] *Այդ հրատարակությունների մասին տե՛ս* Գր. Հակոբյան, *նշված աշխ., էջ 291—292:*

[11] Sanctii Nersetis Clajensis Opera: Studio et labore D. Josephi Cappelletti vol. I. Venetiis, 1833. p. 92--172.

[12] Գ. Զարբհանալյան, *Հայկական թարգմանութիւնք նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 724—725:*

[13] Ղ. Ալիշան, *Շնորհալի և պարագայ իւր, էջ 115: Տե՛ս նաև՝* Գ. Զարբհանալյան, *Հայկական հին դպրութեան պատմութիւն, էջ 615:*

[14] Մ. Աբեղյան, *նշված աշխ., էջ 96:*



ձերի, տաղերի, շարականների և այլևայլ ոտանավորների: Իր գրական երախայրիքը հանդիսացող «Վիպասանութիւն» քերթվածով, դեռ հազիվ 20-ամյա Շնորհալին արդեն ի հայտ է բերում ազգային գրականությանը թարմ շունչ հաղորդելու միտում՝ առաջին անգամ պատմական նյութը ներկայացնելով տաղաչափյալ ու հանգավոր բանաստեղծությամբ: Ոտանավորով են գրված նրա ներբողյանները, մանկավարժական-դաստիարակչական բնույթի խրատները, զուտ կրոնական բովանդակություն ունեցող «Բան հաւատոյ» և «Յիսուս Որդի»[15] երկարաշունչ քերթվածները, որոնցից երկրորդը, գրված Գրիգոր Նարեկացու «Ողբերգութեան մատեան»-ի անմիջական ազդեցությամբ ու նմանողությամբ, շատ սիրված է եղել և բազմիցս հրատարակվել է. իսկ «Ողբ Եդեսիոյ» քնարական քերթվածը ջերմ հայրենասիրությամբ տոգորված առաջին չափածո երկն է՝ գրված բարձր արվեստով ու բանաստեղծական հուզաթաթավ շնչով: Այն իրավամբ համարվում է հեղինակի գրական ժառանգության թագն ու պսակը: Ինչ վերաբերում է **առակ** անվանումով ներկայացող նրա բազմաթիվ հանելուկներին, ապա այստեղ առավել ուշագրավը ինչպես բովանդակության, այնպես էլ լեզվի մեջ իշխող ժողովրդային, աշխարհիկ տարրի առկայությունն է:

Չափազանց մեծ է Ներսես Շնորհալու դերը հայ եկեղեցու ծեսերի ու տոների կարգավորման գործում: Դ—Ե դարերից հետո ժամակարգությունը (որի նկարագրությունը Ը դարում արել է Հովհան Օձնեցին, իսկ Ժ դարում այն մեկնել է Խոսրով Անձևացին) շարունակաբար փոփոխություններ էր կրել: Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում այն շատ էր աղավաղված: Ներսես Շնորհալին ձեռնամուխ է լինում վերականգնելու խաթարված անաղարտությունը: Նա բերել է տալիս Մաքենացվոց ու Թեղենյաց վանքերում համեմատաբար մաքուր ու հարազատ պահպանված եկեղեցական կանոնադրությունները և, ինչպես վարքագիրն է ասում՝ «նորոգէր զառաջին սուրբ հարգն հաստատեալ կարգս եկեղեցւոյ և զարդարէր զեկեղեցիս Հայաստանեայց անթերի լրմամբ»[16]: Տուրք տալով ժամանակի պահանջներին, Շնոր-

[15] Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, Վենետիկ, 1830: Այս գրքում ամփոփված են հեղինակի չափածո գործերից՝ «Յիսուս Որդի», «Բան հաւատոյ», «Վիպասանութիւն» երկերը, խաչին նվիրված նրա ներբողյանը, «Յաղագս երկնից և զարդուց նորա» քերթվածը, մի քանի թղթերը, առակ-հանելուկները, գանձերը, տաղերը և այլ բանաստեղծությունները:*

[16] *«Սոփերք», էջ 37:*

հային որոշ փոփոխությունների է ենթարկում Տոնացույցը[17], ախորժալուր ու հայրենաշունչ շարականներով ճոխացնում է Շարակնոցը և հարստացնում Պատարագը իր բազմաթիվ հոգևոր երգերով, տաղերով ու մեղեդիներով: Նրա բարենորոգչական միջամտությունից զերծ չեն մնում նաև Ծիսարանի որոշ կանոններ և, առհասարակ, պաշտամունքային բոլոր մատյանները: «Հոգևոր երգովք և քաղցրանուագ եղանակօք վայելչացուցանէր զսուրբ պատարագին խորհրդական երգսն... երգէր և երգս տաղից քաղցրանուագ եղանակօք, յիմաստս բանի դաշնակեալ ի տօնս տէրունիս և յիշատակս առաքելոց և մարգարէից և մարտիրոսաց: Եւ թէպէտ և հրաշալիք էին բանք երգոց նորա առ միտս իմաստութեան, բայց ևս առաւել զարմանալի էին արուեստք զանազան եղանակացն, զոր աննման միմեանց յօրինէր»[18]: Բերված տողերը, ինչպես տեսնում ենք, մատնանշում են Ներսես Շնորհալու և՛ իբրև հոգևորականի, և՛ իբրև բանաստեղծի ու երաժշտի բազմարդյուն գործունեությունը: Իրավամբ, տաղաչափական արվեստի հնարող ու վարպետ է համարվել նա, որովհետև «ոչ ոք իրմէ առաջ այնչափ տեսակ չափերով և ոճով երգեր, տաղեր և քերթվածներ գրած է»[19]: Իսկ Շնորհալի երաժիշտ-երգեցողի մասին ոչ միայն բազմիցս հիշատակվել է, այլև լույս է տեսել առանձին մենագրություն[20]:

Ներսես Շնորհալու գրական հարուստ ժառանգությունը գրեթե ամբողջությամբ պահպանվել է և ըստ արժանվույն գնահատվել: Նրա ստեղծագործություններից շատերն ունեցել են մինչև իսկ մի քանի հրատարակություն, իսկ որոշ գործեր լույս են տեսել նաև օտար լեզուներով: Հետաքրքրությունը չի նվազել և մեր օրերում. պարբերաբար հրապարակ են իջնում նորանոր գրքեր, գրվում են ուսումնասիրու-

17 *Ներսես Շնորհալու միջամտությունը հիմնականում վերաբերում է առանձին տոների հետ կապված փոփոխությունների: Օրինակ՝ Այլակերպությունը, որ մինչ այդ տոնվում էր մեկ օր, Ներսես Շնորհալին դարձնում է երեք օր: Նույն ձևով, Աստվածածնի Վերափոխմանը նա հատկացնում է ինը, իսկ Հոգեգալուստին՝ յոթ օր, ընդ որում այդ օրերի համար հորինած իր հոգևոր երգերով նա ճոխացնում ու հարստացնում է համապատասխան արարողությունները:*

18 *«Սոփերք», էջ 37—38:*

19 Ղ. Ալիշան, *Շնորհալի և պարագայք իւր, էջ 70:*

20 Ն. Թահմիզյան, *Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ, Երևան, 1973:*



թյուններ[21], կատարվում են թարգմանություններ[22]: Ներկա աշխատությամբ ընթերցողին է ներկայացվում Ներսես Շնորհալու չափածոյի մի ուրույն բաժինը՝ նրա գանձարանային ժառանգությունը, որն ընդգրկում է **գանձ** (կամ **քարոզ**), **տաղ**, **փոխ** (կամ **հորդորակ**) և **մեղեդի** անուններով հայտնի հոգևոր երգերը: Նշված բանաստեղծությունների առանձին նմուշներ տարբեր ժամանակներում և զանազան առիթներով լույս են տեսել պարբերականներում կամ գրքերում, իսկ հեղինակի չափածո գործերի 1830 թ. Վենետիկում հրատարակված «Բանք չափաւ» հատորում նրանք ի մի են բերվել **Տաղք** և **Գանձք** խորագրերի տակ՝ ներկայացնելով 59 տաղային միավոր և երկու գանձ[23]:

Ձեռնարկելով Ներսես Շնորհալու տաղերի ու գանձերի քննական հրատարակությանը, նպատակ ենք ունեցել տալ հեղինակի հիշյալ բանաստեղծությունների ճշգրտված բնագրերը և, նոր հայտնաբերված միավորների ու բացահայտված օրինաչափությունների շնորհիվ, ըստ հնարավորին վերականգնել նրանց գանձարանային նախնական պատկերը: Բանն այն է, որ խնդրո առարկա ստեղծագործությունները, որպես կանոն, ընդգրկված են եկեղեցական հատուկ մատյաններում, որոնք հայտնի են «Գանձարան» անունով: Այդ ժողովածուները, որոնք միայն Մաշտոցի անվան Մատենադարանում հաշվվում են ավելի քան 200 միավոր և միջնադարում լայն կիրառում են ունեցել, մինչև վերջերս առանձին հետազոտության նյութ չէին դարձել, ըստ այդմ էլ

21 *Վերջին մի քանի տասնամյակներին հրապարակ են եկել Ներսես Շնորհալուն նվիրված մենագրություններ, ինչպես նաև նրա առանձին երկերի տպագրություններ ու քննական հրատարակություններ: Բերում ենք դրանցից մի քանիսի անունները. Գր. Հակոբյան, Ներսես Շնորհալի:* Ն. Թահմիզյան. *նշված աշխ.:* Ներսես Շնորհալի, *Յաղագս երկնից և զարդուց նորա, հանելուկներ, Ողբ Եդեսիոյ, Երևան, 1968:* Ներսես Շնորհալի, *Ողբ Եդեսիոյ, Երևան, 1973:* Ներսես Շնորհալի, *Վիպասանութիւն, Երևան, 1981 (վերջին երկուսը գիտաքննական բնագրեր են):*

22 *Վերջերս հրապարակված թարգմանական աշխատություններից առանձին կարևորություն է ներկայացնում Իսահակ Քեչիշյանի լույս ընծայած «Յիսուս Որդի» քերթվածի ֆրանսերեն հրատարակությունը, որի ընդարձակ առաջաբանում թարգմանիչը հանգամանորեն խոսում է ինչպես տվյալ երկի մինչ այդ եղած հրատարակությունների, այնպես էլ Շնորհալու կյանքի ու գործի մասին ընդհանրապես (տե՛ս* **Nerses Snorhali,** Jésus, fils unique ...., Paris, 1973):

23 Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 365—491: Հատորը նույնությամբ վերահրատարակվել է 1928 թ., ընդ որում փոփոխված են միայն էջերը: Մենք օգտագործել ենք առաջին հրատարակությունը:*

նրանցում տեղ գտած բանաստեղծությունները, եթե գրավել են մասնագետների ուշադրությունը, ապա սոսկ իբրև առանձին ոտանավորներ, ժողովածուի օրինաչափություններից անկախ ու մեկուսի: Այդ է պատճառը, որ Ներսես Շնորհալու կյանքին ու ստեղծագործությանը նվիրված Ղ. Ալիշանի, Մ. Աբեղյանի և այլոց ըստ ամենայնի ընդգրկուն աշխատությունները, ինչպես նաև բնագրերի առկա հրատարակությունները, բանաստեղծի գանձերի ու տաղերի և դրանց փոխառնչությունների մասին մեզ ամբողջական ու ճշգրիտ պատկերացում չեն տալիս: Գանձարանների ուսումնասիրությունը ի հայտ բերեց այդ մատյանների՝ իբրև յուրատեսակ ժողովածուների և գանձերի ու տաղային միավորների՝ իբրև յուրատեսակ հոգևոր երգերի մի շարք առանձնահատկություններ: Հնարավոր դարձավ ճիշտ գնահատել Ներսես Շնորհալու գանձարանային ժառանգությունը, ուստի ավելորդ չենք համարում ամփոփ խոսքով անդրադառնալ գանձարանային միավորների և Գանձարան ժողովածուների առավել բնութագրական էական մի քանի հատկանիշներին:

## Բ

Գանձարանային միավորների հիմնական տարրը **գանձն** է[24]: Այն յուրատեսակ կառուցվածք ունեցող հոգևոր երգի մի տեսակ է, պատմողական-նկարագրական բնույթի և բաղկացած մեծածավալ տներից: Տներից յուրաքանչյուրն ունի կրկնակ, որն ավարտվում է **աղաչեմք** բառով: Բոլոր գանձերն անխտիր վերջանում են «Եւ այժմ ողորմեաց մեզ, (կամ՝ «Ողորմեաց մեզ...») Տէր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան քում» խոսքերով: Գանձերի վերջին տունը, ուր հայցվում է սրբերի բարեխոսությունը և դրանով իսկ առանձնանում է ամբողջից, սովորաբար ունի **Փ** (այսինքն՝ **Փոխ**) ենթախորագիրը: Վերջինս նշանակված է լինում համապատասխան տան կից լուսանցքում և, հավանաբար, կոչված է մատնացույց անելու տվյալ երգային միավորի այդ հատվածի եղանակային փոփոխությունը: Իրենց տների սկզբնատառերով գանձերը հաճախ հոդում են հեղինակի անունը, որի

[24] *Գանձարանային միավորների ու Գանձարանների մասին մանրամասն տեղեկության համար տե՛ս* Գրիգոր Նարեկացի, *Տաղեր և գանձեր, աշխատ. Ա. Քյոշկերյանի, Երևան, 1981, էջ 21—51: Տաղային միավորների համար տե՛ս նաև՝ «Հայ միջնադարյան գրականության ժանրեր», Երևան, 1984, էջ 179—206:*



շնորհիվ մեզ հայտնի են դարձել մի շարք գանձասացներ: Առաջին հեղինակը համարվում է Գրիգոր Նարեկացին, որին երկար ժամանակ վերագրվում էին ընդամենը երեք գանձ: Հետագայում հայտնաբերվեցին նոր միավորներ և Նարեկացու գանձերի ընդհանուր թիվը հասավ տասի: Դրանց մեծ մասը տների սկզբնատառերով հոդում է «Գրիգորի երգ» և սկսվում է **գանձ** բառով: Այս վերջին իրողությունն էլ հիմք է տվել, որպեսզի առհասարակ հոգևոր հիշյալ բանաստեղծություններին տրվող **գանձ** անվանումը կապվի Գրիգոր Նարեկացու այդ ստեղծագործությունների նշված առանձնահատկության հետ: Գանձեր գրվել են եկեղեցական բոլոր տոների համար: Հայտնի են նաև ծիսական նպատակներով հորինված միավորներ, մասնավորապես մեռելաթաղի գանձեր: Այդպիսիները հաճախ տեղ են գտել նաև Մաշտոց ժողովածուներում:

Որպես կանոն, սկզբնական շրջանում գանձը կոչվել է **քարոզ**, որը բառացի նշանակում է մունետիկ, հայտարարող: Քարոզներն ունեն շատ հին ծագում: Հայտնի են Գրիգոր Լուսավորչի, Սահակ Պարթևի, Հովհան Մանդակունու անուններով մեզ հասած նմուշներ[25], որոշ փշրանքներ պահպանվել են քրիստոնեության առաջին դարերից[26]: Քարոզը սարկավագի աղոթքն է, ուղղված ժողովրդին՝ «բան սարկաւագի ի ժամասացութեան իբր ազդարարողի»[27], ուր հիշատակվում են սրբեր, եպիսկոպոսներ և այլն: Քննությունը ցույց է տալիս, որ իրենց կառուցվածքային առանձնահատկություններով գանձերն, առաջին հերթին, կարող են համեմատվել հենց այս քարոզների հետ: Վերջիններս սովորաբար փոքրիկ պարբերություններ են՝ «Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք» սկսվածքով, իսկ երբեմն ունեն բավական ընդարձակ ծավալ՝ բաղկացած մի քանի տներից: Հատկանշականը յուրատեսակ վերջաբանն է՝ «Եւ ևս միաբան...», «Զանձինս մեր և զմիմեանս...» սկսվածքներով, ու ավարտը՝ «Ողորմեաց մեզ, Տէր Աստուած մեր...»[28]: Հենց այստեղ էլ ի հայտ է գալիս քարոզ-գանձ փոխառնչությունը, ընդ որում մի առանձնահատկությամբ, որը բնորոշ

[25] *Տե՛ս* Հովհ. Մկրյան, *Աղօթագիրք ըստ ժամակարգութեան Հայաստանեայց ս. եկեղեցւոյ, Կ. Պոլիս, 1895, էջ 91, 564, 663:*

[26] *Տե՛ս* Հ. Գաթրճյան, *Սրբազան պատարագամատոյցք Հայոց, Վիեննա, 1897, էջ 23—32, 114—115:*

[27] *«Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», Բ, Վենետիկ, 1837, էջ 999:*

[28] *«Ժամագիրք», Երուսաղեմ, 1866, էջ 23: «Մաշտոց», Վաղարշապատ, 1905, էջ 174:*

է եկեղեցում օգտագործվող հոգևոր ստեղծագործություններից լոկ այդ երկուսին: Գանձերը համեմատելի են նաև **Քարոզ Զատկաց** կոչվող և ձեռագրերում Բարսեղ Կեսարացու անունով պահպանված մի երկի հետ: Վերջինս ունի ակներև նմանություն և՛ քարոզների, և՛ գանձերի հետ: Ասվածից պարզ է դառնում, որ գանձերի համար նախատիպ են ծառայել վերոհիշյալ քարոզները:

Գանձին կից սովորաբար հանդես են գալիս տաղային միավորներ՝ **տաղ, փոխ, մեղեդի:** Սրանց մեջ հիմնական տարրը տաղն է, որն ունի շատ հին ծագում և բացատրվում է որպես «բան չափաբերական, ոտանաւոր երգ, քերթուած նուագելի»[29]: Այդպիսի ոտանավորներ հայտնի են շատ վաղ ժամանակներից, բայց գանձարանային տաղի, որպես հոգևոր երգի որոշակի մի տեսակի, առաջին հեղինակը դարձյալ համարվում է Գրիգոր Նարեկացին, թեև Գանձարաններում հանդիպում են նմուշներ, որոնք կարող են հորինված լինել շատ ավելի վաղ, քան Ժ դարը: Գանձարանային տաղերը որոշակի ծավալ չունեն. գանձերի համեմատությամբ դրանք ընդհանրապես ավելի փոքր են ու կուռ և նվիրված են այն տոներին ու սրբերին, որոնց հատկացված են հարակից գանձերը: Յուրաքանչյուր գանձ սովորաբար կից ունենում է մեկ տաղ, երբեմն՝ երկու կամ ավելի: Տաղերը հանդես են գալիս նաև գանձերից անջատ. այդպիսի ժողովածուներում գանձարանային հիմնական տարրը գանձի փոխարեն դառնում է տաղը, իսկ կից ներկայանում են տաղային մյուս միավորները՝ փոխերն ու մեղեդիները: Գանձերի նման տաղերը ևս հաճախ ունեն ծայրակապ, սակայն կազմված ոչ միայն տների, այլև տողերի սկզբնատառերից: Ծայրակապը հոդում է մերթ հեղինակի անունը, մերթ՝ այբուբենի տառերը («Ա—Ք», երբեմն նաև հետադարձ՝ «Ք—Ա») և կամ այլ բառակապակցություններ ու նախադասություններ: Գանձարանային տաղեր են գրել միջնադարի մեր շատ հեղինակներ՝ Գրիգոր Նարեկացին, Ներսես Շնորհալին, Գրիգոր Խլաթեցին, Առաքել Բաղիշեցին և ուրիշներ, բայց ամենաբեղմնավորը եղել է Ներսես Շնորհալին: Իբրև գանձարանային ստեղծագործություն մի շարք ընդհանրություններ ունենալով գանձերի հետ՝ տաղերը, միաժամանակ, տարբերվում են և՛ իրենց կառուցվածքով, և՛ բովանդակությամբ: Կոչված լինելով տվյալ նյութը վերարտադրելու առավել հուզական շնչով ու երաժշտականությամբ, տաղերը խազավորված են շատ ավելի ճոխ, քան գանձերը:

[29] *«Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», Բ, էջ 839:*



Տաղային մյուս միավորը **փոխն** է, որը ուշ շրջանի գրչագրերում կոչվում է **հորդորակ:** Եկեղեցական գրականության մեջ **փոխ** են կոչվում Ավետարանի որևէ մասը կամ այլ ընթերցվածներ, որոնք կարդացվում են փոխասացությամբ՝ ըստ ժամերգության ութ ձայնի: Գանձերում ևս, ինչպես տեսանք, վերջին տանը կից լուսանցքում կա փոխի նշան, որն ակնարկում է եղանակային փոփոխության մասին: Այլ է Գանձարաններում տաղին կից հանդես եկող փոխը. սա արդեն գանձարանային ուրույն միավոր է և լինում է երկու տեսակ. մի դեպքում՝ այն տվյալ տաղի հատվածն է, որն անջատված է ամբողջից և ներկայացված առանձին **Փ** (կամ՝ **Փոխ, Փոխէ, Փոխէ զձայնն**) խորագրով՝ նշանակված սովորաբար լուսանցքում: Մի այլ դեպքում փոխն անջատ և ամբողջական բանաստեղծություն է՝ օժտված տաղին բնորոշ հատկանիշներով, ու կցվելով համապատասխան տաղի՝ կազմում է **տաղ** ու **փոխ** զույգ: Որոշ հեղինակներ իրենք են իրենց տաղերի համար շարադրել համապատասխան փոխեր. այդպիսի զույգերի ուշագրավ օրինակներ ունեն Գրիգոր Նարեկացին ու, մանավանդ, Ներսես Շնորհալին: Վերջինիս տաղային ժառանգության մեջ հիշյալ առանձնահատկությունը դրսևորված է առավել ցայտուն գծերով, ինչպես իր տեղում կտեսնենք:

**Մեղեդին** ևս տաղային միավոր է, որն արտաքնապես տաղից չի տարբերվում: Հայտնի են շատ դեպքեր, երբ «տաղ» ու «մեղեդի» բառերը գործածվել են համազոր նշանակությամբ, որպես հոմանիշ՝ մեկը մյուսի փոխարեն: Երբեմն էլ տաղից անջատված մի հատվածն է ներկայանում իբրև մեղեդի: Նկատելի է, որ ընդհանրապես այս միավորները փոքրածավալ են: Անունն ինքը, առաջացած հունարեն μελος բառից, որ նշանակում է «քաղցր և անուշ երգ», ցույց է տալիս, որ տվյալ դեպքում գործ ունենք երաժշտական միավորի հետ: Այդ մասին է վկայում նաև մեղեդիների չափազանց ճոխ խազավորումը:

Այսպիսով, տաղային բոլոր միավորները ժանրային առումով որոշակիորեն չեն սահմանազատվում, ու միևնույն բանաստեղծությունը կարող է ներկայանալ և՛ իբրև տաղ, և՛ իբրև փոխ, և՛ իբրև մեղեդի: Նրանք, անշուշտ, սկզբնապես ունեցել են շատ ավելի ցայտուն տարբերիչ հատկանիշներ, որոնք այժմ մեզ համար մնում են անորսալի:

**Գանձարանը** (երբեմն՝ **Գանձատետր**) եկեղեցական ձեռնարկ է, որտեղ նյութերը դասավորված են տոների հաջորդականության տոնա-

ցուցային սկզբունքով: Գանձարանային համակարգի յուրաքանչյուր ամբողջական բարդ միավոր, բաղկացած գանձից, տաղից, փոխ-հորդորակից և մեղեդուց, կոչվում է **կանոն**: Երբեմն միևնույն գանձին կից հանդես են գալիս մեկից ավելի տաղ, փոխ կամ մեղեդի: Պատահում է նաև, երբ կանոնը կազմված է լինում լոկ գանձից ու տաղից: «Կանոն» բառը Գանձարաններում շատ չի հանդիպում, սակայն նյութերի համարակալումը կատարվում է ըստ կանոնների, ընդ որում համարակալվում են լոկ գանձերը, այսինքն՝ համակարգի հիմնական տարրը: Նույն սկզբունքով են կազմվում նաև հիշյալ ժողովածուների ցանկերը:

Գանձարանի, իբրև ուրույն ժողովածուի, սկզբնավորման ստույգ ժամանակը հայտնի չէ: Պահպանված են շուրջ 300 ձեռագիր մատյաններ, որոնցից հնագույնները ԺԳ—ԺԴ դարերից են, իսկ նորագույնները հասնում են ընդհուպ մինչև ԺԹ դարը: Առաջին տպագիր Գանձարանը լույս է տեսել 1739 թ., Կոստանդնուպոլսում. սրան հետևել են մի քանի այլ հրատարակություններ: Ցավոք, այդ բոլորը կատարված են ուշ շրջանի թերի ու աղճատված բնօրինակների հիման վրա, որոնք նախնական Գանձարանների մասին ճիշտ պատկերացում կազմելու հնարավորություն չեն տալիս:

Ժամանակի ընթացքում Գանձարանները կրել են փոփոխություններ, հարստացել են նոր միավորներով, խմբագրվել են և այժմ ներկայանում են երկու հիմնական խմբերով. ա) հնագույն շրջանի ժողովածուներ՝ մինչև ԺԴ դարի վերջը, բ) հետագա դարերի ընդօրինակություններ: Առաջին խմբին պատկանողները խիստ փոքրաթիվ են: Դրանցում տեղ գտած գանձերը, որոնք չնչին բացառությամբ կոչվում են **քարոզ**, մեծ մասամբ ազատ տաղաչափությամբ և անհանգ գրված բանաստեղծություններ են: Մեզ հասած Գանձարանների գերակշռող մասը պատկանում է երկրորդ խմբին: Սրանք ներկայացնում են ԺԴ դարի վերջում Գրիգոր Խլաթեցու կողմից խմբագրված ժողովածուն, որտեղ գանձերը սովորաբար հանգավորված են և լոկ եզակի դեպքերում են կոչվում **քարոզ**: Նկատելի է, որ հնագույն մի շարք անհանգ միավորների փոխարեն, այս խմբի գրչագրերում զգալի տեղ են սկսում զբաղեցնել Գրիգոր Խլաթեցու հեղինակած գանձերը: Բացի այդ, որոշ հեղինակների, հատկապես Գրիգոր Խլաթեցու գանձերին երբեմն նախորդում են հանգավոր փոքրիկ ոտանավորներ՝ բաղկացած չորս, վեց կամ ութ տողից, որոնք կոչվում են **կաֆա**: Վերջիններս, միջնադարյան կաֆաների ոչ հաջող նմանողությամբ հորինված, տվյալ գանձի բովանդակությանը, նրա կատարման ձևին ու եղանակին վերաբերող տողեր են, որոնք հաճախ իրենց սկզբնատառերով հոդում են հեղինակի անունը:



Գանձարանների և՛ վաղագույն նմուշները, և՛ խմբագրված ընդօրինակությունները իրենց բովանդակած նյութերով ու վերջիններիս դասավորությամբ միատեսակ չեն: Կան ժողովածուներ, որոնք ընդգրկում են բացառապես գանձեր: Երբեմն այդպիսի գրչագրերում առկա են նաև տաղային միավորներ՝ եզակի օրինակներով ու սովորաբար զետեղված վերջում կամ թեկուզ գանձերին կից, բայց առանց որոշակի դասակարգման: Թեև հազվադեպ, բայց լինում են և սոսկ տաղային միավորներ բովանդակող ժողովածուներ, որոնք պայմանականորեն անվանում ենք **գանձարանային տաղարան**՝ տարբերելու համար սովորական տաղարաններից: Երբեմն զուտ գանձերից և զուտ տաղերից բաղկացած ժողովածուներ ներկայանում են միմյանց կից՝ իբրև մեկ ամբողջական ձեռագիր, որի առաջին մասը լինում է Գանձարանը, իսկ երկրորդ մասը՝ Տաղարանը: Գանձարանների համար առավել բնութագրականը, սակայն, այն տիպն է, ուր գանձերն ու տաղային միավորները հանդես են գալիս զուգորդված, լրիվ սարքով, այսինքն՝ յուրաքանչյուր տոնի համար բերվում են գանձն ու նրան կից՝ համապատասխան տաղային միավորները (**տաղ, փոխ** կամ **հորդորակ, մեղեդի**): Այս կարգի ժողովածուներն ունեն թվական բացարձակ գերակշռություն: ԺԸ—ԺԹ դարերում Գանձարանները, աստիճանաբար դուրս գալով գործածությունից, սեղմվում են, համառոտվում, ու հատկապես գանձերն այնքան են կրճատվում, որ վերածվում են ընդամենը մի քանի տողանի պարբերությունների: Այդպիսիներն են հիմք ծառայել տպագիր Գանձարանների համար:

Ընդհանրապես Գանձարաններում ի մի են բերված զանազան հեղինակների համապատասխան ստեղծագործությունները, ընդ որում տարբեր անձանց կարող են պատկանել ոչ միայն կանոններն իբրև ամբողջություն (գանձն իր հարակից տաղային միավորներով), այլև տվյալ կանոնի բաղկացուցիչ տարրերը: Բացառված չէ, անշուշտ, որ ամբողջ ժողովածուն կապվի լոկ մեկ հոգու անվան հետ. այդպես է օրինակ, Մաշտոցի անվան Մատենադարանի № 6527 ձեռագիրը[30], որը բովանդակում է միայն Առաքել Բաղիշեցու գանձերն ու տաղերը:

[30] *Տե՛ս* **Ա. Քյոշկերյան**, *Մի նորահայտ անհատական Գանձարան, «Էջմիածին», 1970, Զ—Է, էջ 98—103, Ժ, էջ 50—55։*

Սեփական ստեղծագործություններից կազմված մի Գանձարան է ունեցել նաև Մխիթար Այրիվանեցին (ԺԳ դ.)[31]:

Գ

Հայ բանասիրությունը գանձերի՝ իբրև ինքնատիպ բանաստեղծությունների ստեղծումը սկզբից ևեթ կապել է Գրիգոր Նարեկացու անվան հետ: Գանձարան ժողովածուների հետազոտությունը մեզ բերեց այն համոզման, որ Գրիգոր Նարեկացին է ոչ միայն գանձերի, այլև գանձարանային ողջ մշակույթի սկզբնավորողը, իսկ Ներսես Շնորհալին՝ նրա հետագա զարգացնողն ու նոր կյանք տվողը: Անգնահատելի է Շնորհալու դերը մանավանդ **Տաղարանների** կազմավորման ու հարստացման գործում: Եթե Գրիգոր Նարեկացին իր մեկ տասնյակ գանձերով ու երկու տասնյակից ավելի տաղերով հիմք դրեց գանձարանային համակարգի ու Գանձարան ժողովածուի, ապա Ներսես Շնորհալին իր ավելի քան մեկ հարյուրյակ տաղային միավորներով ավարտուն տեսքի ու կատարելագործման հասցրեց գանձարանային տաղերի համակարգային կառուցվածքը:

Ներսես Շնորհալու անունով պահպանված են ընդամենը մի քանի գանձ, հետևապես գանձ ու տաղ համակարգային պատկերը, որն ի հայտ է գալիս Գրիգոր Նարեկացու համապատասխան ստեղծագործությունների քննության ժամանակ, այստեղ ակնառու չէ: Գանձարանային օրինաչափությունները, տվյալ դեպքում, դրսևորվում են տաղային միավորների՝ միմյանց հետ ունեցած առնչություններում, որոնց մասին խոսք կլինի, երբ անդրադառնանք հեղինակի տաղային ժառանգությանը: Այժմ՝ նրա գանձերի մասին:

«Բանք չափաւ» հատորում Ներսես Շնորհալու անունով ներկայացված է ընդամենը երկու գանձ.

1. **Գանձ սրբոյ Վարդավառին**—Ներգործական զօրութիւն...[32]
2. **Գանձ Փոխման Աստուածածնին**—Նորահրաշ տօնիւս...[33]

---

31 *Այդ Գանձարանը չի պահպանվել, բայց ձեռագրերում ցրված բեկորների օգնությամբ վերջերս հնարավոր դարձավ վերականգնել դրա երբեմնի ամբողջականությունը (տե՛ս* Է. Հարությունյան, *Մխիթար Այրիվանեցու Գանձարանը, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1975, № 3, էջ 101—112):*

32 Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 474—484:*

33 *Նույն տեղում, էջ 485—491:*



Ղ. Ալիշանն ակնարկում է նաև մի երրորդ գանձի մասին՝ նվիրված Մյուռոնօրհնությանը[34]: Այն նույնպես հրատարակված է, սակայն բանասիրական լայն շրջանակներին մատչելի չի եղել, որովհետև ընդգրկված է Մյուռոնօրհնության կանոնը բովանդակող՝ Էջմիածնում լույս տեսած փոքրիկ գրքույկում, որը նախատեսված լինելով լոկ հիշյալ ծիսակատարության մասնակիցների համար, ունեցել է խիստ սահմանափակ տպաքանակ և օգտագործման չափազանց նեղ ոլորտ: Ահա այդ միավորը.

**Քարոզ տեառն Ներսիսի**—Նոր օրհնութիւն...[35]

Նշված երեք գանձերն էլ իրենց տների սկզբնատառերով հոդում են հեղինակի անունը և գրչագրերում ներկայանում են Ներսես Շնորհալու անունով: Վաղ շրջանի մի շարք ձեռագրերում մեզ հանդիպել է մի գանձ՝ նվիրված Հրեշտակապետաց տոնին, որն աղբյուրների մի մասում պահպանված է Ներսես Շնորհալու անունով.

**Քարոզ սրբոց հրեշտակապետացն, արարեալ տեառն Ներսեսի Հայոց կաթուղիկոսի Կլայեցւոյ**—Աստուած անեղ...[36]

Ի տարբերություն նախորդ երեքի, այստեղ տների սկզբնատառերն արտահայտում են ոչ թե հեղինակի անունը, այլ տվյալ ստեղծագործության բովանդակությունը՝ «Անմահից քարոզ»: Այսուհանդերձ, խորագրային վերագրումը և բանաստեղծության ընդհանուր կառուցվածքն ու ոճը բավարար հիմք են տալիս սույն միավորը դասելու Ներսես Շնորհալու գանձերի շարքը, վերջիններիս ընդհանուր թիվը հասցնելով չորսի[37]: Բերում ենք այդ գանձերի խորագրերն ու սկզբնատողերը ըստ մեր կազմած բնագրերի.

---

34 Ղ. Ալիշան, *Շնորհալի և պարագայ իւր, էջ 449, 454:*

35 *«Կանոն օրհնութեան սրբալոյս Մեռոնին», Վաղարշապատ, 1876, էջ 37—44:*

36 *Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 7785 (թերթ 481ա), 4068 (թերթ 171բ), Փարիզի Ազգ. գրադարան, ձեռ. № 79 (թերթ 229ա), 80 (թերթ 283բ), Անթիլիասի Կաթողիկոսարան, ձեռ. № 98 (թերթ 213բ), Երուսաղեմի Պատրիարքարան, ձեռ. № 231 (թերթ 252ա), Տյուբինգենի Համալսարանի գրադարան, ձեռ. №* Ma *XIII 61 (թերթ 121ա): Այսուհետև Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերը կնշվեն առանց հավաքածուի անվան հիշատակության, իսկ մյուսները՝ սոսկ քաղաքների անուններով, որոնք կբերվեն փակագծերի մեջ, ձեռագրերի համարներից հետո:*

37 *Ուշ շրջանի Գանձարաններում (ձեռ. № 424, թերթ 190բ և ձեռ. № 2672, թերթ 245ա) հանդիպում է* Գանձ Վարդավառին երրորդ աւուրն *խորագրով մի գանձ (*Ներգործական Աստուած բարերար... *սկսվածքով), որի միկրնդմեջ տների սկզբնատառերը կազմում են «Ներսէս» ծայրակապը: Սա Ներսես Շնորհալու մեզ ծանոթ գանձերի հետ ոչ մի նմանություն չունի. գրված է ինը վանկանի տողերով, տնից-տուն փոփոխվող*

1. **Քարոզ մեծի Այլակերպութեան Տեառն, տեառն Ներսիսի Հայոց կաթողիկոսի ասացեալ («Ներսէսի երգ»)**—Ներգործական զաւրութիւն...

2. **Քարոզ Փոխման Աստուածածնին, ասացեալ տեառն Ներսիսի Հայոց կաթուղիկոսի («Ներսեսի երգ»)**—Նորահրաշ տաւնիս...

3. **Քարոզ սրբոց հրեշտակապետացն, արարեալ Ներսիսի Հայոց կաթուղիկոսի («Անմահից քարոզ»)**—Աստուած անեղ...

4. **Քարոզ ձայնիւ յԱւետարանին, տեառն Ներսէսի («Ներսեսի երգ»)**—Նոր աւրհնութիւն...

Ցանկի վերջին միավորը, նվիրված Մյուռոնօրհնությանը, ի տարբերություն մյուս երեքի, հանդես է գալիս ոչ թե Գանձարաններում, այլ Մաշտոցներում: Ծիսական այդ մատյաններում գանձեր ու տաղեր հանդիպում են ուշ շրջանի ընդօրինակություններում: Ներսես Շնորհալու այս նմուշը մեզ հայտնի ամենահին ծիսական գանձն է: Կառուցվածքային առանձնահատկություններով տվյալ միավորը նման է հեղինակի մյուս գանձերին, բայց այն իրողությունը, որ Գանձարաններում երբևէ չի հանդիպում, մտածել է տալիս, որ հորինված է եղել իբրև արտագանձարանային ստեղծագործություն[38]:

Ներսես Շնորհալու գանձերի քննությունը ցույց է տալիս, որ հեղինակն իր այդ բանաստեղծությունները ստեղծել է Գրիգոր Նարեկացու համանուն ստեղծագործությունների հետևությամբ ու նմանությամբ: Բոլորն էլ գրված են ազատ չափով և անհանգ են: Նկատելի է նաև ծայրակապային ընդհանրություն. Գրիգոր Նարեկացու գանձերն իրենց տների սկզբնատառերով կազմում են «Գրիգորի երգ»[39], իսկ Ներսես Շնորհալու գանձերը նույն ձևով հոդում են «Ներսէսի երգ» և այդ իսկ պատճառով ներկայանում տների նույնպիսի քանակով: Ուշագրավ է մանավանդ ծայրակապի **երգ** բառը կազմող հատվածը, որի հիմքում ընկած է եկեղեցական հնագույն քարոզների յուրատեսակ ավարտը: Գրիգոր Նարեկացու գանձերում հիշյալ հատվածի երկրորդ տան՝ քարոզային **Զանձինս մեր և զմիմեանս...** պարբերությունը փոխարինված է **Բոտել** կամ **Բամեա** բառերով սկսվող մեկ այլ նախադասությամբ, ծայրակապի «ր» տառի պատճառով: Այսպես օրինակ.

**Եւ** եւս առաւել
Զյորդորումն սիրոյ եւ զգործս բարեաց պարգեւել մեզ, խնդրեմք:

**Բ**ոտել զմարմինս մեր
Ի մի շաւիղ ընտրութեան Հոգւոյ սիրոյն որ առ Տէր, խնդրեմք[40]:

Այս ձևը գրեթե նույնությամբ որդեգրել է Ներսես Շնորհալին.

**Եւ** եւս առաւել
Զյորդորումն սիրոյ եւ զգործս բարեաց պարգեւել մեզ, խնդրեմք:

**Բ**ոտել զանձինս մեր ի մի միաբանութիւն
Հաւատոյ, յուսոյ եւ սիրոյ, խնդրեմք[41]:

Ինչ վերաբերում է գանձերի կրկնակային կառուցվածքին, բանաստեղծության յուրատեսակ վերջաբանին ու ավարտին, ապա այս դեպքում ևս նմանությունն ակնբախ է:

Համեմատելի այս ընդհանրությունները տարակույս չեն թողնում, որ Ներսես Շնորհալին իր գանձերը հորինելիս ոչ թե սոսկ կրել է Գրիգոր Նարեկացու ազդեցությունը, այլ առաջին հերթին նպատակ է ունեցել պահպանել նրանից սկիզբ առած հիշյալ բանաստեղծությունների էական հատկանիշները: Թե ի՞նչ չափով և ինչպե՞ս էին դրանք օգտագործվել Ներսես Շնորհալու անմիջական նախորդների կողմից և առհասարակ ինչպե՞ս է ընթացել գանձարանային մշակույթի զարգացումը Գրիգոր Նարեկացուն հաջորդած հարյուրամյա ժամանակաշրջանում՝ չգիտենք: Մեզ հասած Գանձարանների վաղագույն ընդօրինակությունները, որոնք պահպանվել են եզակի նմուշներով, ԺԳ դարից այն կողմ չեն անցնում և ներկայանում են իբրև ավարտուն, լիարժեք ժողովածուներ: Սակայն բնական է ենթադրել, որ Գրիգոր Նարեկացու գանձերի ու տաղերի հետևությամբ բանաստեղծություններ գրվել են դեռ մինչև Ներսես Շնորհալին: Այս իմաստով հետաքրքրություն են ներկայացնում հնագույն գրչագրերում տեղ գտած մի խումբ գանձեր, որոնք օժտված են այդ բանաստեղծությունների համար բնութագրական՝ վերևում նշված առանձնահատկություններով, բայց պատկանում են բանասիրությանն անծանոթ հեղինակների (Հովսեփ, Վարդան, Ղուկաս, Ղազար, Ստեփաննոս և այլն) կամ անանուն

*հանգերով և թողնում է համեմատաբար ուշ շրջանի ստեղծագործության տպավորություն:*

38 *Այս գանձի մասին առավել մանրամասն տե՛ս* Ծանոթագրություններ *բաժնում:*

39 *Հիշյալ ձևը խախտված է Գրիգոր Նարեկացու միայն մեկ գանձում, նվիրված Հովհաննես Մկրտչին, որի ծայրակապը հոդում է «Ի ձայնն երգ», նկատի ունենալով բովանդակությունը, տվյալ դեպքում՝ Հովհաննես Մկրտչին: Նույն ձևով Ներսես Շնորհալին Հրեշտակապետաց տոնին նվիրված իր գանձում ունի «Անմահից քարոզ» ծայրակապը:*

40 Գրիգոր Նարեկացի, *Տաղեր և գանձեր, էջ 217:*

41 *Տե՛ս Բնագրեր, էջ 304:*

են։ Որոշ հանգամանքներ թույլ են տալիս մտածելու, որ դրանց գոնե մի մասը կարող էր ստեղծված լինել մեզ հետաքրքրող ժամանակահատվածում[42]։ Հեղինակների անուններով պահպանված գանձերի խմբում առանձնանում են Սարգսի անունով ներկայացող բանաստեղծությունները՝ թվով յոթ հատ։ Մեր որոնումները պարզել են, որ հիշյալ Սարգիսը անեցի է և պատկանում է Տոնկաց տոհմին ու, հավանաբար, եղել է Գրիգոր Մագիստրոսի ժամանակակիցը[43]։ Ինչ վերաբերում է հնագույն ձեռագրերում տեղ գտած անանուն գանձերին, ապա պատկերն այստեղ առավել ուշագրավ է։ Ընդամենը 10 միավոր հաշվվող հիշյալ բանաստեղծությունները[44], որոնք առանց ծայրակապի են, կոչվում են **քարոզ**[45] և ունեն ակներև ընդհանրություններ մի կողմից՝ Գրիգոր Նարեկացու գանձերի, մյուս կողմից՝ Բարսեղ Կեսարացու անունով պահպանված **Քարոզ Զատկաց** (*Ժողովեալքս...* սկսվածքով) երկի հետ. ուստի, դրանց վաղեմությունն անառարկելի է։ Ստորև ներկայացնում ենք **քարոզ** կոչվող այդ գանձերը խորագրերով ու սկզբնատողերով (առաջին ինը քարոզները ըստ Անթիլիասի № 98 ձեռագրի, իսկ վերջինը՝ ըստ Մատենադարանի № 7785 ձեռագրի).

1. **Քարոզ Մրգազլուցի առաջին աւուրն Ծննդեանն Տեառն**—Անապական տաճար և առագաստ Բանին... (թերթ 9բ)

2. **Քարոզ Ծննդի երկրորդ աւ[ուրն]**—Աւրհնեմք ըզքեզ, միածին... (թերթ 13բ)

3. **Այլ քարոզ Ծննդեան Տեառն, երրորդ աւուրն**—Կոյս անապական և առագաստ փեսայացեալ Բանին... (թերթ 20բ)

4. **Այլ քարոզ Ծննդի չորրորդ աւուրն**—Մայր սուրբ անճառ մարմնացելոյ Բանին... (թերթ 23բ)

5. **Քարոզ Գալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յԵրուսաղէմ՝ իշով**—Աստուած անեղ, անպարագրելի... (թերթ 88բ)

6. **Քարոզ Յովհաննու Մկրտչին**—Նորահրաշ խընդութեամբ բերկրեալ... (թերթ 100ա)

7. **Քարոզ Ծաղկազարդին՝ զկնի Համբարձմանն**—Այսաւր ցընծան եկեղեցիք հեթանոսաց... (թերթ 123ա)

8. **Այլ քարոզ Սուրբ Խաչին, երրորդ աւուրն**—Փայտ կենաց փըրկութեան... (թերթ 174ա)

9. **Քարոզ Խաչի, վեցերորդ աւուրն**—Անապական սուրբ Երրորդութիւն... (թերթ 185բ)

10. **Քարոզ Եկեղեցւոյ**—Ուրա՛խ լեր, հարսնացեալդ... (թերթ 390ա)

Ցանկում ընդգրկված քարոզներից Գրիգոր Նարեկացու գանձերի հետ համեմատելի են հատկապես երկուսը՝ № 5 և 6։ Սրանցից երկրորդը, նվիրված Հովհաննես Մկրտչի տոնին, իր առաջին երկու տողերով և ողջ շարադրանքով նման է Գրիգոր Նարեկացու **Գերահրաշ ցընծութեամբ...** գանձին (նվիրված Գրիգոր Լուսավորչին)։ Առավել ցայտուն է **քարոզ** կոչվող այս բանաստեղծությունների նմանությունը Բարսեղ Կեսարացու **Քարոզ Զատկաց** երկին։ Վերջինիս հետ կարող են համեմատվել ցանկի 4-րդ, 9-րդ ու, մանավանդ, 3-րդ և 7-րդ քարոզները իրենց սեղմ ու փոքրածավալ տներով (№ 7, 9), հատկապես վերջնամասի շարադրանքով (№ 3, 7), կրկնակով (արտահայտված յոկ **աղաչեմք** բառով, օրինակ՝ № 3)։ Հետաքրքրական է, որ **Կոյս անապական...** քարոզի (№ 3)՝ Մատենադարանի № 4068 ձեռագրում գտնվող օրինակի (թերթ 26բ) վերջին մասը (սկ.՝ **Բարեխաւսութեամբ սրբոյ և փառաւորեալ տիրուհո...**) տառացի կրկնությունն է **Քարոզ Զատկաց**-ի՝ Մատենադարանի № 2061 ձեռագրում առկա օրինակի (թերթ 2ա) համապատասխան հատվածի. մինչդեռ նույն քարոզի մեկ այլ օրինակում (Անթիլիաս, № 98, թերթ 20բ) այդ հատվածի որոշ պարբերություններ (**Զպահպանիչ Հոգիդ Սուրբ..., Աղաչեմք...**) փոխարինված են տարբեր և առավել ընդարձակ մի տնով,

---

[42] *Ուշադրության է արժանի* Քարոզ կենդանի և ձայն բանաւոր... *սկսվածքով գանձը «Քաստոհր» ծայրակապով, նվիրված Ստեփաննոս Նախավկային (տե՛ս ձեռ. № 2061, թերթ 86բ)։ Ղ. Ալիշանի ունեցած մի տեղեկության համաձայն ԺԲ դարում ապրել է* Քրիստոսատուր *անունով մի գրիչ և երգող, որն ունեցել է գանձեր (տե՛ս Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 232)։ Հնարավոր է, որ Ղ. Ալիշանը նկատի ունեցած լինի հենց մեզ հետաքրքրող Քրիստոսատուր գանձասացին, իսկ վերջինս ապրած լինի Ներսես Շնորհալուց առաջ կամ նրա ժամանակ։*

[43] *Այս հարցի կապակցությամբ ավելի մանրամասն տե՛ս* Ա. Քյոշկերյան, *Գանձասաց Սարգիս Անեցի, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1971, էջ 201—209։*

[44] *№ 231 (Երուսաղեմ) Գանձարանում (տե՛ս «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց» Ա, կազմեց՝* Ն. եպս. Պողարյան, *Երուսաղեմ, 1966, էջ 628—637) կան* քարոզ *կոչվող երկու միավորներ՝ նվիրված Գրիգոր Լուսավորչին (*Քրիստոս անմահ փառաց թագաւոր... *սկսվածքով, թերթ 179բ) և Առաքյալներին (*Աւրհնեմք ըզքեզ... *սկիզբով, թերթ 269ա), որոնք նույնպես պետք է դիտել իբրև գանձերի՝ առավել վաղ շրջանի նմուշներ։*

[45] *Եկեղեցու տոնին հատկացված* Ուրա՛խ լեր, հարսնացեալդ... *միավորի՝ № 80 (Փարիզ, թերթ 302ա) ձեռագրում գտնվող օրինակը միակն է, որ կոչվում է գանձ։*

որն իր շարադրանքով շատ ավելի նման է Գրիգոր Նարեկացու գանձերին:

Բերված օրինակներից կարելի է հանգել այն հետևության, թե տվյալ դեպքում գործ ունենք գանձերի վաղագույն նմուշների հետ: Առայժմ դժվար է ճշտել հիշյալ քարոզների հորինման ստույգ թվականը, բայց անցկացվող զուգահեռները հուշում են, որ դրանք (եթե ոչ բոլորը, գոնե մի մասը) պիտի ստեղծված լինեն գանձարանային մշակույթի զարգացման սկզբնական շրջանում: Անշուշտ, Գրիգոր Նարեկացու նորամուծությունը իր համար ուղի պիտի հարթեր աստիճանաբար, և այդ ընթացքում կարող էին գրվել բանաստեղծություններ ոչ միայն Գրիգոր Նարեկացու գանձերի, այլև դրանց համար նախատիպ ծառայած հին քարոզների և **Քարոզ Ջատկաց**-ի նմանողությամբ ու ազդեցությամբ: Ձեռագրական տվյալների հիման վրա կարելի է ասել, որ անցման այդ շրջանը երկար չի տևել: Գոնե Ներսես Շնորհալուց սկսած քարոզանման գանձեր, որպես կանոն, այլևս չեն հորինվել: Այս իմաստով չափազանց մեծ է Ներսես Շնորհալու գանձերի նշանակությունը: Թեև փոքրաթիվ, բայց դրանցում արտացոլված են գանձերի նարեկացիական բոլոր առանձնահատկությունները, որոնք Շնորհալու միջոցով և նրա շնորհիվ ոչ միայն պահպանվել, այլև փոխանցվել են հետագա դարերին: Մյուռոնօրհնությանը հատկացված նրա թեկուզ եզակի գանձի առկայությունը վկայում է, որ հեղինակը միաժամանակ ձգտել է առավել ընդլայնել գանձարանային ստեղծագործությունների ոլորտը՝ դրանք ծառայեցնելով նաև ծիսական նպատակների: Պատահական չէ բնավ, որ նրա օրինակով հետագայում ծիսական գանձեր են գրել Մխիթար Այրիվանեցին[46], իսկ ավելի ուշ՝ նաև ուրիշներ:

Գրիգոր Նարեկացու և Ներսես Շնորհալու միջև ընկած ժամանակաշրջանում գանձերից բացի, անշուշտ, պետք է հորինվեին նաև տաղային միավորներ: Եվ իրոք. Գանձարաններում տեղ են գտել Ժ—ԺԲ դդ. որոշ հեղինակների առանձին տաղեր: Պիտի ասել, որ գերակշռում են անանուն տաղերը նախ՝ այն պատճառով, որ հեղինակի անունը հողող ծայրակապ այստեղ ավելի հազվադեպ է, քան գանձերում. բացի այդ, հաճախ հանդես գալով գանձերին առընթեր կամ իբրև փոխեր՝ տաղերը զուրկ են լինում խորագրերից, որոնք իրենց լրացուցիչ նշումներով կարող էին օգնել ճանաչելու այդ ոտա-

[46] Է. Հարությունյան, *նշված աշխ.*, էջ 110—111։





*Հռոմկլայի բերդը։*

նավորները հորինողներին: Հաճախ դժվար է որոշել նաև այն տաղերի գրության ժամանակը, որոնք թեև պահպանված են հեղինակների անուններով, բայց այդ անձնավորությունների մասին կենսագրական ամենադույզն տվյալներն իսկ չունենք (օրինակ՝ Հովհաննես, Թադեոս, Բարսեղ և ուրիշներ):

Տաղասաց հեղինակների շարքում ուշադրություն են գրավում Քրիստոսատուրն ու Սարգիսը, որոնց անուններով պահպանված են նաև գանձեր[47]: Այս երկուսը հանդիպում են ձեռագրերի վաղագույն ընդօրինակություններում, ուստի բացառված չէ, որ նրանք լինեն ԺԲ դարում ապրած գանձասացներ Քրիստոսատուրն ու Սարգիս Անեցին: Գանձարաններում տեղ են գտել նաև տաղեր, որոնք պատկանում են Ժ—ԺԲ դդ. ապրած և ստեղծագործած հանրահայտ այնպիսի անձնավորությունների, ինչպիսիք են Գրիգոր Մագիստրոսը, Հովհաննես Սարկավագը, Գրիգոր Փոքր Վկայասերը: Սրանցից, ժամանակի առումով Գրիգոր Նարեկացուն ամենամոտիկ հեղինակը Գրիգոր Մագիստրոսն է (ԺԱ դ.): Գանձարաններում նրա անունով պահպանված է միայն մեկ տաղ՝ **Կարապետ սուրբ հաւատոյ...** (նվիրված Հովհաննես Մկրտչին)[48]: Բանաստեղծությունը կազմված է 12 քառատող տներից, որոնք հոդում են «Կարապետին տաղ» ծայրակապը[49]: Տաղը, որ հնագույն գրչագրերում տեղ չի գտել, Գրիգոր Մագիստրոսին վերագրվող գանձարանային միակ բանաստեղծությունն է[50]:

Ուշադրության արժանի մյուս հեղինակի՝ Հովհաննես Սարկավագի

---

47 *Քրիստոսատուրն ունի խաչի տոնին նվիրված մի մեղեդի* (Քերովբէից վեհագոյն... *սկսվածքով), որն առկա է № 3503 (թերթ 239ա), № 7785 (թերթ 461ա), № 79 (Փարիզ, թերթ 387ա), № Ma XIII 61 (Տյուբինգեն, թերթ 237ա) ձեռագրերում։ Բոլոր օրինակներն էլ թերի են, սկզբնատառերը հոդում են «Քրիստ», իսկ № 3503 ձեռագրում տաղի վերջում կա «Քրիստոսատուրէ տաղս» նշումը։ Մյուս հեղինակի՝ Սարգսի անունով հայտնի է Համբարձման տոնին նվիրված մի տաղ* (Այսաւր խորհուրդ մարդեղութեան... *սկսվածքով), պահպանված № 3503 (թերթ 316բ), № 7785 (թերթ 311ա), № 231 (Երուսաղեմ, թերթ 472բ) ձեռագրերում։ Տաղն ունի ծայրակապ՝ «Ա—Ք», իսկ երկրորդ մասը՝ սկսած* Սա պրսակ լրման... *տողից, երբեմն հանդես է գալիս տաղից անջատ, իբրև փոխ և հոդում է «Սարգիս»։*

48 *Ձեռ. № 423, թերթ 171բ։*

49 Գրիգոր Մագիստրոս, *Տաղասացութիւնք, Վենետիկ, 1868, էջ 93—94։ Տաղն այստեղ տների չի բաժանված։*

50 *Գրիգոր Մագիստրոսն ունի տաղ կոչվող մեկ այլ բանաստեղծություն* (Լուաւ բէ եկն... *սկսվածքով), բայց դա ոչ մի կապ չունի գանձարանային տաղերի հետ (տե՛ս* Գրիգոր Մագիստրոս, *Թղթեր, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 234)։*

ժառանգության մեջ տվյալ դեպքում մեզ հետաքրքրողը **Ծագումն փառաց Էին...** տաղն է՝ նվիրված Հարության տոնին: Քառանեկու քառատող տներից կազմված այս միավորը, որ հայտնի է վաղագույն մի քանի ընդօրինակություններով[51], ունի ենթաբաժանումներ՝ **Փ** և **Այլ ազգ** նշումներով: № 3503 Տաղարանում բանաստեղծությունը խորագրված է՝ **Այլ տաղ սուրբ Յարութեան բովանդակ տարոյն, զկնի Իւղաբերից Աւետարանացն և ապայ ասի գիշերին. նոյնպէս և զկնի վերջի Աւետար[ան]ին արձակման. Սարկաւագին է ասացեալ:** Այստեղ **բովանդակ տարոյն, զկնի Իւղաբերից Աւետարանացն, ասի գիշերին** խոսքերը ցույց են տալիս, որ բանաստեղծությունը թեև նվիրված է Հարության տոնին, բայց ունեցել է ավելի մեծ ընդգրկում ու երգվել է ամբողջ տարվա ընթացքում, նաև գիշերային ժամերգության ժամանակ: Բացառված չէ, որ տաղն սկզբնապես հորինված լինի իբրև արտագանձարանային երգ:

Քննվող ժամանակաշրջանի մյուս հեղինակը, որին պիտի անդրադառնալ, Գրիգոր Գ Պահլավունի կաթողիկոսն է՝ Ներսես Շնորհալու եղբայրն ու հովանավորը: Վերջինիս անունով պահպանվել են գանձարանային տաղերի մի քանի նմուշներ, որոնցից գեթ երկուսը՝ **Ո՞վ զարմանալի...**[52] և **Ի յեւս արևու...**[53], հաստատապես պատկանում են իրեն: Առաջինը՝ նվիրված Մկրտության տոնին, տեղ է գտել Գանձարաններում, ինչպես նաև ուրիշ ժողովածուներում, բայց հին ընդօրինակություններով չի հասել: Հետաքրքրական է, սակայն, որ Գանձարանների վաղագույն օրինակներում խիստ հաճախ կան լուսանցային նշումներ այն մասին, թե այս կամ այն միավորը պիտի կատարել **Ո՞վ զարմանալի...** տաղի եղանակով: Հնարավոր է, ուրեմն, որ տվյալ տաղը հեղինակի կողմից ստեղծված լինի Գանձարաններից անկախ, բայց գանձարանային ստեղծագործությունների հետևությամբ ու ազդեցությամբ:

Գրիգոր Պահլավունու հեղինակած մյուս՝ **Ի յեւս արևու...** տաղը, որ նվիրված է Գրիգոր Լուսավորչին, հանդիպում է ինչպես հին շրջանի, այնպես էլ հետագայի շատ Գանձարաններում: Առավել հին օրինակներում բանաստեղծությունը, սովորաբար, փոխ է ու կից՝

---

[51] *Ձեռ. № 3503 (թերթ 160ա), № 7785 (թերթ 289բ), № 80 (Փարիզ, թերթ 166ա):*

[52] *Ձեռ. № 426 (թերթ 8բ), № 8251 (թերթ 26բ), № 5218 (թերթ 8բ) և այլն: Տե՛ս նաև «Մաշտոց», Վիեննա, 1880, էջ 527:*

[53] *Ձեռ. № 3503 (թերթ 259ա), № 7785 (թերթ 164բ), № 2672 (թերթ 116բ), № 5936 (թերթ 265ա) և այլն:*



**Սրովբէից ձայնիւ...** տաղին (նվիրված Գրիգոր Լուսավորչին): Վերջինս, որ ունի իմաստային ծայրակապ և տարբերվում է փոխից նաև իր տաղաչափությամբ, պատկանում է Ներսես Շնորհալու գրչին: Անջատաբար ստեղծված այս տաղն ու փոխը, ըստ երևույթին, ընդհանուր բովանդակության պատճառով հետագայում կցվել են իրար:

Հիմնականում սրանք են Գանձարան ժողովածուների հետ առնչվող տաղային այն միավորները, որոնք ստեղծվել են Գրիգոր Նարեկացուց հետո մինչև Ներսես Շնորհալին: Այդ կարճատև ժամանակամիջոցում, ինչպես տեսնում ենք, գրվել են և՛ գանձեր, և՛ տաղեր: Հետաքրքրականն այն է, որ դրանք հանդես են եկել ոչ իբրև գանձից ու տաղից բաղկացած համակարգի տարրեր: Ոչ միայն Գրիգոր Նարեկացուց անմիջապես հետո, այլև ավելի ուշ՝ ԺԳ—ԺԴ դարերում գանձերը շարունակում են հորինվել տաղերից անկախ: Այսպես օրինակ. Գեորգ Սկևռացին, նրա աշակերտ Մովսես Երզնկացին, Մխիթար Այրիվանեցին և ուրիշներ ունեն մեկ-երկու տասնյակ ու ավելի գանձ, բայց տաղեր կա՛մ առհասարակ չեն գրել, կա՛մ գոհացել են մի քանի առանձին նմուշներով: Նույնը պիտի ասել տաղերի մասին: Օրինակ՝ ԺԳ դ. հեղինակ Սրիկ Կոստանդի անունով գանձեր չեն պահպանվել, բայց հայտնի են մի ամբողջ շարք տաղեր: Ներսես Շնորհալին ևս ներկայանում է գերազանցապես իբրև տաղասաց, բայց ի տարբերություն մյուսների, նրա տաղերում տեսնում ենք գանձարանային օրինաչափությունների ցայտուն դրսևորումը: Եթե գանձերում Ներսես Շնորհալին հիմնականում կրկնում էր Նարեկացուն, տաղերում նա իր մեծ նախորդի թողած ավանդները զարգացնելով՝ հասցրեց մի նոր, առավել բարձր մակարդակի, որը դարձավ չափանիշ գանձարանային մշակույթի հետագա առաջընթացի համար:

Տպագիր աղբյուրներում տեղ գտած Ներսես Շնորհալու տաղերը, ամբողջությամբ վերցրած, հասնում են ավելի քան վեց տասնյակի: Սակայն հեղինակի տաղային ժառանգությունն այդքանով չի սահմանափակվում: Հնագույն շրջանի ձեռագրերում մեզ հանդիպել են Ներսես Շնորհալուն պատկանող շուրջ չորս տասնյակ միավորներ, որոնք մինչև այժմ մնացել են անհայտ ու անտիպ: Այսպիսով, ստացվում է տաղերի բավական պատկառելի մի քանակ: Սրանք համեմատաբար նախնական ու ամբողջական տեսքով են պահպանվել հատկապես հնագույն շրջանի ժողովածուներում, որոնցում առավել ցայտուն է դրսևորված նաև դրանց գանձարանային պատկերը: Պարզվում է, որ հեղինակն իր այդ բանաստեղծությունները հորինել է տաղ ու փոխ զույ-

գերով, որոնց բաղկացուցիչ տարրերը կապված են եղել միմյանց հետ՝ կազմելով համակարգային մի կուռ ամբողջություն։ Տվյալ տոնին հատկացված տաղն ու համապատասխան փոխը հանդես են եկել մեկ ընդհանուր խորագրով։ Վերջինս դրվել է տաղից առաջ, իսկ փոխն առանձին խորագիր չի ունեցել, այլ՝ **Փոխէ, Փոխ** կամ **Փ** նշումը, գրված կարմիր թանաքով, երբեմն էլ փոխարինված լոկ պայմանական գծանշանով ( )։ Գանձարան ու Տաղարան ժողովածուների նյութերի ցանկում փոխերը չեն ընդգրկվել։ Այս բոլորից պիտի հետևցնել, որ փոխերը դիտվել են ոչ թե տաղերից անջատ, այլ իբրև վերջիններիս օրգանական մասը։ Այդ ձույլ ամբողջականության մասին են վկայում նաև տաղ ու փոխ զույգերի իմաստային ծայրակապերը, որոնք միասին կազմում են ավարտուն նախադասություն։

Առհասարակ տաղերի, փոխերի ու մեղեդիների կառուցվածքային և կիրառական ընդհանրությունները առիթ են տվել, որպեսզի ժողովածու կազմողները ցուցաբերեն ազատ մոտեցում, ինքնակամ կերպով կոտորակելով կամ միմյանց կցելով տարբեր անձանց բանաստեղծություններ։ Հետևանքը եղել է այն, որ առանձնացված հատվածները ստացել են նոր խորագրեր, ենթարկվել են հեղինակային ոչ ճիշտ վերագրումների։ Նման բախտ է վիճակվել նաև Ներսես Շնորհալու բանաստեղծություններին։ Ժամանակի ընթացքում նրա տաղերն ու փոխերը միմյանցից անջատվել են ու սկսել օգտագործվել առանձինառանձին կամ ուրիշ հեղինակների համապատասխան երգերի վերակցումներով։ Այսպիսով, միասնական զույգերն, աստիճանաբար տրոհվելով, ստեղծել են զանազան խճողումներ, որտեղ կորել է և՛ երբեմնի ամբողջությունը, և՛ իսկական հեղինակը։ Այդ տաղերն ու փոխերը երբեմն կրճատվել են ու գրկվել ծայրակապով կամ խորագրով արտահայտված մտքերից՝ ավելի դժվարացնելով դրանց հորինողին ճանաչելու հնարավորությունը։

Ասվածից պարզ է դառնում, որ Ներսես Շնորհալու գանձարանային տաղերի հետազոտությունն այժմ ենթադրում է, առաջին հերթին, դրանց տաղ ու փոխ զույգերի նախնական ամբողջականության վերականգնում։ Ճիշտ է, հիշյալ բանաստեղծությունների տպագրված օրինակներում տաղի ու փոխի հարաբերությունը որոշ դեպքերում պահպանվել է, բայց հրատարակիչների կողմից այդ միասնականությունն, իբրև ձույլ ամբողջություն, չի գիտակցվել։ Բացի այդ, հրատարակված մի շարք միավորներ թերի են, ուստի միանգամայն հասկանալի է դառնում հնագույն գրչագրերի դերն ու նշանակությունը



Ներսես Շնորհալու տաղային ժառանգությունն ամբողջությամբ ճանաչելու և ճիշտ գնահատելու առումով։

Այժմ ծանոթանանք այդ բանաստեղծություններին, անդրադառնալով նախ՝ հրատարակվածներին, այնուհետև՝ նորահայտ միավորներին։

Ներսես Շնորհալու տաղերի ու փոխերի մինչև այժմ եղած հրատարակություններից կանգ կառնենք առաջին հերթին «Բանք չափաւ» ժողովածուի վրա, որը ժամանակի առումով վաղագույնն է և որտեղ ի մի են բերված մեզ հետաքրքրող նյութերի՝ տպագրությամբ հայտնի նմուշների մեծագույն մասը՝ 58 միավոր[54]։ Գրքում տաղերի ընդհանուր թիվը 59 է, բայց վերջինը՝ **Նորոգօղ հնութեան...** սկսվածքով[55], մենք նկատի չենք ունեցել, որովհետև այն սովորաբար հանդես է գալիս Ներսես Շնորհալու **Աշխարհ ամենայն...** արտագանձարանային երգին կից ու, մեր կարծիքով, սխալմամբ է ընդգրկված հեղինակի տաղերի շարքում։ Բացի այդ, առանձին միավոր չենք հաշվել նաև **Յարեաւ փառաց թագաւորն...** հորդորակի երկրորդ մասը **(Քրիստոս յարեաւ ընդ նմա...)**՝[56] ներկայացված լուսանցային **Փ** նշումով, որովհետև հնագույն աղբյուրներում նման անջատում չի կատարված։

Ստորև բերում ենք հիշյալ 58 տաղային միավորների ցանկը՝ այբբենական հաջորդականությամբ[57].

1. Այսօր աւետեաց Գաբրիէլի...
2. Այսօր Գաբրիէլ հրեշտակապետն...
3. Այսօր մայր Սիոն...
4. Անարատ տաճար...
5. Անեղ Որդին Հօր...
6. Անմարմնոցըն հրեղինաց...
7. Առաջին լոյս երրեակ...
8. Առաւօտ լուսոյ արևելեան...
9. Առաքեալք Աստուածորդւոյն...
10. Աստանօր տեսիլ ահեղ...
11. Աստուածային խորոցն անճառ...
12. Արեգակն արդար ըզհուր...

---

[54] **Ներսես Շնորհալի,** *Բանք չափաւ, էջ 365—491։*

[55] *Նույն տեղում, էջ 477։*

[56] *Նույն տեղում, էջ 400։*

[57] *«Բանք չափաւ»-ում ընդգրկված* Հանճարեղ շնորհալիդ... *և* Շնորհօք Սրբոյ Հոգւոյն... *տաղերը, մեր կարծիքով, Ներսես Շնորհալունը չեն (այդ մասին խոսք կլինի համապատասխան տեղում)։ Բացի այդ,* Յարեաւ փառաց թագաւորն... *միավորը ոչ թե առանձին բանաստեղծություն է, այլ կից գտնվող* Նոյնագոյ ընդ Հօր... *տաղի օրգանական մասը։ Հետևապես, ժողովածուն իրականում ընդգրկում է Ներսես Շնորհալուն պատկանող ոչ թե 58, այլ 55 տաղային միավոր։*

13. Բանի աւետաւոր...
14. Բարբառ աւետեաց ձայնի...
15. Բարունակ բերող...
16. Եկայք զուարճացեալ...
17. Երգ նոր աւետեաց...
18. Երջանիկ հոգիահրաշ...
19. Ի գաւազանէն Յեսսեայ...
20. Ի խաչին տընկեալ...
21. Ծարաւեցաւ Տէրն ի խաչին...
22. Կանայքն արտասուօք...
23. Կեանքն ընդ Հօր...
24. Կենաց փայտ տընկեալ...
25. Հանել ընդ նոսին...
26. Հանճարեղ շնորհալից...
27. Հօր կամաւ իջեալ...
28. Մայր Աստուծոյ Մարիամ...
29. Յարեաւ փառաց թագաւորն...
30. Ներպարունակեալ իննեակ...
31. Ներպարունակեալ խոր-հուրդ...
32. Նոյնագոյ ընդ Հօր...
33. Նոյն ինքն անդրանիկըն...
34. Նորահրաշ ծնընդեան քո...
35. Նորահրաշ տեսիլ...
36. Նորահրաշ տօնիւ...
37. Նոր աւետեաց լուր...
38. Նոր դրախտին եկեղեցւոյ...
39. Նոր դրախտի քո, Տէ՛ր...
40. Նոր Եդեմ բանաւոր...
41. Նոր երկինք յերկրի...
42. Նոր և առաջին լոյս...
43. Նոր թագաւորին...
44. Նոր իմն աւետեաց...
45. Նոր իմն է հընչին...
46. Նոր լոյս յարփենոյն...
47. Նոր ծաղիկ բղխէ...
48. Նոր ծաղիկ պայծառ...
49. Նոր ձայն աւետեաց...
50. Նորոյ գինոյն իմաստու-թեան...
51. Նոր տօնիւս երկնաւորաց...
52. Նըստեալ կանայքն ողբա-յին...
53. Շնորհօք Սըրբոյ Հոգւոյն...
54. Որդիքն Որոտման...
55. Սրովբէից ձայնի...
56. Տէր փառաց այսօր...
57. Տէր փառաց անճառ...
58. Տիրական տօնիւ...

«Բանք չափաւ»-ում Ներսես Շնորհալու տաղերն ու փոխերը զետեղված են **Տեառն Ներսեսի տաղք** ընդհանուր խորագրի տակ, դասավորված ըստ եկեղեցական տոների հաջորդականության: Այդ միավորների վերնագրերը բերված են երեք տարբեր ձևերով.

**ա.** Ամփոփ ու հակիրճ ձևով տրված է եկեղեցական համապատասխան տոնի անունը. օրինակ՝ **Աւետեաց, Ծաղկազարդին, Ի Փոխումն Կուսին** և այլն:

**բ.** Օգտագործված է **Ի նոյն** բառը: Դա այն տաղերի համար է, որոնք հատկացված են նախորդ միավորի համար արդեն մատնանշված տոնին. օրինակ՝ Ծննդյան հինգ տաղերից առաջինը խորագրված է **Ի Ծնունդն Տեառն**, իսկ մյուս չորսը՝ **Ի նոյն:**



**գ.** Օգտագործված է **Յորդորակ** բառը: Սրանք այն միավորներն են, որոնք հաջորդում են կա՛մ տոնի անունը նշող, կա՛մ **Ի նոյն** խորագիրը ունեցող տաղերին. օրինակ՝ **Ի Յարութիւն Տեառն** խորագրով տաղին հաջորդող միավորը կոչվում է **Յորդորակ:** Այդպես է կոչվում նաև **Ի նոյն** վերնագրով հանդես եկող մեկ այլ տաղի կից գտնվող միավորը:

Խորագրային այս ձևերը հուշում են այն մասին, որ դրանք պետք է ստեղծված լինեն հրատարակիչների կողմից: Վերջիններս իբրև հիմք ընդունել են վենետիկյան հավաքածուի մի քանի գրչագրեր, բայց, ցավոք, հիշյալ ձեռագրերի մասին անհրաժեշտ տեղեկություններ չունենք: Մեզ հայտնի չէ, թե ի՞նչ ընդօրինակություններ են դրանք և ի՞նչպիսիք են եղել բնագրային խորագրերը: Պիտի ենթադրել, որ տոնի անվանումով կամ **Ի նոյն** վերնագրով ներկայացողները եղել են տաղեր, իսկ **Յորդորակ** կոչվածները փոխերն են, որոնք այդ անունով են հանդես գալիս ուշ շրջանի ձեռագրերում:

Ներսես Շնորհալու տաղերը «Բանք չափաւ»-ում ներկայացված են առանձին-առանձին՝ իբրև ինքնուրույն բանաստեղծություններ: Այսուհանդերձ, **Յորդորակ** կոչվողները, թվով 16 միավոր (տե՛ս Ցանկ, № 4, 10, 13, 16, 19, 22, 23, 24, 25, 27, 29, 39, 46, 47, 51, 53), համապատասխան տաղերին կից են՝ ապացուցելով տաղի ու փոխի, իբրև ձույլ ամբողջության, երբեմնի կապը: Ըստ այդմ, ժողովածուում որպես զույգեր առանձնանում են հետևյալ 32 տաղերն ու հորդորակները.

1. Այսօր աւետեաց Գաբրիէլի...
   **Յորդորակ.** Նոր ծաղիկ բղխէ..
2. Անեղ Որդին Հօր...
   **Յորդորակ.** Շնորհօք Սըրբոյ Հոգւոյն...
3. Նոր իմն աւետեաց...
   **Յորդորակ.** Հօր կամաւ իջեալ...
4. Նոր ձայն աւետեաց...
   **Յորդորակ.** Կանայքն արտասուօք լային...
5. Նըստեալ կանայքն ողբային...
   **Յորդորակ.** Կեանքն ընդ Հօր...
6. Նոյնագոյ ընդ Հօր...
   **Յորդորակ.** Յարեաւ փառաց թագաւորն...
7. Տէր փառաց այսօր...
   **Յորդորակ.** Աստանօր տեսիլ ահեղ...

8. Ներպարունակեալ խորհուրդ...
**Յորդորակ.** Հանել ընդ նուին...
9. Այսօր Գաբրիէլ հրեշտակապետն...
**Յորդորակ.** Անարատ տաճար...
10. Նոր դրախտին եկեղեցւոյ...
**Յորդորակ.** Կենաց փայտ տընկեալ...
11. Առաջին լոյս երրեակ...
**Յորդորակ.** Նոր տօնիւս երկնաւորաց...
12. Առաքեալք Աստուածորդւոյն...
**Յորդորակ.** Եկայք զուարճացեալ...
13. Այսօր մայր Սիոն...
**Յորդորակ.** Նոր դրախտի քո, Տէ՛ր...
14. Արեգակն արդար ըզհուր...
**Յորդորակ.** Բանիւ աւետաւոր...
15. Որդիքն Որոտման...
**Յորդորակ.** Նոր լոյս յարփենւոյն...
16. Ի խաչին տընկեալ...
**Յորդորակ.** Ի գաւազանէն Յեսսեայ...

Հետաքրքրական է նկատել, որ վերոհիշյալ 16 զույգերից 13-ը (№ 1, 2, 3, 4, 6, 8, 9, 10, 11, 12, 14, 15, 16)[58] տաղի ու փոխի նույնպիսի հարաբերությամբ են պահպանված նաև հնագույն այն գրչագրերում, որոնք մենք դիտել ենք իբրև Ներսես Շնորհալու բանաստեղծությունների համար առավել արժանահավատ սկզբնաղբյուրներ: Մնացյալ երեք զույգերը նշված աղբյուրներում կա՛մ փոխեր են (№ 5, 7), կա՛մ տարբեր նմուշների զուգակցումներ (№ 13): Ինչ վերաբերում է առանց զույգի հանդես եկող 26 միավորներին, վաղագույն ընդօրինակություններում դրանք ևս մեծ մասամբ ունեն իրենց կցորդները, որոնց շնորհիվ ճշտվում է այդ բանաստեղծությունների զգալի մասի տաղ կամ փոխ լինելը:

Ներսես Շնորհալու տաղերի մյուս կարևոր հրատարակությունը կապվում է Նորայր եպս. Պողարյանի անվան հետ: Վերջինս «Սիոն» ամսագրի 1949 թվականի 1—9-րդ համարներում պարբերաբար լույս է ընծայել Երուսաղեմի հավաքածուի № 231 և № 1193 ձեռագրերում իրեն հանդիպած մի շարք տաղեր, որոնց մի մասը 1830 թվականի

[58] *Հնագույն աղբյուրներում այս տաղը* (Ի խաչին տընկեալ...) *կից ունի ոչ թե մեկ, այլ երկու փոխ՝* ա. Նոր ծառոյն կենաց... *և* բ. Ի գաւազանէն Յեսսեայ...:



վենետիկյան հատորի համապատասխան թերի օրինակների լրացումներն են, իսկ մի քանիսը՝ նշված հատորում առհասարակ բացակայող նմուշներ: Բերում ենք այդ միավորների ցանկը նախ՝ տպագրվածների լրացումները, իսկ ապա՝ նորահայտները.

### ա) Լրացումներ

1. Անեղ Որդին...
2. Նոր դրախտին եկեղեցւոյ...
3. Նոր Եդեմ բանաւոր տընկոյն...[59]
4. Նոր ծաղիկ պայծառ ցուցաւ...
5. Նոր ձայն աւետեաց...
6. Սրովբէից ձայնիւ...

### բ) Նորահայտներ

1. Այսօր ընդ ծագելն արևուն...
**Փ.** Աստուածասէր և սուրբ կանայք... (տաղի մասն է)
2. Այսօր լոյս ծագեաց...
**Փ.** Լըւան զաւետեաց ձայն... (տաղի մասն է)
3. Բարձրացիր դշխոյ...
4. Գովեմք այսաւր զհայրըն բարո...
5. Գրիգորի՛ոս, առաքինի հըսկող...
6. Ցընծան այսօր երկինք...

Նորահայտ միավորների ցանկում տեղ գտած վերջին տաղը **(Ցընծան այսօր երկինք...)** Ն. եպս. Պողարյանից առաջ լույս է ընծայել Ա. Չոպանյանը: Այդ առաջին հրատարակությունը կատարված է վենետիկյան հավաքածուի № 475 ձեռագրի հիման վրա, ուր բանաստեղծությունն անհեղինակ է, բայց հրատարակչին հայտնի է տաղի՝ Էջմիածնի Մատենադարանում պահվող մի օրինակ **Տեառն Ներսէսի ասացեալ** խորագրային նշումով, որը, ըստ Ա. Չոպանյանի, նկատի ունի Ներսես Շնորհալուն[60]: Ցանկի 3-րդ և 5-րդ միավորները, որոնք կազմում են տաղ ու փոխ զույգ **(Գրիգորիո՛ս, առաքինի հըսկող... և Բարձրացիր դշխոյ...)**, Ն. եպս. Պողարյանը հրատարակել է առանց հեղինակային որևէ վերագրման, սակայն հնագույն աղբյուրներում այդ երկու բանաստեղծությունները, ինչպես նաև ցանկում տեղ

[59] *Տաղի ամբողջական օրինակը նախապես հրատարակված է եղել, բայց Ն. եպս. Պողարյանը, ըստ երևույթին, այդ չի իմացել (տե՛ս «Սիոն», 1867, № 1, էջ 14):*

[60] Ա. Չոպանեան, *Հայ էջեր, Փարիզ, 1912, էջ 49—50:* Ա. *Չոպանյանի ակնարկած էջմիածնի Մատենադարանի № 47 ձեռագիրը Գևորգյան ցուցակի թվահամարն է, որը համապատասխանում է Մաշտոցի անվան Մատենադարանի № 2672 ձեռագրին:*

գտած մյուս միավորները, հանդես են գալիս Ներսես Շնորհալու անունով, ուստի հեղինակային պատկանելությունը կասկած չի հարուցում։

«Սիոն» ամսագրում տեղ գտած Ներսես Շնորհալու տաղերն ու փոխերը կարևոր նշանակություն ունեն նախ՝ այն առումով, որ մատնանշում են «Բանք չափաւ»-ում առկա որոշ միավորների պակասավոր ու թերի լինելը, այնուհետև վկայում հիշյալ ժողովածուից դուրս մնացած նորանոր նմուշների հայտնաբերման հնարավորության մասին։ Առավել ուշագրավն այն է, որ դրանք հանդես են գալիս տաղ ու փոխ զույգերով, թեև հրատարակիչները ուշադրություն չեն դարձրել Ներսես Շնորհալու տաղային ժառանգությունը բնորոշող այդ էական առանձնահատկության վրա։

Տաղ ու փոխ զույգի մի խիստ ուշագրավ օրինակ է **Նոր երկինք յերկրի...** և **Իմանալի սերովբէ...** միավորների փոխառնչության բացահայտումը։ «Բանք չափաւ»-ում տաղը (**Նոր երկինք յերկրի...**) թերի է, առկա են սկիզբը և ավարտը՝ «Ներսէս...ի» ծայրակապով։ Ձեռագրերի վաղագույն ընդօրինակություններում պահպանված է բանաստեղծության նաև միջին մասը (ծայրակապ՝ «ի գովեստ Աստվածածնի»), որով այն ամբողջանում է և հոդում՝ «Ներսէսի գովեստ Աստվածածնի»։ Բացի այդ, հիշյալ հնագույն գրչագրերում տաղին կից հանդես է գալիս փոխը (**Իմանալի սերովբէ...**)՝ «Ի խնդրոյ մեծին Թորոսի ե» ծայրակապով, ուստի ակներև է դառնում երկուսի փոխադարձ կապը՝ իբրև տաղ ու փոխ։ Վերջինս հաճախ հանդիպում է նաև հատվածաբար՝ սկսած **Մայր կենդանեացըն հոգւոց...** տողից, «Մեծին Թորոսի ե» ծայրակապով, որի պատճառով, թյուրիմացաբար, Թորոսը համարվել է բանաստեղծության հեղինակը[61]։ 1947 թ. Ն. Ակինյանը հրատարակել է **Իմանալի սերովբէ...** միավորն ամբողջությամբ, տալով բավական ընդարձակ բացատրություն[62]։ Պարզվում է, որ Աստվածածնին նվիրված սույն ստեղծագործությունը, արտահայտված տաղ ու փոխ համակարգով, Ներսես Շնորհալին հորինել է Կիլիկիայի իշխան Թորոսի խնդրանքով[63]։

---

61 Ա. Տեկյանց, *Հայերգ, Թիֆլիս, 1882, էջ 7։*

62 Ն. Ակինյան, *Ս. Ներսէս Շնորհալւոյ Գովեստ ի ս. Աստուածածինն ի խնդրոյ մեծին Թորոսի, «ՀԱ», 1947, № 1, էջ 46—49։ Տաղը հրատարակվել է նաև ավելի ուշ՝ իբրև Ներսես Շնորհալու նորահայտ և անտիպ բանաստեղծություն* (Ա. վրդ. Բերբերյան, *Ս. Ներսես Շնորհալու անտիպ տաղերը, «Էջմիածին», 1967, Դ, էջ 30)։*

63 *Տաղային այս զույգի մասին առավել մանրամասն տե՛ս* Մանրագրություններ *բաժնում։*



Ներսես Շնորհալու տաղերի նմուշներ հրապարակվել են նաև «Բազմավէպ»-ի էջերում։ Այսպես օրինակ.

1. Առաւօտին շաւեղի...[64]
2. Կայր մայր Տեառն...[65]
3. Միակն ի միոյն...[66]

Սրանցից առաջինը ներկայացված է իբրև անհեղինակ տաղ։ Մյուս երկուսի խորագրերում առկա է Ներսես կաթողիկոսի անունը։ Վաղագույն գրչագրերում բոլորն էլ պահպանված են Ներսես Շնորհալու անունով։

Ա. Տեկյանցը ևս հրատարակել է Ներսես Շնորհալուն պատկանող տաղերի մի փունջ՝ 13 միավոր։ Դրանք, սակայն, տպագրությամբ հայտնի տաղեր են կամ տաղերի հատվածներ, որոնք քանակի տեսակետից որևէ փոփոխություն չեն առաջացնում[67]։ Այդ տաղերից ուշագրավ է **Անեղ Որդին...** միավորը, որն իր ծավալով ու բովանդակությամբ նման չէ ո՛չ 1830 թվականի հրատարակությանը, ո՛չ «Սիոն»-ում տպագրվածին։ Ա. Տեկյանցի ներկայացրած այս տարբերակը մեզ հանդիպել է հնագույն գրչագրերում։

Ներսես Շնորհալու տաղերի առանձին միավորներ լույս են տեսել նաև թարգմանաբար։ Ագաթանգեղոսի 1843 թվականի իտալերեն հրատարակության վերջում, **Հավելված** բաժնում, Լուիջի Կարրերի թարգմանությամբ բերված են երեք տաղեր Ներսես Շնորհալու անունով.

1. Երջանիկ հոգիահրաշ...[68]
2. Ի յելս արևու...[69]
3. Հանճարեղ շնորհալիդ...[70]

**Ի յելս արևու...** միավորը, որին արդեն անդրադարձել ենք, ինչպես գիտենք, պատկանում է ոչ թե Ներսես Շնորհալու, այլ նրա եղբոր՝ Գրիգոր Գ կաթողիկոսի գրչին։ Տաղերից վերջինի մասին (**Հանճարեղ շնորհալիդ...**) նույնպես ասվեց, որ սխալմամբ է վերագրված

---

64 *«Բազմավէպ», Վենետիկ, 1932, էջ 100։*

65 *Նույն տեղում, 1894, էջ 166—167։*

66 *Նույն տեղում, 1889, էջ 269—270։*

67 Ա. Տեկյանց, *նշված աշխ., էջ 1—2, 6, 7, 12—16, 17—21, 22—24։*

68 Storia di Agatangelo, versione italiana .. Venezia, 1843, p. 226—232.

69 *Նույն տեղում, էջ 233—235։*

70 *Նույն տեղում, էջ 223—225։*

Ներսես Շնորհալուն: Ինչ վերաբերում է **Երջանիկ հոգիահրաշ...**ին, որը թարգմանչին հայտնի է հինգ ձեռագիր աղբյուրներից, ապա այն տարբեր է բանաստեղծության վենետիկյան տարբերակից ու առավել հարազատ է մեր ներկայացրած քննական բնագրին:

1899 թ. գերմանացի հայագետ **Ֆեթթերը** լույս է ընծայել մի հոդված, ուր խոսում է Ներսես Շնորհալու եկեղեցական տաղերի ու դրանց մի քանի էական առանձնահատկությունների մասին՝ բերելով որոշ տաղերի գերմաներեն թարգմանությունը: Գրախոսելով հոդվածը՝ Հ. Տաշյանը անդրադառնում է նաև տաղերի թարգմանությանը, որը նա համարում է բարձրորակ ու ճշգրիտ և բերում է այդ բանաստեղծությունների ցանկը. վերջինս ընդգրկում է հետևյալ 15 միավորները[71].

1. Անարատ տաճար...
2. Անմարմնոցըն հրեղինաց...
3. Առաքեալք Աստուածորդւոյն...
4. Աստուածային խորհրդն անճառ...
5. Բանիւ աւետաւոր...
6. Բարբառ աւետեաց...
7. Երգ նոր աւետեաց...
8. Ծարաւեցաւ Տէրն ի խաչին...
9. Կեանքն ընդ Հօր...
10. Մայր Աստուծոյ Մարիամ...
11. Յարեաւ փառաց թագաւորն...[72]
12. Նոյնագոյ ընդ Հօր...
13. Նըստեալ կանայքն...
14. Տէր փառաց անճառ...
15. Տիրական տօնիւ...

Ներսես Շնորհալու **Անեղ Որդին..., Ծարաւեցաւ Տէրն ի խաչին..., Արեգակն արդար ըզհօր...** տաղերը թարգմանվել են նաև ռուսերեն: Առաջինը՝ լոկ հատվածաբար, իսկ երկրորդն ամբողջությամբ լույս են տեսել 1916 թ.[73]: Վերջինը, նույնպես հատվածաբար, տպագրվել է

[71] **P. Vetter**, Nerses Schnorhali's Kirchenlieder, „Theol. Quartalschrift“, Ravensburg (Tübingen). LXXXI (1899). Heft I. p. 89—111 *(տե՛ս «ՀԱ», Վիեննա, 1899, № 1, էջ 27–28)։*

[72] *Սույն միավորը, ինչպես արդեն նշվել է, ուրույն տաղ չէ, այլ* Նոյնագոյ ընդ Հօր... *տաղի մասը։*

[73] «Поэзия Армении с древнейших времен до наших дней», ред., вступ. очерк и примеч. В. Брюсова. М., 1916. с. 167–169.



1972 թ.[74]: 1916 թվականի հրատարակությունը հետագայում ունեցել է նաև այլ տպագրություններ[75]: Պիտի նկատել, որ և՛ ռուսերեն, և՛ գերմաներեն հիշյալ թարգմանությունները բոլորն էլ կատարված են տաղերի 1830 թ. վենետիկյան հրատարակության հիման վրա:

Այսպիսով, «Բանք չափաւ»-ում տեղ գտած Ներսես Շնորհալու 55 տաղերին պիտի գումարել «Սիոն»-ում, «Բազմավէպ»-ում և «Հանդէս ամսօրեայ»-ում լույս տեսած հետևյալ 10 միավորները, որով հենինակի տպագիր տաղերի ընդհանուր թիվը դառնում է 65[76].

1. Այսօր ընդ ծագելն...
2. Այսօր լոյս ծագեաց...
3. Առաւօտին շաւեղի...
4. Բարձրացիր, դշխոյ...
5. գովեմք այսաւր...
6. Գրիգորիո՛ս, առաքինի հըսկող..
7. Իմանալի սերովբէ...
8. Կայր մայր Տեառն...
9. Միակն ի միոյն...
10. Ցընծան այսօր երկինք...

Հնագույն գրչագրերը, ինչպես նշվեց, բովանդակում են Ներսես Շնորհալու գրչին պատկանող բազմաթիվ տաղեր, որոնք մինչև այժմ չեն արժանացել հրատարակության: Այդ տաղերը, որոնք առանձին ցանկով ներկայացված են ստորև, հաշվվում են 37 միավոր: Բացի այդ, հիշյալ գրչագրերը ի հայտ են բերում նաև հրատարակված որոշ տաղերի առավել ամբողջական օրինակները կամ տարբերակները: Բերում ենք նաև դրանց ցանկը.

**ա. տպագրված միավորների լրացումներ**

1. Ընդ որս եւ մանկունք... (տպագրում՝ **Հանել ընդ նոսին...** սկսվածք)
2. Նոր երկինք յերկրի...

**բ. տպագրված միավորների տարբերակներ**

1. Ծարաւեցաւ Տէրն ի խաչին...
2. Նոր իմն անհաւոր...
3. Նոր ծաղիկ պայծառ...

**գ. նորահայտ միավորներ**

[74] «Армянская средневековая лирика». вступ. статья, составл. и примеч. Л. М. Мкртчяна. Л, 1972, с. 202.

[75] *Նշված տպագրությունների մասին տե՛ս* **Մատենագրություններ** *բաժնում։*

[76] *Ներսես Շնորհալու անունով լույս են տեսել նաև մի քանի այլ տաղեր, որոնց նկատմամբ ունենք որոշ վերապահություն. այդ նմուշներին կանդրադառնանք առանձին։*

1. Այսաւր աւետեաց ձայն...
2. Այսաւր ըզՏէրդ արարիչ....
3. Այսաւր, ը՜, լոյս հաստատի...
4. Այսաւր ի սկըզբան...
5. Այսաւր յարութեան մեզ...
6. Այսաւր նորահրաշ լոյսն...
7. Այսաւր ցընծան դասք...
8. Այսաւր ցընծութիւն...
9. Անճառ Բանին բարձրելոյն...
10. Անճառ է խորհուրդ...
11. Անմահ թագաւորն...
12. Անտոն սկիզբն երկնաւոր...
13. Աստուծոյ ողորմութեանցն...
14. Արփիական, ը՜, լոյսն...
15. Բարբառոյն յանապատէ...
16. Դուստըր Սիոնի...
17. Էին միայնոյ միածին...
18. Ի լուսոյն արփւոյ...
19. Ի յերգս սիրեցեալ...
20. Ի յուրբաթու մեծի...
21. Իսկ դու ընդէ՞ր ես...
22. Լոյսն անեղական...
23. Լոյս փառաց Էին...
24. Ծագումն յարփւոյն...
25. Յաւէժ եկեղեցի ցընծա...
26. Նարդոս բուրեալ...
27. Ներհիւսեցուք...
28 Նորազուարճ խընդութեամբ...
29. Նորահրաշ արեգակ իմանալի...
30. Նորահրաշ արեգակն այսաւր...
31. Նոր ծաղիկ ցուցաւ...
32. Նոր ծառոյն կենաց...
33. Նոր քերովբէ հողանիւթ...
34. Նոցին համաձայնեալ...
35. Սկըսեալն յանըսկիզբն...
36. Տիրուհի սուրբ Կոյս...
37. Քառանիւթիցըս Աստուած...

Ներսես Շնորհալու նորահայտ տաղերի մասին խոսելիս առաջին հերթին անհրաժեշտ է անդրադառնալ դրանց հեղինակային պատկանելության խնդրին և ցույց տալ, թե ի՞նչ հիմքերով են այդ երգերը վերագրվում նրան։ Այս հարցում հենվում ենք հիմնականում նույն կարգի տվյալների վրա, որոնցով առաջնորդվել են մասնագետները մինչև այժմ՝ Ներսես Շնորհալու տաղերի հայտնաբերման ու հրատարակության ժամանակ։ Դրանք են՝ հեղինակի անունը հողող ծայրակապերը, խորագրային նշումները, նաև լեզվաոճական ու տաղաչափական առանձնահատկությունները։ Բացի այդ, երբ խոսքը վերաբերում է փոխերին, որոնք զուրկ են խորագրային նշումներից, մենք հաշվի ենք առնում նաև տաղի ու փոխի, իբրև հեղինակային միասնական զույգերի, կապն ու առնչությունը։

Հեղինակի նորահայտ տաղերն ու փոխերը հրատարակված միավորների հետ կազմում են սերտ միասնություն, և այդ ամբողջության շնորհիվ բացահայտվում ու հասկացվում են շատ իրողություններ։ Այդ



եղանակով ճշտվում են տաղերի ու փոխերի, դրանց խորագրային, ծայրակապային և այլ հատկանիշների հետ կապված զանազան հարցեր։ Հետևապես, խոսել նորահայտների մասին, նշանակում է անդրադառնալ նաև տպագիր նմուշներին ամբողջությամբ վերցրած ու նորովի ստուգել այդ ողջ ժառանգությունը՝ հեղինակային պատկանելության ու ամբողջականության առումով[77]։

Ներսես Շնորհալու բանաստեղծությունների հեղինակության հարցը ճշգրտելիս ամենից առաջ պիտի կանգ առնել այն միավորների վրա, որոնք վերագրվում են նրան բացարձակ ու որոշակի տվյալներով։ Ամենաանառարկելի տվյալը, բնականաբար, հեղինակի անվան տակայությունն է ծայրակապում։ Ներսես Շնորհալու տաղերի շատ նմուշներ իրենց տողերի կամ տների սկզբնատառերով հոդում են նրա անունը։ Ծայրակապում հեղինակի մասին եղած այդ հիշատակությունն ը հանդիպում է «Ներսէս կաթողիկոս», «Տր Ներսէս» և «Ներսէս» ձևերով։ Սրանցից առավել արժանահավատն ու վստահելին, անշուշտ, առաջինն է։ ԺԳ—ԺԴ դդ. ձեռագրերում այդպիսի ծայրակապով հանդես եկող տաղերը ոչ մի կասկած չեն հարուցում, որ իրոք պատկանում են Ներսես Շնորհալու գրչին, որովհետև ո՛չ այդ դարերում, ո՛չ էլ դրանից մի քանի դար առաջ, երբ հնարավոր էր տաղ ու փոխ գրել, Շնորհալուց բացի Ներսես անունով ուրիշ կաթողիկոս չենք ունեցել։ Հեղինակի ինքնությունը հաստատող ծայրակապային հիշյալ ձևը անհերքելի փաստ է, որը միաժամանակ մատնանշում է նաև այդ բանաստեղծությունների հորինման առավել որոշակի ժամանակը։ Եթե տաղերում հեղինակը իրեն անվանում է «կաթողիկոս», տարակուսելի չի կարող, որ դրանք հորինվել են իր կաթողիկոսության տարիներին, այսինքն՝ 1166—1173 թթ. ընթացքում։

Ծայրակապային այս առանձնահատկության հիման վրա Ներսես Շնորհալու անվան հետ են կապվում տաղային 11 միավորներ, որոնցից 9-ը հայտնի են տպագրությամբ, իսկ երկուսը (№ 1 և 10)՝ նորահայտ են։ Այդ 11 միավորները կազմում են տաղի ու փոխի հետևյալ հինգ զույգերը.

1. Նորահրաշ արեգակն այսաւր... («Ներսեսի երգ»)

---

77 Ներածություն *բաժնի վերջում բերված Տախտակը ներկայացնում է հեղինակի տպագիր ու անտիպ բանաստեղծությունների ողջ ժառանգությունը, տաղի ու փոխի՝ ըստ հնագույն գրչագրերի իրենց ունեցած համակարգային պատկերով և դասավորված ըստ եկեղեցական տոների հաջորդականության։*

2. **Փոխ.** Կեանքն ընդ Հաւր... («Կաթողիկոսի Հայոց»)
3.Նոր իմն աւետեաց... («Ներսեսի ե»)
4. **Փոխ.** Հաւր կամաւ իջեալ... («Հայոց կաթողիկոսին»)
5. Նոր ձայն աւետեաց... («Ներսեսի է»)
6. **Փոխ.** Կանայքն արտասուաւք... («Կաթողիկոսի Հայոց»)
7. Նոր դրախտին եկեղեցւոյ... («Ներսիսի ե»)
8. **Փոխ.** Կենաց փայտ... («Կաթողիկոսի Հայոց»)
9. Ի խաչին տընկեալ... («Ի Ստեփաննոս»)
10. **ա. Փոխ.** Նոր ծառոյն կենաց... («Նախավկային է»)
11. **բ. Փոխ.** Ի գաւազանէն Յեսսեայ... («Ի Ներսիսե կաթողիկոսե»)

Ինչպես տեսնում ենք, տաղային այս միավորները հեղինակի անունն ու մականունը հողում են ոչ թե յուրաքանչյուրն առանձին, այլ տաղ ու փոխ զույգերի շաղկապման միջոցով: Շնորհիվ այդպիսի զուգորդման, անջատ-անջատ հանդես եկող **Ներսէս** և **կաթողիկոս** բառերը կազմում են ամբողջական նախադասություն, և ծայրակապը դառնում է հավաստի կռվան՝ հեղինակային պատկանելության առումով:

Քանակապես ավելի շատ են Ներսես Շնորհալու այն տաղերը, որոնք հողում են պարզապես **«Տր Ներսէս»** կամ **«Ներսէս»: «Կաթողիկոս»** կոչման բացակայությունն այս դեպքում առաջ է բերում որոշ դժվարություն, քանի որ «Ներսէս» անունը կարող էր վերաբերել նաև համանուն մեկ այլ բանաստեղծի: Ներսես Շնորհալուն ժամանակակից և ԺԲ—ԺԴ դդ. ապրած Ներսես անունով հայտնի մյուս միակ հեղինակը Ներսես եպիսկոպոս Լամբրոնացին է: Վերջինիս տաղերի քննությունը, սակայն, ցույց է տալիս, որ այդ երկու Ներսեսների ստեղծագործությունները միմյանց հետ շփոթելու վտանգը գրեթե բացառված է: Բանն այն է, որ Ներսես Լամբրոնացին իբրև տաղասաց առանձնապես աչքի չի ընկել: Նրա գրական վաստակը և հասարակական-քաղաքական գործունեությունն անհրաժեշտ չափով արդեն հետազոտված են: Պարզված է, որ նա ունի ընդամենը 12 տաղ: Այս հարցում մինչև այժմ լուրջ տարակարծություններ չեն եղել: Տաղերի որոշ նմուշների մասին խոսել է Ղ. Ալիշանը[78]: Այնուհետև դրանց լրիվ ցանկը, խորագրերով ու սկզբնատողերով, հրատարակել է Ն. Ակին-

[78] Ղ. Ալիշան, *Սիսուան*, էջ 91։



յանը[79], իսկ ավելի ուշ՝ Գր. Հակոբյանը[80]: Տպագիր աղբյուրներից հայտնի հիշյալ 12 բանաստեղծություններից բացի, հնագույն շրջանի մի գրչագրում մեզ հանդիպել է Ներսես Լամբրոնացուն պատկանող ևս մեկ տաղ իր փոխով[81]: Այսպիսով, ստացվում է ընդամենը 14 միավոր (տաղեր և փոխեր)[82]: Հիշյալ բանաստեղծությունների համեմատությունը Ներսես Շնորհալու տաղերի ու փոխերի հետ՝ բացահայտում է էական տարբերություններ: Ամենահիմնականն և ուշագրավ տարբերությունն այն է, որ Լամբրոնացու տաղերից ոչ մեկը ծայրակապ չունի[83], մինչդեռ ծայրակապի առկայությունը խիստ բնութագրական է Շնորհալու համար: Պարզ է, ուրեմն, որ «Ներսէս» հոդող միավորները նկատի ունեն Ներսես Շնորհալուն: Երկու հեղինակների տաղերի լեզվաոճական ու տաղաչափական առանձնահատկությունների քննությունը ևս բերում է այն համոզման, որ այստեղ նույնպես շփոթեցնող ընդհանրություններ նրանք գրեթե չունեն: Լամբրոնացու բանաստեղծություններն աչքի չեն ընկնում այնպիսի արվեստով ու հնարանքներով, ինչպիսիք հատկանշում են Շնորհալու տաղերը: Նույ-

[79] Ն. Ակինյան, *Ներսէս Լամբրոնացի, Վիեննա, 1956, էջ 229—233։*

[80] Գր. Հակոբյան, *Ներսես Լամբրոնացի, Երևան, 1971, էջ 172—183։*

[81] *Ձեռ. № 3503, թերթ 245ա։ Բանաստեղծությունն ունի* Այլ տաղ սուրբ Մկրտչին, ի Ներսէս Լամբրունեցոյ *խորագիրը և* Այսաւր բազմութեան հանդէսս... *սկզբնատողը։ Կից առկա է* Ուրախ լեր այսաւր... *փոխը (թերթ 246ա)։ Վերջինս իր տաղաչափությամբ տարբերվում է տաղից, բայց շարադրանքով ու բովանդակությամբ միանգամայն պատշաճում է նրան։*

[82] *№ 3503 ձեռագրում առկա են Ներսես Լամբրոնացու բոլոր տաղերը՝ տաղ ու փոխ զույգերով (բացառությամբ մեկի)։ Պետք նկատել, որ չկան այնպիսիք, երբ փոխը տաղի օրգանական մասը լինի կամ կապվի նրա հետ իմաստային ծայրակապով, ուստի որոշ միավորների և հատկապես փոխերի՝ Ներսես Լամբրոնացուն պատկանելը երբեմն տարակուսելի է թվում։*

[83] Աւր է աւետեաց... *տաղը Ն. Ակինյանի ցանկում ներկայացված է իբրև այբուբենի տառերը հոդող ծայրակապ ունեցող («Ա—Ք») միավոր։ Իրականում, սակայն, Ներսես Լամբրոնացու մյուս տաղերի նման սա նույնպես զուրկ է ծայրակապից։ Բանն այն է, որ Ն. Ակինյանի մատնանշած օրինակում Ներսես Լամբրոնացու տաղից առկա է լոկ առաջին տունը, որին հաջորդում է բոլորովին ուրիշ մի բանաստեղծություն՝ գրված տարբեր տաղաչափությամբ։ Վերջինս՝* Աւետիս քեզ, Մարիամ... *սկսվածքով, անհեղինակ մի տաղ է, որն իր սկզբնատառերով հոդում է «Ա—Ք»։ Ն. Ակինյանը, ձեռքի տակ չունենալով* Աւր է աւետեաց... *տաղի ամբողջական օրինակը, երկու տարբեր բանաստեղծությունների այդ պատահական զուգորդումը ընկալել է իբրև մեկ միավոր և* Աւր է աւետեաց... *տողով սկսվող հատվածը կոչել է* կցորդ *(Ն. Ակինյան, Ներսէս Լամբրոնացի, էջ 233)։*

նը պիտի ասել ռիթմի ու երաժշտականության, պատկերների ու համեմատությունների մասին։ Լամբրոնացու տաղերին առավել բնորոշ է պատմողական-հռետորական շունչը։ Այս և այլ պատճառներով Ներսես Լամբրոնացու տաղերի հեղինակային պատկանելության հարցը մինչև օրս մասնագետների համար առանձին դժվարություն չի հարուցել, և «Տր̅ Ներսէս» կամ «Ներսէս» անունով հայտնի ու Շնորհալու տաղերի առանձնահատկություններն ունեցող միավորները իրավացիորեն վերագրվել են Ներսես Շնորհալուն։ Այդպես ենք վարվել և մենք՝ նորահայտ նմուշները քննելիս։ Այսուհանդերձ, մի քանի տաղեր, որոնք ձեռագրերում հանդես են գալիս մերթ Ներսես Շնորհալու, մերթ Ներսես Լամբրոնացու անունով և խնդրի լուծման համար պահանջում են լրացուցիչ տվյալներ, ընդգրկել ենք Շնորհալու անվան հետ վերապահությամբ առնչվող միավորների խմբում ու ներկայացրել բնագրերի վերջում՝ **Հավելվածներ** բաժնում։

Մեզ հայտնի են «Ներսէս» անունը հոդող 64 միավորներ, որոնք կազմում են տաղով ու փոխով ներկայացող 30 զույգ[84] (չորս միավոր հանդես են գալիս առանց համապատասխան զուգակիցների)[85]։ Հիշյալ 64 միավորները հեղինակի անունը հոդում են մերթ տաղի, մերթ փոխի միջոցով՝ «Ներսէսի», «Ներսէսի երգ», «Բան Ներսէսի է» և այլ ձևերով։ Հաճախ տաղ ու փոխ զույգի ծայրակապերի շղկապումով ստացվում է նաև տվյալ համակարգի բովանդակությունը բացահայտող նախադասություն։ Այսպես օրինակ՝ «Ներսէս»+«Նըվագէ Աստվածածնին երգ», կամ՝ «Ներսէսի նվաստի»+«Գովեստ մեծին հոմանվանն նմին» (նվիրված Ներսես Մեծին)։

Այսպիսով, Ներսես Շնորհալու տաղային միավորներից 75-ը (որոնցից 24-ը՝ նորահայտ) վերագրվել ու վերագրվում են նրան ծայրակապային նշումներով, որոնք հոդում են հեղինակի անունը։ Վերջինս երբեմն առկա է նաև տաղերի խորագրերում՝ ավելի քան համոզիչ դարձնելով քննվող այս կամ այն միավորի Ներսես Շնորհալուն պատկանելու իրողությունը։

[84] *Տե՛ս* Տախտակ, *№ Ա—Բ, Գ—Դ, Ե—Զ, Է—Ը, Թ—Ժ, ԺԲ—ԺԳ, ԺԶ—ԺԷ, ԺԸ—ԺԹ, ԻԲ—ԻԳ, ԻԴ—ԻԵ, ԻԷ—ԻԸ, Լ—ԼԱ, ԼԹ—Խ, ԽԲ—ԽԳ, ԾԴ—ԾԵ, ԾԶ—ԾԷ, ԾԹ—Կ, ԿԳ—ԿԴ, ԿԵ—ԿԶ, ՀԳ—ՀԴ, ՀԵ—ՀԶ, ՀԷ—ՀԸ, ՀԹ—Ձ, ՁԱ—ՁԲ, ՁԳ—ՁԴ, ՁԵ—ՁԶ, ՁԷ—ՁԸ, ՂԵ—ՂԶ, ՂԸ—ՂԹ, ՃԱ—ՃԲ։*

[85] *Տե՛ս* Տախտակ, *№ ԼԲ, ԾԱ, ՂԲ, ՂԷ։ Սրանցից երկուսը (№ ԾԱ և ՂԷ) կից ունեն փոխեր, բայց վերջիններս ոչ թե առանձին բանաստեղծություններ են, այլ համապատասխան տաղերի մասերը։*



Տաղերի մյուս խումբը Ներսես Շնորհալու անվան հետ կապվում է սոսկ խորագրային տվյալներով, որոնք հիշատակում են հեղինակի մասին «Ներսէս Կլայեցի», «Ներսէս կաթողիկոս», «Տէր Ներսէս կաթողիկոս», կամ «Ներսէս» ձևերով։ Անշուշտ, որևէ ստեղծագործության հեղինակային պատկանելությունը ճշտելու համար խորագրային վերագրումն այնպիսի բացարձակ հիմք չի կարող համարվել, ինչպիսին ծայրակապն է։ Տվյալ դեպքում, սակայն, դա միանգամայն բավարար է եղել և՛ նախորդ մասնագետների, և՛ մեզ համար։ Այն իրողությունը, որ հիշյալ նշումները հանդիպում են Գանձարանների ու Տաղարանների վաղագույն ընդօրինակություններում, ինքնին վկայում է դրանց հավաստիության մասին։ Ներսես Շնորհալուց մեկ կամ երկու հարյուրամյակ հետո կազմված այդ ժողովածուները, որոնցում հեղինակի տաղերը պահպանվել են իրենց նախնական տեսքով, առանց էական աղավաղումների, բնականաբար, վստահելի աղբյուրներ կարող են նկատվել նաև խորագրային տվյալների առումով։ Այդ տվյալներն առավել մեծ կարևորություն են ստանում մանավանդ այն պատճառով, որ խնդրո առարկա բանաստեղծությունները ո՛չ այդ ժամանակ, ո՛չ էլ հետագայում երբևէ չեն վերագրվել ուրիշ հեղինակի[86]։

Ինչպես կարելի է նկատել, Ներսես Շնորհալու անունը և՛ տաղերի խորագրերում, և՛ ծայրակապերում հանդիպում է հիմնականում երկու ձևով՝ «Ներսէս կաթողիկոս» և «Ներսէս»։ Եթե ծայրակապում «կաթողիկոս» կոչման առկայությունը միաժամանակ հուշում էր տաղերի գրության ժամանակը, ապա նույնը չենք կարող ասել խորագրային նույնանման նշումների մասին։ Բանն այն է, որ վերջիններս կարող են լրացված լինել ժողովածուն կազմողների կողմից և ոչ անպայման տվյալ ստեղծագործության հորինման ժամանակ, այլ ավելի ուշ՝ Շնորհալու մահից հետո, երբ նա արդեն հռչակված էր իբրև կաթողիկոս։ Այս տեսակետից իբրև ցայտուն օրինակ կարող է ծառայել Գրիգոր Լուսավորչին նվիրված Ներսես Շնորհալու **Սրովբէից ձայնիւ...** տաղը, որի ծայրակապում հեղինակն իրեն կոչում է լոկ «Ներսէս», իսկ ձեռագիր մի քանի աղբյուրներում խորագրերը նրան

[86] **Նոր իմն ահաւոր...** *տաղի* (Տախտակ, *№ ԾԸ) ձեռագիր աղբյուրներում մեզ հանդիպած օրինակները հեղինակի մասին խորագրային կամ ծայրակապային նշում չունեն։ Սույն միավորը Ներսես Շնորհալուն վերագրելու հիմքը 1830 թ. վենետիկյան հատորում ընդգրկված լինելու իրողությունն է։ Նույն հիմքերով Ներսես Շնորհալուն է վերագրվում նաև* **Մատնեցաւ Տէրն ի խաչին...**ը (Տախտակ, *№ ԼԸ*)։

հիշում են իբրև «կաթողիկոս»[87]: Տաղի՝ Մաշտոցի անվան Մատենադարանի № 7785 ձեռագրում գտնվող օրինակը տալիս է լրացուցիչ և առավել ճշգրիտ տեղեկություններ[88]: Պարզվում է, որ Շնորհալին հիշյալ բանաստեղծությունը գրել է ոչ թե կաթողիկոս ընտրվելուց հետո, այլ շատ ավելի երիտասարդ տարիքում՝ «ի համբակականն էլով տիս», երբ դեռ ուսանում էր Քեսունի Կարմիր վանքում: Նշանակում է, տվյալ դեպքում խորագրային **կաթողիկոս** նշումը ամենևին չի մատնանշում բանաստեղծության հորինման ժամանակը, այլ պարզապես հավաստում, որ տաղն, իրոք, պատկանում է Ներսես Շնորհալուն:

Այն տաղերը, որոնք Ներսես Շնորհալու անվան հետ կապվում են խորագրային տվյալներով, հաշվվում են 27 միավոր[89]: Դրանցից 16-ը ներկայանում են տարբեր բանաստեղծությունների զուգորդումով կազմված տաղ ու փոխ զույգերով: Վեց միավոր իբրև փոխ (կամ փոխեր) կից ունեն իրենց մասերը[90]: Մյուս հինգ տաղերն առանց կցորդների են[91], ընդ որում, երեքը (**Տախտակ, № ԺԱ, ԼԳ, ԼԶ**) ձեռագրերում հանդես են գալիս համապատասխան փոխերով, բայց մենք դրանք նկատի չենք ունեցել բնագրերի մեր ներկայացրած ցանկում, որովհետև այդ բանաստեղծությունների՝ Ներսես Շնորհալուն պատկանելը մեզ տարակուսելի է թվացել: Խնդրո առարկա 27 միավորները անծայրակապ են, բացառությամբ երեքի, որոնք հոդում են այբուբենի տառերը (**Տախտակ, № ԺԱ, Ի, ԼԶ**): Ծայրակապի բացակայության դեպքում տաղի ու փոխի, իբրև զույգերի, միասնությունը միանգամայն ակներև է, երբ միևնույն բանաստեղծությունն է բաժանված տաղի ու փոխի, իսկ այն դեպքում, երբ որպես զույգեր հանդես են գալիս տարբեր միավորներ, նկատի ենք ունեցել բովանդակային ընդհանրությունները և՛ հնագույն աղբյուրներում միմյանց կից պահպանված լինելու իրողությունը:

Այսպիսով, տպագիր ու ձեռագիր աղբյուրներից մեզ առայժմ հայտնի են, ամբողջությամբ վերցրած, 102 տաղ ու փոխ, որոնց հե-

[87] *Տե՛ս ձեռ. № 3503 (թերթ 257ա), 79 (Փարիզ, թերթ 375բ), 80 (Փարիզ, թերթ 121ա)։*

[88] *Տե՛ս քննական բնագրի համար օգտագործված խորագիրը։*

[89] *Տե՛ս* Տախտակ, *№ ԺԱ, ԺԴ—ԺԵ, Ի—ԻԱ, ԻԶ, ԻԹ, ԼԳ, ԼԴ—ԼԵ, ԼԶ, ԼԷ, ԼԸ, ԽԱ, ԽԴ, ԽԷ—ԽԸ, ԾԸ, ԿԱ—ԿԲ, ԿԷ—ԿԸ, ՀԱ—ՀԲ, ՂԳ—ՂԴ, Ճ։*

[90] *Տե՛ս* Տախտակ, *№ ԻԶ, ԻԹ, ԼԷ, ԽԱ, ԽԴ, ԾԸ։*

[91] *Տե՛ս* Տախտակ, *№ ԺԱ, ԼԳ, ԼԶ, ԼԸ, Ճ։*



ղինակային պատկանելությունը, ինչպես տեսանք, տարակուսելու տեղիք չի տալիս[92]: Այդ 102 բանաստեղծություններից հրատարակության են արժանացել 65 միավոր, նորահայտ են՝ 37: Թե ե՞րբ է Ներսես Շնորհալին հորինել իր այս տաղերը՝ որոշակի չգիտենք: 11 միավոր հաշվվող այն հինգ զույգերը, որոնց ծայրակապում հեղինակը հիշված է իբրև կաթողիկոս, ինչպես ասվեց, գրվել են 1166—1173 թթ. ընթացքում: Ընդհանրապես տիրող կարծիքն այն է, որ Ներսես Շնորհալու տաղերը «ավելի երիտասարդական ավյունի արտահայտություններ են, քան ալևորյալ տարիքի»[93]: Նման ենթադրության օգտին է վկայում, ինչպես տեսանք, **Սրովբէից ձայնի...** միավորի խորագրային նշումը: Պարզ է, ուրեմն, որ Ներսես Շնորհալին ստեղծագործել է իր ամբողջ կյանքի ընթացքում՝ շարունակաբար հարստացնելով ու զարգացնելով գանձարանային մշակույթը տաղային նորանոր միավորներով:

Ներսես Շնորհալու տաղերի հրատարակված նմուշները և հնագույն գրչագրերում հանդես եկող դրանց օրինակները տաղ ու փոխ զույգերի առումով ընդհանրապես համընկնում են, թեև նկատվում են նաև անհամապատասխանություններ: Բացի այդ, երբեմն տպագրում իբրև տաղ ներկայացող միավորը ձեռագրերում փոխ է, կամ՝ ընդհակառակը: Ինչ վերաբերում է հեղինակի նորահայտ տաղերի և հրատարակված միավորների՝ իբրև տաղի ու փոխի առնչությանը, ապա պատկերը հետևյալն է (տե՛ս **Տախտակ**).

**ա.** Նորահայտ են իբրև զույգ հանդես եկող և՛ տաղը, և՛ փոխը (№ Գ—Դ, Է—Ը, ԺԴ—ԺԵ, Ի—ԻԱ, ԼԴ—ԼԵ, ԿԳ—ԿԴ, ԿԵ—ԿԶ, ԿԷ—ԿԸ):

**բ.** Նորահայտ է տաղը, իսկ փոխը տպագրված է, ընդ որում կա՛մ

[92] *№* Ma *XIII 61 (Տյուբինգեն, թերթ 245բ—247բ) ձեռագրում Ներսես Շնորհալու անունով պահպանված է մի տաղ՝* Ի խորհրդական ձեր նայելով հանդէս... *սկսվածքով, որն իր փոխով (վերջինս տաղի մասն է և ունի* Տէր և Աստուած զՅիսուս Քրիստոսատէր... *սկսվածքը) հոդում է. «Ի Ներսիսէ ի սուրբն Երս + «Տռատիոս» ու նվիրված է սրբոց Եվստրատիոսյանց տոնին։ Ե՛վ խորագրային նշումը, և՛ ծայրակապը տարակույս չեն թողնում, որ այս միավորը պատկանում է Շնորհալու գրչին, որով հեղինակի տաղերի ընդհանուր թիվը դառնում է 103։ Ցավոք, այլ աղբյուրներից տաղը մեզ հայտնի չէ, իսկ հիշյալ օրինակը մեզ մատչելի չլինելով, այն դուրս է մնացել հեղինակի տաղերի ու փոխերի մեր ներկայացրած բնագրերի խմբից։*

[93] **Մ. Օրմանյան,** *Ազգապատում, էջ 1401։ Տե՛ս նաև՝* Ղ. Ալիշան, *Շնորհալի և պարագայ իւր, էջ 79։*

առանձին՝ առանց կցորդի, կա՛մ ուրիշ միավորի հետ (№ ԺԲ—ԺԳ, ԺԶ—ԺԷ, ԺԸ—ԺԹ, ԻԲ—ԻԳ, ԻԴ—ԻԵ, ԻԷ—ԻԸ, Լ—ԼԱ, ԽԲ—ԽԳ, ԽԵ—ԽԶ, ԽԷ—ԽԸ, ԾԶ—ԾԷ, ՁԳ—ՁԴ, ՂԸ—ՂԹ):

**գ.** Նորահայտ է փոխը, իսկ տաղը տպագրված է (№ ԾԴ—ԾԵ, ՁԵ—ՁԶ, ՁԹ—Ղ, ՃԱ—ՃԲ):

**դ.** Նորահայտ է տաղը և չունի համապատասխան փոխ (№ ԺԱ, ԼԳ):

Հեղինակի տաղային ողջ ժառանգությունը ներկայացնում է այսպիսի 51 զույգեր: Դրանցից 43-ում տաղին կից հանդես եկող փոխը (մեկ դեպքում՝ երկու փոխ) միանգամայն տարբեր բանաստեղծություն է, իսկ 8 զույգ կից իբրև փոխ ունեն տվյալ բանաստեղծության մասը (կամ մասերը): Ինչ վերաբերում է համապատասխան զուգակիցներ չունեցողներին, ապա դրանք ընդամենը յոթ հատ են և, անշուշտ, հեղինակի կողմից նույնպես հորինված են եղել տաղ-փոխ համակարգով, որը դեռևս չի վերականգնված:

Ներսես Շնորհալու գանձարանային ստեղծագործություններն աչքի են ընկնում նաև ըստ եկեղեցական տոների իրենց ունեցած դասավորությամբ: Հնագույն գրչագրերից հայտնի դարձած տաղային միավորների շնորհիվ տոնական այդ շարքն ստանում է գրեթե ավարտուն տեսք, ընդ որում շարքը հարստանում է ոչ միայն նոր տոներով, այլև յուրաքանչյուրին հատկացված միավորների քանակով, օրինակ՝ Քրիստոսի Ծննդյանը նվիրված տպագիր մի քանի տաղերին գումարվում են նորերը, և տոնը ներկայանում է իր ութ օրերով, երբեմն հանդես գալով միևնույն օրվա և՛ առավոտյան, և՛ երեկոյան ժամերի արարողությունների համար նախատեսված առանձին-առանձին համակարգերով: Տաղային առանձին համակարգեր են հատկացված նաև Այլակերպության ու Աստվածածնի Վերափոխման տարբեր օրերի, իսկ Հարության տոնը ներկայացված է ամբողջ շարք տաղերով ու փոխերով՝ չորս Ավետարաններից յուրաքանչյուրի ընթերցվածներին հատկացված երկուական համակարգով: Առանձին տոների համար գրված տաղային միավորների այսպիսի ճոխությունը, անկասկած, մասամբ պայմանավորված էր եկեղեցական արարողությունները կարգավորելու նպատակով Ներսես Շնորհալու կատարած նորամուծություններով, և ամենևին չի բացառվում նրա գրչին պատկանող նորանոր տաղերի հայտնաբերումը:

Ձեռագիր, ինչպես և տպագիր աղբյուրներից մեզ հայտնի են Ներսես Շնորհալուն վերագրված որոշ տաղեր, որոնք, մեր կարծիքով, տարակույսի տեղիք են տալիս: Հիշյալ բանաստեղծությունները ներկայացրել ենք առանձին, իբրև հավելված: Ընդամենը 9 միավոր հաշվվող այդ տաղերի ցանկը բերում ենք ստորև.

1. Այսաւր երեւի անտեսն...
2. Անմահից արքայն...
3. Աստուածածին սրբուհին...
4. Աւետիս, միշտ աւետեաց...
5. Թագաւորն անմահ...
6. Խորհուրդ հայրենի աւանդ... (նաև՝ **Ոստս արմաւենեաց...** սկսվածքով)
7. Հաննարեղ շնորհալիդ...
8. Քերովբէից գերագոյն...
9. **Փ.** Ողջոյն ընդ քեզ, Մարիամ...

Ներկայացված ցանկում 1, 3, 4, 5, 6, 7 թվահամարների միավորները զանազան առիթներով Ներսես Շնորհալու անունով լույս տեսած նմուշներ են: Մյուս երեքը (№ 2, 8, 9) տպագրվում են առաջին անգամ: Տաղերի հիշյալ խմբի նկատմամբ վերապահություն ենք ցուցաբերել, որովհետև դրանք Ներսես Շնորհալու անվան հետ կապող հիմքերը, մեր կարծիքով, բավարար չեն: Բանն այն է, որ տվյալ դեպքում բացակայում է նման վերագրման համար անհրաժեշտ առաջին նախապայմանը՝ հեղինակի անվան առկայությունը ծայրակապում: Ծայրակապ ունեն տաղերից երեքը միայն, ընդ որում երկուսը (№ 1, 2) հոդում են այբուբենի տառերը, մինչդեռ երրորդը (№ 7), որ նվիրված է Հռիփսիմե կույսին, տների սկզբնատառերով կազմում է «Հռիփսիմէ», իսկ տների երկրորդ տողերի սկզբնատառերով՝ «Յոհաննէս»: Վերջինս էլ պիտի լինի հիշյալ բանաստեղծության կա՛մ հեղինակը, կա՛մ պատվիրատուն: Ինչ վերաբերում է Ներսես Շնորհալու մասին եղած խորագրային հիշատակությանը, որն իր հերթին կարևոր կռվան է, ապա այս դեպքում դա նույնպես վստահություն չի ներշնչում, քանի որ հիշյալ տաղերի մի մասը նրա անունով հանդես է գալիս սոսկ ուշ շրջանի ընդօրինակություններում, իսկ մի քանիսը (№ 1, 5, 8) հանդիպում են մերթ Ներսես Շնորհալու, մերթ Ներսես Լամբրոնացու անունով[94]:

---

[94] *Վերագրելի տաղերի այս խմբի մասին առավել մանրամասն տե՛ս* Ծանոթագրություններ *բաժնի համապատասխան բացատրությունները:*

Վերևում բերված փունջը կարելի է հարստացնել Ներսես Շնորհալու բանաստեղծությունների հետ ընդհանրություններ ու նմանություններ ունեցող նաև այլ տաղերով։ Հարկավոր է նկատել, սակայն, որ լրացուցիչ նմուշների հայտնաբերումը Շնորհալու տաղային ժառանգության ճիշտ գնահատման համար վճռական նշանակություն չունի, քանի որ 102 միավոր հաշվվող նրա տաղերի ու փոխերի մեզ հայտնի խումբը այդ առումով միանգամայն բավարար է։ Այդ խմբի միջոցով բացահայտվում են Ներսես Շնորհալու գանձարանային ստեղծագործությունները հատկանշող բոլոր առանձնահատկությունները։

Դ

Ներսես Շնորհալու անվան հետ կապվում են մի խումբ տաղեր, որոնք ներկայանում են մերթ նրա անունով, մերթ անհեղինակ։ Մեր որոնումները ցույց տվին, որ դրանք բոլորը, իրոք, պատկանում են Ներսես Շնորհալուն, բայց ոչ թե հորինված են որպես տաղեր, այլ նրա ծավալուն քերթվածներից ու մյուս երկերից քաղված հատվածներ են։ Դա մինչև այժմ չքննված և կարևոր նշանակություն ունեցող երևույթ է։

Միջին դարերում, ինչպես գիտենք, ընդունված է եղել գրական կամ պատմական որևէ երկից երբեմն ըստ պահանջի անջատել մեծ կամ փոքր հատվածներ և օգտագործել առանձին։ Այդ քաղածոները ձեռագրերում հաճախ հանդես են եկել նոր խորագրերով ու երբեմն դիտվել իբրև ինքնուրույն ստեղծագործություններ։ Նման ճակատագրի են արժանացել նաև Ներսես Շնորհալու ընդարձակ երկերից արտածված բազմաթիվ հատվածներ, որոնք օգտագործվել են Գանձարաններում ու Տաղարաններում որպես տաղ կամ փոխ։ Շատ մասնագետներ, չնկատելով այդ երևույթը, նշված հատվածների մի մասը համարել են Ներսես Շնորհալուն պատկանող ինքնուրույն տաղեր և հաճախ հեղինակների տաղերի շարքում ընդգրկել նաև այդպիսի հատված-միավորներ՝ առանց լրացուցիչ բացատրությունների[95]։ Ավելին. որոշ նմուշներ ներկայացվել են հրատարակության որպես Ներսես Շնորհալու նորահայտ ու անտիպ տաղեր[96], իսկ երբեմն համարվել են ուրիշի ստեղծագործություններ[97]։

Քննությունից պարզվում է, որ խնդրո առարկա հատված-տաղերը քաղված են Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի», «Բան հաւատոյ» և «Վիպասանութիւն» երկարաշունչ քերթվածներից, իսկ երբեմն կազմված են «Յիսուս Որդի» և «Բան հաւատոյ» երկերի առանձին մասերի համադրումից։ Օգտագործվել են մինչև իսկ Ներսես Շնորհալու «Յաղագս երկնից և զարդուց նորա» խորագրով տիեզերական աշխատության «Յորդորակ» (կամ «Յիշատակարան») կոչվող մասից առնված տողեր։

Յուրատեսակ այդ տաղերը, տեղ գտնելով Գանձարան ժողովածուներում, համարվել են գանձարանային ստեղծագործություններ և ձեռք բերել վերջիններիս բնորոշ ձևական մի շարք հատկանիշներ. օրինակ՝ գանձերին կից լինելը, տաղ ու փոխ միավորներով հանդես գալը։ Բացի այդ, տվյալ տոնի համար անջատված հատված-տաղը իր առանձին մասերով կամ մի ուրիշ հատվածի հետ հաճախ կազմել է արդեն նոր միավոր։

Արդ, ինչո՞վ բացատրել, որ Ներսես Շնորհալու այլաբնույթ երկերից քաղված հատվածները որպես տաղ մուտք են գործել Գանձարան առանց համապատասխանաբար վերակառուցվելու։ Բանն այն է, որ անջատված մասերը իրենց բովանդակությամբ պատշաճում են այն տոներին, որոնց համար ընտրվել են և օգտագործվել։ Դրան օգնել է և այն, որ հատված-տաղերի առաջացման համար հիմք ծառայող ստեղծագործությունները շարադրված են եղել ներքին բաժանումներով՝ հատվածաբար և փոփոխվող՝ եղանակներով երգվելու համար։ Հատկապես «Յիսուս Որդի»-ն ձեռագրերում հաճախ բաժանված է հատվածների՝ լուսանցային նշումներով, թե ի՞նչ եղանակներով ու երանգներով պետք է երգվեն[98]։

---

[95] *«Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա», կազմեց՝ Հ. Տաշյան, Վիեննա, 1895, էջ ԿԱ։ «Ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան Մատենադարանին ի Վիեննա» Բ, կազմեց՝ Հ. Ոսկյան, Վիեննա, 1963, էջ 1068—1069։ «Ցուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի», կազմեց՝ Մ. Քեշիշյան, Վիեննա, 1964, էջ 800։ «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի» Բ, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, Երևան, 1970, էջ 440, 592 և այլուր։*

[96] **Ա. վրդ. Բերբերյան,** *Ս. Ներսես Շնորհալու անտիպ տաղերը, «Էջմիածին», 1967, Դ, էջ 29—30։ Ե, էջ 30—31։*

[97] *Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» քերթվածից քաղված՝* **Անդ մարտիրոսքն պսակին...** *սկսվածքով հատված-միավորը տպագրվել է իբրև մի ոմն քահանայի տաղ՝* **Վասն փառացն արդարոց** *խորագրով (տե՛ս* **Ա. Չոպանյան,** *Հայ էջեր, էջ 84—86)։*

[98] *№ 2672 ձեռագրում (թերթ 36բ), «Յիսուս Որդի» քերթվածի լուսանցքում կա հետևյալ վկայությունը. «Յիսուս Որդի է. ԺԲ ձայն, գուն և մուղամ, էգկու և հաւայ ումի, զորն որ կասես՝ Հրամանքն քոյ է»։ Մի ուրիշ՝ № 3218 ձեռագրում բանաստեղծությունը բաժանված է մասերի ըստ եղանակային փոփոխությունների, ընդ որում այդ*

Նշված հանգամանքները իրենց հերթին նպաստել են, որպեսզի Ներսես Շնորհալու վերոհիշյալ երկերից ու մյուս քերթվածներից տարբեր մասեր առանձնացվեն և, իբրև պատրաստի տաղ, օգտագործվեն Գանձարաններում: «Յիսուս Որդու» շատ մասեր, առանձին վերցված, լիարժեք միավորներ են, ու պատահական չէ, որ այդ երկը գրեթե ամբողջությամբ վերածվել է հատված-տաղերի:

Քննությունը ցույց տվեց, որ խնդրո առարկա տաղերը առկա են բացառապես Գրիգոր Խլաթեցու մշակմանը ենթարկված ժողովածուներում: Հնում դրանք երբեք չեն հանդիպում: Այս փաստն ինքնին վկայում է, որ նորաստեղծ հատված-տաղերը Գանձարաններ մուտք են գործել հետագայում, և, բնականաբար, դրանց առանձնացնողը չէր կարող լինել Ներսես Շնորհալին: Թե ո՛ւմ ձեռքով են կատարվել հիշյալ արտածումները՝ այդ մասին ձեռագրերում ոչ մի նշում չի հանդիպում[99]: Այն իրողությունը, որ հատված-տաղերի առաջին նմուշները ի հայտ են գալիս Գրիգոր Խլաթեցու խմբագրած Գանձարաններում և սկսում են աստիճանաբար բազմանալ դրանից հետո միայն, ենթադրել է տալիս, որ հիշյալ հատվածները արտածվել են Գրիգոր Խլաթեցու ժամանակ ու, թերևս, նրա անմիջական նախաձեռնությամբ: Իսկ ո՞րն էր նման քայլի դիմելու դրդապատճառը: Հարցի պատասխանը պիտի որոնել հիմնականում այն տարբերությունների մեջ, որ կան հնագույն շրջանի գանձարանային տաղերի և հատված-տաղերի միջև: Մինչխլաթեցիական և հետագայի տաղերի համեմատությունից պարզվում է, որ դրանք միմյանցից տարբերվում են գլխավորապես իրենց տաղաչափական առանձնահատկություններով: Հին տաղերն առհասարակ ազատ բանաստեղծություններ են, հիմնականում՝ անհանգ: Դրան հակառակ, հատված-տաղերը շարադրված են կանոնավոր տաղաչափությամբ և հանգավորված են: Նշված առանձնահատկությունը

---

*բաժանումն արտացոլված է նաև ձեռագրի սկզբում գտնվող նյութերի ցանկում, որտեղ բերված են յուրաքանչյուր հատվածի բովանդակությունն արտահայտող նշումներ։ «Յիսուս Որդի» և «Բան հաւատոյ» քերթվածները հաճախ հանդես են գալիս տների բաժանումները ցույց տվող լուսանցային նշումներով նաև շատ ուրիշ ձեռագրերում (տե՛ս ձեռ. № 579, 1536, 1548, 4207, 5255, 5364)։*

99 *Ձեռագրերում երբեմն հանդիպում են նշումներ լոկ այն մասին, թե տվյալ հատվածը ո՛ր ստեղծագործությունից է քաղված. օրինակ՝ № 1193 (Երուսաղեմ) Տաղարանում մի քանի այդպիսի տաղերի լուսանցքներում կան լրացումներ՝ «Ներսեսի, ի Յիսուս Որդի գրոց», «Ներսիսի, ի Հաւատոյ Բանէն» և այլն (տե՛ս «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց», Դ, էջ 306, 308, 313)։*



քնորոշ է եղել ընդհանրապես այն բոլոր գանձերին ու տաղերին, որոնք տեղ են գտել Գրիգոր Խլաթեցու խմբագրած ժողովածուներում: Ինչպես երևում է, Գանձարաններում կանոնավոր տաղաչափության ու հանգավոր խոսքին ավելի մեծ տեղ տալու անհրաժեշտությունը պայմանավորված է համեմատաբար ուշ ժամանակների պահանջով: Հավանաբար, հնում ստեղծված ազատ ու անհանգ բանաստեղծությունը արդեն չի բավարարել նաև քանակային առումով, ուստի պակասը լրացվել է հիշյալ հատված-տաղերով: Ուշագրավ է, որ այդ նպատակի համար օգտագործվել են հատկապես Ներսես Շնորհալու գործերը: Դա հասկանալի է, որովհետև և՛ բանաստեղծական խոսքի, և՛ երաժշտության առումով այդ ժամանակ ամենամեծ հեղինակությունը Ներսես Շնորհալին էր: Ինչ վերաբերում է նրա «Յիսուս Որդի» և «Բան հաւատոյ» ծավալուն քերթվածներին, ապա վերջիններս ինչպես իրենց արտաքին հատկանիշներով, այնպես էլ բովանդակությամբ խիստ հարմար էին վերածվելու տաղային հատվածների: Նկատելի է, որ շատ են հատկապես «Յիսուս Որդի» երկից անջատված միավորները:

Ներսես Շնորհալու անվան հետ կապվող և Գանձարաններում տեղ գտած այս ինքնատիպ տաղերը, որոնք պահպանվել են բազմաթիվ նմուշներով, չեն կարող համարվել գանձարանային իսկական տաղեր, որովհետև չեն հորինվել որպես այդպիսիք: Բացի այդ, դրանք չունեն ո՛չ կայուն ծավալ, ո՛չ որոշակի կառուցվածք: Իբրև առանձին միավոր ներկայանում է ամբողջական մի հատված, որն ստանում է համապատասխան խորագիր, բայց այդ նույն միավորի՝ զանազան ձեռագրերում առկա օրինակները կարող են միմյանցից տարբերվել և՛ ծավալով, և՛ քաղված հատվածների ընտրությամբ՝ անփոփոխ պահելով սկզբնատողը կամ տաղի որոշ մասերը: Հաճախ այդ միևնույն միավորից անջատվում է մի մաս՝ որպես փոխ, ընդ որում անջատումը ևս կատարվում է քմահաճ ձևով: Հասկանալի է, ուրեմն, որ հնարավոր չէ ձեռագրերում սփռված հատված-տաղերը ճշգրիտ հաշվառման ենթարկել: Նման բան անել նաև անիմաստ է, քանի որ իբրև բանաստեղծական միավորներ՝ դրանք որակական փոփոխություններ չեն կրել: Այնուամենայնիվ, տաղային այդ յուրատեսակ ժառանգության մասին ընդհանուր պատկերացում տալու նպատակով, փորձել ենք խմբավորել Ներսես Շնորհալու քերթվածներից քաղվածաբար հանդես եկող հիշյալ միավորները, կազմելով ըստ հնարավորին ընդգրկուն

մի ցանկ՝ Մաշտոցի անվան Մատենադարանի մի քանի ձեռագրերի հիման վրա: Այդ ցանկը բերված է աշխատության վերջում (տե՛ս **Ցանկ Առաջին**)[100]:

## Ե

Ներսես Շնորհալու տաղերի հարուստ ժառանգությունը ոչ պակաս հետաքրքրություն է ներկայացնում նաև իր գեղարվեստական արժանիքներով: Բանաստեղծական հնարանքներով աչքի ընկնող նրա ոտանավորները, որոնք, գրեթե բոլորը, հագեցած են երգայնությամբ և օժտված են գունեղ պատկերներով ու համեմատություններով, միաժամանակ ունեն սահուն, դյուրըմբռնելի ոճ: Հեղինակի՝ խրթնաբանություններից զերծ և կատարյալ պարզության հասած գեղեցիկ լեզուն, որն առհասարակ բնորոշում է նրա գրվածքները, տաղերում հնչում է առավել ռիթմիկ ու երաժշտական: **Նոր իմն է հընչիւն...** տաղը (նվիրված Քառասուն Մանկանց), կարելի է ասել, միակն է, որ ունի համեմատաբար մանվածապատ ու բարդ շարադրանք: Բանաստեղծի անբռնազբոս ու անկաշկանդ արտահայտչաձևը, անշուշտ, առաջին հերթին բխում էր նրա բարեհամբույր խառնվածքից, հանգիստ բնավորությունից. իզուր չէ, որ նրան նմանեցրել են «մի ականակիտ, վճիտ աղբերակի, որ հանդարտ սահում է կարկաչահոս»[101]:

[100] *Ցանկում տեղ գտած հատված-տաղերն իրենց կազմությամբ միատեսակ չեն: Մի քանիսը համապատասխան աշխատություններից նույնությամբ արտածված (երբեմն առանձին տողեր ու հատվածներ կարող են զանց առնված լինել) և պարզապես նոր խորագրով ինքնուրույն միավորի իրավունք նվաճած նմուշներ են (№ 3, 6, 8, 10, 35, 37 և այլն): Որոշ միավորներ կազմված են տարբեր հատվածների, երբեմն առանձին տողերի ի մի բերումով (№ 7, 21, 30, 41, 45 և այլն): Կան տաղեր, որոնցում կատարված են մասնակի միջամտություններ, ընդ որում տողեր են ավելացված սկզբից, երբեմն՝ միջին մասում, իսկ ավելի հաճախ՝ վերջում, որպես ավարտ. օրինակ՝* Տէր բարեբար Հայր միածին... *սկսվածքով միավորի առաջին քառատողը հավելում է. քաղածո հատվածն սկսվում է* Զարչարանաւ ամենայնին... *տողից (տե՛ս № 32): Հավելումներ ունեն նաև ցանկի 5, 16, 18, 20, 42, 47 թվահամարների միավորները: Երբեմն, թեև հազվադեպ, քաղված հատվածը ներկայանում է խմբագրված տեսքով. օրինակ՝* Աղաչանօք ընտրեալ դասին... *միավորը (№ 1) № 423 ձեռագրում հանդես է գալիս երեք տարբեր ընդօրինակություններով (թերթ 237բ, 242ա, 246ա)՝ հատկացված առանձին-առանձին տոների, ընդ որում դրանցից ոչ մեկը տպագրվածի հարազատ կրկնությունը չէ:*

[101] **Մ. Աբեղյան,** *Երկեր, Դ, էջ 125:*



Բայց չպետք է մոռանալ, որ կար նաև մեկ այլ կարևոր հանգամանք՝ տվյալ իրականության թելադրանքը: Դա այն ժամանակն էր, երբ, Մ. Աբեղյանի բնորոշմամբ, «մեր բանաստեղծությունը երկնքից իջել էր եռկիր»[102]: Պատահական չէ, որ Շնորհալուն վիճակվեց դառնալ աշխարհականացող մեր գրականության առաջին խոշորագույն ներկայացուցիչներից մեկը:

Անգնահատելի է Ներսես Շնորհալու դերը մասնավորապես տաղաչափական արվեստի բնագավառում: Իր նախորդներից ժառանգելով ոտանավորի որոշ տեսակներ, նա մշակել ու զարգացրել է բազմաթիվ ու բազմազան նոր ձևեր, որոնք մեծ հմտությամբ ու վարպետությամբ կիրառել է հատկապես տաղերում[103]: Առավել հաճախակի գործածած նրա չափերից է յամբական եռանդամ 12 վանկանի տողը: Այդպես են շարադրված շուրջ երկու տասնյակ միավորներ: Ներսես Շնորհալին օգտագործել է նաև չափածո իր մյուս երկերի համար կիրառած և իրեն հոգեհարազատ յամբական ութ վանկանի չափը, իսկ **Բարբառ աւետեաց ձայնիւ...** և **Առաւաւտին չափիղին...** բանաստեղծությունները գրված են հայրենի չափով: Բավական մեծ թիվ են կազմում այն տաղերը, որոնք հեղինակը գրել է փոփոխվող չափերով. օրինակ՝ **Նոր Ծղեմ բանաւոր...** տաղի անզույգ տողերը ութ վանկանի են, մինչդեռ զույգ տողերը՝ 10 վանկանի: Նույն ձևով, եռատող տներից կազմված որոշ միավորներ գրված են երեք տարբեր չափերով: Այսպես.

Նոր ծառոյն կենաց աստուածատունկ դրախտին,
Ծաղիկ նախածին փըթթեալ բուրմամբ անուշից
Պըտղաբերելով զուրբըն Ստեփանոս...

Բանաստեղծական չափի փոփոխությամբ հեղինակը երբեմն ցույց է տվել նաև տաղի ու փոխի հարաբերությունը: Օրինակ՝ Քառասուն Մանկանց նվիրված նրա **Նոր իմն է հընչիւն...** տաղին կից իբրև փոխ ներկայանում է տվյալ բանաստեղծության մասը՝ սկսած **Քառասնից սըրբոց...** տողից: Բանաստեղծությունը գրված է կանոնավոր տաղաչափությամբ՝ կազմված 15 վանկանի տողերից, իսկ և՛ տաղի, և՛ փոխի առաջին երկու տողերը 11 վանկանի են: Անշուշտ, չափի այդ փոփոխությունը ենթադրում է նաև եղանակային համապատասխան փոփո-

[102] *Նույն տեղում, էջ 147:*

[103] *Նույն տեղում, էջ 106—112:*

խություն: Տաղաչափական այդ նույն ձևն ունի հեղինակի նորահայտ տաղերից՝ **Այսաւր նորահրաշ լոյսն...** միավորը (նվիրված Տյառնընդառաջին) իր մասը կազմող **Մըտեալ ի տաճարն...** փոխով.

Այսաւր նորահրաշ լոյսն ի յերկնից ծագեալ,
Ծագեալ ի Հաւրէ լոյս ի լուսոյ ծընունդ.
Ծընունդ էական Աստուած ընդ Հաւր լոյս քան զարև յառաջ,
Յառաջ քան զըսկիզբն անժամանակ անեղ անմահ բնութիւն...
**Փոխ.** Մըտեալ ի տաճարն այսաւր ածեալն Աստուած,
Աստըւած եւ Տէր սինէական տաւիցն:
Տաւից աւրինաց մարգարէից նահապետացըն Տէրն,
Տէր Յիսուս եկից զերանաւետ ուխտ նոր ընդ հարսն այսաւր...

Հնում հայ կրոնական բանաստեղծությունը, ինչպես հայտնի է, եղել է անհանգ: Այդ ձևով է գրել նաև Գրիգոր Նարեկացին: Կանոնավոր և միատեսակ հանգի գործածությունը, որ տեսնում ենք Գրիգոր Մագիստրոսի «Հազարտողեանն»-ում, նրանից հետո կիրառել է նաև Ներսես Շնորհալին կրոնական բնույթի չափածո իր ծավալուն երկերում, իսկ գանձարանային տաղերում՝ խիստ հազվադեպ: Շուրջ մեկ տասնյակ են հաշվվում հանգով գրված նրա տաղերը, ընդ որում հենց դրանցում հանդիպում են և՛ խախտումներ, և՛ ըստ տների փոփոխվող հանգավորում՝ այդ կերպ բանաստեղծությանը հաղորդելով առավել թարմություն և աշխուժություն:

Ներսես Շնորհալու տաղերի էական առանձնահատկություններից է ծայրակապի առկայությունը: Նրա 102 տաղերից 63-ը հանդես են գալիս ծայրակապով: Վերջինս արտահայտված է մերթ տնասկզբի տառերով (27 միավոր, որոնցից 6-ը՝ նորահայտ), մերթ յուրաքանչյուր (20 միավոր, որոնցից 5-ը՝ նորահայտ) կամ մեկընդմեջ տողերի (16 միավոր, որոնցից 4-ը՝ նորահայտ) սկզբնատառերով: Ծայրակապով ներկայացող հիշյալ 63 միավորներից 11-ը հոդում են այբուբենի տառերը՝ «Ա—Ք» (երկու դեպքում այբուբենը լրիվ չէ՝ «Տ—Ք» և «Ք—Ձ»): Մնացածները մեծ մասամբ հեղինակի անունը բովանդակող նախադասություններ են: Այդ նախադասությունները, որոնք հաճախ առաջանում են տաղի ու փոխի շաղկապումով, ոչ միայն հավաստում են Ներսես Շնորհալու հեղինակային իրավունքը, այլև բացահայտում տաղ ու փոխ համակարգային ամբողջության ճիշտ պատկերը. այսպես օրինակ՝ «Ներսէսի գովեստ Աստվածածնի»+«Ի խնդրո մեծին Թորոսի ե», «Ներսէսի ե»+«Հայոց կաթողիկոսին», «Ներսես»+«Նըվագե Աստվածածնին երգ», «Ներսեսի և երգս»+«Ի սուրբ եկեղեցի» և այլն:



Ինչպես բառակապակցություններով, այնպես էլ այբուբենի տառերով կազմված ծայրակապերի շնորհիվ միաժամանակ ճշտվում են բանաստեղծությունների տներն ու տողերը: Ներսես Շնորհալու տաղերը հիմնականում ներկայանում են երկտող ու քառատող տներով: Կան նաև եռատող տներից կազմված տաղեր՝ ընդամենը 9 միավոր, իսկ շուրջ 20 տաղ տնատման չեն ենթարկվում: Տնատման ու տողատման հարցում ճիշտ կողմնորոշվելուն նպաստում են հեղինակի բանաստեղծությունների նաև այլ հատկանիշները. օրինակ՝ որոշ տաղերում պարբերաբար կրկնվող «Գրիգորիոս» (**Տախտակ**, № ՂԳ), «Սուրբըն Ստեփանոս» (**Տախտակ**, № Ղ), «Ով սուրբ եկեղեցի» (**Տախտակ**, № ԿԵ), «Ով սուրբ Հռիփսիմէ» (**Տախտակ**, № ՂԸ) խոսքերը, որոնք հանդես են գալիս իբրև տան ավարտ. բացի այդ, «Ցընծայ» կամ «Այսաւր» բառերի հարակրկնությունը՝ տողերի սկզբում: Տաղերը ճիշտ տողատելուն օգնում է մանավանդ բառերի շղթայումը: Ներսես Շնորհալու տաղերից 10-ը (**Տախտակ**, № ԺԲ, ԺԸ, ԻԲ, ԽԷ, ԾԱ, ԾԶ, ՀԱ, ՁԷ, ԾԹ, ՂԲ) հանդես են գալիս տների շղթայումով, իսկ 5-ը (**Տախտակ**, № ԺԶ, ԻԴ, ԻԹ, Լ, ՂԷ)՝ տողերի: Իր տաղերից մեկում (**Առաւաւտին շաւիղին...**) հեղինակը կիրառել է մեկընդմեջ տողերի վերջընթեր բառերի շղթայման ձևը:

Ինչպես արդեն ասվեց, Ներսես Շնորհալին իր գանձերն ու տաղերը հորինել է Գրիգոր Նարեկացու գանձարանային ստեղծագործությունների հետևությամբ՝ ժառանգելով նրանից այդ բանաստեղծությունները հատկանշող բոլոր առանձնահատկությունները: Երկու հեղինակների հիշյալ երկերը առնչվում են միմյանց հետ նաև իրենց արդինականով: Իր մեծ նախորդի անմիջական ազդեցությունն ակներև է Ներսես Շնորհալու հատկապես մի քանի տաղերում: Օրինակ՝ **Առաւաւտին շաւիղին...** բանաստեղծությունը, որն իր տաղաչափությամբ և կառուցվածքով նման է Գրիգոր Նարեկացու **Գոհար վարդըն վառ առեալ...** տաղին, ավելի ևս կարող է համեմատվել **Սէր յառաւաւտէ...** գողտրիկ բանաստեղծության հետ: Այսպես.

Առաւաւտին շաւիղին
Ծող ծագեալ, արեւ տարածեալ,
Արեւ, ը՜, բարձըր իջեալ
Առիւծնոյն արփւոյն տարփըմամբ,

Արփույն, ը՛, տարփըմամբ անդ,
Ը՛, քաղցրիկ ցաւլիկ արկանէր,
Ցաւղ ի Հերմոնէ իջեալ
Ի վերայ լերին սիրայնոյ,
Լերին, ը՛, սիրայնոյ սէր
Ի սընունդ հովիտ շուշանի...

Գրիգոր Նարեկացու մոտ կարդում ենք.

Գոհար վարդըն վառ առեալ
Ի վեհից վարսիցն արփենից,
Ի վեր ի վերայ վարսից
Ծաւալէր ծաղիկ ծովային...[104]

Կամ՝

Սէր յառաւաւտէ,
Սէր յառաւաւտէ ճեմեալ
Իւր անձուկ ծագմամբ...

Ծայրարձակ լերանց,
Ծայրարձակ լերանց բարձանց
Ցաւղ տարածանէր...

Ի զարդ շաւիղից,
Ի զարդ շաւիղից փայլեալ
Ոսկէթել շողից:

Շող երփն առ երփին,
Շող երփն առ երփին փողով
Հովիտ շուշանի...[105]

Գրիգոր Նարեկացու ազդեցությունը նկատելի է նաև Ներսես Շնորհալու **Նարդոս բուրեալ...** տաղում (նվիրված Աստվածածնին), որը հիշեցնում է Երգ Երգոցի օգտագործմամբ գրված նրա **Սեաւ եմ գեղեցիկ...** բանաստեղծությունը:

Ուշագրավ է մանավանդ Քրիստոսի Ծննդին նվիրված Ներսես Շնորհալու **Այսաւր ցընծան դասք...** միավորը, որն իր տաղաչափությամբ և նախադասս հարակրկնության իր ձևով նման է միևնույն տոնին հատկացված Գրիգոր Նարեկացու **Աւետի՜ս, մեծ խորհրդոյ...** տաղին, և պատահական չէ, որ վերջինս ձեռագրերում հանդիպում է նաև Ներսես Շնորհալու անունով: Այսպես.

Աւետի՜ս, մեծ խորհրդոյ
Խորհուրդ ծածկեալ մեզ յայտնեցաւ.
Աւետի՜ս, լոյս Հաւր ծագեալ
Ի ծոցածին յէութենէ...[106]

Նույն ձևը տեսնում ենք Ներսես Շնորհալու տաղում, ուր «Աւետիս»-ի փոխարեն օգտագործված է «Այսաւր» բառը.

Այսաւր ցընծան դասք հոգեղինացն
Ընդ փըրկութիւն հողեղինացս.
Այսաւր ցընծայ Ադամըն հին
Նոր Ադամաւ նորոգելով...

Կարելի է բերել նաև այլ օրինակներ, որոնք ապացուցում են գանձարանային մշակույթի այս երկու խոշորագույն ներկայացուցիչների ստեղծագործական կապը: Գրիգոր Նարեկացու ստեղծած ավանդները Ներսես Շնորհալին ոչ միայն լիովին յուրացրել է, այլև մշակել, հարստացրել, զարգացրել՝ ժամանակի պահանջներին համապատասխան: Այստեղ նկատի ունենք, անշուշտ, ոչ թե նրա ընդամենը մի քանի գանձերը, այլ հատկապես տաղերը, փոխերը, մեղեդիները, որոնք միայն իրենց քանակով գերազանցում են և՛ նախորդ, և՛ հետագա բոլոր հեղինակների ստեղծած տաղային ժառանգությունը: Բայց առավել կարևորն այն է, որ հնագույն ձեռագրերում գրեթե ամբողջությամբ և առանց էական աղավաղումների պահպանված նրա տաղերի շնորհիվ ցուցադրելի է դառնում այդ բանաստեղծությունների գանձարանային իսկական պատկերը: Տարակույս չի մնում, որ **տաղ, փոխ, մեղեդի** կոչվող միավորները հորինվել են գանձարանային համակարգի սկզբունքով: Առաջնորդվելով այդ սկզբունքով, Ներսես Շնորհալին գանձարանային տաղերի արվեստը հասցրեց կատարելության: Վասպուրականում սկզբնավորված այդ մշակույթը, որ իր հետագա զարգացմամբ կապվեց մասնավորապես Կիլիկյան Հայաստանի հետ, վերակենդանացավ ու մտավ առաջընթացի մի նոր հունի մեջ՝ շնորհիվ Գրիգոր Նարեկացու ամենամեծ հաջորդի՝ Ներսես Շնորհալու: Նրանից հետո գանձարանային մշակույթը թևակոխում է զարգացման իր նոր փուլը՝ նախապատրաստելով Գրիգոր Խլաթեցու կողմից մշակված և

104 Գրիգոր Նարեկացի, *Տաղեր և գանձեր*, էջ 117։
105 *Նույն տեղում*, էջ 97—99։

106 Գրիգոր Նարեկացի, *Տաղեր և գանձեր*, էջ 66։

ավարտուն վիճակի հասցված Գանձարան ժողովածուների ստեղծումը:

## Զ

Ներսես Շնորհալու գանձարանային ստեղծագործությունների քննական բնագրերը կազմելու համար օգտագործել ենք ինչպես ձեռագիր, այնպես էլ տպագիր աղբյուրներ: Ձեռագիր աղբյուրները, որոնք հաշվվում են մի չորս տասնյակ ու գերազանցապես մասն են կազմում Մաշտոցի անվան Մատենադարանի հարուստ հավաքածուի, ընդգրկում են և՛ վաղագույն ընդօրինակություններ, և՛ Գրիգոր Խլաթեցու խմբագրությամբ մեզ հասած ժողովածուներ: Ինչպես իր տեղում ասվեց, Ներսես Շնորհալու բանաստեղծությունների համար հնագույն գրչագրերը անհամեմատ ավելի վստահելի սկզբնաղբյուրներ են, որովհետև դրանցում հեղինակի տաղերը պահպանված են առավելագույն քանակով և գանձարանային համակարգի համեմատաբար անաղարտ պատկերով: Այդպիսիները թեև փոքրաթիվ, բայց ընտիր ընդօրինակություններ են: Դրանցից մեզ համար իբրև հիմք ծառայել են հատկապես չորսը՝ № 3503, 7785, 79 (Փարիզ)[107], 80 (Փարիզ): Ձեռագրերից երկուսը՝ № 3503 և 79 (Փարիզ)[108], զուտ տաղային միավորներից բաղկացած գրչագրեր են, իսկ մյուս երկուսը՝ № 7785 և 80 (Փարիզ) պատկանում են Գանձարան ժողովածուների այն խմբին, ուր տաղային միավորները հանդես են գալիս գանձերի հետ զուգորդված: Հետաքրքրական է նկատել, որ այս վերջիններում Այլակերպության, Աստվածածնի Վերափոխման և Հրեշտակապետներին նվիրված Ներսես Շնորհալու գանձերին[109] կից հանդես են գալիս այդ տոներին հատկացված հեղինակի տաղային միավորները՝ կազմելով գանձ +տաղ+փոխ գանձարանային լրիվ համակարգ:

Իրենց բովանդակած միավորների քանակով աչքի են ընկնում մանավանդ № 7785 և 3503 գրչագրերը, որոնցում առկա են հեղինակի՝ մեզ հայտնի բոլոր տաղերն ու փոխերը (բացառությամբ մեկի)[110]: 74

107 *Այս և նախորդ երկու ձեռագրերի մասին ավելի մանրամասն տե՛ս* Գրիգոր Նարեկացի, *Տաղեր և գանձեր, էջ 51—54։*

108 *Այստեղ նկատի ունենք ձեռագրի երկրորդ մասը, որը Տաղարան է և անկախ է առաջին մասից՝ Գանձարանից։*

109 *Մյուռոնօրհնության գանձը, որպես կանոն, Գանձարաններում չի հանդիպում։*

110 *№ 7785 ձեռագրում բացակայում է* Տիրական տանիս... *տաղը, իսկ № 3503-ում՝* Անմահ թագաւորն... *միավորը։*



միավոր են հաշվվում № 79 (Փարիզ) Տաղարանում եղած տաղերը: Գրեթե նույնքան տաղեր (69 միավոր) տեղ են գտել № 80 (Փարիզ) ձեռագրում: Ներսես Շնորհալու գանձարանային ստեղծագործությունների այս կարևորագույն սկզբնաղբյուրները, ունենալով համեմատելի շատ ընդհանրություններ, միաժամանակ աչքի են ընկնում այնպիսի տարբերություններով, որոնք բացառում են միմյանցից ընդօրինակված լինելու հնարավորությունը:

Ժամանակի առումով հնագույնը № 79 (Փարիզ) Տաղարանն է՝ ընդօրինակված 1241 թ., Դրազարկում, Հովհաննես գրչի ձեռքով. գրված է բավական անփույթ ձեռագրով, կան բնագրային բաղթողումներ, կրճատումներ. «է» տառի փոխարեն, որպես կանոն, օգտագործված է «ե». հազվադեպ են հանդիպում բառամիջի վանկարար «ը», ինչպես նաև բառավերջի «յ» տառերը: Ձեռագրում առկա Ներսես Շնորհալու տաղային 74 միավորներից 62-ը տաղի ու փոխի նույնպիսի հարաբերությամբ են, ինչպես բնագրերի մեր ներկայացրած զույգերը: Խնդրո առարկա մյուս երեք ձեռագրերն էլ ԺԴ դ. երկրորդ կեսին ընդօրինակված գրչագրեր են: Դրանցից կարևոր է, մանավանդ, № 3503 Տաղարանը ոչ միայն իր ընդգրկած նյութերի քանակով ու դասավորությամբ, այլև տաղ ու փոխ զույգերի հարաբերությամբ: Քննական բնագրերում տաղային միավորների՝ միմյանց հետ ունեցած առնչությունները և ըստ եկեղեցական տոների հաջորդականության դրանց դասավորությունը ներկայացրել ենք՝ ելակետ ընդունելով, ինչպես ասացինք, վերոհիշյալ հնագույն չորս գրչագրերը: Պետք է ասել, սակայն, որ բնագրերի՝ մեր կատարած դասավորությունը հարկ է ընդունել որոշ պայմանականությամբ, որովհետև հիշյալ աղբյուրներում ևս տոների հաջորդականությունը անխախտ և միատեսակ չէ: Առավելապես հենվել ենք № 3503 Տաղարանի վրա՝ հաշվի առնելով, որ այն, առաջին հերթին, համեմատելի է Տաղարանների հնագույն նմուշի՝ № 79 (Փարիզ) գրչագրի հետ, միաժամանակ լինելով շատ ավելի ամբողջական: Ձեռագիրը, որն ընդօրինակվել է Սսում 1394 թ., ընդհանուր առմամբ լավ է պահպանված, փոխերը հաճախ զուրկ են խորագրային Փ նշումից, բայց փոխարենը սկզբնատողն ամբողջությամբ գրված է կարմիր թանաքով: Ներսես Շնորհալու 101 տաղային միավորներից 93-ը հանդես են գալիս տաղի ու փոխի ճիշտ այնպիսի հարաբերությամբ, ինչպես քննական բնագրերում: Նույնպիսի առանձնահատկություններով աչքի է ընկնում նաև № 7785 ձեռագիրը: Նախորդի համեմատությամբ այն ունի նյութերի դասավորության և տաղ ու փոխ

զույգերի որոշ անհամապատասխանություններ, բայց քննական բնագրերի համար իբրև A օրինակ ընդունել ենք հենց այս ձեռագիրը, որն ընդգրկում է նաև հեղինակի գանձերը: Ձեռագիրն ունի խոնավությունից վնասված թերթեր, որի պատճառով առանձին հատվածներ, տողեր կամ տառեր անընթեռնելի են: Հետագայում այդ ջնջումների մի մասը լրացվել է, ընդ որում երբեմն՝ ոչ ճիշտ: Քննական բնագրում դրանց անդրադարձել ենք միայն անհրաժեշտության դեպքում: Բացի այդ, ստորին լուսանցքներում հաճախ հանդիպում են խորագիրներին վերաբերող նշումներ՝ հավանաբար կատարված գրչի ձեռքով: Բնագրերի համար նկատի ենք ունեցել նաև այդ նշումները, եթե դրանք օգնում են լրացնելու խորագրերի թերին: Ձեռագրում տեղ գտած Ներսես Շնորհալու 101 տաղային միավորներից 80-ը տաղի ու փոխի նույնպիսի հարաբերությամբ են, ինչպես քննական բնագրերում:

Բնագրերի համար օգտագործված մյուս ձեռագրերում տեղ գտած Ներսես Շնորհալու տաղերը ներկայանում են մերթ եզակի նմուշներով, մերթ մեկ տասնյակ կամ ավելի միավորներով՝ հասնելով առավելագույնը չորս տասնյակի: Խլաթեցիական գրչագիրներից մենք նախապատվությունը տվել ենք № 6495 ձեռագրին, որը բովանդակում է բավական մեծ թվով միավորներ՝ 50 տաղ, պահպանված համեմատաբար ամբողջական վիճակում և նվազ աղավաղված: Ձեռագիրն ընդօրինակված է 1490 թ. Արճեշում, Հովհաննես Արճիշեցու ձեռքով: Այստեղ ընդգրկված Ներսես Շնորհալու տաղերի գանձարանային օրինաչափությունները այնպես ակներև չեն, ինչպես հնագույն գրչագրերում. խախտված է տաղ ու փոխ զույգերի միասնությունը, հաճախ միևնույն միավորը մասնատված է և իր զանազան հատվածներով հատկացված տարբեր տոների: Ձեռագիրը հետաքրքրություն է ներկայացնում ժամանակի ընթացքում հեղինակի բանաստեղծությունների կրած փոփոխությունները ըմբռնելու առումով[111]:

---

[111] *Քննական բնագրերի համար նկատի ենք ունեցել նաև Տյուբինգենի և Լվովի համալսարանների գրադարանների հավաքածուները: Ձեռագրերը մեզ մատչելի չլինելով, գոհացել ենք համապատասխան ձեռագրացուցակների տվյալներով: Տյուբինգենի ցուցակը հրատարակված է գերմաներենով, բայց մեզ հետաքրքրող նյութերի խորագրերը բերված են հայերենով (տե՛ս* Finck F. N. und Gjandschezian L., Verzeichnis der armenischen Handschriften der Königlichen Universitätsbibliothek, Tübingen, *1907, էջ 84—85): Լվովի ձեռագրերի ցանկը ներկայացրել է Ն. Ակինյանը* (Ն. Ակինյան, *Ցուցակ հայերէն ձեռագրաց համալսարանի Մատենադարանին ի Լվով, «ՀԱ», 1937, էջ 113—124):*



Ներսես Շնորհալու գանձարանային ստեղծագործությունների հրատարակություններից քննական բնագրերի համար օգտագործել ենք 1830 թ. Վենետիկում տպված «Բանք չափաւ» հատորը, իսկ այդ գրքից դուրս մնացած և առանձին լույս տեսած նմուշների համար՝ համապատասխան հրատարակությունները:

Գանձեր ու տաղեր բովանդակող ժողովածուներում, ինչպես ասվեց, տաղային միավորները հանդես են գալիս կա՛մ գանձերին առընթեր՝ իբրև կցորդ, կա՛մ առանձին, բայց գանձերից հետո: Նույն առանձնահատկությունն ունեն նաև Ներսես Շնորհալու հիշյալ բանաստեղծությունները, բայց քանի որ հեղինակի տաղային միավորներն անհամեմատ շատ են քան նրա գանձերը, և դրանց շնորհիվ են ակներև դառնում այդ ստեղծագործությունների օրինաչափությունները, ուստի, ներկա հրատարակության մեջ ներկայացված են նախ՝ տաղային միավորները (ցանկը՝ առանձին Տախտակով բերված է Ներածության վերջում), այնուհետև՝ գանձերը: Գանձերից հետո, «Հավելվածներ» բաժնում բերված են Ներսես Շնորհալու անվան հետ վերապահությամբ առնչվող տաղերը:

Բնագրերն ունեն ընդհանուր այբբենական համարակալում՝ Ա—ՃԺԵ, ընդ որում Ա—ՃԲ միավորները ներկայացնում են հեղինակի 102 տաղերն ու փոխերը (37-ը՝ նորահայտ), ՃԳ—ՃԶ միավորները՝ չորս գանձերը (մեկը՝ նորահայտ), իսկ ՃԷ—ՃԺԵ միավորները՝ վերագրելի 9 տաղերը (երեքը՝ նորահայտ): Կատարված է նաև տաղ ու փոխ համակարգերի համարակալում ըստ տոների՝ 1—70 (№ 1—58՝ տաղեր ու փոխեր, № 59—62՝ գանձեր, № 63—70՝ վերագրելի տաղեր): Այն փոխերը, որոնք համապատասխան տաղերի օրգանական մասն են, առանձին թվահամար չեն ստացել և կից գտնվող տաղերից անջատված են սոսկ **Փոխ** ենթախորագրով: Դրանք են.

1. Այսաւր ցընծայ..., Այսաւր անմեղըն..., Այսաւր Հոգւովըն... (№ 14)
2. Մըտեալ ի տաճարն... (№ 16)
3. Ով Մարիամ..., Արդ, ով Տէր..., Ով անմեղ աղաւնի... (№ 22)
4. Լըւան զաւետեաց... (№ 25)
5. Աստուածաւէր եւ սուրբ կանայք... (№ 27)
6. Յարեաւ փառաց թագաւորն... (№ 31)
7. Հայր վըկայելով... (№ 35)
8. Քառասնից սըրբոց... (№ 55)
9. Ով Սիմէոն ծերունի... (№ 68)

10. Յայս նոր աւետեաց... (№ 69)

Տաղային յոթ միավորներ, որոնք ձեռագրերում ունեն համապատասխան կցորդներ, բայց վերջիններիս առնչությունը հիշյալ միավորների հետ մեզ տարակուսելի է թվացել, ներկայացրել ենք առանց զուգակիցների (տե՛ս Տախտակ, № ԺԱ, ԼԲ, ԼԳ, ԼԶ, ԼԸ, ՂԲ, Ճ): Տաղերից մի քանիսը բերված են տարբերակներով, ընդ որում այդ տարբերակները առանձին թվահամար չեն ստացել (ԼԶա, ԼԶբ, ԼԸա, ԽԳա, ԾԸա, ԾԸբ, Ճա, ՃԺԴա): «Ծանոթագրություններ» բաժնի վերջում ներկայացված է Ներսես Շնորհալու հատված-տաղերի նմուշների ցանկը (Ցանկ Առաջին), նաև տաղերի ու փոխերի սկզբնատողերը՝ դասավորված այբբենական հաջորդականությամբ (Ցանկ Երկրորդ):

Ներկա հրատարակության մեջ բնագրերը ներկայացված են հետևյալ սկզբունքով.

1. Գանձերը տնատված են՝ ելակետ ընդունելով տնասկզբի տառերով արտահայտված ծայրակապերը, իսկ տողատման համար՝ իմաստային և շարահյուսական առանձնահատկությունները:

2. Տաղերի տնատման և տողատման ժամանակ նկատի ենք ունեցել մինչև այժմ եղած հրատարակությունները, բայց հաշվի ենք առել նաև տողերի շղթայման, ծայրակապային, տաղաչափական և այլ առանձնահատկություններ ու ըստ այդմ կատարել փոփոխություններ:

3. Գանձերում թագավորի կամ կաթողիկոսի անվանը փոխարինող պայմանական նշանը բնագրերում արտահայտել ենք «այս անուն» բառերով՝ առնելով ուղիղ փակագծերի մեջ:

4. «Այլ ազգ» նշումը, որ հանդիպում է տաղերի զանազան հատվածներին կից լուսանցքներում, բնագրերում չենք պահպանել, այլ ներկայացրել ենք տողատակային տարընթերցումներում, քանի որ դրանք մատնանշում են եղանակային փոփոխությունները:

5. Բնագրերում տաղերի համար գործածված համակարգային համարակալումը (արտահայտված արաբական թվանշաններով) վերաբերում է նաև կից հանդես եկող համապատասխան փոխերին:

6. Բնագրերի խորագրերի համար ընտրված են այնպիսի նմուշներ, որոնք արտահայտեն և՛ տվյալ տոնի, և՛ հեղինակի անունները, այդ պատճառով էլ երբեմն օգտագործված են մեկից ավելի օրինակներ: Խորագրերում կատարել ենք ուղղագրական լոկ աննշան միջամտություններ:

7. Տողատակում, «Խորագիր» բաժնում բերված են օգտագործված



բոլոր աղբյուրների վերնագրերը: Եթե կան այնպիսիները, որոնք լիովին համապատասխանում են բնագրի խորագրին, այդ դեպքում արված է նշում՝ «տե՛ս վերևում», իսկ խորագրից զուրկ օրինակների համար նշված է՝ «անխորագիր»: Որոշ տաղերի, հատկապես փոխերի, խորագրերում տոնի անվանումը բացակայում է. նման դեպքերում անհրաժեշտ տվյալները լրացված են տվյալ միավորին կից գտնվող տաղի կամ գանձի խորագրից և լրացված հատվածը բերված է ուղիղ փակագծերի մեջ: Նույն ձևով ցույց են տրված տոների տարբեր օրերի կամ ժամերի վերաբերող (հատկապես Ծննդյան և Հարության տոների) խորագրային այն մանրամասները, որոնք չեն արտացոլված քննական բնագրերի խորագրերում:

8. «Խորագիր» բաժնից հետո, առանձին, «Ծայրակապ» հարցի դիմաց ցույց են տրված բնագրերի տնասկզբի կամ տողասկզբի տառերով արտահայտված իմաստային ծայրակապերը:

9. Բնագրային տարընթերցումներն ամենայն մանրամասնությամբ ցույց են տրված «Բնագիր» բաժնում:

10. Բնագրերի կետադրությունը կատարված է ըստ քերականական արդի օրենքների:

11. Ուղղագրության համար ելակետ են հանդիսացել օգտագործված ձեռագրերի հնագույն ընդօրինակությունները.

ա) «Օ»-ն բերված է «աւ» համարժեքով:

բ) «և»-ը բերված է «եւ» համարժեքով:

գ) «ե» և «է» տառերի գրությունը ձեռագրերում ոչ միշտ է որոշակիորեն տարբերակված, ուստի բնագրերի համար ընտրված է ճիշտ ձևը, իսկ տարընթերցումները մատնանշված են, բացառությամբ № 79 (Փարիզ) ձեռագրի, որտեղ, որպես կանոն, «է»-ի փոխարեն գործածված է «ե»: Այն դեպքում, երբ ծայրակապը արտահայտում է այբուբենի տառերը («Ա—Ք»), բնագրում պահպանել ենք «է»-ն՝ եթե վերջինս հանդես է գալիս որպես այբուբենի յոթերորդ տառը. օրինակ՝ Էրեւի, Էկեալ և այլն:

դ) Բառամիջի «ը»-ն բնագրում պահպանել ենք միայն այն դեպքում, երբ դա ունի տաղաչափական նշանակություն: Նույն նկատառումով «ու» երկբարբառը պահպանել ենք «ըւ» ձևով. օրինակ՝ Աստըւած, Մանըւէլ, նըւէր, զըւարթուն և այլն:

ե) «սրովբէ» ու «սերովբէ» («քրովբէ» ու «քերովբէ») ձևերից նախապատվությունը տրված է երկրորդին, բայց եթե ձեռագրում առկա է միայն մեկ ձևը, ապա այն պահպանված է նույնությամբ:

## ՏԱԽՏԱԿ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ՏԱՂԵՐԻ ՈՒ ՓՈԽԵՐԻ
### (Ըստ ճնշական բնագրերի հաջորդականության)[112]

| № | Տոնի անվանումը | Տաղերի ու փոխերի սկսվածքներն ու ծայրակապերը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1 | Աւետեաց | Ա. Նոր երկինք յերկրի… («Ներսէսի գովեստ Աստվածածնի»)**<br>Բ. Իմանալի սերովբէ… («Ի խնդրո մեծին Թորոսի ե») |
| 2 | Աստուածածնի | Գ. Նոր ծաղիկ ցուցաւ… («Ներսէսս»)*<br>Դ. Այսաւր ցընծութիւն… («Ասէ զայս բան»)* |
| 3 | Ծննդեան Ճրագալուցի | Ե. Այսաւր աւետեաց Գաբրիելի…<br>Զ. Նոր ծաղիկ բըղխէ… («Ներսիսի ե այս երգս») |
| 4 | Ծննդեան (Ա աւուր կամ Ջրօրհնեաց) | Է. Այսաւր ի սկըզբան…*<br>Ը. Նոցին համաձայնեալ… («Ներսիսի ե երգս»)* |
| 5 | Ծննդեան (Բ աւուր) | Թ. Նոր Եդեմ բանաւոր… («Ներսեսի երգ»)<br>Ժ. Մայր Աստուծոյ Մարիամ… |
| 6 | Ծննդեան (Բ աւուր, երեկոյին) | ԺԱ. Անճառ է խորհուրդ… («Ա—Ք»)* |
| 7 | Ծննդեան (Գ աւուր) | ԺԲ. Ծագումն յարիւոյն…*<br>ԺԳ. Երգ նոր աւետեաց… («Երգ Ներսիսի այս է») |
| 8 | Ծննդեան (Գ աւուր, երեկոյին) | ԺԴ. Աստուծոյ ողորմութեանցըն…*<br>ԺԵ. Իսկ դու ընդէ՞ր ես…* |
| 9 | Ծննդեան (Դ աւուր) | ԺԶ. Այսաւր աւետեաց ձայն…*<br>ԺԷ. Բարբառ աւետեաց… («Բան Ներսիսի ե») |
| 10 | Ծննդեան (Ե աւուր) | ԺԸ. Լոյս փառաց էին…*<br>ԺԹ. Նոր թագաւորին… («Ներսիսի երգ») |
| 11 | Ծննդեան (Ե աւուր, երեկոյին) | Ի. Տիրուհի սուրբ Կոյս… («Տ—Ք»)*<br>ԻԱ. Անճառ Բանին…* |
| 12 | Ծննդեան (Զ աւուր, երեկոյին) | ԻԲ. Էին միայնոյ միածին…*<br>ԻԳ. Նորահրաշ ծնընդեան… («Ներսեսի ե») |
| 13 | Ծննդեան (Է աւուր) | ԻԴ. Սկըսեալն յանըսկիզբըն…*<br>ԻԵ. Տէր փառաց անճառ… («Տր Ներսեսի ե սա») |
| 14 | Ծննդեան (Ը աւուր) | ԻԶ. Այսաւր ցընծան դասք…*<br>Փ. Այսաւր ցընծայ տունն…<br>Փ. Այսաւր անմեղըն…<br>Փ. Այսաւր Հոգւովըն… |
| 15 | Ծննդեան (Ը աւուր, երեկոյին) | ԻԷ. Քառանիւթիցըս Աստուած… («Ք—Զ»)*<br>ԻԸ. Նոյն ինքն անդրանիկըն… («Ներսեսի ե այս բան») |
| 16 | Տեառնընդառաջի | ԻԹ. Այսաւր նորահրաշ լոյսն…*<br>Փ Մըտեալ ի տաճարն… |
| 17 | Յարութեան Ղազարու | Լ. Անմահ թագաւորն…*<br>ԼԱ. Նոր աւետեաց լուր… («Ներսիսի երգ») |
| 18 | Ծաղկազարդի | ԼԲ. Տիրական տաւնիւս… («Տր Ներսեսի ե») |
| 19 | Մեծի Զորեքշաբաթի | ԼԳ. Այսաւր ըզՏէրդ արարիչ…* |
| 20 | Աւագ Ուրբաթի | ԼԴ. Ի յուրբաթու մեծի…*<br>ԼԵ. Դուստըր Սիոնի…* |
| 21 | Աւագ Ուրբաթի | ԼԶ. Անեղ Որդին… («Ա—Ք»)<br>ԼԶա. Անեղ Որդին… («Ա—Ք»)<br>ԼԶբ. Անեղ Որդին.. («Ա—Ն») |
| 22 | Աւագ Ուրբաթի | ԼԷ. Կայր մայր Տեառն…<br>Փ. Ով Մարիամ, կոյս…<br>Փ. Արդ, ով Տէր…<br>Փ. Ով անմեղ աղաւնի… |
| 23 | Աւագ Ուրբաթի | ԼԸ. Ծարաւեցաւ որպէս ըզմարդ Տէրն ի խաչին…<br>ԼԸա. Ծարաւեցաւ…** |
| 24 | Յարութեան | ԼԹ. Առաւաւտին շաւիղին…<br>Խ. Նըստեալ կանայքն… («Ներսեսի երգ») |
| 25 | Յարութեան (Մատթէի) | ԽԱ. Այսաւր լոյս ծագեաց…<br>Փ. Լըւան զաւետեաց… |
| 26 | Յարութեան (Մատթէի) | ԽԲ. Այսաւր, ը՛, լոյս հաստատի…*<br>ԽԳ. Նոր ծաղիկ պայծառ… («Ներսեսի»)**<br>ԽԳա. Նոր ծաղիկ պայծառ… («Ներսեսի ե բանս») |
| 27 | Յարութեան (Մարկոսի) | ԽԴ. Այսաւր ընդ ծագելն…<br>Փ. Աստուածասէր եւ սուրբ… |
| 28 | Յարութեան (Մարկոսի) | ԽԵ. Նորահրաշ արեգակն այսաւր… («Ներսեսի երգ»)*<br>ԽԶ. Կեանքն ընդ Հաւր… («Կաթողիկոսի Հայոց») |
| 29 | Յարութեան (Ղուկասու) | ԽԷ. Այսաւր յարութեան մեզ…*<br>ԽԸ. Ցընծան այսաւր երկինք… |
| 30 | Յարութեան (Ղուկասու) | ԽԹ. Նոր իմն աւետեաց… («Ներսեսի ե»)<br>Ծ. Հաւր կամաւ իջեալ… («Հայոց կաթողիկոսին») |
| 31 | Յարութեան (Յովհաննու) | ԾԱ. Նոյնագոյ ընդ Հաւր… («Նէրսիսի»)<br>Փ. Յարեաւ փառաց… |

112 Փոխերը բերված են համապատասխան տաղերին կից՝ խորքից։ Այն փոխերը, որոնք տաղի մասն են, առանձին թվահամար չունեն և ներկայացված են Փ խորագրային նշումով։ Աստղանիշով ցույց են տրված նորահայտ միավորները։ Զույգ աստղանիշով միավորները տպագրվածների լրացումներն են կամ տարբերակները։

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| 32 | Յարութեան (Յովհաննու) | ԾԲ. Նոր ձայն աւետեաց... («Ներսեսի է»)<br>ԾԳ. Կանայքն արտասուալք... («Կաթողիկոսի Հայոց») |
| 33 | Սուրբ Հոգուն (Սուրբ Երրորդութեան) | ԾԴ. Ներպարունակեալ ինննակ... («Ներսես»)<br>ԾԵ. Ներհիւսեսցուք... («Նվագե Հոգւոյն տրվոգին իմաստ բանի ընդ ձայնի»)* |
| 34 | Այլակերպութեան | ԾԶ. Արփիական, ը՛, լոյսն...*<br>ԾԷ. Տէր փառաց այսաւր... («Տր Ներսեսի է») |
| 35 | Այլակերպութեան | ԾԸ. Նոր իմն ահաւոր...**[113]<br>Փ. Հայր վերկայելով...<br>ԾԸա. Նոր իմն ահաւոր...<br>ԾԸբ. Աստանաւր տեսիլ... |
| 36 | Այլակերպութեան (Բ աւուր) | ԾԹ. Ներպարունակեալ խորհուրդ... («Ներսէսի երգ»)<br>Կ. Ընդ որս եւ մանկունք...**[114] |
| 37 | Վերափոխման | ԿԱ. Այսաւր Գաբրիէլ...<br>ԿԲ. Անարատ տաճար... |
| 38 | Վերափոխման (Բ աւուր) | ԿԳ. Նոր քերովբէ հողանիւթ... («Ներսես»)*<br>ԿԴ. Նարդոս բուրեալ... («Նըվագե Աստվածածնին երգ»)* |
| 39 | Եկեղեցւոյ | ԿԵ. Նորազուարճ խընդութեամբ... («Ներսեսի է երգս»)*<br>ԿԶ. Ի լուսոյն արփւոյ... («Ի սուրբ եկեղեցի»)* |
| 40 | Եկեղեցւոյ | ԿԷ. Յաւէժ եկեղեցի...*<br>ԿԸ. Ի յերգս սիրեցեալ...* |
| 41 | Խաչի | ԿԹ. Նոր դրախտին եկեղեցւոյ... («Ներսիսի է»)<br>Հ. Կենաց փայտ... («Կաթողիկոսի Հայոց») |
| 42 | Խաչի (Բ աւուր) | ՀԱ. Միակն ի միոյն...<br>ՀԲ. Արդ, աւրհնեալ ես...[115] |
| 43 | Հրեշտակապետաց | ՀԳ. Առաջինըն լոյս երրեակ... («Ա—Ք»)<br>ՀԴ. Նոր տաւնիւս երկնաւորաց... («Ներսէսի է այս բանս») |
| 44 | Առաքելոց | ՀԵ. Առաքեալք Աստուածորդւոյն... («Ա—Ք»)<br>ՀԶ. Եկայք զուարճացեալք... («Երգս այս է Ներսիսի») |
| 45 | Մարգարէից | ՀԷ. Աստուածային խորոցն անճառ... («Ա—Ք»)<br>ՀԸ. Նորահրաշ տաւնիւս... («Ներսէսի երգ») |
| 46 | Հայրապետաց | ՀԹ. Այսաւր մայր Սիոն... («Ա—Ք»)<br>Ձ. Նորոյ գինւոյն իմաստութեան... («Ներսեսի երգ») |

113 Տպագրված օրինակն սկսվում է Աստանօր տեսիլ աճեղ... տողով։

114 Տպագրված օրինակն սկսվում է Հանել ընդ ճոսին... տողով։

115 Տպագրված օրինակն սկսվում է Բառնանակ բերող... տողով։



| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| 47 | Մարտիրոսաց | ՁԱ. Սրբազանն արդար ըղձուր... («Ա—Ք»)<br>ՁԲ. Բանիւ աւետաւոր... («Բան ի վկայսն ի Ներսիսէ») |
| 48 | Անուանի Անապատականի | ՁԳ. Անտոն սկիզբն երկնաւոր... («Ա—Ք»)*<br>ՁԴ. Նոր դրախտին քո, Տէր... («Նվագ բանիս Ներսեսի է») |
| 49 | Յովհաննու Մկրտչին | ՁԵ. Անմարմնոցըն հրեղինաց... («Ա—Ք»)<br>ՁԶ. Բարբառոյն յանապատէ... («Բանս այս նվագեալ ի Ներսիսէ»)* |
| 50 | Որդւոց Որոտման | ՁԷ. Որդիքն Որոտման...<br>ՁԸ. Նոր լոյս յարփենւոյն... («Ներսէսի երգ») |
| 51 | Սրբոյն Ստեփանոսի | ՁԹ. Ի խաչին տընկեալ... («Ի Ստեփաննոս»)<br>Ղ. Նոր ծառոյն կենաց... («Նախավկայն է»)*<br>ՂԱ. Ի զաւազանէն Յեսսեայ... («Ի Ներսիսէ կաթողիկոսէ») |
| 52 | Գրիգորի Լուսաւորչի | ՂԲ. Սրովբէից ձայնիւ... («Սրբոյն Գրիգորի երգ ի Ներսիսէ ծառաէս») |
| 53 | Գրիգորի Լուսաւորչի | ՂԳ. Գրիգորիո՛ս, առաքինի հըսկող...<br>ՂԴ. Բարձրացիր դըշխոյ... |
| 54 | Մեծին Ներսիսի | ՂԵ. Նոր եւ առաջին... («Ներսէսի նվաստի»)<br>ՂԶ. Գովեմք այսաւր... («Գովեստ մեծին հոմանվանն նմին») |
| 55 | Սրբոց Քառասնից | ՂԷ. Նոր իմն է հընչիւն... («Ներսիսի երգ ի»)<br>Փ. Քառասնից սրբոց... («Քառասուն վկայսն Աստուծոյ որք ի Սեբաստիա կատարեցանս») |
| 56 | Ի սուրբ Հռիփսիմէ | ՂԸ. Նորահրաշ արեգակ իմանալի... («Ներսեսի»)*<br>ՂԹ. Առաւաւտ լուսոյ արեւելեան... («Առ Հռիփսիմե կայսն է») |
| 57 | Սրբոց Հռիփսիմեանց | Ճ. Երջանիկ հոգիահրաշք...<br>Ճա. Երջանիկ հոգիահրաշ... |
| 58 | Տրդատայ Թագաւորին | ՃԱ. Նորահրաշ տեսիլ... («Ներսեսի է»)<br>ՃԲ. Լոյսն անեղական...* |

# Բ Ն Ա Գ Ր Ե Ր

ՏԱՂԵՐ

1

## Ա. ՏԱՂ ԱՒԵՏԵԱՑ, ՆԵՐՍԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

*Նոր երկինք յերկրի, արփւոյն պարունող,*
*Ծագողին ծագող։*

*Երրակի ունող աւետեաց ձայնրւ*
*Անմահից պետին։*

*Բոպէիցըն տիպ համայնից հոգւոց*
*Գոլով արեւելք։*

*Սըրտի մաքրելոյ զթափանցիկ լուսոյն*
*Ծագելով Նըշոյլ։*

---

**Աղբյուրներ**

A—*ձեռ. № 7785, թերթ 264ա—265բ։*

B—*ձեռ. № 3503, թերթ 9բ—11բ։*

C—*ձեռ. № 79, թերթ 335ա (Փարիզ)։*

D—**Ներսես Շնորհալի,** *Բանք չափաւ, Վենետիկ, 1830, էջ 366։*

**Խորագիր**

A *Աստուածածնին գովեստ, ի Ներսիսէ կաթու[ղիկոսէ] ասացեալ։* B *Այլ տաղ Աւետեաց, Ներսէս կաթողիկոսի։* C *Տեառն Ներսիսի կաթ[ողիկոսի]։* D *Ի նոյն։* **Մայրակապ՝** *Ներսէսի գովեստ Աստվածածնի։*

**Բնագիր**

*1* AB *արփւոյն, ը՜։* C *արփոյն։* AB *պարունաւղ։* CD *պարունողն։*
*2* A *Ծագաւղի։* B *Ծագողին, ը՜։* AB *ծագաւղ։*
*3* AB *Երրակին ունաւղ։*
*4* B *Անըմահից։*
*5* C *հոգոց։*
*6* B *Գոլո։*
*7* C *Սրտի։*
*8* A *Նըշոյլք։* C *Նշոյլ։*

Էին աննիւթի հիւթ պարունակող,
Նիւթեալ առ ի քէն։

Սիրատունկ ծառոյն սաղարթից բողբոջ
Ի քէն ընձիւղեալ։

Իսկական Բանին գիր քո մելանաւ
Արեամբ պարագրեալ։

Գեղմն ունակ ցաւղոյ Գեդէոն ետես,
Երգէ եւ Դաւիթ։

Ուրախ լե՛ր, դըշխոյ, հարսըն պանծալի
Անմահ փեսային։

Վեհին անեղի էից եղակի
Եղակ վերըստին։

Երբին անկէտի կէտ ժամանակեայ,
Սկիզբն անըսկըզբան։

Սաւս խընկաբերին, նոր դրախտ Ադենի,
Ծառ կենաց պըտղոյն։

Տիրական որթոյն Հաւր տընկագործի
Երկիր բանաւոր։

Աբրահամին աւետ Սահակաւ տըւեալ
Ի քէն կատարումն։

9 C պարունակեող։ D պարունակեալ։
12 A ընձիղեալ։ B ընձեղեալ։ CD ընծիւղեալ։
13 CD չիք 13—44։
15 A էտես։
21 B ժամանակեա։
25 A որթոյ։
27 B Աբրամին աւէտ։



Սառա ամլութեամբ, նորահրաշ ծնընդեամբ
Տիպ քո կուսութեանդ։

Տապանակ կտակի, սափոր ոսկի լի
Նոյն մանանայիւ։

Վէմ առանց ձեռին ի լեռնէդ հատեալ,
Կոյսդ անհայր ծընեալ։

Անկէզ մորենի Մովսեսի տեսեալ,
Ըզքեզ ծանուցեալ։

Ծընող ծնիցելոյն, անմայրըն յառաջ
Անհայր ծնանելով։

Անըստուեր լուսոյ խորան նոր Սինայ,
Տաճար Սաղիմայ։

Ծիր ծայրագունին, ծաւալումն արփւոյն
Յոգիս նըշողից։

Նըստելոյն ընդ Հաւր արքային փառաց
Հուպ մայր մըշտակաց։

Ի բարձունս առ նոյն լեր մեզ բարեխաւս
Սուրբ կոյս Մարիամ։

33 B լեառնէդ։
34 B անմայր։
35 AB Մովսէսի։
37 AB ծընաւղ։ B ծընիցելոյն։
38 A ծընանելով։
39 B Անըստեր։
40 B Սաղիմա։
45 B միշտ փխ մեզ։ CD չիք մեզ։ B բարէխաւս։ D բարեխօս։

## Բ. ՓՈԽ

*Իմանալի սերովբէ,*
*Բանին աթոռ քերովբէ.*
*Խորան լուսոյ արքային,*
*Հարսըն մաքուր փեսային**։

*Նոր բուրաստան ծաղկերանգ,*
*Ողկուզաբեր բարունակ,*
*Դրախտ Տեառն դարձեալ քեւ տըւաւ*
*Մաւրն Եւայի, որ մեղաւ։*

*Բոտեալ զերկունս տըրտմական,*
*Փոխադրեցեր րախճական*

---

**Աղբյուրներ**

A—*ձեռ. № 7785, թերթ 265բ—266ա։*
B—*ձեռ. № 3503, թերթ 11բ—12ա։*
C—*ձեռ. № 2672, թերթ 268բ—269ա։*
D—*ձեռ. № 6495, թերթ 365բ—366ա։*
E—*ձեռ. № 663, թերթ 75բ—76բ (Վիեննա)։ Տե՛ս ՀԱ, 1947, № 1, էջ 48—49։*

**Խորագիր**

AB *Փ[ոխ]։* C *Տաղ և գովասանք Աստուածածնի։* D *Յորդորակ է [Գ աւուր Փոխման]։* E *[Յորդորակ]։*

**Ծայրակապ՝** *Ի խնդրո Մեծին Թորոսի ե։*

**Բնագիր**

*1* D **չիք** *1—12։* A *սէրովբէ։*
*2* E *յաթոռ։* A *քէրովբէ։*
*5* BCE *ծաղկերանկ։*
*6* E *Ողկոյզաբեր։*
*7* BC *Դրախտըն։* E *Դըրախտն։* B *Տեառըն։* CE **չիք** *Տեառն։* CE *կըրկին* **փխ** *դարձեալ։* C *տվօ* **փխ** *տըւաւ։*
*9* A *Բոտել։*
*10* C *ըրախճան։*

* A օրինակում յուրաքանչյուր տան վերջին տողը կրկնված:



*Ուրախութիւն երկրայնոցս,*
*Հարսն ի յերկրէ երկնայնոց։*

*Մայր կենդանեացըն Հոգւոյ,*
*Ջոր նախահայրըն ծանոյց.*
*Երկոտասան վըտակաւ*
*Վէմն առ ի քէն շնորհեցաւ։*

*Ծըրար քառիցըն խընկոց.*
*Հոգւոյն յոգիդ խառնելոց,*
*Իմաստութիւն, զաւրութիւն,*
*Արդարամէտ մաքրութիւն։*

*Նարդոս, զըմուռ ծովային,*
*Եւ կինամոն կընդըրկին,*
*Թագապաճոյճ զարմազան*
*Ջըմրուխտ եւ կայծ կարկեհան։*

*Ո՞վ դու քաղաք կենդանի,*
*Տաճար շինեալ Քրիստոսի.*
*Բաքուն Բանին Յիսուսի,*
*Ծընող մարմնով ի յերկրի։*

---

*11* E *յերկրայնոցս։*
*12* B *երկնայնոցն։*
*13* A *սեռից* **փխ** *Հոգւոյ։* CDE *Հոգոյ։*
*15* C *Երկոյտասան։* A *վըտակաւք։*
*16* C **տողի վերջում՝** *Ջամէն տուն կրկնէ. Վէմն առ ի քէն շնորհեցաւ։*
*17* E *Ծընար* **փխ** *Ծըրար։* C *խնկոց։*
*18* CD *Հոգոյն։* E *ոգիդ։*
*20* C *Արդարամետ։* E *Արդարամիտ։*
*21* E *Նարթոս։* ABD *եւ զըմուռ (AB զմուռ)։*
*22* B **չիք** *Եւ։* CE *մեծագին* **փխ** *կընդըրկին։* D *կընդրկին։*
*23* CE *Թագ եւ պըսակ* **փխ** *Թագապաճոյճ։* D *Թագ պաճուճեալ։*
*24* C *Ջըմրոյթ։* DE *Ջըմրութ։* AB *կարկէհան։* CE *կարգեհան։*
*26* B *Աստուծոյ* **փխ** *Քրիստոսի։* CDE *Յիսուսի* **փխ** *Քրիստոսի։*
*27* B *Բաքունեալ։* C *Բյաքունոյն։* E *Բաքունոյն։* CE *Տեառն Քրիստոսի* **փխ** *Բանին Յիսուսի։* D *Բամից գոյից արարչին* **փխ տողի:**
*28* ABCE *Ծընաւղ։* D *Մարմնով ծընող։*

*Որով Հայցեմք մայր լուսոյ,*
*Ջերգող երգոյս եւ գխընդրող,*
*Սրբել ըզմեզ ի մեղաց*
*Լեր բարեխաւս անմոռաց.*

*Ի զըւարթնոց կայանին*
*Երգել ըզփառս ընդ նոսին,*
*Երրորդութեան անեղին*
*Յաւէտ ի նոյն միշտ էին։*

---

29 E *Ով որ* փխ *Որով*։ C *լուսո*։
30 ABCD *Ջերգաւղ*։ E *Երգաւղ*։ AB *զխընդրաւղ*։ C *զտաղո* փխ *զխընդրող*։ D *զխընդ-րողս*։ E *զտաղոյս* փխ *զխընդրող*։
32 B *բարէխաւս*։
33 E *զըւարթնոցըն*։ CE *կային* փխ *կայանին*։ D *կայանինն*։
35 B *Երրորդութեանն*։ CDE *էրրորդութեան*։ A *անեղի*։
36 B *Յափտէնոյն* փխ *Յաւէտ ի նոյն*։ C *Յօէտ*։

## 2

## Գ. ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ, Ի ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԿՈՅՍՆ

*Նոր ծաղիկ ցուցաւ ի նորատունկ բուրաստանի,*
*Նոր արեւ Հարաւի*
*Նորազուարճ առաւաւտի։*

*Երփնատիպ սաղարթ տերեւախիտ կանաչազուարճ*
*Հողմով Հոգւոյն շարժեալ,*
*Քաղցրիկ աւդով վայրաբերեալ։*

*Բախճանայ դրախտն Եդեմայ նոր ծառ կենաց տնկեալ ի նմա*
*Ի յաբրահամեան*
*Յեսսեան արմատ դաւթիազարմ։*

---

**Աղբյուրներ**

A—*ձեռ. № 7785, թերթ 11աբ*։
B—*ձեռ. № 3503, թերթ 42բ—43ա*։
C—*ձեռ. № 79, թերթ 330ա (Փարիզ)*։
D—*ձեռ. № 80, թերթ 9բ—10բ (Փարիզ)*։

**Խորագիր**

A տե՛ս վերևում *(կոյսն, խոսրովային եղանակաւ)*։ B *Տեառն Ներսիսի կաթողի-կոսի, սուրբ Աստուածածին, խոսրովային*։ C *Այլ տաղ Ծնընդի*։ D *Տեառն Ներսի[սի] Հայոց կաթուղ[իկոսի] ասացեալ, ի սուրբ Աստուածածին կոյսն, խոսրովային եղանա-կաւ, յոյժ լաւ*։

**Ծայրակապ՝** *Ներսէսս*։

**Բնագիր**

1 AD *բուրաստանէ*։
3 AD *առաւաւտէ*։ C *առաւաւտին*։
4 B *կանաչազըւարճ*։
5 C *Հոգոյն*։
6 A *վայրաբերեա*։
7 C *Դրախտ*։ ABD *տընկեալ*։
8 AD չիք *Ի*։ C *յաբրահեան*։
9 D *դաւթիազէնս շառօիղեալ* փխ *դաւթիազարմ*։

Սքանչելեաւք Կոյսն յղացաւ զէմմանուէլն ըստ Եսայեայ,
Ծընեալ զՀաւր Համագոյն՝
Մեզ համագոյ գոլ ըստ մարմնոյ։

Էն ի միշտ էէն անժամանակ ծընեալ անմայր,
Նոյն ժամանակաւ
Ի կոյս մաւրէ անհայր ծընաւ։

Սիրով խոնարհեցաւ ճըշմարտապէս եւ տիրաբար,
Առնուլ ըզմերս մարմին,
Առանց մեղաց մնալ անմարմին։

Սիրով երկըրպագեա՛, եկեղեցի, ծնեալ արքային.
Փառաւք զքեզ պսակողին
Մատո ըզփառս միշտ յաւիտեան։

---

10 C չիք 10—15։ AB լուսանցքում՝ *Այլ ազգ*։ B *Սքանչելաւք Կոյսըն յղացաւ*։ AD *զԵմմանուէլն*։ B *զէմմանըւիէլն*։
11 D *Ծնեալ*։ A *զՀայր*։ B *Համագոյն*։
13 D *ծընեալն*։
16 C *ճշմարտապես*։
17 AD *Առնու*։ A *ըզմերըս*։ C *զմերս*։ D *զմերըս*։
18 A *մընալ*։
19 C չիք 19—21։ AD *երկըրպագէ*։
20 D *Փառօք ըզքեզ*։ AD *պըսակողին*։ B *պըսակաւղին*։
21 B *Մատոյ ըզփառըս*։



## Դ. ՓՈԽ

Այսաւր ցընծութիւն հողեղինացս,
Եւ աւետիք խընդութեան փըրկողին ծննդեան։

Սա յերկնից իջեալ ի ծոցոյ Հաւր,
Որդի եւ Բան անմարմին՝ եղանի մարմին։

Է զարմանք հրաշից աննիւթ Բանին
Լինել մարմին տիրապէս եւ մնալ անմարմին։

Ջանհաս այս խորհուրդ վերին զաւրացն
Ծանուցեալ աւէին՝ ըզփա՛ռս ի բարձունս։

Աստղն արեւելեան զարդարութեան
Եցոյց յայրին զարեգակն ընծայաբեր հովուացն,

Յորմէ սրովբէքն ծածկեալ ըզդէմըս
Զերեքսըրբեանն երգէին. հովիւքն աւրհնէին,

---

**Աղբյուրներ**

A—*ձեռ. № 7785, թերթ 11բ—12ա*։
B—*ձեռ. № 3503, թերթ 43ա—44ա*։
C—*ձեռ. № 80, թերթ 10բ—11ա (Փարիզ)*։

**Խորագիր**

ABC *Փ[ոխ]*։

**Մայրակապ՝** *Աւէ զայս բան*։

**Բնագիր**

2 ABC *ծնընդեան*։
3 B *ծոցւոյ*։
8 C *աւեին*։
9 B *Աստղ*։
11 AC *ըզդէմս*։
12 C *երգեին*։

Սարսեալ քրովբէիցն տեսանելով
Զվերանըստեալըն ինքեանց ի գիրկըս Կուսին։

Բանն, որ կերակրէ բանիւ զհոգիս բանականաց,
Դընի յանբանից մըսուր։

Առած Միքիայ առ Բեթղահէմ այսաւր լըցաւ,
Ուստի հացիւ կենաց կերակրիմք։

Նոր երգս աւրհնութեան անճառ Բանին մարմնացելոյ
Մատուսցուք այժմ եւ յաւիտեան։

---

13 AC քրովբէիցըն։
14 AC Զվերանըստեալն։
15 B բանականաց, ը՞։
17 AC Բեթղեէմ։ B Բեղղահէմ։
20 B յաւիտեանս ամմէն։



3

## Ե. ՏԱՂ ՃՐԱԳԱԼՈՅՑԻ ԾՆՆԴԵԱՆ

Այսաւր աւետեաց Գաբրիելի լրումն
Եղանի առ կոյս Մարիամ։

Այսաւր աներբին ինևամսեան անմամա
Առլըցեալ յարգանդի Կուսին։

Այսաւր գայ Յովսէփ ի քաղաք Դաւթի,
Ընդ Կուսին յայրն իջավանի։

Այսաւր երկնային արքայն մըտանէ
Ընդ երկրաւոր արքային գրոյն։

---

**Աղբյուրներ**

A—*ձեռ. № 7785, թերթ 9բ—10ա։*
B—*ձեռ. № 3503, թերթ 13բ—14բ։*
C—*ձեռ. № 79, թերթ 316ա (Փարիզ)։*
D—*ձեռ. № 80, թերթ 8աբ (Փարիզ)։*
E—*ձեռ. № 2541, թերթ 198ա—199ա։*
F—**Ներսես Շնորհալի,** *Բանք չափաւ, էջ 369—370։*

**Խորագիր**

A *Տաղ սրբոյ Յայտնութեան Տեառն, ճրագալուցին։* B *Տաղ սրբոյ Յայտնութեան առաջի աւուրն։* C *անխորագիր։* D *Տաղ սուրբ Յայտնութեան, ճրագալուցին աւուրն։* E *Տաղ Ծննդեանն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։* F *Ճրագալուցի Ծննդեան։*

**Բնագիր**

1 C չիք *1—10։* F *Այսօր։* ABDEF *Գաբրիէլի։*
3 F *Այսօր։* E *իննեմսեան։*
4 B *Կուսի։*
5 F *Այսօր։*
6 AE *յայր։* B *իջաւանի։* D *իջավանին։* F *իջեվանի։*
7 F *Այսօր։* D *երկնաին։*
8 F ’Դ փխ *ընդ։* EF *արքայի։* AD *գըրոյն։* BF *գըրոյ։* E *գրո։*

*Այսաւր ազգ մարդկան վնրագրին աշխարհագրաւն այն*
*Յաշխարհըն վերին։*

*Այսաւր ի Հաւրէ անմարմին ծընեալ Որդի*
*Նոյն մարմնով ծընանի։*

*Այսաւր Բանն աննիւթ թանձրացեալ*
*Հիւթական կերպիւ յայտնեալ երեւի։*

*Այսաւր լուծանի երկունք անիծից նախամաւրն*
*Ծնընդեամբ սուրբ Կուսին։*

*Այսաւր մեզ Դաւիթ տասնաղեաւըն տայ նըշանակ.*
*Գըտաք յՆփրաթայ։*

*Այսաւր ըստ Միքիայ Բեթղահէմ ցընծայ՝*
*Տուն եղեալ երկնաւոր հացին։*

*Այսաւր ըստ Եսայեայ Կոյսըն մայր լինի*
*Աքանչելեաւք էմմանուելի։*

*Այսաւր հոգեղէնք տան որդւոց մարդկան*
*Աւետիս.—Ծընաւ ձեզ փըրկիչ։*

*Այսաւր ընդ հովիւսն երգս առեալ գոչեմք*
*Ասելով՝ ըզփառս ի բարձունս։*

---

**9** F *Այսօր։*
**11** F *Այսօր։* F *Հօրէ։* E *անմամին։* C չիՙ *Այսաւր ի Հաւրէ անմարմին։* A *Որդին։*
**13** D չիՙ *13—22։* F *Այսօր։*
**14** CEF *մարմնով* փխ *կերպիւ։*
**15** F *Այսօր։* F *նախահօրն։*
**16** E *Ծընընդեամբ։*
**17** F *Այսօր։* E *տասնաղեաւն։* C *տա։* F *նըշան։*
**18** C *յՆփրաթա։*
**19** F *Այսօր։* E *սա* փխ *ըստ։* F *ընդ։* DF *Միքեայ։* C *Միքեա։* E *Միքիեա։* C *Բեդղահեմ։* E *Բեղղէմ։* F *Բեթղէէմ։* AE *ցընծա։* C *ցնծա։*
**20** C *եղեա։*
**21** F *Այսօր։* F 'ստ փխ *ըստ։* BC *Եսայեա։*
**22** F *Սքանչելեօք։* A *Եմմանուելի։* B *էմմանուէլի։* C *Եմաւուիելի։* E *էմանուէլին։*
**23** F *Այսօր։* ABD *հոգեղէնքն։* C *հոգեղենք։* BCE *որդոց։*
**24** C *փրկիչ։*
**25** F *Այսօր։*
**26** D *Փառս։*



## Զ. ՓՈԽ

*Նոր ծաղիկ բըղխէ այսաւր յարմատոյն Յեսսեայ,*
*Եւ որդի Դաւթի ծնանի Որդին Աստուծոյ։*
*Բոպէից Տէրն ածանի արքայ նոր Իսրայելի.*
*Սրովբէից անտես բնութիւնն տեսանի մարմնով,*
*Ի լոյսն անմատոյց բնակեալն խանձարրաւք պատի.*
*Սա անմայր յառաջ ծընեալ, անհայր ծընանի,*
*Ի բարձունս անբաւ վերնոցն՝ յայրըն պարագրի.*
*Երեւի տղայ ծերունին, մանուկ հինաւուրցն,*
*Անեղն եղանի այսաւր մարդ ճըշմարտապէս.*

---

**Աղբյուրներ**

A—*ձեռ. № 7785, թերթ 10ա—11ա։*
B—*ձեռ. № 3503, թերթ 14բ—15ա։*
C—*ձեռ. № 79, թերթ 316աբ (Փարիզ)։*
D—*ձեռ. № 80, թերթ 8բ—9բ (Փարիզ)։*
E—*ձեռ. № 2541, թերթ 199բ—200ա։*
F—*ձեռ. № 6495, թերթ 89բ։*
G—**Ներսես Շնորհալի**, *Բանք չափաւ, էջ 370—371։*

**Խորագիր**

AD անխորագիր: BE *Փ[ոխ]։* C տե՛ս վերևում: F *Տաղ ի տէր Ներսէսէ։* G *Յորգորակ։*

**Մայրակապ՝** *Ներսիսի է այս երգս։*

**Բնագիր**

**1** C *այաւր։* G *այսօր։* F *այսաւր բըղխէ։* C *յարատոյն* փխ *յարմատոյն։։* BE *Յեսսեա։*
**2** ABCDE *ծընանի։* BE *Որդի* փխ *Որդին։*
**3** ABCDEF *Բոպէիցըն։* F *Տէր։* F *ծնանի* փխ *ածանի։* G *օծանի։* B *արքա։* ABCDE *Իսրայէլի։* F *Իսրայեղի։*
**4** C *Սրոբեից։* F *Սրոբէիցն։* ABC *բընութիւնն։* DE *բընութիւն։* F *բնութիւն։*
**5** ABD *Եւ ի։* ABDG *լոյս։* ABCD *յանմատոյց։* E *բընակեալ։* F *բընակեալն։* B *խանձարաւք։* FG *խանձարրօք։*
**6** E *Սայ։* F *ծընեալ յառաջ։*
**7** CE *վերնոց։* C *յայրն։*
**8** DEG *էրեւի։* ABF *տըղայ։* CE *տըղա։* BEF *ծերունի։* E *հինաւուրց։*
**9** G *այսօր։* C *ճշմարտապես։* F *ճշմարտապէս։*

Յիւր պատկերըն գայ կամաւ կերպարանըն Հաւր,
Սիրով խոնարհի ի մեզ բարձրեալ Թագաւորն։
Եկայք զնախատաւն ծնընդեանս վերապատուեսցուք,
Ըամեալ մաքրութեամբ հաղորդ լիցուք ծնիցելոյն.
Գոհութիւն տացուք նըմին ընդ Հաւր եւ Հոգւոյն,
Սուրբ Երրորդութեանըն փա՜ռք յաւիտեանս, ամէն։

---

10 C գա։ C կերպարանն։ E Հա փխ Հաւր։ FG Հօր։
11 E խոնարհեալ։ FG առ փխ ի։
12 F զնախատօն։ ABD Ծընընդեանս։ C Ծնդեան։ E Ծնընդեան։
13 G հաղորդս։ F ծընիցելոյն։
14 C նմին։ F նըմա։ DFG Հօր։ CEF Հոգւոյն։
15 C Երրորդութեան։

## 4

## Է. ՏԱՂ ԾՆԸՆԴԵԱՆՆ ՏԵԱՌՆ, Ի ՆԵՐՍԻՍԷ ԿԱԹՈՂԻԿՈՍԷ

Այսաւր ի սկըզբան Բանն, որ ընդ Հաւր միշտ յէութեան,
Ծընանի մարմնով, անյեղապէս գոլով բնութեամբ։

Այսաւր ծոցածին լոյսն, որ յառաջ քան զյաւիտեանս,
Ծագեցաւ յերկրի ի կուսական յորովայնէ։

Այսաւր հինաւուրցն Աստուած էակն եղականաց,
Եղանի մանուկ ի զաւակէ Դաւթի ծընեալ։

Այսաւր յարմատոյն Յեսսեայ բըղխեալ մեզ գաւազան,
Ծաղկեցաւ ծաղիկ կենդանատու տիեզերաց։

Այսաւր զլոյս փառաց, որպէս զաւթոց արկող զինքեամբ,
Խանձարըրաւք պատի եւ յանբանից մըսուր բազմի։

---

**Աղբյուրներ**

A—ձեռ. № 7785, թերթ 18աբ։
B—ձեռ. № 3503, թերթ 17ա—18ա։
C—ձեռ. № 79, թերթ 318աբ (Փարիզ)։
D—ձեռ. № 80, թերթ 27բ—28ա (Փարիզ)։
E—ձեռ. № 2541, թերթ 204ա—205ա։

**Խորագիր**

AD Տաղ նմին աւուր [Ջրօրհնեաց] երեկոյին, ի Ներսիսէ կաթուղիկոսէ ասացեալ, [D չիք ասացեալ]։ B նմին աւուր երեկոյին ժամու [Ջրօրհնեաց]։ C Փ[ոխ]. նմին, աւուր երեկոյին [Ա աւուր]։ E Տաղ Ծնընդեանն Տեառն, երկրորդ աւու[րն]։

**Բնագիր**

1 C սկզբան։ E սկըզբանն։ C միշ փխ միշտ։
3 B լոյս։ E Այսաւր ծոցածին փխ տողի:
5 E Աստուածն։ B եղկանաց։ D եղականացս։
7 CE Յեսսեա։ C բղխեալ։
9 D ըզլոյս։ C զինքեամբ արկած փխ արկող զինքեամբ։
10 C մսուր։

Այսաւր սրովբէիք պարածածկեալ թեւաւք խորհուրդն
Յայտնեցաւ մարդկան ի սուրբ յայրին Բեթղահեմի։

## 29

## ԽԷ. ՏԱՂ [ՅԱՐՈՒԹԵԱՆ]

*Այսաւր յարութեան մեզ ծագեցաւ, ը՛, լոյս,*
*Լոյսն որ ի Հաւրէ*
*Յառաջ քան զարեւ անունն իւր։*

*Իւրական բանիւ ստեղծողն աւուրց լուսով,*
*Ի սկըզբանն աւուր հաստատեալ ըզլոյս,*
*Ելոյծ ըզխաւարն աննիւթ։*

*Աննիւթ գոյացոյց այսաւր հոգւոց, ը՛, լոյս,*
*Լուծեալ ըզգիշեր մեղաց՝ ստեղծողն առաջին*
*Զաշխարհս եստեղծ նորոգ։*

*Նորոգի ի կեանս Ադամըն հին այսաւր,*
*Եւ նորափետուր պըճնիւք զարդարի փառաւք*
*Անիծաբեր երկիր։*

---

**Աղբյուրներ**

A—*ձեռ. № 7785, թերթ 270ա—271ա։*
B—*ձեռ. № 3503, թերթ 157բ—158ա։*
C—*ձեռ. № 79, թերթ 359բ—360ա (Փարիզ)։*

**Խորագիր**

A *Տաղ ըստ Ղուկասու Աւետարանին։* B *Ղուկասուն է տաղս։* C *Ղուկասուն ե։*

**Բնագիր**

1 C *րոյս* փխ *լոյս։*
4 A *ստեղծաւղն։*
5 B *Յի* փխ *Ի։* C *սկզբանն։* B *հաստատել։* C *զլոյս։*
6 AB *էլոյծ։* C *զխաւարն։* C *անիւթ։*
7 C *հոգոց։*
8 B *ըգիշեր։* A *ստեղծաւղն։*
9 AB *էստեղծ։*
10 C *Ադամն։*
11 C *պճնիւք։*

*Երկիրս երկնայնոցն եղեւ տեղի եւ էջք,*
*Որ աւետաբեր քարոզ՝*
*Ի յունկն Եւայի դըստերց գոչեն ըզձայն։*

*Զայնէր ի վիմին հրեշտակապետն այսաւր,*
*Տարփողէր կանանցն, ը՛, զուարթ.*
*— Յարեաւ խաչեալըն Յիսուս, փըրկիչ եւ Տէր։*

*Տէր գայ զաւրութեամբ յարուցանել ընդ իւր*
*Պըտուղն առաջին կենաց,*
*Ի մեռեալս ազատ զմեզ ազատեաց յուսով։*

*Յուսով յարուցեալքս առ մահացուն մեր գոչեսցուք.*
*— Ուր մահ՝ յաղթութիւն քո,*
*Ուր դըժոխք խայթոց՝ կործանեցաւ խաչիւն։*

---

**13** C *Եւ երկիրս։* B *երկնայնուոցն։*
**15** C *յուկն։* C *դստերց։* C *ձայն։*
**16** C *հրըշտակապետն։*
**17** B *զւարթ։*
**18** BC *խաչելեալն։* C *փրկիչ։*
**24** C *դժոխք։* AB *կործանեցար։*



## ԽԸ ՓՈԽ

*Յընծան այսաւր երկինք*
*Եւ երկնային զաւրք անմարմինք։*

*Յընծայ լոյս եղական*
*Ընդ անեղին լուսոյ ծագման։*

*Յընծայ լուսին ստուերին*
*Փայլմամբ լուսոյ անըստուերին։*

*Յընծան պարք աստեղաց*
*Ընդ յարութիւն յաւրինողին։*

---

**Աղբյուրներ**

A—*ձեռ. № 7785, թերթ 271աբ։*
B—*ձեռ. № 3503, թերթ 158ա—159ա։*
C—*ձեռ. № 79, թերթ 360աբ (Փարիզ)։*
D—*ձեռ. № 6495, թերթ 81բ—82ա։*
E—*ձեռ. № 231, թերթ 460բ (Երուսաղեմ). տե՛ս «Սիոն», 1949, № 4, էջ 93—94*
F—Ա. Զոպանյան, *Հայ էջեր, Փարիզ, 1912, էջ 49—50 (հիմք՝ Վենետիկ, ձեռ* *№ 765)։*

**Խորագիր**

ABC *Փ[ոխ]։* DF *Տաղ Յարութեան* (F *Յարութեանն) Քրիստոսի* (D *թերթ 82ա Յորդորակ)։* E *Ղուկասու։*

**Բնագիր**

*1* C *Յնցան։* EF *այսօր։*
*2* B *2, 4, 6*-րդ տողերը՝ կրկնված: CD *երկնայինք։* DEF *զօրք։* C *անմարմնոցն։*
*3* BE *Յընծա։* DF *լոյսն։*
*4* C *անեղի։*
*5* BE *Յընծա։* C *Յնծայ։* EF *ըստուերին։*
*6* D *անըստուերի։*
*7* C *Յնծան։*
*8* A *յաօրինողին։* B *յաւրինաւղին։* D *յաւրինողի։* EF *յօրինողին։*

Ցընծան երկիր եւ ծով՝
Ի հնութենէ նորոգելով։

Ցընծան ծառք անտառ
Ըստ իսկըզբանըն զարդարին։

Ցընծան բոյսք դալարի
Ի զարնայնոյս իմանալի։

Ցընծան կենդանականք
Ընդ անմահին կենդանութեան։

Ցընծան որդիք մարդկան,
Քանզի յԱդին դրախտըն դարձան։

Ցընծայ եկեղեցի՝
Զփեսայն տեսեալ յառագաստի։

Ցընծայ նորով Զատկիս,
Զենմամբ գառինն անարատի։

Ցընծան ըզգայարանքս՝
Աւծեալք արեամբ պատարագին։

Ցընծամք այսաւր ի տիպ
Հանդերձելոյ մեր յարութեան։

9 AD Ցընծայ։ BE Ցընծա։ C Ցնծայ։
10 B Հընութենէ։
11 C Ցնծան։ BC անդառի։ DF անտառին։
12 E սկզբանն։ F սկզբանըն։
13 C Ցնծան։ ABCE ըզգալի (C ըսգալի) փխ դալարի։
14 B զարնայնւոյս։ DF զարնանոյս։ E զարնանւոյս։
15 C Ցնծան։
16 DF ընդ յարութիւն անմահ Բանին փխ տողի:
17 D տողից առաջ խորագիր՝ Յորդորակ։ C Ցնծան։
18 CF դրախտին։
19 BF Ցընծա։ C Ցնծայ։
20 DF Տեսեալ զփեսայն։
21 BF Ցընծա։ C Ցնծայ։
23 C չիք 23—24։ EF զգայարանքս։
24 D Աւծեալ։ F Օծեալ։
25 C Ցնծամք։ EF այսօր։
26 C Հանդերձելոց։ CF յարութեանն։



Ցընծամք եւ անդ փառաւք,
Պարեմք ընդ զաւրս իններակ դասին։

Ցընծամք փառատրելով,
Միշտ զյարուցեալըն գովելով։

27 C Ցնծամք։ F փառօք։
28 DF զաւրսն (F զօրսն) անմարմնական փխ զաւրս իններակ դասին։ C դասուն։
29 CF Ցնծամք (F Ցընծամք) փառաւորելով։
30 DF տողից հետո՝ Ցընծամք փառատրելով (F փառըս տալով)
Հօր եւ Որդոյ եւ Սուրբ Հոգոյն (F Հոգւոյն)։

## Ծ. ՓՈԽ

*Հայր կամաւ իջեալ՝ Որդին մարմին ըզգեցաւ,*
*Արեամբ եւ մահուամբ իւր գնեաց զորդիս Ադամայ։*
*Յարեաւ յարութիւն եւ կեանք, յարոյց ըզընութիւնս,*
*Որով պարակից եղեաք վերին զըւարթնոցն։*
*Ծընծալով տաւնեմք այսաւր, առ նոյն պաղատիմք.*
*— Կենարար տեսլեան քո, Տէ՛ր, ընդ մետասանիցն*
*Արժանաւորեա ըզմեզ յերկրորդ գալըստեանն.*
*Թագաւոր փառաց, Քրիստո՛ս, յորժամ գաս փառաւք,*
*Որով զհողացեալ բնութիւնս հրեղէն նորոգես,*
*Ղամբարափայլեալ փառաւք շնորհեա մեզ յառնել,*
*Ի դասս աջակողմ աւդեացն կարգեա եւ ըզմեզ։*
*Կենդանի բարբառ քո, Տէ՛ր, ըզմեզ կոչեսցէ,*
*Որպէս զարդարոցն երամք, ընդ քեզ վերանալ*
*Սրաթռիչ լուսափայլ ամպաւք յերկնային խորանսդ,*
*Ի նոյն միանալ սիրով ընդ սուրբ փեսայիդ,*
*Նոցին համաձայն աւրհնել սուրբ զԵրրորդութիւնդ։*

---

**Աղբյուրներ**

A—*ձեռ. № 7785, թերթ 272աբ։*
B—*ձեռ. № 3503, թերթ 167ա—168ա։*
C—*ձեռ. № 79, թերթ 363բ—364ա (Փարիզ)։*
D—*ձեռ. № 80, թերթ 176աբ (Փարիզ)։*
E—*ձեռ. № 6495, թերթ 262բ—263ա։*
F—**Ներսես Շնորհալի**, *Բանք չափաւ, էջ 390—391։*

**Խորագիր**

ABCDE *Փ[ոխ]։* F *Յորդորակ։*

**Ծայրակապ՝** *Հայոց կաթողիկոսին։*

**Բնագիր**

*1* F *Հօր։*
*2* EF *մահուամբն։* C չիք *իւր։* CDE *գընեաց։* EF *զորդիսն։* A ***Ադամա։***
*3* F *յարութիւնն։* EF *կեանքն։* E *'ւ յարոյց։* C *զընութիւնս։*
*4* E *եղաք։* F *եղեալ։* C *զուարթնոցն։*
*5* C *Ցնծալով։* EF *տօնեմք այսօր։* F *'ւ առ։*
*7* E *գալըստեամբ։* F *գալըստեանդ։*
*8* EF *փառօք։*
*10* BD *Ղամբարափայլ։* EF *փառօք։* B *շնորհեայ։*
*11* AF *դաս։* F *օդեացըն։* B *կարգեայ։* EF *կացո* փխ *կարգեա։* BF *զմեզ։*
*13* E *երամսն։* F *երամս։*
*14* C *լուսայփայլ։* BC *ամբաւք։* E *ամպով։* F *ամպովք։*
*15* E *մարմնով* փխ *սիրով։*
*16* B *համայձայն։* F *օրհնել։*

## 31

## ԾԱ. ՏԱՂ [ՅԱՐՈՒԹԵԱՆ]

*Նոյնագոյ ընդ Հայր բանն Աստուած,*
*Ի սկըզբանն առ Աստուած միշտ էն։*

*Էն անմարմին անյեղ եղեալ*
*Եւ բնակեաց ի մեզ բամաւրէն։*

*Ռամից Տէրն յանձն առեալ ընդ մեր*
*Մեռանիլ մարմնով սիրաբար։*

*Սէր անունն դընիւր ի տապան,*
*Սիրով ողբային իւղաբերքն։*

**Աղբյուրներ**

A—*ձեռ. № 7785, թերթ 277բ—278ա։*
B—*ձեռ. № 3503, թերթ 159աբ։*
C—*ձեռ. № 79, թերթ 360բ (Փարիզ)։*
D—**Ներսես Շնորհալի,** *Բանք չափաւ, էջ 398—399։*

**Խորագիր**

A *Տաղ ըստ Յոհաննու Աւետարանին։* B *Յոհաննուն է տաղս։* C *Փ[ոխ]. Յոհաննու Ոսկեբերանի։* D *Ի նոյն։*

**Ծայրակապ՝** *Նէրսիսի։*

**Բնագիր**

*1* D *Հօր։*
*2* C *սկզբանն։*
*3* ABC *անմարմին մարմին։* CD *յեղեալ։*
*4* D *րամօրէն։*
*5* B *Րամիցըս։*
*6* CD *Մեռանել։*
*7* CD *անուն։* C *դնիւր։* A *տապանն։*
*8* ACD *եղաբերքն։*



*Իւղաբեր կանանցն արտասուք*
*Դադարեաց տեսլեամբ սիրելոյն։*

*Սիրեցեալն տարփմամբ անձկալոյն*
*Բարբառէր՝ մի՛ յիս մերձենար։*

*Ի մերձենալ զուարթնոցն առ վիմին*
*Փողէր խընկաբերիցն՝ ասելով՝ ձեզ աւետի՛ք։*

Փ Ո Խ

*Յարեաւ փառաց թագաւորն, աւետի՛ք,*
*Զի՞ խընդրէք զանմահն ընդ մեռեալս, մեծ աւետի՛ք։*

*Յարոյց զբնութիւնըն Ադամայ, աւետի՛ք,*
*Կանգնեաց ըզգլորեալ Նախամայրն, մեծ աւետի՛ք։*

*9* CD *Եղաբեր։* AC *արտասուաւք։*
*10* C *սիրելոյն։*
*11* AB *Սիրեցեալ։* B *անծկալոյն։* C *անձկալոյն։*
*13* D *զուարթնոյն։*
*14* BD *խընգաբերիցն։* C *խնգաբերիցն։*

**Աղբյուրներ**

A—*ձեռ. № 7785, թերթ 278աբ։*
B—*ձեռ. № 3503, թերթ 159բ—160ա։*
C—*ձեռ. № 79, թերթ 360բ—361ա (Փարիզ)։*
D—*ձեռ. № 6495, թերթ 269աբ։*
E—**Ներսես Շնորհալի,** *Բանք չափաւ, էջ 399—400։*

**Խորագիր**

ABC *Փ[ոխ]։* D *Փ[ոխ. Դ ձայն]։* E *Յորդորակ։*

**Բնագիր**

*15* ABD *աւետիս**։
*16* C *խնդրեք։* D *ձեզ մեծ**։ ABD *աւետիս։*
*17* BCE *զբնութիւնս։* D *ըզբնութիւն։*
*18* D *Եւ կանգնեաց։* CDE *զգլորեալ։* A *նախամայրն* **ուղղված՝** *ըզնախամայրն։*

* *տողավերջի* **աւետիք** *(կամ՝* **աւետիս**) *և* **մեծ աւետիք** *բառերը ձեռագիր աղբյուրներում կրճատ են կամ հապավված։* D *օրինակը ունի՝* **ձեզ մեծ աւետիս** *ձևը (30-րդ տողում՝* **մեզ մեծ աւետիս**)*: Տողատակի տարընթերցումներում այդ մասին նշում չկա։*

Պատմեցէք դասուն պետրոսեան, աւետի՜ք,
Յովհաննու սուրբ սիրեցելոյն, մեծ աւետի՜ք։

Քրիստոս յարեաւ ընդ նմա արիք, աւետի՜ք,
Որդիք մարդկան, այսաւր ցընծացէ՜ք, մեծ աւետի՜ք։

Քրիստոս ի վեր. ելէք ընդ նմա, աւետի՜ք,
Երկրաւորք, լերուք երկնայինք, մեծ աւետի՜ք։

Քրիստոս յարեաւ ի մեռելոց, աւետի՜ք,
Պտուղ ննջեցելոց առաջին, մեծ աւետի՜ք։

Այսաւր դրունք բացան դըժոխոց, աւետի՜ք,
Ելին կապեալ հոգիքն որ ի նմա, մեծ աւետի՜ք։

Այսաւր մահ մեռաւ ի կենացն, աւետի՜ք,
Խաւար լուծաւ, լոյս հաստատեցաւ, մեծ աւետի՜ք։

Այսաւր հինն Ադամ նորոգեալ, աւետի՜ք,
Յարութեամբ Նորոյ Ադամայ, մեծ աւետի՜ք։

Այսաւր նոր արարածք եղեալք է Քրիստոս,
Նորոգողին երգեմք ընդ հրեշտակս՝ փա՜ռք ի բարձունս։

---

19 CE դասուց։ D գլնդին փխ դասուն։ E Պետրոսի։
20 ABDE Յոհաննու։ C Յոհանու։ C սիրելոյն։ E սիրելուոյն։
21 E լուսանցքում՝ Փ[ոխ]։ AB նըմա։ C նմայ։ D արիք ընդ նմա։ B յարիք փխ արիք։
22 AE այսօր։ C ցնծացեք։
23 A Քրիստոս ուղղված՝ Ընդ Քրիստոս։ A նըմա։
24 A Երկրաւորք ուղղված՝ Երկրաւորքդ։ B Երկրաւորքդ։ CE երկնային։ D երկնաւորք փխ երկնայինք։
25 CE չիք 25—26։ D չիք 25—28։ A յարեօ։ B ի մեռելոց անդրանիկ փխ յարեաւ ի մեռելոց։
26 B Պըտուղն։
27 E Այսօր դըրունք։ C դժոխոց։
29 E Այսօր։ CE կենաց։ D խաչին փխ կենացն։
31 CE չիք 31—32։ D 31—32-ի փոխարեն՝

Այսաւր զուարթունն ի վիմին գոչէր. Աւետիս,
Ջի՞ լայք, յարեաւ խաչեալն, ձեզ [մեծ աւետիս]։

32 B Ադամա։
33 E Այսօր։ AB եղեալքս։ D չիք եղեալք։ D Քրիստոս, աւե[տիս]։
34 D երգել։ C հրըշտակս։ D Ըզփառս յաւիտեանս փխ Փա՜ռք ի բարձունս։



32

## ԾԲ. ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ ՏԱՂ ՅԱՐՈՒԹԵԱՆ

Նոր ձայն աւետեաց հրեշտակապետն այսաւր
Փողէր խընկաբեր կանանցն ի վերայ վիմին.
— Խաչելեալն յարեաւ, ձեզ մեծ աւետի՜ք։

Երթեալ խընդութեամբ աշակերտեալ կանայքն,
Պատմէին դասուց ընտրեալ սուրբ մետասանից.
— Ցընծացէ՜ք, յարեաւ Տէրն ի մեռելոց։

---

**Աղբյուրներ**

A—ձեռ. № 7785, թերթ 278բ—279ա։
B—ձեռ. № 3503, թերթ 168աբ։
C—ձեռ. № 79, թերթ 364աբ (Փարիզ)։
D—ձեռ. № 80, թերթ 180բ—181ա (Փարիզ)։
E—ձեռ. № 2541, թերթ 246ա—247ա։
F—ձեռ. № 6495, թերթ 49ա։
G—ձեռ. № 231, թերթ 461բ (Երուսաղեմ). տե՛ս «Սիոն», 1949, № 4, էջ 94։
H—Ներսես Շնորհալի, Բանք չափաւ, էջ 391—392։

**Խորագիր**

A Այլ տաղ նոյն Յոհաննու Աւետարանին։ B Նորին տեառն Ներսիսի ի նոյն, ըստ Յոհաննու։ C Յոհաննու Աւետար[անին]։ D Ըստ Յովհաննուն է, լաւ է յոյժ։ E Տաղ Յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ F Մեղեդի ի տէր Ներսէս կաթ[ողիկոսէ]։ G Ըստ Յովհաննու է տաղս։ H Ի նոյն։

**Ծայրակապ**՝ Ներսեսի է։

**Բնագիր**

1 C հըրշտակապետ։ H այսօր։
2 F Փողէ։ B խընգաբեր։ C խնգաբեր։ E խընկայբեր։ F կանանց։ A ջնջված՝ ի։ C վերա։
3 E մեզ փխ ձեզ։ F չիք մեծ։ FH աւետիս։
4 C խնդութեամբ։ FH կանանցն։
5 D Պատմեին դասուցն։ CF ընդրեալ։ A ջնջված՝ սուրբ։ EF չիք սուրբ։ EFH մետասանիցն։
6 C ցնծացեք։ A Տէրն մեր։

Բաբունւոյն էից յաշակերտաց խըմբիցն
Պետրոս Յովհաննու հանդերձ արագ ընթացեալ,
Տեսին զգերեզմանն ունայն ի մարմնոյն:

Սէրըն տարփողին ատարանայր յաչաց,
Ձայնէր ողբալով առ նոյն.—Ո՞վ պարտիզպան,
Ցոյց ինձ, թէ բարձեր, զի առից ըզնա:

Երեւեալ անդրէն քաղցրիկ հընչէր բարբառ.
— Ցընծա՛, Մարիամ, յարեայ, մի՛ լար զիս մեռեալ։
Բաբունին բարի գոչէր Մարիամ,

Սըրտիւ անձկալեաւ առ բաղձալին դիմեալ.
— Մի՛ յիս մերձենար,—ասէ,—չեմ ելեալ առ Հայր՝
Զպըտուղս առաջին նըւէր տալ նըմին:

Ի ձայն ցընծութեան աւետաւոր նըւագ
Որդին Որոտման գոչէ որդւոց Սիոնի
Զյարութիւնըն Տեառն Աւետարանաւն։

---

7 BCDE *Բաբունոյն*։ F *Բաբունննոյն*։ BC *աշակերտաց*։ F *աշակերտացըն*։ H *աշակերտեալ*։ C *խմբիցն*։ FH *խըմբից*։
8 BCFH *Յոհաննու*։
9 E *զգերեզման*։ G *ըզգերեզմանն*։ A ջնջված՝ *ի*։ A *մարմնոյն եղեալ*։
10 G *Սէրն*։ H *օտարանայր*։
11 A ջնջված՝ *առ նոյն*։ E չիք *առ նոյն*։ F չիք *առ նոյն ով*։ A *թէ ով*։ FG *պարտիզպան*։ H *Գոչէր Մարիամ առ նա.—Պարտիզպա՛ն, ցոյց ինձ* փխ տողի:
12 ACD *թե*։ ADEF *ես առից*։ BE *ըզնայ*։ C *զնա*։ H *Թէ բարձեր զիմ Տէրն, 'ւ ես առից ըզնա* փխ տողի:
13 AFH *Էրեւեալ*։ BC *Երեւեալն*։ EG *Էրեւեալն*։ E *քաղցրայհընչէր* փխ *քաղցրիկ հընչէր*։ C *հնչեր*։ E *բարբառն*։
14 C *Ցնծա*։ EF *Ցընծայ*։ C *Մարի Մարիամ*։ A ջնջված՝ *յարեայ*։ EG *յարեաւ*։ A *եւ մի լայր*։
15 ABCDEG *Բաբունի*։ FH *Բաբունին ձայնէր առ նա* փխ տողի:
16 BF *անձկալեաւ*։
17 C *մերձենալ*։ A ջնջված՝ *ասէ*։ A *զի չեմ ելեալ*։ E *ես չեմ ելեալ*։
18 AE *Զպըտուղ*։ H *Զպըտուղն*։ A *նըւէրըս տալ*։ E *ունէր* փխ *նըւէր*։ FH *տալ նըւէր*։ C *նմին*։
19 EFH չիք *19—24*։ C *ցնծութեան*։
20 D *գոչէր*։ C *որդոց*։ A *մարդկան* փխ *Սիոնի*։ BDG *Սիովնի*։
21 C *Զյարութիւնն*։ A *մեզ Աւետարանաւն*։



Էից ստեղծողին յարուցելոյ լուսոյն
Ընդ Հաւր եւ Հոգւոյն տացուք յաւէտ միշտ ըզփառս
Յաւժմուս յաւիտեան եւ յանվախճանին:

---

22 B *ստեղծաւղին*։
23 G *Հօր*։ CD *Հոգոյն*։ A *փառս*։ C *զփառս*։
24 C *Այժմուս*։ A *յանվախճան ամէն*։

## ՄԳ. ՓՈԽ

*Կանայքն արտասուաց լային զբարձողն արտասուաց,*
*Զմեռելոց կենդանատուն որպէս ըզմեռեալ։*

*Անմահ իւղ թափեալ անուան իւղ անոյշ բերին,*
*Կրնդրուկ եւ զմուռ հայուէ կենսատու բուրմանն։*

*Թաղեալըն մարմնով յերկրի զմահ մեռուցանէր,*
*Զաղամեան բնութիւն մեռեալըն կենագործէր։*

*Ուստի եւ զուարթունքն իջեալ լուսափայլ ծագմամբ,*
*Խընդութեամբ տային մարդկան զաւետիս կենաց։*

**Աղբյուրներ**

A—*ձեռ. № 7785, թերթ 279բ—280բ։*
B—*ձեռ. № 3503, թերթ 168բ—170ա։*
C—*ձեռ. № 79, թերթ 364բ—365ա (Փարիզ)։*
D—*ձեռ. № 80, թերթ 181ա—182ա (Փարիզ)։*
E—*ձեռ. № 2541, թերթ 250ա—251բ։*
F—*ձեռ. № 6495, թերթ 49ա—50ա։*
G—Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 393—395։*

**Խորագիր**

ABCDE *Փ[ոխ]։* F *Տաղ ի տէր Ներ[սիսէ]։* G *Յորդորակ։*

**Մայրակապ՝** *Կաթողիկոսի Հայոց։*

**Բնագիր**

1 CF *Կանայք։* FG *արտասուօք։* ABCDEF *զբարձաւղն։* G *զբարձօղն։*
3 ADG *իւղ։* B *եղ։* CD *թափեալն։* A *իւղ։* FG *զեւղս։* B *անուշ։*
4 C *Կնդրուկ։* FG *հալուէս։* E *բուրման։* FG *փըրկչին* փխ *բուրմանն։*
5 C *Թաղեալն։* FG *մեռուցանէ։*
6 E *Բնութիւնս։* F *մեռեալ բնութիւնս։* G *մեռեալ բնութիւնըս։* FG *կենագործէ։*
7 F *զըւարթունք։* G *զուարթունք։* E *լուսայփայլ։*
8 C *մարդկան տային։* C *կենաց* բառի վերևում՝ *մարդկան։*



*Ղամբար բոցեղէն վառեալ ի վերայ վիմին,*
*Մեռալըէն պակեան յահէն դասք պահապանացն։*

*Ի բաց մերկացեալ զերկիւղ խընկաբեր կանանցն,*
*Աւետեաց քարոզք եղեն սուրբ առաքելոցն։*

*Կարաւտ անձկալի սիրով Պետրոս յարուցեալ,*
*Սիրեցեալըն Յովհաննէս արագ սըլացեալ։*

*Ունայն ի մարմնոյն տեսին ըզսուրբ գերեզմանն,*
*Հիացեալ անդըէն դարձան առ համադասիցն։*

*Սրտիւ Մարիամ թախծեալ հեղոյր զարտասուս.*
*Զըղձալին տեսեալ աչաւք եւ ոչ ծանուցեալ։*

*— Ի գերեզմանէն զմարմինն, ո՛վ պարտիզապան,*
*Եթէ դու բարձեր, ասա՛, զի ես առնուցում։*

*Հայցելին առ նա ձայնէր. «Ո՛վ դու Մարիամ,*
*Զիս, որ յարութիւն եւ կեանք, զի՞ ողբաս մեռեալ։*

*Արդ, մի՛ մերձենար դու յիս, անկատար զոլով,*
*Որպէս մայրըն քո Եւա՝ ի ծառ գիտութեանն։*

9 B *Ղամպար։* FG *լուսափայլ* փխ *բոցեղէն։* C *վերա։*
10 E *Մեռաւրեա։* FG *Մեռօրէն։* G *պահապանաց։*
11 B *զերկեղ։* C *զերկեւղ։* DE *զերկիղ։* F *զերկիւղն։* G *զերկեւղն։* B *խընգաբեր։* C *խնգաբեր կանացն։*
12 E *եղէն։* G *աշակերտացն* փխ *առաքելոցն։*
13 G *կարօտ։* B *անձկալի։*
14 BEFG *Յոհաննէս։* C *Յոհաննես։* C *սլացեալք։* EFG *ընթացեալ* փխ *սըլացեալ։*
15 F *սուրբ ըզգերեզմանն։*
16 BCD *Հիացեալք։* F *անդէն։*
17 C *Սրտիւ։* A *թաղխծեալ։* BD *թաղծեալ։* FG *Սըրտիւ անձկալեաւ (G անձկալեաւ) վառեալ ի հուր սիրելոյն (G սիրելւոյն)* փխ տողի:
18 G *աչօք։*
19 E չիք *19—20։* A լուսանցքում փոխի նշան *[ ]։*
20 ACD *Եթե։* C *ասայ։* D *առից ըզնա* փխ *առնուցում։*
21 BCD *նոյն* փխ *նա։* E *21—22*-ի փոխարեն՝
*Հայցմամբ զպարտիզպանն Տէրն Մարիամ ձայնեաց,*
*Սըրտիւ տարփացեալ առ ոտսն բարունի կոչէր։*
24 BCD *եւ մայր։* BCDEFG *Եւայ։* BEFG *գիտութեան։*

Յորժամ առ բնութեան իմ Հայր եւ ձեր ըստ շնորհի
Եւ Աստուած մարմնոյս իմոյ ես եղանիցեմ,

Որոտմամբ իջեալ Հոգին ըղձեղ կատարէ,
Արժանաւորիք յայնժամ առ իս մերձենալ»:

Ցընծացեալք այսու յուսով զուարճացուք Հոգւովն,
Զյարուցեալն ի մեռելոց աւրհնեմք ընդ Հաւր յաւիտեան:

---

25 E *բնութեամբ*: FG *բնութեանս*: F *շընորհաց*:
27 FG *Հոգին իջեալ*: FG *նորոգէ* փխ *կատարէ*:
28 C *Արժանորիք*: B *յանժամ*:
29 C *Ցնծացեալք*: E *Ցընծացեալքս*: FG *Ցընծասցուք*: FG *եւ մեք* փխ *այսու*: F *զըւարճասցուք*: C *Հոգովն*: EF *Հոգով*: G *մարմնով* փխ *Հոգւովն*:
30 G *զՔրիստոս օրհնեսցուք* փխ *աւրհնեմք ընդ Հաւր յաւիտեան*: CE *յաւիտեանս*: F *Զյարուցեալն այսաւր զՔրիստոս աւրհնել յաւիտեանս* փխ տողի:

33

## ԾԴ. ՏԱՂ ՍՈՒՐԲ ՀՈԳՒՈՅՆ: ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ ԵՐԳ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՄԱՆԿԱՆՑ՝ ՀԱՄԱԳՈՅ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆՆ ԵՒ ՄԻԱՍՏՈՒԱԾՈՒԹԵԱՆՆ, ՀԱՄԱՁԱՅՆԵԼՈՎ ԵՐԿՆԱՒՈՐԱՑՆ ԴԱՍՈՒՑ

Ներպարունակեալ
Իններակ դասուց կայք մի առ մի ձայնիւ:

Երգս առեալ զոչեն
Երրակի անձանց միոյ տէրութեանն:

Բախացեալ եւ մեք՝
Համաձայնելով ընդ սրովբէից խումբս.

---

**Աղբյուրներ**

A—*ձեռ. № 7785, թերթ 325ա*:
B—*ձեռ. № 3503, թերթ 109աբ*:
C—*ձեռ. № 79, թերթ 367բ—368ա (Փարիզ)*:
D—*ձեռ. № 80, թերթ 218բ—219ա (Փարիզ)*:
E—Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 401*:

**Խորագիր**

A տե՛ս վերևում *[Այլ տաղ]*: B *Երգ եկեղեցւոյ մանկանց՝ համագոյ սուրբ Երրորդութեան, համաձայնելով երկնաւոր դասուց, ի Ներս[իսէ]*: C *Տեառն Ներս[իսի]*: D *Տեառն Ներսեսի երգ եկեղեցոյ մանկանց՝ համագոյ սուրբ Երրորդութեան եւ միաստուածութեան, համաձայնելով երկնաւորացն դասուց*: E *ի սուրբ Երրորդութիւնն*:
**Տայրակապ**՝ *Ներսես*:

**Բնագիր**

2 A *Իննակ*: A տողից հետո՝ *Երրորդութեան փառք**:
4 A *Երրեակի*: B *տէրութեան*: C *տերուեանն*: A տողից հետո՝ *աստուածութեան փառք*:
6 A *սրովբէից* ուղղված՝ *սէրովբէից*: C *սրոբեիցըն*: D *սրոբէից*: E *սրոբէիցն*: C *խումբ*: D *խումպս*: A տողից հետո՝ *առաքեմք փառք*:

* տողից հետո *նշումով ցույց տրված այս և հաջորդ լրացումները կատարված են հետագայի մի գրչի ձեռքով*:

— Սուրբ, սուրբ, սուրբ, մի Տէր,
Հայր յաւէտ եւ միշտ, Որդի եւ Հոգի։

Երրորդութիւն սուրբ՝
Միաստուածութիւն անբաժանելի։

Սուրբ եկեղեցի
Երգէ ընդ հրեշտակս յաւէտ քեզ ըզփառս։

---

8 A Որդոյ։ A Հոգոյն։ A տողից հետո՝ առաքեմք ըզփառս։
9 A Էրրորդութիւն։
10 BCD Միաստուածութիւն սուրբ։ A տողից հետո՝ աստուածութեանդ փառք։
12 C հրըշտակս։ D ըզփառք։ A տողից հետո՝ յաւիտեանս ամէն։

## ՄԷ. ՓՈԽ

Ներհիւսեսցուք քաղցր եղանակ
Վայելչահիւս երրեակ անձանց,
Անըսկըզբանն անծընելոյն
Գոլ ծնիցելոյն եւ բըղխելոյն։

Երեք դիմաց միով բնութեամբ
Հայր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն,
Որոյ աթոռք են քերովբէքն,
Գովեն սրովբէքըն վեցթեւեանք։

Իւսեն զերիս սուրբն ի մի Տէր,
Որով ծանեաւ եկեղեցի,

---

**Աղբյուրներ**

A—ձեռ. № 7785, թերթ 325ա—326ա։
B—ձեռ. № 3503, թերթ 109բ—110բ։
C—ձեռ. № 79, թերթ 368աբ (Փարիզ)։
D—ձեռ. № 80, թերթ 219աբ (Փարիզ)։
E—ձեռ. № 6495, թերթ 302ա։

**Խորագիր**

ACD Փ[ոխ]։ BE անխորագիր։

**Մայրակապ**՝ Նվագե Հոգւոյն տըվողին իմաստ բանի ընդ ձայնի։

**Բնագիր**

2 B երրեան։
3 A Անըսկըզբան։ E Անըսկիզբն։ C անծնելոյ։
4 C բխելոյ։ E բըխելոյն։
5 DE էրեք։ B միոյ։
6 E Հօր։ CDE Որդոյ։ CE Հոգոյն։
7 B աթոռ։ C քերոբեք։ D քերոբէքն։ E քերոբէք։
8 C սրոբեքն։ DE սրոբէքըն։
9 BC Հիւսեն։ E Իիւսեալ զերեք։ E ի Տէր մի։

*Յոր հաստատեալ երկրպագէ,*
*Նոցին ձայնիւ փառաբանէ։*

*Տէր եւ Աստուած զՀայր քարոզեմք,*
*Ընդ Հաւր զՈրդի Տէր դաւանեմք,*
*Վեհին Հոգւոյ բըղխման ասեմք,*
*Որ է անհաս՝ ի մէնջ պատուեմք։*

*Ղաւղեալ խորհուրդ Երրորդութեան*
*Ի յերկրայնոցս անքննական,*
*Նոյն ի վերնոցըն ծանուցան,*
*Ի սրովբէիցըն յայտնեցան։*

*Մանկունք վերինըն Սիոնի,*
*Առէք քընար եւ տասնաղի,*
*Սըրբաբանիցըն համաձայն*
*Տուք աւրհնութիւն քրովբէական*

*Բանին, որ էր ընդ Հաւր յառաջ,*
*Ամենազաւր բազուկ եւ աջ,*
*Նոյն ի կենացըն կենարար,*
*Ի լուսոյն լոյս եւ բարերար։*

*Ընդ Որդւոյ զՀոգին Սուրբ եւ բարի,*
*Նորոգ ըզմեզ ըստեղծողի,*

---

11 E *հաւատայ 'ւ* փխ *հաստատեալ։*
12 E *փառաւորէ։*
14 E *Հօր։*
15 B *Հոգւոյն։* C *Հոգոյն։* E *Հոգոյ։* BE *բըխումն։* C **բխղումն։**
17 E *Ղօղեալ։* C *խորխուրդ Երրորդութեանն։*
18 C *Եւ* փխ *Ի։* E *յերկնայնացն։* A *անքընական։* E *անքննական։*
19 C *վերնոցն։*
20 C *սրոբեիցն։* DE *սրոբէիցըն։* B *յայտնեցաւ։*
21 D չիք *21—36։* C *Մանգունք։* A *Սիովնի։*
23 C *Սրբաբանիցն։* E *Սրբաբանիցըն համայձայն։*
24 C *քրոբեական։* E *քրոբէական։*
27 C *Եւ* փխ *Ի։* C *կենացն։*
28 E *լուս* փխ *լոյս։*
29 CE *Որդոյ։*
30 B *ըստեղծաւղի։* E *արարողի* փխ *ըստեղծողի։*



*Դուռըն բացող մեզ այս բանի,*
*Զայնի եւ քաղցր եղանակի,*

*Աներսկըզբան Հաւր անեղի,*
*Յորմէ Որդին է եւ Հոգի,*
*Նոյն եւ նըման երիցն ի մի,*
*Ի մէնջ յաւէժ փառըս տացի։*

---

31 C *Դուռն։* ACE *բացաւղ։* B *բացաւ։*
33 C *Աներսկըբան։* E *Հօր։*
34 B *Հոգւին։* E *Հոգին։*
35 CE *նման։* E *երիցըն։*
36 C *փառս։*

## 34

### ԾԶ. ՏԱՂ ՎԱՐԴԱՎԱՌԻՆ, Ի ՆԵՐՍԻՍԷ ԿԱԹՈՂԻԿՈՍԷ

*Արփիական, ր՛, լոյսն.*
*Որ ի ծոց Հաւր իջեալ յերկնից ծածկեցաւ մարմնով,*

*Մարմնով ծածկեալ, ը՛, լոյսն*
*Այսաւր փայլեաց փառաւք ի Թաբաւր լերինն։*

*Լերինք ցընծացեն այսաւր*
*Առաջի Տեառն՝ Հերմոն եւ Թաբաւր։*

*Ի Թաբաւր պարեն, ը՛,*
*Դասք առաքելոցն այսաւր եւ մարգարէիցն։*

---

**Աղբյուրներ**

A—*ձեռ. № 7785, թերթ 361ա—362ա։*
B—*ձեռ. № 3503, թերթ 215ա—216ա։*
C—*ձեռ. № 79, թերթ 383աբ (Փարիզ)։*
D—*ձեռ. № 80, թերթ 247բ—248բ (Փարիզ)։*
E—*ձեռ. № 6495, թերթ 349աբ։*

**Խորագիր**

A *Տաղ սուրբ Գեղեցկակերպութեան Տեառն, Ներսի[սի] կաթ[ողիկոսի] ասաց[եալ]։* B *Տաղ Գեղեցկակերպ[ութեան] Տեառն, ի Ներսէս կաթողիկոսէ Հայոց։* C *Տաղ Վարդավառին, խոսրովային։* D *Տաղ սուրբ Գեղեցկակերպութեան Տեառն, ի Ներսիսէ կաթուղիկոսէ Հայոց։* E *Մեղեդի անոյշ եւ ազ[նիւ]։*

**Բնագիր**

2 AD *յերկընից։*
3 DE *ըզլոյսն* փխ *ը՛, լոյսն։*
4 E *Որ փայլեաց այսաւր փառաւք* փխ *Այսաւր փայլեաց։* AD չիք *փառաւք։* B *Թաբուր։* C *Թափաւր։*
5 E չիք *5—20։* B *ցընծան։* ABD չիք *այսաւր։*
6 BC *Թաբովր* (C *Թափովր*) *եւ Հերմոն։* A *Թափաւր։*
7 A *Թաւր* փխ *Թաբաւր։* C *Թափավր։*
8 A չիք *այսաւր։*



*Մարգարէքն Մովսէս եւ Հեղիաս*
*Եկին ի տեսանել՝ որում ցանկային։*

*Ցանկալին էից, ը՛, Հայր*
*Ի բարձանց աղաղակէր. Դա՛ է Որդի իմ սիրելի։*

*Սիրող Որդւոյ, ը՛, վէմն*
*Յաւրինէր երիս տաղաւարս՝ Տեառն եւ ծառայիցն։*

*Ծառայքս եկցուք ի լեառըն,*
*Տեառըն երկիր պագցուք՝ ի նմա ծագեալ լուսոյն։*

*Լուսաւորեա՛ ըզմեզ, Քրիստոս,*
*Յորժամ գաս Հայրենի փառաւք ի նորոգել զերկիրս։*

*Երկիրս ընդ երկնայնոցն*
*Մատուցանեմք քեզ, Տէր, փառս ի յաւիտեանս, ամէն։*

---

9 C *Մարգարեքըն։*
10 C չիք *ի։* B *տեսանել։* B *ցանգային։*
11 B *Ցանգալին։* B *էիցըն.* փխ *էից, ը՛։* C չիք *ը՛։*
12 BD *Դայ։* A *սիրելին։*
13 C *Սրող։* D *Սիրով։* C *Որդոյ։* D *Որդւոյն։*
14 D *ծառային։*
17 C չիք *Քրիստոս։*
18 C *Հայրական։* AC *զերկիր։*
19 AB *երկնայնոյ։* C *երկնայնոցըն։*
20 ABD չիք *Տէր։* C *զփառըս։* C չիք *ի։* C չիք *ամէն։*



10—1024

## Ծէ. Փ Ո Խ

Տէր փառաց այսաւր ի Թաբաւր յայտնեաց զփառս իւր.
Բախացան տեսլեամբ լուսոյն դասք առաքելոցն։

Նոյն ինքն անդ ածեալ զՄովսէս, զմեծըն Հեղիաս,
Երրեակ տաղաւար շինէր վէմն եկեղեցւոյ։

Բարունւոյն էից յերկնից Հայր վըկայելով.
— Սիրելի Որդի դա է իմ, դըմա՛ լուարուք։

Երեւեալ Հոգին ի տիպ լուսափայլ ամպոյ,
Սինա նոր եղեւ Թաբաւր եւ էջք Աստուծոյ։

Ի նոյն մեք ելցուք Հոգւով լեառն իմանալի,
Էական լուսոյն Նըւէր մատուսցուք ըզփառս։

---

**Աղբյուրներ**

A—ձեռ. № 7785, թերթ 362ա։
B—ձեռ. № 3503, թերթ 216ա։
C—ձեռ. № 79, թերթ 383բ—384ա (Փարիզ)։
D—ձեռ. № 80, թերթ 248բ—249ա (Փարիզ)։
E—ձեռ. № 6495, թերթ 350ա։
F—Ներսես Շնորհալի, Բանք չափաւ, էջ 401—402։

**Խորագիր**

ACD Փ[ոխ]։ B անխորագիր։ E Տէր Ներ[սէսի]։ F Վարդավառին։

**Մայրակապ՝** Տր Ներսեսի է։

**Բնագիր**

1 F այսօր։ D չիք ի։ E յայտնեալ զփառսն իւր ի Թաբաւր փխ ի Թաբաւր յայտնեաց զփառս իւր։ F յայտնեալ ի Թաբօր փխ ի Թաբաւր յայտնեաց։ C Թափաւր։ ABD ըզփառս։
2 EF Բախացեալ։ EF դաս։
3 F ինքըն։ F չիք անդ։ ABC ըզՄովսէս։ F ըզմեծն։
4 C տաղաւարաւ։ E շինէ։ F շինեալ։ EF վէմըն։ BCD եկեղեցոյ։ EF Հաւատոյ փխ եկեղեցւոյ։
5 BCDE Բարունւոյն։ AD յերկընից։ C վկայելով։
6 BE դայ։ EF չիք է։ E իմմ։ CEF դըմայ։ ABDF լըւարուք։
7 AD Էրեւեալ։ E տիպպ։ BC ամբոյ։
8 E 8—9-րդ տողերը՝ հետառաջ։ D Սինայ։ A առ փխ Թաբաւր։ C Թափաւր։ F Թաբօր։
9 CE Հոգով։ A ոն փխ լեառն։ B ի լեառն։
10 A էր փխ Նըւէր։ C զփառս։

35

## ԾԸ. ՏԱՂ ՎԱՐԴԱՎԱՌԻՆ

*Նոր իմն ահաւոր խորհուրդ նոր են աւետիք,*
*Լերանցդ աւետիս պատմեմք պարգեւաւք Հոգւոյն։*

*Սինայի լերին տըւաւ խորհուրդ պատգամաց,*
*Տախտակ քարեղէն գըծեալ սէր արարչութեան։*

*Աստանաւր տեսիլ ահեղ ի լեառըն Թաբաւր,*
*ԶՈրդին Աստուծոյ տեսեալ ի սմա խոնարհեալ։*

*Երիցս երանեալ արամբք հինգ կատարելովք,*
*ԶՊետրոս Սիմոնեանըն՝ զվէմն, Զեբեդեայ զորդիսն,*

*ԶՄովսէս զաւրինաց տըւողն, զմեծըն Հեղիաս,*
*Զմարգարէսն ի մէջ ածեալ պատմիչ խորհրդոյ։*

*Դաւիթ վաղընչուց ձայնեալ զայս տեսիլահրաշ,*
*Նախագուշակեալ ասէր զելիցն ըզխորհուրդ։*

Աղբյուրներ
A—ձեռ. № 7785, թերթ 369ա—370ա։
B—ձեռ. № 3503, թերթ 216բ—217բ։

Խորագիր
A *Այլ տաղ Վարդավառին*։ B անխորագիր:

Բնագիր
1 A *որ են* փխ *նոր են*։ B *ը՛, նոր են*։
3 B *Սինաի*։
4 AB *քարեղէն*։
5 B *Թափաւր*։
6 A *ԶՈրդի*։
7 B *Երիցս*։ A *արամք*։
8 B *զարմ* փխ *զվէմն*։ B *ըզԶեբեդեա*։
9 B *աւրինաց*։
12 B *զէլիցն*։



*Ցընծալով ցընծա՛, Թաբաւր, հանդերձ Հերմոնիւ,*
*ԶՏէր տեսեալ ի քեզ բազմեալ փառաւք հայրենի։*

*Յաւղ հոսեալ իջմամբ Հոգւոյն ի լեառըն Սինեայ,*
*ԶՈրդի Աստուծոյ տեսեալ բազմեալ խորհըրդով։*

*Զարթի՛ք, Սիոնի որդիք, յաւրհնութիւնըս Տեառն,*
*Ելէ՛ք տեսանել ըզՏէր լեռնէս Հերմոնէ։*

*Մի՛ յայս մերձենայք ի լեառն անսուրբ խորհըրդով,*
*Տաւն տաղաւարաց տաւնէ տըւողն աւրինաց։*

*Այլակերպեցոյց Որդի զփառսըն զոր ունէր,*
*Ծածկեաց ճառագայթ փառացն զլոյսն արեգական։*

ՓՈԽ

*Հայր վըկայելով յամպոյն. Դա՛ է իմ Որդի,*
*Դա իմ սիրելի Որդի, դըմա՛ լըւարուք։*

*Տեսին եւ պակեան յահէն դասք առաքելոցն,*
*Յերկիր գողալով անկան յահաբեկ լուսոյն։*

*Մի՛ ոք կարծիցէ ըզդա նըման Մովսեսի,*
*Եղիա ըզդա մի՛ կարծէք, ըզՏէրդ Եղիայի։*

13 A *ցընծայ*։
15 B *Սիոն* փխ *Սինեայ*։
16 B *ի քեզ բազմեալ*։
17 A *Սիովնի*։
18 B *ի լեառնէս*։
20 A *տըւաւղն*։
Խորագիր A *Փ[ոխ]*։ B անխորագիր:
23 B *յամպւոյն. Դա՛յ*։
24 B *Դայ*։
25 A *յերկեղ*։ B *յերկեղ* ուղղված՝ *յահէն*։
26 A *դըղըրդեալ* փխ *գողալով*։ B *դըղըրդեալ* ուղղված՝ *գողալով*։ B *անկան*։
27 B *կարծեսցէ*։ A *Մովսիսի*։ B *Մովսէսի*։
28 A *Էղիա*։ AB *զդա*։ AB *զՏէրդ*։ A *Էղիայի*։

*Ծոցածին ծաւալ ծագումն ծաղիկ հայրենի,*
*Որ մեզ յարութիւն տըւեալ գալըստեամբ այսաւր։*

*Մեզ են աւետիք, եղբա՛րք, տաւնիս տաւնողացս,*
*Տաւն Վարդավառի տաւնէ տըւողն աւրինաց։*

*Տաւնիս տըւողին տացուք ըղփառս եւ զպատիւ*
*Այժմ եւ հանապազ եւ միշտ յաւիտեանս, ամէն։*

---

**30** A ***Մեզ յարդարութիւն*** փխ *Որ մեզ յարութիւն*։
**31** A ***Մեծ*** փխ *Մեզ*։
**32** A ***Վարդավարիս*** ուղղված՝ *Վարդավառիս*։ A ***տաւնի տըւաւղս***։
**33** A ***տըւաւղին***։ B *տըւողիս*։

## ԾԸա. [ՎԱՐԴԱՎԱՌԻ]

*Նոր իմն ահաւոր խորհուրդ նոր են աւետիք,*
*Լերանցդ աւետիս պատմեմք պարգեւաւք Հոգւոյն։*

*Սինայի լերին տըւաւ խորհուրդ պատգամաց,*
*Տախտակ քարեղէն գըծեալ սէր արարչութեան։*

*Աստանաւր տեսիլ ահեղ ի լեառըն Թաբաւր,*
*ԶՈրդին Աստուծոյ տեսեալ ի սմա խոնարհեալ։*

*Երիցս երանեալ արամբք հինգ կատարելովք,*
*ԶՊետրոս Սիմոնեան՝ ըզվէմն, Զեբեդեայ որդիսն,*

*ԶՄովսէս զաւրինաց տըւողն, զմեծըն Հեղիաս,*
*Զմարգարէսն ի մէջ ածեալ պատմիչ խորհըրդոյ։*

*Դաւիթ վաղընջուց ձայնեալ զայս աւուր խորհուրդս.*
*— Լերինք ցընծացեն,—ասէ,—ընդ յառաջ քո, Տէ՛ր.*

---

**Աղբյուրներ**

A—*ձեռ. № 2672, թերթ 248աբ։*
B—*ձեռ. № 424, թերթ 187բ—188ա։*
C—*ձեռ. № 7958, թերթ 115աբ։*

**Խորագիր**

ABC **անխորագիր։**

**Բնագիր**

*2* C *պարգեւօք*։ ABC *Հոգոյն*։
*3* B *լերինն*։
*5* A **լուսանցքում՝** *գլուխ է*։ A ***Աստանօր***։
*6* ABC *սմայ*։
*7* AC *հինկ*։
*8* C *ԸզՊետրոս*։ AC ***Զեբեթեայ***։ B ***Զեբեթեա***։ BC ***որդի***։
*9* A ***ԶՄովէս***։ C ***զօրինաց***։ B ***տըւաւղն***։ C ***տըւօղն***։
*10* AC ***խորհրդոյ***։

*Ցընծալով ցընծայ Թաբաւր, հանդերձ Հերմոնիւ,*
*ԶՏէր տեսեալ ի յինքն եկեալ փառաւք հայրենի։*

*Ցաւղ հոսեալ իջմամբ Հոգւոյն ի լեառըն Սինեայ,*
*ԶՈրդին Աստուծոյ տեսեալ բազմեալ ի նըմա։*

*Զարթի՛ք, Սիոնի որդիք, յարհնութիւնըս Տեառն,*
*Եկէ՛ք տեսանել ըզՏէր ի լեառըն Թաբաւր։*

*Մի՛ դուք մերձենայք ի լեառն անսուրբ խորհըրդով,*
*Զտաւն տաղաւարացն այսաւր վերապատուեսցուք։*

*Տանիս տըւողին տացուք ըղփառս եւ զպատիւ*
*Այժմ եւ հանապազ եւ միշտ յաւիտեանս, ամէն։*

---

**13** AB *Թաբօր*։ C *Թափաւր*։
**14** B *Զոր* փխ *ԶՏէր*։ C *փառօք*։
**15** ABC *Հոգոյն*։ A *Սինեա*։
**16** BC *նըմայ*։
**17** A *Սիովնի*։
**18** B *տեսանէք*։ A *Թաբօր*։
**19** B *այնսուրբ*։ A *խորհրդով*։
**20** BC *Զտօն*։ C *տաղաւարահարացն*։ A *եկայք* փխ *այսաւր*։ C *այսօր*։ B *վերապատուե-ցուք*։ C *պատուեսցուք* փխ *վերապատուեսցուք*։
**21** AB *տըւաւղին*։ C *տըվօղին*։ BC *զփառս*։ BC *ըզպատիւ*։



## ԾԼԲ. ՏԱՂ ՎԱՐԴԱՎԱՌԻՆ

*Աստանաւր տեսիլ ահեղ ի լեառըն Թաբաւր.*
*ԶՈրդին Աստուծոյ տեսեալ ի նմա խոնարհեալ։*

*Երիցս երանեալ արամբք հինգ գըլխաւորաւք,*
*ԶՊետրոս՝ վէմըն հաւատոյ, զորդիսն Որոտման։*

*Զտըւողն աւրինաց Մովսէս, զմեծըն Հեղիաւ,*
*Զմարգարէսն ի մէջ ածեալ պատմիչ խորհըրդոյ։*

*Դաւիթ վաղընջուց ձայնեալ զայս աւուր խորհուրդ,*
*Նախագուշակեալ ասէր զցընծութիւն աւուրս։*

---

**Աղբյուրներ**

A—*ձեռ. № 6495, թերթ 350բ*։
B—*ձեռ. № 8251, թերթ 256աբ*։
C—*ձեռ. № 10156, թերթ 51բ—52ա*։
D—*ձեռ. № 425, թերթ 252ա*։
E—Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 402—403*։

**Խորագիր**

A *Տաղ ազն[իւ]*։ B *Տաղ շըշակ համով <աս> ասայ*։ C տե՛ս վերևում: D *Յարգորակ ասայ*։ E *Յորդորակ*։

**Բնագիր**

*1* E *Աստանօր*։ C *լեառն*։ A *Թափաւր*։
*2* B *նըմա*։ D *նըմայ*։
*3* B *Երից*։ C *արեամբք* փխ *արամբք*։ C *գլխաւորաց*։ E *գըլխաւորօք*։
*4* A *զվէմըն*։ C *հաւատով որդիսն*։ D *զորդին*։ E *Ըզվէմն հաւատոյ Պետրոս, զորդիսն Որոտման* փխ տողի:
*5* AE *Զտըւօղն*։ BC *Զտըւաւղն*։ D *Զտըւաւղ*։ E *օրինաց*։ AD *զՄովսէս*։ D *զմեծն*։ E *ըզմեծն*։
*6* A *խորհրդոյ*։ C *խորհըրդոյ*։
*7* E *ձայնէր*։ AE *զայսր*։ BC *զայսմ*։ C *խորհուրդս*։
*8* AC *զցնծութիւն*։

*Ցնծալով ցընծա՛, Թաբաւր, հանդերձ Հերմոնիւ,*
*ԶՏէր տեսեալ ի քեզ փայլեալ հայրական փառաւք։*

*Հայր վըկայելով յամպոյն. Դա՛ է իմ Որդի,*
*Դըմա՛ լըւարուք, ասէ, ընդ որ հաճեցայ։*

*Մի՛ ոք կարծեսցէ ըզդա նըման Մովսեսի,*
*Եղիա ըզդա մի՛ ասէք, ըզՏէրդ Եղիայի.*

*Յովհաննու դա չէ հանգոյն, անտես է վերնոցն,*
*Ի՛մ է սիրելի Որդի՝ Հաւրս երկնաւորի։*

*Զտաւն Վարդավառիս այսաւր եկայք տաւնեսցուք,*
*Մեզ ողորմութիւն հայցել տանիս տաւնողացս։*

---

**9** CD *ցընծայ։* E *Թաբօր։*
**10** D *ԶՏէրն։* E *փառօք։*
**11** C *վկաելով ամպոյն։* BCD *Դայ։*
**12** AD *Դըմայ։* BC *Դայ իմ սիրելի Որդի* (C *ընտրեալ*) փխ *Դըմա՛ լըւարուք, ասէ։*
**13** A *զդա։* C *զդայ։* AC *Մովսիսի։* BDE *Մովսէսի։*
**14** CD *Եղիայ։* AE *զդա։* BCD *զդայ։* ABDE *զՏէրդ։* C *զՏէրն Եղիափ։*
**15** A *Յոհաննու։* B *Յովաննու։* BCD *դայ։* E *ի* փխ *է։* ADE *վերնոցս։* B *վերնոց։*
**16** E *Հօրս։* BC *Ծոցածին ծաւալ ծագումն ծաղիկ հայրենի* փխ տողի:
**17** DE *Զտօն։* C *Վարդայվառիս։* E *Վարդավառին այսօր։* E *տօնեսցուք։*
**18** C *Զմեզ։* BC *եղբայրք* փխ *հայցել։* DE *տօնիս տօնողաց։*



36

## ԾԹ. ՏԱՂ ՎԱՐԴԱՎԱՌԻՆ, ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ ԱՍԱՑԵԱԼ

*Ներպարունակեալ խորհուրդ լուսոյն ի հրեղինաց*
*Այսաւր ի յերկրի յայտնեալ ցուցաւ հողեղինացս։*

*Էական Բանին բնութիւն մարմնով պարածածկեալն*
*Այսաւր ի Թաբաւր արտափայլեալ պայծառ ծագմամբ։*

*Բարունեացըն պետք երից ընտրեալ առաքելոցն*
*Անկեալ դողային՝ յահեղ լուսոյն ոչ հանդուրժեալ։*

---

**Աղբյուրներ**

A—*ձեռ. № 7785, թերթ 367բ—368ա։*
B—*ձեռ. № 3503, թերթ 213ա—214ա։*
C—*ձեռ. № 79, թերթ 384աբ (Փարիզ)։*
D—*ձեռ. № 80, թերթ 249ա—250ա (Փարիզ)։*
E—*ձեռ. № 6495, թերթ 355աբ։*
F—**Ներսես Շնորհալի**, *Բանք չափաւ, էջ 404—405։*

**Խորագիր**

A **տե՛ս վերևում** *(Այլ տաղ)։* B *Տաղ Վարդավառին, ի Ներսէսէ կաթողիկոսէ։* C *Այլ տաղ Պայծառակերպութեան։* D *Այլ տաղ Վարդավառի երկրորդ աւուրն, ի Ներսիսէ։* E *Տաղ ազնիւ։* F *Ի նոյն։*

**Ծայրակապ՝** *Ներսէսի երգ։*

**Բնագիր**

*1* C *խուրդ* փխ *խորհուրդ։* CE *լուսոյ։*
*2* F *Այսօր։* C *յայտնեալ։* E *ցուց* փխ *ցուցաւ։* CE *հողեղինաց։*
*3* C *Բանի։* E *բնութիւն Բանին։* BD *պարածածեալն։* EF *պարածածկեալ։*
*4* F *Այսօր։* AF *Թաբօր։* BC *Թափաւր արտայփայլեալ։*
*5* C *Բարունիցն։* EF *Բարունիցըն։* B *պետքն երիցս։* BC *ընդրեալ։* F *աշակերտացն* փխ *առաքելոցն։*
*6* BF *Անգեալ։* ABD *հանդուրժեալք։* C *հանդուրեալք։* E *մեռանէին* փխ *ոչ հանդուրժեալ։*

*Սոսկալի հրամանն ածեալ զՄովսէս ի մեռելոց,*
*Զմեծըն Հեղիաս ի կենդանեաց վայրաբերեալ։*

*Էնն Աստուած եւ Հայր յերկնից ձայնիւ աղաղակէր.*
*— Դա՛ է իմ Որդի, զըմա՛ լուարուք, որդիք մարդկան։*

*Սուրբ Հոգին ընդ Հայր հովանացեալ իւր էակցին,*
*Ի նըմանութիւն լուսոյ փայլեալ պայծառ ամպոյ։*

*Ի Թաբաւր լերինն խորհուրդ յայտնեալ Երրորդութեանն.*
*Զոր եւ Պետրոսի երիւք ազգէր տաղաւարաւք։*

*Երգս առեալ Դաւիթ յառաջագոյն նախաձայնէր.*
*— Թաբաւր եւ Հերմոն,— ասէ,— յանուն քո ցընծասցեն։*

*Բոպէից հանուրց այսաւր ծագեաց լոյսն երկնային*
*Եւ պայծառացոյց զեկեղեցիս հեթանոսաց։*

*Գոչեմք ընդ տեսողսն այսաւր լուսոյդ անճառելւոյ.*
*— Փա՛ռք ծագողիդ այժմ եւ յաւէտ, միշտ յաւիտեանս։*

---

*7* E *ըզՄովսէս։*
*8* F *Ըզմեծն։* C *իյ* փխ *ի։*
*9* C *Էն* փխ *Էնն։* DEF *Էն։* EF *Աստուածըն։* EF *չիք եւ։* B *երկնից։* E *ձայնեալ։* *աղաղակեր։*
*10* BE *Դայ։* AD *զմա։* E *զըմայ։* AD *լըւարուք։* E *որդիկ։*
*11* F *Հօր։* E *հովանակցեալ։*
*12* BCEF *լուսափայլեալ* փխ *լուսոյ փայլեալ։* BC *ամպոյ։* F *ամպոց։*
*13* C *Թափաւր։* F *Թաբօր։* C *լերին։* C *յառյնեալ։* EF *յայտնեալ խորհուրդ Երրորդութեան։*
*14* B *իսկ եւ Պետրոս։* A *երեք։* C *երիւքն։* EF *ազգեալ։* F *տաղաւարօք։*
*15* B *նախաձայներ։*
*16* BC *Թափաւր։* F *Թաբօր։* C *ցնծասցեն։*
*17* C *յանուրց։* AEF *այսօր։* A *լոյս։* B *երկնային։*
*19* F *'դ* փխ *ընդ։* B *տեսաւղսն։* F *տեսողին այսօր։* B *լոյսոյդ։* EF *ըզլոյսն։* CD *անճառելոյ։* EF *անճառելի։*
*20* EF *Փառըս։* ABCD *ծագաւղիդ։* E *ծագաւղին։* F *ծագողին։* E *յաւիտեան։* B *յաւիտեանս, ամէն։*



## Գ. ՓՈԽ

*Ընդ որս եւ մանկունք նորոգ զըստեր Սիոնի*
*Քեզ վերագոչեն ընդ Հայր զաւրհնութիւնս երգով,*
*Որ զաստուածութեանդ ըզլոյս կծածկեալըն մարմնով*
*Այսաւր ի Թաբաւր լերինն փառաւք փայլեցեր՝*
*Ձայն Հաւր ի բարձանց յերկնից քեզ վըկայելով.*
*— Դա՛ է իմ Որդի ընտրեալ ընդ որ հաճեցայ։*
*Յերկիր վայր անկեալ դողմամբ դասք առաքելոցն,*
*Պետրոս զաւրհուրեալ խաւսէր ըզտաղաւարացն։*
*Մովսէս՝ աւրինաց տըւողն, մեծըն Հեղիաս,*
*Մաղթէին զելից քոց, Տէ՛ր, ի յԵրուսաղէմ*

---

**Աղբյուրներ**

A—*ձեռ. № 7785, թերթ 368ա։*
B—*ձեռ. № 3503, թերթ 214ա։*
C—*ձեռ. № 79, թերթ 384բ (Փարիզ)։*
D—*ձեռ. № 80, թերթ 250ա (Փարիզ)։*
E—*ձեռ. № 2541, թերթ 235բ—236բ։*
F—**Ներսես Շնորհալի**, *Բանք չափաւ, էջ 406։*

**Խորագիր**

AC *Փ[ոխ]։* BD անխորագիր։ E անխորագիր *[Մեծի Շաբաթուն]։* F *Յորդորակ*

**Բնագիր**

*1* F չիք *1—12։* D *Ըն* փխ *Ընդ։* BC *մանգունք։* ABDE *Սիովնի։*
*2* E *վերայգոչեն։*
*3* C *զլոյս զծածկեալն։*
*4* E *Այսօր։* BC *Թափաւր։* E *լերին։*
*5* E *երկնից։* C *վկայելով։*
*6* BDE *Դայ։* BC *ընդրեալ։* C *զըմա լուարուք* փխ *ընդ որ հաճեցայ։*
*7* BD *անգեալ։* A *դոշմամբ* փխ *դողմամբ։*
*8* C *զարհեալ* փխ *զարհուրեալ։* AD *ըզտաղաւարաց։*
*9* B *Մովէս։* ADE *տըւաւղն։* C *տըւող։*
*10* D *Մաղթեին։*

*Խաչիւ եւ արեամբ փրկել զորդիս Ադամայ։*
*Նոցին պաղատանք ընդ մեր քեզ հաճոյացին՝*
*Հանել ընդ նոսին զմեզ լեառն իմանալի*
*Ի մեծի ծագման քո, Տէր, հայրական փառաւք։*
*Արժանաւորեա՛ տեսլեան փառաց քոց, Քրիստոս,*
*Յորժամ արդարոցըն դասք ընդ քեզ ծագեսցին,*
*Զորոյ զաւրինակ փայլման յայսմ աւուր ցուցեր,*
*Լուսաւորեսցես զմեզ լուսով քո, փրկիչ,*
*Նրզակից լինել վերնոցն ի յաւէտ քայութեանց,*
*Անդադար ձայնիւ աւրհնել սուրբ զԵրրորդութիւնդ*
*ԶՀայր եւ զՈրդի Հոգւով յաւիտեանս, ամէն։*

---

11 C *փրկել*։ E *փըրկեալ*։ B *Ադամա*։
12 E *պաղատանաւք*։
13 ABCD չիք՝ տողը: E *յիմանալի*։
14 E *փառաւք հայրական*։
15 E *Արժանաւորեայ տեսլեամբ*։
16 C *արդարոցն*։ ACD *ծագեսցեն*։
17 EF չիք՝ տողը:
18 C *զմեզ*։ C *փրկիչ*։
20 F *օրհնել*։
21 C *ԶՀա* փխ տողի: B *Հոգով*։ E *Հոգովն*։



37

## ԿԱ. ՏԱՂ ՓՈԽՄԱՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ, Ի ՆԵՐՍԻՍԷ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԷ

*Այսաւր Գաբրիէլ հրեշտակապետն եկեալ,*
*Բերեալ բրաբիոն պըսակ յաղթող Կուսին։*

*Այսաւր կոչելով առ բոլորիցըն Տէր*
*Զտաճար բարձրելոյն եւ զբնակարան Բանին։*

*Այսաւր հրաւիրմամբ Հոգւոյն ժողովեցան*
*Գունդք առաքելոցն եւ իմաստուն կուսիցն։*

*Այսաւր խոնարհեալ անմարմնական դասուք*
*Միածին Որդին առ կուսութեանցըն մայրն։*

---

**Աղբյուրներ**

A—*ձեռ. № 7785, թերթ 401բ—402ա։*
B—*ձեռ. № 3503, թերթ 53բ—54ա։*
C—*ձեռ. № 79, թերթ 335բ (Փարիզ)։*
D—*ձեռ. № 80, թերթ 255ա—256ա (Փարիզ)։*
E—*ձեռ. № 2541, թերթ 236բ—238ա։*
F—*ձեռ. № 6495, թերթ 362բ—363ա։*
G—Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 407—408։*

**Խորագիր**

ABD տե՛ս վերեւում (A *Վերափոխման* փխ *Փոխման*։ B *Ներսէս*։ B չիք *Հայոց*։ A *կաթուղիկոսէ ասացեալ*)։ CE *Տաղ Փոխման Աստուածածնին*։ F *Տաղ ի տէր Ներսիսէ [Բ աւուր]*։ G *Ի Փոխումն Կուսին*։

**Բնագիր**

1 G *Այսօր*։
2 EFG *զբրաբիոն*։ C *պսակ*։ A *յաղթաւղ*։
3 FG *Այսօր*։ C *բոլորիցն*։ BFG *Տէրն*։
4 F *Հոգոյն* փխ *Բանին*։
5 G *Այսօր*։ CEF *Հոգոյն*։
6 D *Գունդ*։ EFG *Դասք* փխ *Գունդք*։
7 ADG *Այսօր*։ E *դասիւք*։
8 C *կուսութեանցն*։ F *կուսութեամբ, ը՛, մայրն*։

Այսաւր աւանդեալ ըղմաքրական Հոգին,
Փայլակնանրման վեր համբարձեալ վեհիցն։

Այսաւր ամփոփեալ ըղսըրբասնեալ մարմինն,
Ծածկելով յերկրի զանապական ըզգանձն։

Այսաւր երկնայնոց խըմբիցըն պար առեալ,
Եղանակէին շուրջ ըզգերեզմանաւն։

Այսաւր երգակցեալ նոցին առաքելոցն
Եւ դասք կուսանացն զովեն ըզմայր կուսիցն։

Այսաւր փոխադրեալ ի զգայական բնութեանց
Զմարմինըն մաքուր յիմանալեաց կայանս։

Այսաւր ցընծութիւն երկնաւորաց դասուց
Համամաքրենի Կուսին երթեալ յերկինս։

Այսաւր շնորհեցաւ բըժըշկութեանց պարգեւս,
Պատկեր Տիրամաւրն լուսազարդեալ յերկնից։

Այսաւր երգս առեալ գոչեմք եւ մեք ձայնիւ.
— Կուսական տաճիւս Երրորդութեանըն փա՛ռք։

9 G Այսօր։ F ըզմաքրափայլ։
10 C Փայլակնանման։ G վեր ամբարձեալ փխ վեր համբարձեալ։ AC վէհիցն։ F յերկինս փխ վեհիցն։ G վեհից։
11 G Այսօր։ E անփոփեալ։ C ըզսըրբասնեալ։ DE մարմին։
12 C զգանձն։
13 FG Այսօր։ B երկնայնւոց խըմպիցըն։ C խմբիցն։
14 C զգերեզմանաւն։
15 FG Այսօր։
16 DG կուսանաց։ F աւրհնեն փխ զովեն։ F զմայրըն։ D փըրկչին փխ կուսիցն։ F կուսից։
17 FG Այսօր։ C փոխադեալ։ C զսգայական։ BC բնութեանցս։
18 CE Զմարմինն։ E յիմանալի։ B կայանսն։ F կայեանս։ G կայեանսն։
19 F չիք 19—20։ G Այսօր։ C ցնծութիւն։ G դասուցն։
20 A Համամաքրէին ուղղված՝ Համամաքրէնի։ D Համամաքրէին։ E Համայմաքրենի Կուսին։ G երթալն։
21 E չիք 21—22։ G Այսօր։ C բըժկու։ F բըժըշկութեան։ BCG պարգեւ։
22 C Տիրամաւր։ FG Տիրամօրն։ ADF յերկրի փխ յերկնից։
23 G Այսօր։ F եղանակեմք փխ գոչեմք եւ մեք։
24 C Կուսականն։ B տաւնիս։ C տանիս։ G տօնիս։ CG Երրորդութեանն։ F Երրորդութեան։ C փառս։ FG ըզփառս։



## ԿԲ. ՓՈԽ

Անարատ տաճար եւ առագաստ լուսոյ,
Մայր անհարսնացեալ Աստուածածին միշտ կոյս,

Զքեզ նախատեսացըն գուշակեալ ցուցին
Ծառ կենաց ի մէջ աստուածատունկ դրախտին։

Զքոյդ Աբրահամու ի խորանին լըւեալ
Աւետեաց ծընունդ ի ծնիցելոյ Բանէն։

Զքեզ Մովսէս անկէզ ի մորենին տեսեալ
Եւ սափոր ոսկի՝ մանանայիւ լըցեալ։

Գեղմըն Գեդէոն քաղցրիկ ցաւղով հեղեալ,
Եւ աղբիւր կընքեալ Սողոմոնի տեսեալ։

**Աղբյուրներ**

A—ձեռ. № 7785, թերթ 402ա—403բ։
B—ձեռ. № 3503, թերթ 54բ—55բ։
C—ձեռ. № 79, թերթ 336աբ (Փարիզ)։
D—ձեռ. № 80, թերթ 256ա—257բ (Փարիզ)։
E—ձեռ. № 2541, թերթ 238ա—240ա։
F—ձեռ. № 6495, թերթ 363աբ։
G—Ներսես Շնորհալի, Բանք չափաւ, էջ 409—412։

**Խորագիր**

ABCDE Փ[ոխ]։ FG Յորդորակ։

**Բնագիր**

2 B սուրբ փխ միշտ։ E միշտ սուրբ կոյս։
3 C նախատեսացն։
5 CD լուեալ։
6 F Աւետեաւք։ G Զաւետեաց։ CE ծնունդ։ F չիք ի։ F ըզծընիցելոյ։ EF Բանին։
7 A ի մորենին անկիզելի փխ անկէզ ի մորենին։ BCE անկիզելի։
8 E չիք Եւ։ E ոսկեղէն։ C լցեալ։
9 BCE Գեղմն։ F Գեղմ։ C Գեդեովն։ F առ Գեդէոն։ FG քաղցըր։ EFG ցօղով։ EFG լըցեալ փխ հեղեալ։
10 ADG աղբեւր։ C կնքեալ։ ABD Սողովմոնի։ C Սօղոմովնի։



11—1024

Զքեզ Նոյյիաս կոյս յըղացեալ ծանոյց,
Տումար անքընին եւ ամպ թեթեւագին։

Զքեզ դուռըն փակեալ՝ Եզեկիէլ եցոյց,
Լեառըն վիմածին զքեզ Դանիէլ ետես։

Քեզ Գաբրիելի ի կատարումն եկեալ,
Աւետեաց ձայնիւ զուրախութիւն գոչէր։

Դու զանտանելին յորովայնի տարար
Եւ ծընար մարմնով զառ ի Հաւրէ ծընեալն։

Դուռն արեւելեան Ադին դրախտին բացող
Եւ արեգականն արդարութեան ծագող։

Զքեզ այսաւր Որդին քո միածին եկեալ,
Փոխադրեալ դասեաց ի յերկնային խորանսն։

Հիացեալ տեսին իմանալեացըն դասքն
Մարմին հողեղէն վերասլացեալ յերկինս։

Քեզ առ ի պատիւ ընթանային յառաջ՝
Գունդք սերովբէից թեւասքաւղեալ գոլով։

11 AC էսայիաս։ C յղացեալ։ E ծանոյց կոյս յղացեալ։
12 A Տաւմար։ ABE անքըննին։ C անքննին։
13 G Դուռն անխեալ փխ Զքեզ դուռըն։ C Եզեկիել դուռն փակեալ։ A Էզէկիէլ։ F ետես փխ եցոյց։
14 BC Լեառն։
15 ABCEG Գաբրիէլի։
16 F ուրախացիր բերկրեալդ փխ զուրախութիւն գոչէր։
17 C չիք 17—20։
18 FG Հօրէ։
19 F դըրախտին։ AFG բացօղ։ BDE բացաւղ։
20 ABDEF ծագաւղ։ G ծագօղ։
21 AD Որդին միածին այսաւր առ քեզ եկեալ փխ տողի: G այսօր։ B քու։
22 CE Փոխադրեաց յերկրե (E յերկրէ ի) յերկնային քաղաքն փխ տողի: F Փոխադրեաց։ G Փոխեաց։ F յերկրէս փխ դասեաց։ G ի յերկրէ փխ դասեաց։ F լուսեղէն փխ յերկնային։ B քաղաքն փխ խորանսն։
23 C իմանալեացն։ BCFG դասք։
24 E վերայսլացեալ։
26 A սէրոբէից։ B սէրովբէից։ C սերովբէից։ F սերոբէից։ AD թեւասքողեալ։ G թեւասքօղեալ։ G դիմօք փխ գոլով։



Զքեւ քառակերպիցըն հոյլքն ակումբ առեալ,
Սպասաւորէին հրեշտակական երամքն։

Դու ի յերկնաճեմ յաստուածակերտ խորանսն
Զանազան փառաւք պայծառացեալ մըտեր։

Զքեզ առաքելոցըն գովէին զումարք,
Եւ դասք կուսանացն՝ հըրճուողական ձայնիւ։

Քեզ այսաւր տաւնեն եկեղեցւոյ մանկունք
Եւ խոստովանին. «Աստուածածին միշտ կոյս,

Լո՛ւր պաղատանաց յուսացելոցս ի քեզ
Եւ լե՛ր բարեխաւս առ միածին Որդիդ։

Ծո՛ւնր առ ի խոնարհ ընդ հաշտութեան մերոյ
Կըրկնեա՛, մայր կենաց, կամեցողին բարեաց։

Աղբիւրս արտասուաց ընդ փրկութեան մերոյ
Բըղխե՛ա յորդառատ, մարդասիրին ծընող,

Սուրբ զեկեղեցի անշարժ պահել յաւէժ,
Եւ զհաւատացեալքս անփորձ մընալ ի սմա։

27 C չիք 27—32։ B հոյլք։ F խումբ փխ հոյլքն։
28 AD երամք։ E երգով փխ երամքն։
29 F չիք 29—46։ E յերկնայճեմ։ E խորանս։
30 G Փառօք։
31 EG զումար։
32 B կուսանաց։ E հրճուաւղական։
33 G այսօր տօնեն։ C եկեղեցոյ։ E եկեղեցո։ B մանգունք։
34 D Աստուածամայր սուրբ փխ Աստուածածին միշտ։
36 B բարէխաւս։ G բարեխօս։ EG Որդին։
37 D մերում։
38 BE Կըրկնեայ։ C Կրկնա։ A Բանին ուղղված՝ կենաց։ C Կուսի փխ կենաց։ BE կամեցաւղին։
39 ADG Աղբերս։ C Աղերս փխ Աղբիւրս։ E Աղբիւր։ DEG փըրկութեան։
40 C Բղխեա։ E Բըղխեայ յորդատատ։ AG ծընօղ։ BDE ծընաւղ։ C ծնաւղ։
41 G զեկեղեցիս։ DE պահեա։
42 ABEG զհաւատացեալս։ CE մնալ։ BCE սմայ։

*Եւ ի գալըստեան մեծի ծագման լուսոյդ*
*Մըտցուք յառագաստ ընդ իմաստուն կուսանսն՝*

*Արժանաւորիլ ընդ անմարմնոց դասուցն,*
*Փառս վերահընչել Երրորդութեանըն միշտ»։*

---

**43** BCEG *լուսոյն։*
**44** C *Մտցուք։* CEG *Կուսիդ։*
**45** E *Արժանաւորեայ։* G *Արժանաւորել։* ABD *անմարմնոցըն։* A *դասսն։* D *դասուն*
**46** B *վերայհընչել։* C *վերահնչել։* E *վեր երգել* փխ *վերահընչել։* C *Երրորդութեան։*

38

## ԿԳ. ՏԱՂ ՓՈԽՄԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ, Ի ՆԵՐՍԷՍԷ

*Նոր քերովբէ հողանիւթ, աթոռ էից բարձողին,*
*Աստուածածին՝ սուրբ տաճար Բանին, ը՛, Հաւր,*
*Երկինք երկնից ի յերկրի ցուցար, ո՛վ սրբուհի Կոյս,*
*Մարիամ՝ մայր Աստուծոյ անհարսնացեալ։*

*Բողէից կուսից համայնից մարդկան ծագեցեր լոյս,*
*Նոր արեւելք արեգականն արդարութեան,*
*Սա այսաւր իջեալ զաւրաւք հրեշտակաց առ քեզ, կոյս եւ մայր,*
*Բարձրացոյց ըզքեզ ի վերինն Երուսաղէմ։*

*Ծնեալ եւ դասք սուրբ առաքելոցն ի փոխումըն քո,*
*Համաձայն զըւարթնոցն գովէին զաւրհնեալդ ի կանայս։*
*Սոցին նըման եւ մեք երգեսցուք քեզ, տիրուհի սուրբ,*
*Ընդ սրովբէից դասուց բարձրացելոյդ ի փառս։*

---

**Աղբյուրներ**

A—*ձեռ. № 7785, թերթ 410աբ։*
B—*ձեռ. № 3503, թերթ 55բ—56ա։*
C—*ձեռ. № 79, թերթ 337աբ (Փարիզ)։*
D—*ձեռ. № 80, թերթ 257բ—258ա (Փարիզ)։*

**Խորագիր**

A *Այլ տաղ Աստուածածնին, երկրորդ աւուրն։* B տե՛ս վերեւում: C *Մեղեդ[ի] Փոխ[ման]։* D *Այլ տաղ նմին, ի նոյն խորհուրդ։*

**Ծայրակապ՝ Ներսես։**

**Բնագիր**

**1** C *քերոբե։* D *քերոբէ։*
**3** C *Երկնից երկինք* փխ *Երկինք երկնից։*
**4** A *անըհարսնացեալ։*
**6** C *Ով* փխ *Նոր։* ABD *արեգականըն։*
**7** C *Սայ։* C *մայրդ։*
**8** A *Բարձըրացոյց։*
**9** D *էկեալ։* D *առաքելոց։* C *փոխումն։* B *քոյ։*
**10** C *զըւարթնոց։*
**12** C *սրովբէից։* AB *բարձըրացելոյդ։* D *փառս ամէն։*

## ԿԴ. ՓՈԽ

*Նարդոս բուրեալ եղբաւրորդին,*
*Եւ խուղ թափեալ անուն նորին,*
*Ընդ աւրհորդ դըստեր Դաւթի*
*Անճառ սիրով բաղձմամբ կայլի։*

*Վարդ կարմրերփեան յառաւաւտին,*
*Սաղարթապատ յերեկոյին,*
*Արեգական լոյս պարագրի,*
*Ընդ պատենիւ լուսոյն ծածկի։*

*Գայ այծեման որթուց նըման,*
*Վերայ լերանցըն Բեթելեհան,*
*Եմուտ ի վրանըն Կեդարու,*
*Արար տաճար իւր լուսատու։*

**Աղբյուրներ**

A—*ձեռ. № 7785, թերթ 410բ—411բ։*
B—*ձեռ. № 3503, թերթ 56բ—57բ։*
C—*ձեռ. № 79, թերթ 337բ—338ա (Փարիզ)։*
D—*ձեռ. № 80, թերթ 258աբ (Փարիզ)։*
E—*ձեռ. № 6495, թերթ 211ա։*

**Խորագիր**

ACD *Փ[ոխ]*։ B **անխորագիր**: E *Տաղ ազնիւ [Գրիգոր լուսաւ.]*։

**Ծայրակապ՝** *Ներվագե Աստվածածնին երգ։*

**Բնագիր**

**2** AC *եւղ*։ B *եղ*։
**3** CE *դստեր*։
**4** C *սիրոյ*։ E *բաղձմամ*։
**6** B *երեկոյին*։ C *յերեկորին*։ E *յերեկոին*։
**8** E *լոյսոյն*։
**9** E *գա*։ AD *այծեմանց*։ CE *նման*։
**10** AE *Վերա*։ B ***ի վերա***։ D ***ի*** *վերայ*։ C *լերանցն*։ B *Բեղելեան*։ E ***Բեթելեան* ուղղված՝** *Բեղելեան*։
**11** AD *էմուտ*։ C *վրանն*։



*Անձրեւըն Հաւր ամպով Հոգւոյն,*
*Իջեալ ի գեղմն իմանալոյն,*
*Սերմըն սիրոյ Բանին բուսաւ,*
*Ցթող յերկրի եւ վերացաւ։*

*Տաճար լուսոյն աստ բնակեցաւ,*
*Որքան բնակեալըն կամեցաւ.*
*Վեր համբառնայ այսաւր կառաւք*
*Եւ բազմաչեայ քրովբէաւք։*

*Առաքելոցըն գումարեալ,*
*Սուրբ կուսանացըն ժողովեալ,*
*Ծածկեն զկուսից մայրն ի յերկրի*
*Պայծառ ջահիւք եւ լապտերաւք։*

*Անմարմնականքըն վայր իջեալ,*
*Զգերեզմանաւըն պար առեալ,*
*Ծագմամբ լուսոյ երգել երգ նոր՝*
*Զերիս աւուրս ոչ լըռելով։*

*Նոքին զմարմինըն սուրբ առեալ,*
*Հրեղէն կառաւք վեր համբարձեալ*
*Ի լուսաճեմ խորանս վերին,*
*Յեղականաց անմըտելին։*

**13** C ***Անձրեւն***։ BCE *ամբով*։ CE *Հոգոյն*։
**14** E ***գեղմըն***։
**15** C ***Սերմն***։
**18** AC ***բնակեալն***։
**19** BE *համբառնա*։ E *առ նա* փխ *այսաւր*։
**20** E *բազմաչա*։ A *քէրովբէիւք*։ C *քրոբեիւք*։ B *քերովբէիւք*։ E *քրոբէիւք*։
**21** C ***Առաքելոցն***։
**22** E չիք *22—39*։ C *կուսանացն*։
**23** A *ընդ վիմօք* փխ *ի յերկրի*։
**25** C ***Անմարմնականքն***։
**26** C ***Զգերեզմանաւն***։
**27** A *զերգս երգելով* փխ *երգել երգ նոր*։
**28** C *լռելով*։
**29** B ***Նորին*** փխ *Նոքին*։ B *զարմինըն*։ C *զմարմինն*։
**32** AD *Յեղանակաց*։ B *Յեղականացս*։ C *անմտանելին*։

Նոյին եւ մեք համաձայնեալ,
Քե՛զ, Տիրամայր, զայս երգս առեալ.
Երկրպագեմք հետ միածնին՝
Մեր փրկութեանըն պատճառին։

Բամեալքս տաւնեմըք ցընծութեամբ
Զվերափոխումըն քո յերկինս.
Գանձին ունակ, փարթամացո՛
Զաղքատս՝ երգել փառս Աստուծոյ։

---

34 B Տիրամայրդ։ D Տիրամայր։
36 C փրկութեանըն պատճառիդ։ D պատճառի։
37 D տաւնեմքըք։ C ցնծութեամբ։
38 C Զվերայփոխումն։ A խնդութեամբ փխ յերկինս։
39 BCD փարթամացոյ։
40 E Աղքատս։ E զփառս։ E տողից հետո՝
Յաւիտեանս յաւիտենից,
Եւ յամենայն ապագայից։

## 39
## ԿՃ. ՏԱՂ ԵԿԵՂԵՑՒՈՅ, Ի ՆԵՐՍԻՍԷ ԿԱԹՈՂԻԿՈՍԷ

Նորազուարճ խընդութեամբ բերկրեա՛ ցընծալով,
Կոյս անապական, հարսըն պանծալի Որդւոյ արքայի.
Դուստրըդ վերինն Երուսաղեմի, ո՛վ սուրբ եկեղեցի։

Եկեալ ի Սաբայ դըշխոյ, բերեալ խունկս եւ ոսկի
Նոր Սողոմոնի հաւր իմաստութեան՝ հաւատ, յոյս եւ սէր.
Թագուհի գերապանծ վայելչութեամբ պայծառացեալ, ո՛վ սուրբ եկեղեցի։

Բաբաւնոյն շըրթանց շընորհք ըզքեւ, ը՛, սփռեցան,
Թագաւորըն ցանկացաւ պայծառ քո գեղոյ, մոռա ըզտուն Հաւր.
Հարսն ի հեթանոսաց ընտրեալ ի յազգաց, ո՛վ սուրբ եկեղեցի։

---

**Աղբյուրներ**

A—Ձեռ. № 7785, թերթ 394բ—396ա։
B—Ձեռ. № 3503, թերթ 203բ—205բ։
C—Ձեռ. № 79, թերթ 370բ—371բ (Փարիզ)։
D—Ձեռ. № 6495, թերթ 394ա։

**Խորագիր**

A Այլ տաղ Եկեղեցւոյ, ի Ներսիսէ Հայոց կաթուղիկոսէ ասացեալ։ B Այլ տաղ Եկեղեցւոյ, ի Ներսիսէ կաթողիկոսէ Հայոց։ C Տաղեր Եկեղեցւոյ, Ներսիս[ի] կաթո-ղ[ի]կոսի]։ D Մեղեդի ագնիւ։

**Ծայրակապ՝** Ներսեսի է երգս։

**Բնագիր**

1 B Նորազըւարճ։ C խնդութեամբ։ D բերկրեալ ցընծայով։
2 C պանծալի։ CD Որդոյ։ C արքաի։
3 B վերին։ A Երուսաղէմի։
4 AC Եկեալք։ ABC Սաբա։ C դշխոյ։ C խունկս։
5 A Սողովմոնի։ B Սողովմոնիս։ D հօր։ C իմաստութեանն։ D իմաստութիւն։ C սեր փխ սէր։
7 D չիք 7—36։ BC Բաբունոյն։ C շրթանց։ B ըզսփռեցան փխ ը՛, սփռեցան։ C ըզփռեցան փխ ը՛, սփռեցան։
8 B Թագաւորըն։ C Թագաւոր։ A Հօր։

Սրտիւ ի սէր քո հարեալ փեսայն երկնաւոր,
Արեամբ իւր գնեալ մաքրեալս յանմաքրից կողին վտակաւք·
Դըշխոյ զարդարեալ ի վերջաւորս յոսկեհուռն, ո՛վ սուրբ եկեղեցի։

Ծղեալ ի հիմունըս քո քարինք պատուականք՝ յասպիս, կարկեհան,
Զդասս առաքելոցն եւ մարգարէից·
Քաղաք Աստուծոյ ուրախացեալ գընացիւք գետոց, ո՛վ սուրբ եկեղեցի։

Սիւնս եաւթըն կանգնեալ ի քեզ ճարտարապետն,
Ջեաւթնարփեան շընորհս պէսպէս պարգեւաւք Հոգւոյն բաժանմամբ·
Տուն իմաստութեան, յորում խառնի գինին ուրախարար, ո՛վ սուրբ եկեղեցի։

Ի նոյն պարիսպ քո շինեալ աշտարակ ոսկեղէնս.
Պատուար արծաթի, դրունք երկոտասան մի մի մարգարտեայ·
Մայրաքաղաք վերինդ Երուսաղէմ, ո՛վ սուրբ եկեղեցի։

Երեւեալ ախճապակըք քո բիւրեղ սառնագոյն,
Ի նմա որդիք լուսոյ լուսով կերակրեալ գառամբն Աստուծոյ.
Սիոն լեառն, յորում հոգիք անդրանկաց գրելոց ի յերկինս, ո՛վ սուրբ եկեղեցի։

Եկին ի հեռաստանէ որդիք քո ցըրուեալք,
Զդըստերըս քո ուսովք բարձեալ թագաւորք բերին ընծայիւք.
Տաճար նոր, գերապատուեալ քան զառաջինն ի փառս, ո՛վ սուրբ եկեղեցի։

11 AB մաքրեալ։
12 C վերջաւորս։ ABC յոսկէհուռն։
13 C հիմունս։ B կարկէհան։
14 B Զդասս։ AB առաքելոց։ C մարգարեից։
15 C գնացիւք։
16 B իաւթն։ C եւթըն։
17 C Ջեւթնարփեան։ C Հոգոյն։
19 B պարիսպ։ C աշտարակս։ B ոսկեղենս։
20 C երկոտասանս։ ABC մարգարտեա։
22 B քոյ։ A բեւրեղ։
23 B նման։ C գառամն։
24 AB Սիովն։ C գրելոցն։ C չիք ի։
25 C ցրուեալք։
26 C Զդստերս։ A քոյ։ C ընծաիւք։



Բամեալ ժողովին ի քեզ մանկունք առագաստի,
Պարեն ընդ հրեշտակս գինեաւ սուրբ արեամբն հացիւըն կենաց.
Հարսնարան յաւէժ հարսանեաց անմահ փեսային, ո՛վ սուրբ եկեղեցի։

Գոչեա՛ ուրախութեամբ, երբեմն՝ ամուլ, անծին,
Եւ արդ՝ բազմորդի, քան զարամբին ծընար ազգս եւ ազինս.
Մայր հաւտից բանաւորաց եւ լուսակիզըն գառանց, ո՛վ սուրբ եկեղեցի։

Ստեամբըք կերակրես միշտ ըզմանկունս կաթամբ եւ մեղու՝
Հին եւ Նոր Կտակարանաւք, մարմնով եւ արեամբ քո սուրբ փեսային.
Մայր հոգւոց, երգեմք ի քեզ Երրորդութեանն ըզփառս, ո՛վ սուրբ եկեղեցի։

28 B ժողովին։ BC մանգունք։
29 B հրըշտակս։ C արեան։
30 C յաւեր փխ յաւէժ: C փեսաին։
32 AB ծնար։
33 A լուսակիզն։ B լուսասկիզբըն։
34 B Ստեամբք։ C Ստեամբ։ B զմանգունս։ C ը՛, մանգունս։
36 C հոգոց։ B Երրորդութեան։ B ո՛ով փխ ո՛վ։

## ԿԶ. ՓՈԽ

*Ի լուսոյն արփւոյ առ լոյսն, որ յԵրուսաղէմ,*
*Սատուերն անգիտութեան ի քէն հալածեցաւ.*
*Ուրախ լե՛ր, ցընծա՛, Սիոն, մայր եկեղեցի,*
*Իւսեալ քեզ պըսակ փառաց յաւրինէ արքայ:*
*Բախճական ձայնիւ գոչեա՛, Երուսաղէմ, զՏէր,—*
*Բազմի յառագաստ քո սուրբ փեսայն երկնաւոր,*
*Երգս առեալ պարեն սրովբէք սըրբասաց ձայնիւ,*
*Կայ դըշխոյ յաջմէ փառաւք սուրբ թագաւորէն,—*
*Եւ զարթո՛ զմանկունըս քո յաւրհնաբանութիւն:*
*Ղամբարափայլ տաճար երանգաւք ծաղկեալ,*
*Երկնից վեհագոյն գըտար գերապանծ լուսով,*
*Ցուցաւ արեգակն ի քեզ՝ պայծառ աստեղաւք,*
*Ի ձայն ցընծութեան գոչեա՛ փըրկողին ըզփառս:*

---

**Աղբյուրներ**

A—*ձեռ. № 7785, թերթ 396 աբ:*
B—*ձեռ. № 3503, թերթ 205բ—206ա:*
C—*ձեռ. № 79, թերթ 371բ (Փարիզ):*

**Խորագիր**

AC *Փ[ոխ]:* B անխորագիր:

**Ծայրակապ՝** *Ի սուրբ եկեղեցի:*

**Բնագիր**

*1* C *արփոյ:*
*3* AB *Սիովն:* C *եկեղեցոյ:*
*4* C *Իւսեալ:* B *պսակ:*
*5* C *գովե:* AB *ըզՏէր:*
*6* B *սուբ* փխ *սուրբ:* C *փեսայ:*
*7* A *սրոբէք:* C *սերոբեք սրբասաց ձայնիւ:*
*8* C *Կա:* C *ընդ աջմէ* փխ *յաջմէ:*
*9* BC *զարթոյ:* C *զմանգունս:*
*10* C *Ղամբարափայլեալ:* A *երանկաւք:*
*11* BC *վերագոյն:* C *գտար:*
*13* C *ցնծութեան:* BC *փրկողին:* C *ըզփառս այժմ եւ:*





## ԿԷ. ՏԱՂ ԵԿԵՂԵՑՒՈՅ, Ի ՆԵՐՍԻՍԷ ԿԱԹՈՂԻԿՈՍԷ

*Յաւէժ, եկեղեցի, ցընծա՛,*
*Եկեալ ի քեզ փեսայն.*
*Ե՛լ ընդառաջ, դըշխոյ հարսն:*
Վանականաւք եւ աշխարհայնովք.
Զթագաւորն մեր [այս անուն]՝ հնազանդելովք,
Եւ զիշխանս՝ իշխեցելովք,
Զզաւրավարս՝ զաւրականաւք, եւ զժողովս՝ ժողովրդովք,

123 AB *Զդասապետըս*։ D *Զդասապետ*։ E *Ըզդասապետըս*։ BCDH *դասուց*։ G *դասիւք*։ A *ինունց*։ B *ըննունց*։ C *ըննուց*։ E *իննունց*։ F *իննուն*։ GH չիք *հուպ*։ A *հուպ ընդ*։ C *եղոց* փխ *եղելոց*։ H *եղելոցս*։
124 A *Ըզձայներն*։ BG *Զձայն*։ CDF *Ըզձայն*։ E *Ըզձայնն*։ AG *զպըսակըն*։ BDE *ըզ-պըսակըն*։ C *զպըսակն*։ ABDG *պըսակողին*։ C *պսակաւղին*։ E *պըսակաւղին*։
125 BG *Առաքելաւք*։ H *Առաքելօք*։
126 H *Մարտիրոսօք*։ EF չիք *է*։ CF *լուսո*։ ABCEF *ծագաւղաւ*։ G *ծագաւղ*։
127 D *կուսականաւք*։ H *կուսանօք*։ ADE *ճըգնաւորաւք*։ H *ճգնաւորօք*։ C *համայր* փխ *համայրէն*։ H *համօրէն*։ CE *ընդրելովք*։ G *ընտրեալեաւք*։ H *ընտրելօք*։
128 G *Պահեալ*։ CD *պահաւղին*։ G *զամենիսեան*։
129 D *Ըզվերակացու*։ BCD *ըզնախընթաց*։ F *զտեսուչ* փխ *զնախընթաց*։ BCEF *հոգոց*։ H *ոգւոց*։ E չիք *մերոց*։
130 A *Զհայրապետըս* լրացված՝ *Զհայրապետըս մեր*։ BC *Զհայրապետըն*։ DE *Ըզհայ-րապետըն*։ F *Ըզհայրապետըն*։ ABDE *ըզտէր*։ GH չիք *զտէր*։
131 H *Եպիսկոպոսօք եւ վարդապետօք*։
132 G *Քահանաիւք*։ G *սարգաւագաւք* փխ *պաշտաւնէիւք*։ H *պաշտօնէիւք*։
133 H *Վանականօք*։ D *աշխարհայնաւք*։ G *աշխարհանաւք*։ H *աշխարհայնօք*։
134 A *Զթագաւորըս*։ B *Ըզթագաւորըս*։ C *Զբարէպաշտ թագաւորն*։ DE *Զթագաւորըն*։ F *Զքրիստոսապսակ թագաւորս*։ H *Զթագաւորս*։ GH չիք *մեր*։ AD *հնազանդեցե-լովք*։ G *հնազանդելաւք*։ H *հնազանդելօք*։
135 D *զիշխանսն*։ G *իշխեցելաւք*։ H *իշխեցելօք*։
136 AD *Ըզզաւրավարըս*։ B *Ըզզաւրավարս*։ C *Զզաւրավարըս*։ E *Զզաւրականըս զաւ-րաւք* փխ *Զզաւրավարս զաւրականաւք*։ G *Զաւրականս զաւրաւորաւք* փխ *Զզաւ-րավարս զաւրականաւք*։ H *Զզօրականսն զօրօք* փխ *Զզաւրավարս զաւրականաւք*։ ABDE *ըզժողովըս*։ AB *ժողովըրդաւք*։ C *ժողորդովք*։ DE *ժողովըրդովք*։ G *ժո-ղովրդաւք*։ H *ժողովրդօք*։



20—1024

Եւ ամենայն հաւատացելոց
Շնորհել ողորմութիւն յայժմուս եւ յանհրենկ աւուրն։
Եւ այժմ ողորմեա՛ց մեզ, Տէր Աստուած մեր,
Ըստ մեծի ողորմութեան քում։

138 C Շնորհել։ G Շնորհեա։ B յայժմայս։ G այժմուս։ H յանհրեակ։ BE աւուրն ողո-չեմ։ G աւուրն մեծի։

Նւ

## ԾԵ. ՔԱՐՈԶ ՍՐԲՈՑ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑՆ, ԱՐԱՐԵԱԼ ՆԵՐՍԻՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Աստուած անեղ եւ անժամանակ,
Անսկիզբն, անեզր եւ անկատարած,
Լոյս անմատոյց, գերարփի անուր, անուստ եւ տիպ անսահման,
Գերագոյն բնութիւն լութիւն, ի վեր քան զմիտս եւ զբան,
Երիս անձնացեալ դիմաւք եւ ի մի բնութիւն,
Տէրութեամբ եւ արարչութեամբ հաւաքեալ,
Անքակ ժողովումն, եւ միութիւն բաժանեալ կերպիւ եւ անուամբ,
Անսկիզբն եւ սկսեալ, եւ ելումն ի Հաւրէ,
Անծին եւ ծնեալ, եւ բղխումն ի յէէն,
Իսկութիւն անպատճառ եւ պատճառ ծագումն,

**Աղբյուրներ**

A—ձեռ. № 7785, թերթ 481ա—488բ։
B—ձեռ. № 4068, թերթ 171բ—180բ։
C—ձեռ. № 79, թերթ 229ա—240բ (Փարիզ)։
D—ձեռ. № 80, թերթ 283բ—292բ (Փարիզ)։

**Խորագիր**

A տե՛ս վերևում: B Քարոզ սրբոց Հրեշտակապետացն։ C Քարոզ Հրեշտակապետացն գ[անձ]։ D Քարոզ սրբոց Հրեշտակապետացն, արարեալ տեառն Ներսեսի Հայոց կաթուղիկոսի Կլայեցւոյ։

**Ծայրակապ**՝ Անմահից քարոզ։

**Բնագիր**

1 BC չիք եւ։
2 ABD անըսկիզբն։
4 B չիք լութիւն։ ACD ըզմիտս։ AD ըզբան։ B ըզբանս։
5 D դիմակաւք։ C չիք ի։
7 A անձամբ փխ անուամբ։
8 ABD Անըսկիզբն։ A սկըսեալ։
9 ABC ծընեալ։ ABD բըղխումն։ C բխումն։
10 C չիք պատճառ։

*Եւ ելումն անշփոթ միութիւն,*
*Զուգակիցք հաւասար զաւրութեամբ, էութեամբ, փառակցութեամբ,*
*Եւ որոշեալք յատկութեամբ,*
*Արարիչ ամենից բնաւից բոլորից,*
*Կատարիչ անվրէպ հրամանաւ յանէից,*
*Ստեղծիչ կրկին բնութեանց կենդանեաց աննիւթից եւ նիւթականաց,*
*Աղբիւր բարութեան, Տէր տարրականաց, եւ անտարրից պատճառ,*
*Եւ պետ բոլորից, սուրբ Երրորդութիւն.*
*Ընկա՛լ, մարդասէր, բարերար կամաւք զնուէր մաղթանաց երկրածին մարդկան՝*
*Յաւր յիշատակի երկնային անմարմին զուարթնոցն, աղաչեմք։*

*Ներգործական զաւրութեամբ շարժեալ անշարժիդ յեղումն եղելոցս,*
*Հաճեցար յինքնաբուղխ հոսեալ բարեացդ*
*Անհատ նման ստեղծանել քեզ բարիս.*
*Հրաշից արարչիդ առնել տեսողս*
*Կամեցար անտեսիդ փառաց վայելման.*
*Կրկին գեղեցկապէս ստեղծեր երկին մարմին,*
*Եւ անմարմին լցեալ անթիւ բնակչաւք զարդարեցեր.*
*Յանեղէդ եղեալք երկրորդ արարչիդ մեծիդ Աստուծոյ,*

11BC *անըշփոթ։*
14 BC *ամէնից։* C *գոյից բոլորից։*
15 B չիք *անվրէպ հրամանաւ յանէից։*
16 B չիք *Ստեղծիչ։* ABD *կըրկին։* B *նիւթականացս։*
17 AB *Աղբեւր։* CD *Աղբեր։* A *բարութեանց։*
19 Հաջորդ տներում կրկնակը՝ սղված: AD *գնըւէր։* B *ըզնըւէր։*
20 C չիք *երկնային։* B չիք *անմարմին։* BC *զըւարթնոցն։*
21 B *անշարժդ։* C *անշարժըդ։*
22 A *յինքնաբուխ։*
23 C *Անհամ անստեղծանել* փխ *Անհատ նման ստեղծանել։* AD *նըման։*
24 AD *տեսաւղս։* B *տեսող։*
25 ABD *վայելմամբ։*
26 ACD *Կըրկին։* B *կրկին* փխ *երկին։*
27 AD *լըցեալ։* AD *զարդարեալ։*
28 C *երկրորդք։*



*Աթոռք հանգստեան անկարաւտիդ բազմելոյ*
*Յանձայր իմաստիցդ առեալ լցմամբ գիտութեան.*
*Բազմաչեայ գունդ քերովբէից մերձ աստուածութեանդ,*
*Սրբասաց սերովբէք, յորմէ գոյացան հուպ եղեալք*
*Պակուցմամբ առ նոյնդ կայանիւ.*
*Տիրապէս տէրութիւնք, զաւրութիւնք, իշխանութիւնք*
*Յիշխանաբար իշխողէդ ստեղծան.*
*Միջինք երկնայնոցն պետութիւնք, հրեշտակապետք եւ հրեշտակք,*
*Անհիւթիցդ ծայր եւ կնիք՝ ի քէն գոյացան.*
*Իննեակ դասուցդ անմահիցդ*
*Կարգեցեր երիս քահանայապետութիւնս.*
*Կատարիչ, լուսաւորիչ, մաքրիչ առողս եւ բաշխողս,*
*Զգիտութիւն ծորես միջոցաւ, զլոյս՝ նախնեաւքն առ վերջինս.*
*Շնորհեցեր սահման յետնոցն յառաջինս դառնալ*
*Նմանիւ ըստ կարութեան.*
*Եւ զընաւքն ի քեզ սիրով միութեամբ արքայիդ անմահի*
*Կարգեցեր հազարք հազարաց եւ բիւրք բիւրուց,*
*Առ դուրս հզաւրիդ միշտ արթուն զինուորս ահաւորք.*
*Ընկա՛լ, մարդասէր, բարերար կամաւք զնուէր մաղթանաց երկրածին մարդկան՝*
*Յաւր յիշատակի երկնային անմարմին զուարթնոցն, աղաչեմք։*

*Մեծահրաշ բերկրանաւք ի սէր յարապէս ցնծան*

29 ABCD *հանգըստեան։*
30 AD *լըցմամբ:* B *լցման։* C *գիտութիւն։*
31 BC *Բազմաչեաւ։* A *գունդք։* AB *քէրոբէից։* C *քէրովբէից։* D *քերովբեից։*
32 AD *Սըրբասաց։* AB *սէրոբէք:* C *սրովբէք։*
34 C չիք *իշխանութիւնք։*
36 B *երկնայնոց։*
37 AD *Անհիւթիցըդ։*
38 C *անմահից:* D *անմահիցըդ։*
39 C *քահանայպետութիւնս։*
40 ABCD *առաւղս եւ բաշխաւղս։*
41 BC *Զգիտութեան։* A *ըզլոյսըն։* BCD *ըզլոյս։* B *նախնաւքն։* A *վերջինսն։*
43 ACD *Նըմանիւ։*
44 C չիք *Եւ։* AD *ըզընաւքն։* B *զնոքովքն* փխ *զընաւքն։* C *սկզբընաւքն։* B *միաբանութեամբ։*
46 C *դուրըս։* ACD *հըզաւրիդ։* B *մշտարթուն* փխ *միշտ արթուն։* B *զինուորս։*
49 ACD *ցընծան։*

Արարչիդ հոյլք հոգեղինացն անլոյծ խնդութեամբ.
Վերակնեալք անտես տեսլեամբ տափիւ բաղձանաւք,
Իբր ի սկիզբն ի քեզ, ի պատճառ մասանց բոլորից.
Ստեղծողիդ պարգեւաց սպասեալ հոսման իմաստից վտակաց.
Զնոսին արբուցող որպէս զբուրաստան գետոյ վայելուչ,
Յորմէ լցեալք անյագութեամբ, եւ միշտ ի նոյն ծարաւեալք,
Որպէս շուշան ի ցաւղ գարնայնոյ.
Զառեցեալն ի քէն ծորմամբ գիտութեան
Անխափանաբար բաշխեն յետնոցն առաջինքն ի քէն
Բարեդրեալ հրամանաւ,
Ըստ համաման ինքնութեանց բերեալք զանհասդ
Յինքեանս աւրինակ անկերպ կերպարանեալ նմանիւ.
Ընկա՛լ, մարդասէր, բարերար կամաւք զնուէր մաղթանաց
երկրածին մարդկան՝
Յաւր յիշատակի երկնային անմարմին զուարթնոցն, աղաչեմք։

Առաքեալք ի քէն անյայտ խորհրդեամբ՝
Զփրկութիւն ի պաշտաւն ժառանգողաց մարդկան ազգի.
Պահապանք միջնորդք քաղցրութեան սաստից եւ սպառնման.
Եւ զքեզ ուսուցիչք սիրով ադամեանցս.
Սրովբէն հրանիւթ զկենացն տունկ պահէր,

50 AD խընդութեամբ։
51 B Վերանըկարեալ։ C Վերակընքեալ։ AD տըափիւ B տրփիւ
52 B Իրբ փխ Իբր։
53 C վըտակաց։ D վըտակ։
54 C Ըզնոսին։ ABD արբուցաւղ։ CD ըզբուրաստան։ A գետոց։
55 AD լըցեալք։
56 B գարնանոյ։
57 BC գիտութիւն։
59 C Բարէդրեալ։
60 BC սահման փխ համաման։
61 ABCD նըմանիւ։
64 ACD խորհըրդեամբ։
65 C Ըզփրկութիւն։ D Զփըրկութիւն։ D պաշտօն։ B ազգին։ CD ազին փխ ազգի։
66 C միջնորդ։ D միջորդ։ BC սպառման։
67 C ըզքեզ։ B ուսուցիչ։ B ադամայեանցս։
68 B Սրոբէն։ AD զկենացըն։ C ըզկենացըն։



Զի մի՛ պատրեալն Ադամ կերեալ մշտասցի մահուամբն
անյաջորդ.
Ի դիմաց արարչիդ հարցողք զՀաբելի մահուն.
Ընդ սպանողն առաջին եղբայրն Կայէն.
Ենովքայ յերկրէս մահու յաշխարհն ածիչք կենդանեաց,
Աբրահամեան խորանին բնակողք եւ կերողք որթոյն,
Եւ տուիչք աւետեաց որդիս ունելոյ.
Զովտաց յերկրէն հանողք Սոդոմայ,
Եւ զնոյն պատժողք ցաւղաբեր հրով յերկնից տեղացեալ.
Ի հայրազէն մահուանէն զերծողք պատանւոյն Սահակայ
Եւ զխոյն փոխանակ պատրաստողք.
Յակոբայ սանդղոյն ելողք
Եւ իջիչք յերկնից յաշխարհ առ մարդիկ.
Յեգիպտուհւոյն փրկողք Յովսեփայ,
Եւ զանուրջսն նովաւ հանեալ ի բանտէն յայտնիչք արքային.
Ընկա՛լ, մարդասէր, բարերար կամաւք զնուէր մաղթանաց
երկրածին մարդկան՝
Յաւր յիշատակի երկնային անմարմին զուարթնոցն, աղաչեմք։

Հրաշալի տեսլեամբ երեւեալք Մովսեսի
Ի վեր քան զկարծիս ի մորենւոջն անկէզ բորբոքմամբ.
Յեղին Սահակայ զսոյն փրկիչ

69 AD մըշտասցի։
70 ABCD հարցաւղք։ AD զՀաբէլի։ BC ըզՀաբելի։
71 AB սպանաւղն։ ACD եղբայրըն։
72 A Էնովքայ։ C յաշխարհ։
73 AB բնակաւղք։ ABC կերաւղք։ C որթան։
74 BC աւետիս։
75 A հանաւղք։ D Սոդովմայ։
76 A ըզնոյն պատժաւղք։ AB հըրով։ B յերկնէ։ C յերկընից։
77 A չիք Ի։ CD հայրազեն։ A զերծաւղք։ BCD պատանոյն։ A Իսահակայ։
78 ACD ըզխոյն։ AB փոխան։ A պատրաստաւղք։
79 C Յակոբա։ D Յակովբայ։ B սանդխտոցն։ A ելաւղք։ D եղողք։
80 B իջիչք։ C չիք յերկնից։ B յաշխարհս։ B մարդիկք։
81 BCD Յեգիպտուհոյն։ AD փըրկաւղք։ B փրկաւղք։
82 D զանուրջսըն։ BCD բանդէն։
85 AD տեսլեամբք երեւեալ։ A Մովսիսի։ BD Մովսէսի։
86 AC ըզկարծիս։ C մորէնոջն։ D մորենոջն։
87 A ըզսոյն։ AD փըրկիչ։

Առաքէր զուարթունն ի դիմաց մեծիդ Աստուծոյ
Անդրանկացն Եգիպտոսի սատակիչք
Եւ հանիչք ժողովրդեանն յանապատ.
Ընդ ծովն անցեալ խորագոյն, ուր զփարաւոն հեղձեալ
զաւրութեամբ.

Ահարոնեան ուսուցիչք քահանայութեանցն
Հոսեալ զաւրինակ յինքեանս եղելոյ.
Առաջնորդք Յեսուայ յերկիրն աւետեաց
Ի տիպն երկնից զաւառացդ,
Որոց Միքայէլ իշխան ըստ Մովսեսի բաժանմանցն,
Ըստ ազանցն թուելոց
Սպառնման արքային դաւթի հրեղէն սուսերաւ,
Ի սաստ բարկութեան առաքեալ ի քէն զուարթունն.
Իմաստնոյն հանճարոյ նպաստ նոքա
Եւ սատար ի գլուխ ածեալ բանակին եւ շինման տաճարին.
Կառք քառակերպեան Եզեկիելի երեւեալք,
Յորոյ վերայ բազմեալ Աստուածդ աստուծոց.
Պատժողք արանց հեստելոց եւ դրիչք նշան ի ճակատ արդարոցն.
Հրանիւթ անուաւք զԵղիաս յաշխարհն ամբարձին կենդանեաց.
Եւ բիւրք բանակէին շուրջ զԵղիսէիւ.

---

88 B ի մեծիդ դիմաց։
89 C Անդրակացն։ D Անտրանկացն։
90 ACD ժողովըրդեանն։
91 D ծով։ A զփարաւովն։ C հերձեալ։
92 C Ահարովնեան։ C քահանայութեացն։
93 D եղելոց։
94 A Յէսուայ։ B Յեսովայ։
95 C գաւառացըդ։
96 B Միքաէլ։ A Մովսիսի։ BCD Մովսէսի։ AD բաժանմանց։
97 ACD ազանցըն։ B թուելոյ։
98 B Սպառընմանն։ C Սպառման։
99 ABCD զըւարթունն։
100 ABD նըպաստ։
102 ABD Եզեկիէլի։ C Եզեկելի երեւեալ։
103 C վերա։ A է բազմեալ։
104 A Պատժաւղք։ B հեստեցելոց։ AD նըշան։
105 D Հրանիւթք։ B համբարձին։ C չիք ամբարձին։
106 C բնակէին։ CD զԵղիսէոսիւ։



Եսայեայ ունելեաւք բերեալ սրովբէն կայծակն
Ի շրթունս մաքրիչ պղծութեանց համաւրէն դասուց տեսողացն.
Երկնայինքդ՝ ուսուցիչք նոցա եւ զեղեալսն ճառողք.
Ընկա՛լ, մարդասէր, բարերար կամաւք զնուէր մաղթանաց
երկրածին մարդկան՝
Յաւր յիշատակի երկնային անմարմին զուարթնոցն, աղաչեմք։

Ի սկզբան անեղիդ եղելութեան մարմնով անճառ Հայր,
Ծննդեամբ Որդւոյդ եւ Բանիդ սոքա եղեն սպասաւորք.
Պետն հրեղինաց Գաբրիէլ բերեալ աւետիս Մարիամու՝
Ծնանիլ կուսութեամբ զՏէրդ եւ զծնեալդ աներբ ի Հաւրէ.
Զաքարիայ սոյն գոչէր զուարթունն՝
Ծնանիլ Մկրտիչ ի ծեր յարգանդէ,
Եւ զնոյն պատժեաց պապանձմամբ.
Ի ծննդեանն աւետաբերք բացաւթեայ հովուացն
Եւ երգիչք փառացդ Աստուծոյ.
Յեգիպտոս երեւեալ զմանուկդ հինաւուրց
Զուարթուն Յովսեփայ տանել դեռածին
Եւ նոյն տեսլեամբ դառնալ անդրուստ ի Սադիմ.
Քեզ՝ անկարաւտիդ յանապատն յաղթութեան
Հոսեալ թափեցան ի սպաս սեղանոյ,
Եւ բերողք հացի արարչիդ եւ կերակրողի զարարածս,

---

107 A Էսայայ։ B Եսայեա։ D Եսայայ։ B ունելաւք։ C ունելովք։ AB սրոբէն։
108 AD շըրթունս։ AD պըղծութեանց։
109 ACD զեղեալսըն։ B զեղեալն։ ABC ճառաւղք։
112 ACD սկըզբան։ B եղելութեամբ։ C չիք Հայր։
113 A Ծնընդեան ուղղված՝ Ծնընդեամբ։ BD Ծնընդեամբ։ C Ծընընդեամբ։ BCD Որդոյդ։ D սոքայ։
114 ACD Պետըն։
115 C Ծընանել։ ABC ըզՏէրդ։ ABCD ըզծնեալդ։
116 A Զաքարիայի։ AD զուարթուն։ B զըւարթունն։ C զըւարթուն։
117 C Ծնանել։ AD Մըկըրտիչ։ BC Մկըրտիչ։
118 A ըզնոյն։
119 ABD ծնընդեանն։ C ծընընդեանն։ BC բացաւթեա։ D չիք բացաւթեայ։
123 C անտուստ։
125 C 125—128-ի փոխարեն՝
Հոսեալ սթափիչք լինէին զաւրացուցչիդ երկնաւորաց եւ երկրաւորաց։
126 B կերակրողի փխ եւ կերակրողի։

Ի սաստկագոյն պակուցման երկիւղէ մահուն
Փրկագործ զաւրացուցիչք լինէին զաւրացուցչիդ երկնաւորաց եւ երկրաւորաց։

Գերեզմանի անմահիդ պահապանք,
Եւ կանանցն իւղաբերից քարոզք յարութեան զմարդիկ յառնողիդ։
Վերացման մարմնով հզաւրիդ համբարձիչք,
Եւ կառք քառակերպեան ըստ մարգարէին
Ածողք յերկինս ի ծոցն Աստուծոյ.
Ընկա՛լ, մարդասէր, բարերար կամաւք զնուէր մաղթանաց, երկրածին մարդկան
Յաւր յիշատակի երկնային անմարմին զուարթնոցն, աղաչեմք։

Ցնծութեամբ տաւնեմք զյիշատակ լերանցդ անմահից,
Զմերձիցն առ քեզ, Աստուած բոլորից հրաշից,
Առ մեզ նոքաւք ներգործիչ.
Զընտրեալ դասուն մետասան զպետն-եւ զգլուխն
Հաներ նոքաւք ի բանտէ սքանչմամբ մահու կապանաց։
Զանուն ընտրութեան յերրորդ
Համբարձեր յերկին հրեշտակաւք
Եւ ուսուցեր նմա զբանս անճառ անպատումս.
Ցփիլիպոս խաւսեալ հրեշտակին ի կառս յարեալ ներքինւոյն
Եւ վերածնեալ զնոյն յորդիս Աստուծոյ.
Կուռնելիոսի երեւեալ զուարթունն աղաւթից նորա,

127 D երկիղէ։
128 AD Փըրկագործ։ B զաւրացուցիչ։
130 C եղաբերից։
131 ACD հըզաւրիդ։
133 A Ածաւղք։ B ծոց։
136 AD Ցընծութեամբ։ C ըզյիշատակ։
137 C Ըզմերձիցն։
138C Նոքաւք առ մեզ։ B նոքովք։
139 B Զնտրեալ։ C ըզպետն։
140 B նոքովք։ C բանդէ։
143 C չիք Եւ։ B նըմա։ BC ըզբանս։
144 ABD յարեաց։ BCD ներքինոյն։
145 A վերածեալ ուղղված՝ վերացեալ։ B վերածեաց։ C վերածնեաց։ A ըզնա։ B զնա։ C ըզնոյն։
146 A Կուռնէլիոսի։



Եւ ողորմութեան ածիչն առաջի քո, Յիսուս մարդասէր.
Սրբուհւոյ Կուսին՝ մարմնով զքեզ ծնողին
Բերեալ նշան յաղթութեան աշխարհի
Եւ հրաւէր փոխման բրաբիոն ոստս արմաւենւոյ.
Դու բազմութեամբ իջեալ զաւրաւք հրեշտակաց
Ի փոխումն Իսկուհւոյն,
Աստուած սրովբէից Յիսուս եւ Տէր քրովբէից.
Յիշխանն անմահից Միքայէլ
Զաւանդեալն ետուր զհոգի Կուսին
Համբառնալ ի լուսաճեմ խորանս անմատոյցս.
Մաւր քո մարմնոյ տապանին
Կացուցեր զհոյլս անմահից պարողս,
Յերգս հոգեւորս, որովք փոխեալ յերկիր կենդանեաց,
Նաեւ վկայիցն, եւ հայրապետացն, եւ ճգնաւորացն
Աւգնականս, սպասաւորս, եւ զաւրացուցիչս.
Ընկա՛լ, մարդասէր, բարերար կամաւք զնուէր մաղթանաց երկրածին մարդկան՝
Յաւր յիշատակի երկնային անմարմին զուարթնոցն, աղաչեմք։

Քե՛զ, հզաւր, մարդասէր եւ բարերար,
Մաղթեմք արտասուաւք՝ առաջի անկեալ արարչիդ.

147 C չիք Եւ։
148 A Սըրբուհւոյ։ B Սրբուհոյ։ CD Սըրբուհոյ։ B Կուսի։ C ըզքեզ։ B ծնաւղին։ CD ծընողին։
149 AD նըշան։
150 D ոստ։ A արմաւէնւոյ։ BD արմաւենոյ։
151 C բազմութիւն։
152 B Իսկուհոյ։ CD Իսկուհոյն։
153 AB սրոբէից։ A քրոբէից։
154 C Միքայել։
155 C ըզհոգի։
156 C անմատոյց։
157 B Մաքուր մաւր։ C Մաքուր փխ Մաւր։ A քոյ։ B մարմնոյն։
158 ABCD ըզհոյլս։ AC պարաւղս։ B պարաւղըս։ D պարօղս։
159 D Յերգըս։ B փոխեալք։ C յերկրին։
160 AD վըկայիցն։ AD ճըգնաւորացն։
161 C Աւգնականըս։ D Աւգնական։ C սպաւորս։
164 ABCD հըզաւր։ ABD չիք եւ։
165 C անգեալ։

Զյիշատակ տանի մեծին Միքայելի ի հաճոյս քեզ ընկալ,
բարեգութ.

Որով զմարդիկ պահպանես եւ պատժես
Ըստ հատուցման արժանեաց չարացն եւ բարեացն,
Որպէս յանապատն զզաւրս անաւրէն արքային մեղսասէր
Տապաստ արկեր զուարթնովս.
Զզաւրսն հագարացւոց յաւուր տաւնի իւրոյ
Ի քաղաքն Ակլոնայ զարհուրեցոյց զաւրեղ քաջութեամբ,
Հրաշապէս անհետեալ խորտակեաց
Զծովարշաւ հեծեալսն անաւրէն զաւրացն
Յայտնապէս զինուորս Միքայէլ անյաղթ քաջութեամբ.
Ի սոյն քաղաք զանսաստուած բանակն ստարաց
Սովով եւ սրով սատակէր
Սոյն զինուոր երկնից արքայիդ, որպէս ի հնումն.
Եւ եւս առաւել
Գեղարդեամբն հերձեալ պատառէր զվէմն ահագին,
Զի չարացն արուեստեալ զջուրսն անցուցեալ.
Եւ զպաշտաւնեայն փրկեալ տաճարաւն
Հրաշիւք մեծապէս մեծն Միքայէլ,
Մեծին երեւեալ Կոստանդեայ, ասէր.

166 C Ըզյիշատակ: AB Միքայէլի: B ընկալցիս: C բարէգութ:
167 B Որովք: C ըզմարդիկ:
168 C արժանեացն: ABC բարեաց:
169 AD յանապատն: B յանապատին: AD ըզզաւրս: B ըզզաւրսն: C ըզաւրս: B չիք մեղսասէր:
170 ABCD զըւարթնովս:
171 A Ըզզաւրսն: C Ըզաւրսն: D Ըզզաւրսըն: C յաւրուր տաւնին: B Եւ յաւուրս տաւնի իւրոյ զհագարացիսն փխ տողի:
172 C չիք Ի քաղաքն Ակլոնայ: A Ակլոնա: B Ակղոնա: D Ալկոնայ:
174 BC Ըզծովարշաւ: A հեծեալն:
175 AB զինուորս: B Միքաէլ: C Միքայել:
176 C չիք Ի սոյն քաղաք:
178 A զինւոր:
179 C չիք Եւ:
180 B գեղարդեամբըն: AB ըզվէմն:
181 ABCD ըզջուրսն:
182 AD փըրկեալ: B չիք տաճարաւն:
183 C չիք մեծապէս: ACD Միքիաս փխ Միքայէլ: B Միքիաս ուղղված՝ Միքայէլ:
184 B Մեծ: C Կոստանտեա:



— Պահապան եմք քրիստոնէից,
Եւ քեզ յաղթանակ ընդդէմ թշնամեաց.
Ընկա՛լ, մարդասէր, բարերար կամաւք զնուէր մաղթանաց
երկրածին մարդկան՝
Յաւր յիշատակի երկնային անմարմին զուարթնոցն, աղաչեմք:

Անճառ Աստուած ողորմած, մարդասէր.
Բնաւից բնութեանց ստեղծող յանէից,
Հաւր հզաւրի Յիսուսի՝ Որդւոյ եւ ազգակցի Հոգւոյ անեղծի.
Հայցմամբ արտասուաց երկրահուպ դիմաւք, սրտի բաղձանաւք
Մաղթեմք զփրկիչդ աշխարհի,
Ազամածին սեռի մարդկանըս զարմի.
Բարեխաւսութեամբ սրբոյ Կուսին,
Հայցմամբ Յովհաննու եւ վկայիդ Հաւր,
Առաջին վկային մաղթանաւք,
Համաւրէն սրբոցն դասուց՝
Առաքելոց, մարգարէից, հայրապետաց, մարտիրոսաց,
Եւ մերոց տաւնակցացն աղերսիւք,
Զտաւնախմբութիւնս մարդկան զյիշատակ հրանիւթիցն

185 C եմ փխ եմք: D քրիստովնէից:
186 ABCD թշնամեաց:
188 B տողից հետո՝
Առաւել եւ եւս:
Եւ վասն ճշմար:
Բոտել զանձինըս մեր եւ զմի:
189 ABD չիք Անճառ: AB Ողորմած (B Ղորմած) Աստուած: D Ամէնողորմ Աստուած փխ Աստուած ողորմած:
190 C Բնաւիցըն: ABD ստեղծաւղ:
191 B Աստուած համայնից փխ Հաւր հզաւրի Յիսուսի: A հըզաւրի: C հզաւր: D հըզաւր: B չիք Որդւոյ եւ ազգակցի Հոգւոյ անեղծի: C Հոգոյդ:
192 B արտասուաց: AD սըրտի: B չիք սրտի բաղձանաւք: A բաղձանօք:
193 A ըզփըրկիչդ: BC ըզփրկիչդ: D զփըրկիչդ:
195 AD սըրբոյ:
196 B Յովաննու: AD վըկայիդ:
197 ABD վըկային:
198 A սըրբոցն: B դասուցըն սրբոց: D սըրբոցըն:
200 D չիք Եւ:
201 AD Զտաւնախըմբութիւնս: B Զտաւնախմբութիւն: C ըզյիշատակ:

*Ի հաճոյս ընկալ բարերար կամացդ.*
*Գթաւրէն սիրալիր անհաս ողորմած.*
*Մարդկան պահապան զդոսա առաքեա՛,*
*Եւ ես առաւել*
*Արեամբ քո փրկեալ հաւտի սուրբ եկեղեցւոյ,*
*Ընդ երկին անցելոյդ յերկրի յաջորդաց.*
*Հայրապետաց՝ լինել սրբութեամբ*
*Ի նմանն կոյս ի սպաս պաշտաման,*
*Եպիսկոպոսաց, քահանայից, սարկաւագաց, դպրաց եկեղեցւոյ*
*Վերբերողք ի քեզ միութեամբ,*
*Թագաւորաց՝ պահպանութեամբ յաղթութիւն նոքաւք,*
*Եւ իշխանաց՝ քաջութիւն,*
*Եւ զաւրաց՝ ուժգնութիւն ընդդէմ խաչին թշնամեաց,*
*Արանց եւ կանանց, ծերոց եւ տղայոց՝*
*Առաջնորդ լինել ի սէր վերին կոչմանն*
*Եւ ի յոյս ինքեանց միութիւնս,*
*Ննջեցելոցն՝ ի յարութեան բարեկամք եւ բարեխաւսք*
*Առ քեզ, մարդասէր.*
*Ահա յիշեսցես զհոգիս ննջեցելոցն*
*Եւ ողորմեսցիս բարեխաւսութեամբ սոցա, աղաչեմք։*

---

**202** D *կամաց։*
**203** AD *Գըթաւրէն։*
**204** BC *ըզդոսա։* AD *առաքես։*
**206** AD *փըրկեալ քո հաւտի։* B *եկեղեցոյ։*
**207** B *երկնային* փխ *երկին։*
**208** C չիք *Հայրապետաց։* AD *սըրբութեամբ։*
**209** AD *նմանըն։*
**210** AD *դըպրաց։* B *եկեղեցոյ։*
**211** AC *Վերբերաւղք։* B *Վերաբերաւղ։*
**214** B *զաւրացու ճըգնութեան* փխ *զաւրաց ուժգնութիւն։* D *ուժգընութիւն։* AD *թըշ-նամեաց։*
**216** B *կոչման։*
**218** AD *Նըննջեցելոցն։* C *Ննջեցելոցըն։* D *յարութեանն։* C *բարէկամք։* C *բարէխաւս*
**220** D *նըննջեցելոցն։*
**221** C չիք *սոցա, աղաչեմք։*



*Բամեալ միացո՛ զմեզ ի սէր քո*
*Եւ զխաղաղութիւն քո տո՛ւր մեզ, խնդրեմք։*

*Ուրախացո՛ զանձինս, եւ զմիմեանց*
*Տեառն Աստուծոյ յանձն արասցուք։*

**Փոխ** *Ջիններակ դասուց հրանիւթից*
*Անմահ երկնային քահանայապետութեանցդ*
*Այսաւր տաւնախմբեմք զյիշատակ*
*Մարդիկս երկրածինք՝ փոքունս ձեր եղբարք.*
*Անեղին բարձրելոյ աթոռք անարուեստք,*
*Քերովբէք բազմաչեայք եւ սերովբէք եռահիւսակ,*
*Հնչողք սրբասացութեանց,*

---

**222** ABD **222—225**-ի փոխարեն՝
A *Առաւել եւ ես*
*Վասըն ճըշմարիտ եւ սուրբ հաւատոյս մերոյ, աղաչե[մք]։*

*Բառել զանձինս եւ զմիմեանս Տեառն Աստուծոյ, աղաչեմք։*

B *Եւ ես առաւ[ել]։*
*Զանձինըս մեր։*

D *Բարուն ճըշմարիտ Տէր Յիսուս Քրիստոս,*
*Ի յիշատակի լուսափայլ զաւարթնոց երկնային զաւրացն*
*Հայցեմք ի քէն ուղիղ դաւանութեամբ։*

*Եւ ես առաւել։*

*Ողորմութեամբ փըրկիչդ Աստուած խնայեա յանձինըս մեր,*
*Բարեխաւսութեամբ սըրբոցն Միքայէլի եւ Գաբրիէլի,*
*Եւ ամենայն հրանիւթ դասուցըն լուսեղինացն, խընդրեմք։*
**223** C *խ* փխ *խնդրեմք։*
**224** C *ըզմիմեանց։*
**225** C *յանձ* փխ *յանձն արասցուք։*
**226** ABD չիք *Փոխ։* B *հրանիւթ։*
**227** B *քահանայութեանցդ։* C *քահանայպետութեանցդ։*
**228** ACD *տաւնախըմբեմք։* B *տաւնեմք։* C *ըզյիշատակ։*
**229** B *փոքունք։* C *եղբարքս։*
**231** A *Քերոբէք։* B *Քրոբէք։* C *Քրովբէք։* A *սրոբէք։* BC *սրովբէք եռահիւսակք։* D *եռահիւսեակ։*
**232** A *Հընչաւղք։* C *Հնչող։* D *Հընչողք։* ABD *սըրբասացութեանց։*

Տիրաբար պետութիւնք, զաւրութիւնք, իշխանութիւնք, զինուորք արարչին,
Միջինք երկնայնոցն եւ երկրորդք առաջնոցն,
Պետութիւնք հրեշտակապետք եւ հրեշտակք անմարմնոցն,
Նայրք եւ վերջք մարդկան պահապանք,
Ճշմարիտ մեր բարեկամք՝ Միքայէլ եւ Գաբրիէլ.
Զաւրութեանցն Աստուծոյ զաւրեղ զինուորք եւ իշխանք հրեշտակաց,
Գիտութեանցն Աստուծոյ յերկիր հոտիչք
Եւ զմարդիկ առ ձեզ վերբերիչք ի սէր արարչին,
Սաստիչ ստահակաց եւ ուղղոց վարդապետք ի յոյսն անվեհեր,
Զմարդկան աղաւթս ածողք յերկինս առաջի բազմելոյն
Եւ տեսողք զերեսս աղքատացս Աստուծոյ ըստ փրկչին համայնից,
Կենաց պահապանք մեր, միջնորդք մահու եւ փողք յարութեան,
Աւգնականք յաւուրն աներեկ եւ բարեխաւսք առ Յիսուս՝
Դատողն անաչառ.
Աղաչեմք հայցմամբ ընդունել զնուէր մաղթանաց
Ի տաւնս ձեր, հզաւրք։
Պահապան մեր լերուք ի յելս եւ ի մուտս, ի կալս եւ ի գնալս,
Ի գիշերի եւ ի տուընջեան, յարթնութեան եւ ի ննջման՝
Բանակել շուրջ զմեաւք՝ զերկիւղածովքս Աստուծոյ,
Յաւր մահու մեր զհոգիս քաղցրութեամբ աւանդողք,
Հեզաբար լերուք երեւեալք, որպէս հարք՝ առ որդիս.

233 BC տէրութիւնք փխ պետութիւնք։ B արարչիդ։
235 B անմարմնոցդ։ CD անմարմնոցըդ։
237 AD ճըշմարիտ։ C բարէկամք Միքայել եւ Գաբրիել։
238 C չիք զաւրեղ։
240 B բերաբերիչք փխ վերբերիչք։ C վերայբերիչք։ D վերաբերիչք։
242 A ածաւղք։ C ունողք փխ ածողք։
243 A տեսաւղք։ B զերեսս։ AD փըրկչին։
245 ABD բարեխաւս։
246 A Դատաւղն։ BC Դատաւորն փխ Դատողն։
247 C Աղաչեմք ըզձեզ։ AB զնըւէր։ C ըզնուէր։ AD մաղթանացս։
248 ABCD տաւնըս։ ABCD հըզաւրք։
249 C գնալ։
250 D Գիշերի փխ Ի գիշերի։ BD նըննջման։
251 B Բնակել։ AD ըզմեաւք։ B զմեւք։ BC զերկեղածովքս։ D զերկիղածովքս։
252 B զհոգիս մեր։ A աւանդաւղք։
253 BC երեւեալ։



Ընդ խաւարայինսն ղընաւից
Զերծուցէք զհոգիս ընդ իշխանութիւն ի հոյլս արդարոց.
Զքանսարկուն, բարեկամք մեր, ատեցէք
Եւ զմեզ անվրէպ ի ծոցն ածէք Աստուծոյ,
Որ ողորմութեամբն իւրով եւ բարեխաւսութեամբ ձեր
Փրկեսցէ զմեզ յամենայն վտանգից մերոց՝
Շնորհել ողորմութիւն յայժմուս եւ յաներեկ աւուրն։
Եւ այժմ ողորմեա՛ց մեզ, Տէր Աստուած մեր,
Ըստ մեծի ողորմութեան քում։

254 AC ըզընաւից։
255 D իշխանութեամբ։
256 C Ըզքանսարկուն։ ABD ստեցէք փխ ատեցէք։
257 CD ըզմեզ։ C ածէք ի ծոցն։
259 D Փըրկեսցէ։ AD վըտանգից։
261 ABCD չիք Եւ այժմ։

## 62

## ՃԶ. ՔԱՐՈԶ ՁԱՅՆԻՒ ՅԱՒԵՏԱՐԱՆԻՆ, ՏԵԱՌՆ ՆԵՐՍԷՍԻ

*Նոր աւրհնութիւն ընդ հայցուածոց մաղթանաց*
*Մատուցանեմք առաջի քո,*
*Հայր անսկիզբն, Որդի անժամանակ, Հոգի մշտնջենաւոր,*
*Միաստուածութիւն եւ զաւրութիւն,*
*Որով գոյացան էութիւնք իմանալեաց եւ տարրեղինաց,*
*Յորոց եւ բնութիւնն խորհրդաստեղծ անկերպիդ կերպարան,*
*Որոյ խաբմամբ խաւարին յարփիականն մերկացեալ լուսոյ,*

---

**Աղբյուրներ**

A—*ձեռ. № 1084, թերթ 80ա—83բ։*
B—*ձեռ. № 1087, թերթ 50ա—54բ։*
C—*ձեռ. № 1090, թերթ 81ա—84բ։*
D—*ձեռ. № 1043, թերթ 99բ—103բ։*
E—*ձեռ. № 1088, թերթ 67ա—72բ։*
F—*ձեռ. № 953, թերթ 469բ—471ա։*
G—*Կանոն օրհնութեան սրբալոյս մեռոնին, Վաղարշապատ, 1876, էջ 37—44։*

**Խորագիր**

ACD *Քարոզ ձայնիւ յԱւետարանին* (C *տեառն Ներսէսի* փխ *յԱւետարանին*), *ըստ անուան իւրոյ* (A չիք *իւրոյ*)։ BEF *Քարոզ ձայնիւ յԱւետարանին, ըստ* (E *Աւր*, F *յօրն* փխ *յԱւետարանին*)։ G *Քարոզ տեառն Ներսիսի*։

**Ծայրակապ՝** *Ներսեսի երգ*։

**Բնագիր**

*1* E *Զոր* փխ *Նոր*։ G *օրհնութիւն*։ CD *հայցւածոց*։
*2* C չիք *Մատուցանեմք*։
*3* ACDEG *անըսկիզբն*։ BF *անըսկիզբ*։ CD *մըշտընջաւոր*։ ABG *մըշտընջենաւոր* EF *մշտընջենաւոր*։
*4* EFG *զօրութիւն*։
*5* BDEF *Որ*։
*6* E *Որոց*։ A *բնութիւն*։ BCDEF *բնութիւնըն*։ ABCDFG *խորհըրդաստեղծ*։ AE *անկերպիտ*։
*7* E *Որո խամբմամբ*։ A *յարփիականըն*։ E *արփիականն*։



*Սակայն ոչ անտես եղեալ ի քէն, բարերար.*
*Ահա ընկալցիս զպաղատանս ժողովելոցս,*
*Յաղագս առաջիկայ աւծման իւղոյս*
*Ընդունելոյ առ ի քէն շնորհս, աղաչեմք։*

*Էիդ լուսոյ անեղի ծագեալ ի ստորինս,*
*Մի ի յերից ծագումն անուան միածնիդ,*
*Աւծեր աստուածութեամբդ իբր իւղով զառեալն ի մէնջ մարդկութիւն,*
*Զնոյն աւծումն ընդ զգայականի խառնեալ աւծութեան,*
*Աւծեր իւղով ուրախութեան զանդամս մարմնոյ քո զեկեղեցի՝*
*Յաւդեալ ընդ քեզ միութեամբ.*
*Ի գլխոյդ ահարոնեան ի գրապանս իջեալ զգեստուց,*
*Իւղ թափեալ անուն,*
*Լցեր անուշահոտութեամբ զանհամութիւն բնութեանս,*
*Վասն որոյ եւ աւրհորդք առձայնեալ փեսաւէրացն առաքելոց,*
*Հաստատեալ զինքեանս իւղովս այս աւրհնութեամբ.*
*Ահա ընկալցիս զպաղատանս ժողովելոցս,*
*Յաղագս առաջիկա աւծման իւղոյս*
*Ընդունելոյ առ ի քէն շնորհս, աղաչեմք։*

*Բաբուն պանծալի վեհիցն եւ ստորնայնոցս,*

---

*9* Հաջորդ տներում կրկնակը՝ սղված։ BD *Ահայ*։ F *ըզպաղատանս*։
*10* E *Յաղակս առաջիկա*։ G *յառաջիկայ*։ FG *օծման*։
*11* E *Ընդունելո*։ A *շընորհս*։ G *ըզշնորհս*։ G տողից հետո՝
*Դպ. Լուր Տէր եւ ողորմեա։*
*12* E *Միդ* փխ *էիդ*։ E *լոյսոյ*։ BDEF չիք՝ *անեղի*։ BCDEF *ստորինըս*։
*13* BE *երից*։ AG *անուն*։ BCDFG *միածինդ*։
*14* F *Օծեր աստուածութեանդ*։ G *Օծեր*։ BEF *մարդկութիւնս*։
*15* ABCDEFG *Ըզնոյն*։ FG *օծումն*։ BCDEFG *ըզգայականի*։ FG *օծութեան*։
*16* FG *Օծեր*։ E *մարմնո*։
*17* FG *Յօդեալ*։ BE *միօորութեամբ*։ F *միաւորութեամբ*։
*18* A *գլխոյս*։ G *գըլխոյդ*։ A *գրապանակս*։ ACDG *ըզգեստուց*։
*20* ABCDFG *Լըցեր*։ A *զանմահութիւն*։ ABCDEF *բընութեանս*։
*21* E *Վասն որո*։ B *աւրիորդ*։ E *աւրհնորդ*։ F *օրինորդ*։ G *օրիորդք*։ BEF *առանձնացեալ* փխ *առձայնեալ*։ ABEG *փեսավերացն*։ CD *փեսաւէրացըն*։
*22* AG *Հաստատեալ*։ E *Հաստատեալք ինքեանս*։ G *օրհնութեամբ*։
*26* A *պանձալի*։ ABCDEF *ըստորնայնոցս*։

*Խորագոյն հիման եկեղեցւոյ քո ճարտարապետ,*
*Որ եւ ի հնումն զորդէգրութեան*
*Աւետիս աղաւնեաւ Հոգւոյն ի տիպ ձիթենւոյ առ Նոյ ծանուցեր.*
*Զնոյն Մովսեսիւ ծաղկանց քոյլիւք,*
*Ընդ սոյն խառնութեամբ նշանակեցեր ընդ մերս ածութեան,*
*Զչորից առաքինութեանց խառնել միութիւն յորդիս ածելոց,*
*Որով ածան պետք նախկի ածելոցն հնոյ աւրինին,*
*Դաս թագազարմից եւ մարգարէից՝*
*Քահանայլիւք եւ պաշտաւնէիւք.*
*Սովաւ եւ ի նորումս զ'ի ձեռս աւազակաց յանձնեալ,*
*Նախահաւրն զվէրս հոգւոց բժշկեալ,*
*Զմարգարէին բարբառ լցեալ,*
*Ածեր իւղով զգլուխ եւ բաժակաւդ իմաստութեան զուարճացուցեր,*
*Ահա ընկալցիս զպաղատանս ժողովելոցս,*
*Յաղագս առաջիկայ ածման իւղոյս*
*Ընդունելոյ առ ի քէն շնորհս, աղաչեմք:*

*Սովին ածմամբ իւղոյ զարդարեցեր զեկեղեցի քո, Քրիստոս,*
*Անհիւթական Հոգւոյն իջմամբ նախ զորս ի վերնատունն,*

---

27 AC *եկեղեցոյ:* E *եկեղեցո:* BDEF չիք *քո:*
28 A *հընումն:* BE *զորդէգրութիւն:* F *զորդէգըրութիւն:* G *զորդէգրութեանն:*
29 F *աղաւնեաւն:* AE *Հոգոյն:* ABCDF *ձիթենոյ:* E *ձիթենո:*
30 ACDG *Ըզնոյն:* BEF *Ըզնոյ:* BCDEFG *Մովսէսիւ:* AE *քոիւք:* G *քաոիւք* փխ *քո-յիւք:*
31 BEF *այն* փխ *սոյն:* A *խառնութեամբն:* AG *նըշանակեցեր:* E *ածութեանըն:* FG *օծութեան:*
32 A *Ըզչորիցն:* BCDFG *Ըզչորից:* E *Զորից:* BEF *առաքինութեանցն:* E *որդիս յածելոց:* FG *օծելոց:*
33 AG *օծան:* BCDEF *լուծան* փխ *ածան:* A *պետըք:* BCDEF *պէտք:* CG *նախնի:* E *ածութեան:* F *օծելոցն:* G *օծելոց:* A *հընոյ:* E *հնո:* G *հընոյն:* FG *օրինին:*
34 CG *Դասք:*
35 FG *պաշտօնէիւք:*
36 E *զձեռս* փխ *զ'ի ձեռս:* G *ըզ ի ձեռըս* փխ *զ'ի ձեռս:* CG *անկեալ* փխ *յանձնեալ:*
37 CFG *Նախահօրն:* AEG *ըզվէրս:* BD *ըզվերըս:* CF *ըզվէրըս:* ABCDEF *հոգոց:* A *բըժըշկեալ:* BCDF *բժըշկեալ:* G *բըժըշկել:*
38 A *Ըզմարգարէին:* ABCDF *լըցեալ:* G *առլըցեալ:*
39 FG *օծեր:* E *իւղիւ:* ABCDEFG *ըզգլուխ:* F *բաժակօդ:* ACD *զըւարճացուցեր:* BEF *զըւարճացո:*
43 FG *օծմամբ:* E *իւղո:*
44 F *Անհիւրական:* ABCDEF *Հոգոյն:* E *վերնատուն:* G *վերնատունըն:*



*Զնոյն ընդ հիւթականիս իւղոյ եւ ջրոյ*
*ԶՀոգւոյդ խառնեալ զաւրութիւն,*
*Ծնար սովաւ զառ ի քեզ հաւատացեալս յորդիս լուսոյ,*
*Եւ յորդիս տուրնչեան յածումն քահանայական եւ թագաւորական.*
*Դրոշմն տիրական եւ կնիք զգայական,*
*Ծերութիւն իմաստութեան ի ձէթ հոգւոց պարարտութեան,*
*Յորմէ ածան հեթանոսք պարզեալ իւղով ի լերին սրբութեան.*
*Ահա ընկալցիս զպաղատանս ժողովելոցս.*
*Յաղագս առաջիկայ ածման իւղոյս*
*Ընդունելոյ առ ի քէն շնորհս, աղաչեմք:*

*Եկեալքս ի տաճար փառաց քոց, ածեալք Աստուծոյ*
*Հովուապետք՝ հովուաւք եւ պաշտաւնէիւք,*
*Զձեռս եւ զմիտս վեր ամբառնամք առ մերձդ ամենից.*
*Ժամանեա՛ անհեռանալի ի մէնջ յանուն քո ժողովելոց,*
*Ընկա՛լ ի լրումն եկեղեցւոյ քո զընծայեալս ի քոյոց պարգեւաց*
*Եւ զոգւոյդ միացո աներեւոյթ զաւրութիւն,*
*Ընդ իւղս այս երեւելի ի զուարթութիւն տրտմեցելոց*

---

45 FG *Ըզնոյն:* F *հիթականիս:* E *իւղո եւ ջրո:*
46 A *Ըզհոգւոյդ:* BCDEF *ԸզՀոգոյդ:* G *Հոգւոյդ:* CEFG *զօրութիւն:*
47 ABCDFG *Ծընար:* E *որդիս:* DE *լուսո:*
48 E *որդիս:* ABCDG *տըւրնջեան:* BCD *յածումըն:* FG *յօծումն:*
49 ACFG *Դրոշմըն:* BDE *Դըրոշմըն:* BCDFG *ըզգայական:*
50 ABCDEF *Ծերութեան:* ABCD *իմաստութիւն:*
51 FG *օծան:* E *պարզ:* A *լերինն:* ACFG *սըրբութեան:* B *սըրբութիւն:* DE *սըրբու-թիւն:*
55 BD *էկեալքս:* FG *օծեալդ:*
56 A *Հովւապետք:* BF *Հովուապետ:* E *Հովապետ:* FG *հովուօք:* E *պաշտոնէիւք:* FG *պաշտօնէիւք:*
57 ABDEFG *Ըզձեռս:* C *Ըզձեռըս:* BCDF *ըզմիտըս:* EG *ըզմիտս:* F *համբառնամք:* A *մերտ* փխ *մերձդ:* BDEF *մեր* փխ *մերձդ:* G *Տէրդ* փխ *մերձդ:*
58 C *ժամանեա* յրացված՝ *ժամանեա մեզ:* A *առհեռանալի:* G *անհեռանալիդ:* E *անուն:* AG *ժողովելոցս:*
59 BCD *լըրումն:* E *լումն* փխ *լրումն:* ABCDF *եկեղեցոյ:* E *եկեղեցո:* BCDE *զըն-ծայեալս:* AE *քոոց:* G *քոյ:*
60 B *զաւգոյդ:* CDE *զոգոյդ:* F *զօգուտ* փխ *զոգւոյդ:* G *զհոգւոյդ:* ABCDF *միացոյ:* E *աներեւոյթ:* CFG *զօրութիւն:*
61 BCD *իւղըս:* ABCDEG *տըրտմեցելոց:*

Յաւժումն եղջիւր եկեղեցւոյ
Խեթկել զընդդիմամարտին զաւրութիւն եղիցի սա նշան,
Ի ճակատ նախահրաւէր կոչելոցն յարքայութիւնդ երկնից.
Ահա ընկալցիս զպաղատանս ժողովելոցս,
Յաղագս առաջիկայ աւժման խւղոյս
Ընդունելոյ առ ի քէն շնորհս, աղաչեմք։

Սրբեա՛ զմիտս եւ զխորհուրդս
Եւ զգայական բնութիւնս սովաւ աւծելոց՝
Ծնանիլ յորդեգրութիւն Հաւրդ երկնաւորի ի քում
ժառանգակցութիւնն,
Նկարել վերստին զպատկերոյ քո գեղեցկութիւն ի դէմս ամենի,
Զգենուլ զքեզ իբր գեղմամբ պարածածկեալ
Ոչխար եւ գառն Աստուծոյ.
Զպատմուճանդ առաջին, ըստ անառակին,
Ոչ մերկանալ դարձեալ, այլ մաքրել արտասուաւք,
Զխայթուածս թունից մահաբերին
Սպեղանեաւս այսու բժշկեսցես.
Ահա ընկալցիս զպաղատանս ժողովելոցս,
Յաղագս առաջիկայ աւժման խւղոյս
Ընդունելոյ առ ի քէն շնորհս, աղաչեմք։

62 FG Յօծումն։ ACDG եղջեր։ E եղջուր։ F եղջեւր։ AE եկեղեցոյ։
63 ACD խէթկել։ BEF ի սեթկել փխ խեթկել։ BE զընդիմամարտին։ CDEG զօրութիւն։ E եղեցի։ BDE սայ։ ABDFG նըշան։
64 C նախահրօէր։ G կոչեցելոցն։ E արքայութիւնդ։
68 ACEFG Սրրբեա։ BD Սրրբեայ։ BFG ըզմիտս։ CD ըզմիտըս։ EG ըզխորհուրդս։
69 BCDFG ըզգայական։ C սովօ։ FG օծելոց։
70 BCDEF Ծընանիլ։ G Ծնանել։ E որդէգրութիւն։ FG Հօրդ։ AC ժառանգակցութիւնըն։ BD ժառանգկցութիւնըն։ EF ժառանգցութիւնըն։ G ժառանգակցութիւն։
71 ABCDEFG Նըկարել վերըստին։ A ըզպատկերի։ BD ըզպատկերոյ։ CE ըզպատկերիյ։ F ըզպատկի փխ զպատկերոյ։ G զպատկերի։ D ամէնի։ G ամենից։
72 EG Ըզգենուլ։ ABCDEFG ըզքեզ։ BDEF գեղամբ։
74 ABCDF Ըզպատմուճանդ։
75 A այլ դարձեալ։ B մարքրել։ FG արտասուօք։
76 G Զխայթուած։ ABDEFG թունից։ E մահայբերին։
77 BEF Սպեղանաւս։ G Ըսպեղանեաւս։ E այսաւ փխ այսու։ ABCDEFG բըժըշկեսցես։



Ի Հաւրէ բղխումն անսպառ,
Որդւոյ փառակից Հոգի Աստուծոյ,
Ի ջուրց վերաստեղծիչ կենդանեաց՝
Զգալեաց յառաջնումն եւ իմանալեաց յերկրորդումն,
Առ որ պաղատիմք հայցմամբ մաղթանաց
Ժողովեալքս առաջի քո՝
Հեղուլ առատապէս զշնորհաց քոց զանազանութիւն
Ի յիւղս այս սրբութեան,
Ըստ էակցի քո մարդեղութեան ի մեզ նկարեալ
ԶՀոգի իմաստութեան եւ հանճարոյ,
ԶՀոգի խորհրդոյ եւ զաւրութեան,
ԶՀոգի գիտութեան եւ աստուածպաշտութեան,
ԶՀոգի երկիւղի Աստուծոյ եւ որդէգրութեան,
Լնուլ սովաւ դրոշմեցելոցն եաւթնարփեան շնորհի քո
առատութեամբ,
Բարեխաւսութեամբ մաքրեալ հոգւոց քոց բնակութեան,
Արժանացելոց իններակ դասուց հոգեղինաց
Եւ ընտրելոց ի քէն հողեղինաց.
Ամէնաւրհնեալ կուսի Մարիամու Աստուածածնի՝
Մեծին ի ծնունդս կանանց,

81 FG Հօրէ։ AG բըղխումն։ BCDF բըխումն։ E բխումն։ ABCDFG անըսպառ։
82 AC Որդոյ։
83 E կենդանաց։
84 A Սգալեաց։ BCDEFG Ըզգալեաց։ E իմանալաց։ ABDF յերկրորդումս։
85 E պաղատեմք։ BE մախթանաց։
87 BCDFG ըզշնորհաց։ E ըզշնորհեաց։
88 BCDF յեւղս։ E եաւղս։ ACDG սըրբութեան։ BF սըրբութիւն։ E սրբութիւն։
89 ABCDFG Նըկարեալ։
90 E հանճարո։
91 ABCDEF Հոգի։ ABCDFG խորհըրդոյ։ E խորհրդո։ BCDFG զօրութեան։
92 BEF Հոգի։
93 BEF Հոգի։ C յորդէգրութեան։
94 B Լընելով։ CDG Լընուլ։ E Լըլնելով։ F Լինելով։ ABCDF եւթնարփեան։ FG եօթնարփեան։
95 BE Բարէխաւսութեամբ։ FG Բարեխօսութեամբ։ ABCDEF հոգոց։ AG քում։
96 E իննակ։
97 E ընդրելոց։
98 E Ամենաւրհնեալ։ G Ամենօրհնեալ։ AG կուսին։ G Աստուածածնին։
99 G ծնունդըս։

Նախահրաւէր այսմ շնորհի Մկրտչին Յովհաննու,
Նախնոյն վկայից եւ սարկաւագաց՝ սրբոյն Ստեփանոսի,
Առաքելովք եւ մարգարէիւք,
Մարտիրոսաւք եւ ճգնաւորաւք,
Եւ համայրէն սովաւ ածելովք արդարոցն
Եւ որ այսր ածմամբ զմեզ լուսաւորչի՝ սրբոյն Գրիգորի.
Ահա յիշեսցի եւ զհոգիս հանգուցելոց մերոց՝
Հաւատով ի քեզ ննջեցելոց, խնդրեմք.

Եւ եւս առաւել
Զյորդորումն սիրոյ եւ զգործս բարեաց պարգեւել մեզ, խնդրեմք։

Զանձինս մեր եւ զմիմեանս
Տեառն Աստուծոյ ամենակալի յանձն արասցուք, խնդրեմք։

Բոտեա զմեզ սովին ածութեամբ
Ի հուր սիրոյ քո, հուրդ Աստուած, խնդրեմք։

---

100 E նախահրամէր։ G այսըմ։ BDEF աշխարհի փխ շնորհի։ BCD Մկըրտչին։ E Մկրտիչին։ F Մըկրտչին։ G Մըկըրտչին։ E Յովաննու։
101 G Նախնւոյն։ FG վըկայից։ CDFG սըրբոյն։ B սըբոյն։ AFG Ստեփաննոսի։
102 C մարգէիւք։
103 BCEFG Մարտիրոսօք։ AD ճըգնաւորաւք։ B ճընգնաւորօք։ CEF ճգնաւորօք։ G ճըգնաւորօք։
104 CDG համօրէն։ FG օծելովք։ BEF արդարոցըն։
105 FG օծմամբ։ G օծմամբ լուսոյ։ ABCDFG ըզմեզ։ B լուսաւորչ։ EF Լուսաւորիչ։ BCDFG սըրբոյն։
106 ABCDEF *106—107*-րդ տողերի փոխարեն՝ Ահա յիշեսցի (A յիշեա)։ G *106—107*-րդ տողերի փոխարեն՝ Ահա յիշեսցես։
108 C առօել։
109 ABCDEF չիք՝ տողը։ G Զյորդորումըն։ G ըզգործըս։ G խընդրեմք։ G տողից հետո՝ Տուր մեզ Տէր։
110 ABCDEF *110—111*-րդ տողերը՝ քերի։ G Զանձինըս։ G ըզմիմեանըս։
111 AEF տողից հետո՝ Ողորմեաց մեզ, Տէր Աստուած (AE տողը՝ քերի)։ G ամենակալին։ G չիք խնդրեմք։ G տողից հետո՝ Քեզ Տեառնդ յանձն եղիցուք։
112 BEF Բոտեալ։ D Բրոտեալ։ ABCDFG ըզմեզ։ F յածութեամբ փխ ածութեամբ։ G օծութեամբ։
113 E սիրո։ BC քոյ։ BDF հօրդ փխ հուրդ։ C Հօրդ ուղղված՝ հուրդ։ E հաւրդ փխ հուրդ։ A Աստըւած։ DG խընդրեմք։



Գերագունիդ էի գթութեան
Զքոյս պարգեւ շնորհի ածեմք յաղերս փարելի.
Շնորհեա՛ սովաւ զխաղաղութիւն եկեղեցւոյ
Եւ ընդ սովին տաւաղեալ հաւտի,
Պահեա զնուիրող այսր ընծայի
Զհայրապետս մեր՝ զտէր [այս անուն]՝ քեզ ի հաճոյս,
Եպիսկոպոսաւք եւ վարդապետաւք,
Քահանայիւք եւ սարկաւագաւք եւ պաշտաւնէիւք.
Զաւրացո՛ եւ զածեալսն ի թագ արքայութեան
Սորին շնորհիւ պսակեալ,
Զաւրապետաւք եւ զաւրականաւք՝
Վանել զներհական զաւրութիւնս ոչ ածելոցն խաւարազգեստից.
Պարգեւեա՛ սովաւ եւ տարերաց զբարեխառնութիւն,
Բուսոց եւ տնկոց՝ զառատապէս պտղաբերութիւն.
Յիշեա՛ եւ զհոգիս ննջեցելոց մերոց՝
Սրբալոյս այս իւղոյ մեռոնի ածելոց,

---

114 ABDE Գերագունիտ։ AF գըթութեան։ E գդութեան։ G Գերագունի էիդ գըթութեան փխ տողի։
115 ACG ածեմք փխ ածեմք։ EF օծեմք։ F յաղագս փխ յաղերս։
116 B Շնորհեաց։ ABCDEF ըզխաղաղութիւն։ ABCDF եկեղեցոյ։ E եկեղեցո։
117 G սովիմբ։ C տաղավարեալ։ G տաղաւարեալ։ FG հօտի։
118 A ըզնուիրաւղ։ BD ըզնըւիրօղ։ C ըզնըւիրաւղ։ E ըզնուիրող։ F ըզնուիրօղ։ G զնըւիրող։
119 AG Ըզհայրապետըս։ BCDF Ըզհայրապետս։ ABCDFG ըզտէր։
120 BEFG Եպիսկոպոսօք։ ABEFG վարդապետօք։
121 BEFG սարկաւագօք։ FG պաշտօնէիւք։
122 ABD Զաւրացոյ։ CFG Զօրացո։ FG զօծեալսն։
123 A Սովին։ AG պըսակեալ։
124 B Զաւրապետօք։ CD Զօրապետաւք։ FG Զօրապետօք։ C զօրականաւք։ FG զօրականօք։
125 BEF Վանեալ։ A ըզներհական։ G զներհականական։ CDFG զօրութիւնս։ FG օծելոցն։
126 E սովեաւ։ G զտարերաց։ B ըզբարէխառնութիւն։ CDF ըզբարեխառնութիւն։ E զբարէխառնութիւն։
127 CDF Բուսուց։ BCDFG տընկոց։ FG պըտղաբերութիւն։
128 BD Յիշեայ։ FG ննջեցելոց։
129 ABCDFG Սըրբալոյս։ E Սըրբալուս։ A չիք այս։ E իւղս։ G միւռոնի։ E աւծելոյ։ FG օծելոց։

*Եւ ի ծագման քո մեծի իբր զիւղեալ պատրոյկ*
*Վառեսցես ընդ Նոյին եւ զմեզ անշէջ քո լուսով:*
*Եւ այժմ ողորմեա՛ց մեզ, Տէր Աստուած մեր,*
*Ըստ մեծի ողորմութեան քում:*

---

130 BDEF *զուղղեալ* փխ *զիւղեալ*:
131 BF *ընդ Նոյին ընդ Նոյին*: EG *ըզմեզ*:
133 A *քում աղաչեմք*: C *քում ասասցուք*: F *քում ասասցուք ամենեքեան միա[բանութեամբ]*:
134 G տողից հետո՝ *Ասասցուք ամենեքեան միաբանութեամբ. Տէր ողորմեա, Տէր ողորմեա, լուր Տէր եւ ողորմեա:*

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

## ՏԱՂԵՐ, ՓՈԽԵՐ

### 63

### ՃԷ. ՏԱՂ ԱԻԵՏԵԱՑ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ, Ի ՏԷՐ ՆԵՐՍԻՍԷ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԷ

*Այսաւր երեւի անտեսն ի բարձանց.*
*Բանին բընութեամբ բոլոր եղականք*
*Գովեն գունդք վեհից վերին պետութեանցն։*
*Դարձեալ կերպանալ ըզմերս ի Կուսէն,*
*Եղանի հանգոյն հողածնեալ մարդոյն.*
*Զարգանայր մանուկ հողաստեղծուածոյս,*

---

**Աղբյուրներ**

A—*ձեռ. № 7785, թերթ 266ա—267ա։*
B—*ձեռ. № 3503, թերթ 12բ—13բ։*
C—*ձեռ. № 554, թերթ 19բ—21ա։*
D—*ձեռ. № 474, թերթ 14ա—15ա։*
E—*ձեռ. № 6495, թերթ 84աբ։*
F—*ձեռ. № 2672, թերթ 24բ—25ա։*
G—*«Բազմավէպ», Վենետիկ, 1907, № 2, էջ 62։*

**Խորագիր**

A *Այլ տաղ Աւետեաց Աստուածածնին։* B անխորագիր C *Տաղ ի տէր Ներսէսէ Հայոց կաթուղիկոսէ։* D *Նոյն Ներսեսի տեառնըն ասացեալ։* E *Տաղ ի տէր Ներսէ[սէ]։* F *Տաղ ի Ներսէս Լամբրոնացոյ ասացեալ [Դ աւուր Ծննդեան]։* G *Տաղ Ծննդեան, ի տէր Ներսիսէ Կլայեցւոյ։*

**Ծայրակապ՝** *Ա—Ք։*

**Բնագիր**

*1* AB *անհասն* փխ *անտեսն։*
*2* CDEG *բընութիւնք։*
*3* CD *գունք* փխ *գունդք։* B *վեհիցն։* DG *պետութեանց*
*4* D *կերպանա։*
*5* B *հողացեալ։* CDEG *Երեւի ծաղիկ նոր շառաւեղին* փխ տողի:
*6* E *մանուկն։* AF *հողաստեղծուածոցս։* B *հողաստեղծուածոյցս։* CE *հողաստեղծուածոյս։*

Էրեւի ծաղիկ նոր շառաւիղին
Ընդ այն յայտնափոխ փոխարկեալ մարդոյն,
Թէ 'նդ այդ յանցանացդ, որ ի պատուողէն։
Ժամանակ եհաս Կուսին աւետեաց,
Ի յորովայնէ նըւաստ երեւեալ
Լընու զամենայն զոր յառաջն ասաց։
Խաղայր խորհըրդով մեծըն Գաբրիէլ
Ծանուցող եղեալ Կուսին աւետեաց.
— Կենաց ես յայտնող, կոյս եւ անարատ,
Հոգի Աստուծոյ ի քեզ եկեսցէ,
Ձայն Տեառն զաւրութեանց ի քեզ որոտայ։
Ղաւղեալ սուրբ Կուսին յահէ հրեշտակին,
Ճեպէր հիացմամբ սափորովն յաղբիւրն,
Միայն հիացեալ ընդ միտս զարմանայր.
— Յառնէ երկրածնէ ոչ իցեմ խաբեալ,
Նորասքանչ է բանս, զոր ես լըսեցի։
Շտապով տագնապէր, երկիւղիւ լընոյր.
— Ուստի այս լիցի,—զայն պատասխանէր,—

7 AC Երեւի։ B շառաւեղին։ F շառօիղին։ CEG էմանուէլի։ (E էմանուելի։ G էմմա-նուէլի) զուշակ լինելով փխ տողի: D Երանեն այսաւր մեզ զաւրք երկնայնոց փխ տողի:
8 C չիք՝ տողը: D յայտնապէս։ G յատնափոխ փխ յայտնափոխ։ B մարդւոյն։
9 ABCDEF ընդ փխ 'նդ։ B յայտ փխ այդ։ C յանցանցացդ։ D անցանացդ։ G յանցանաց։ B պարտողէն։
10 AB էհաս։ G Կուսինն։ B աւետեացն։
11 C չիք՝ տողը: EG յորովայնի։ D նուաստ։ EG անսերմ փխ նըւաստ։
12 G Լընուլ։ CEG նախ խոստացաւ փխ յառաջն ասաց։ D յառաջ։
13 D Խայլայր։ E խորհրդով։ CDEG պետըն փխ մեծըն.
14 ABE Ծանուցաւղ։ F Ծանուցօղ։
15 AB յայտնաւղ։
16 CEG Հոգին։
17 G զօրութեանց։ D որոտա։
18 G Ղօղեալ։
19 C հիացմամբ։ CG սափորով։ ABDF յաղբերն։
20 E հիանայր։ D միտըս։ E միտսըն։
21 AB յերկրածնէ։ E երկրածընէ։ F յերկրածէ։
22 C Նորասքանչ։ ABDF ձայնս որ ինձ երեւի փխ բանս զոր ես լըսեցի։
23 C Ըշտապով։ B երկեղիւ։ D երկիւղ։
24 G ձայն փխ զայն։



Զունիմ ինչ կարծիս, հրեշտակ Աստուծոյ։
Պանծալի ձայնիւ գոչէր Գաբրիէլ.
— Ջահին մեծ արփւոյն ընդունակ եղեր,
Ուստի ուղղեալ յերկնից բերեմ զաւետիս,
Սպասաւորեմ ես սուրբ թագաւորին,
Վերուստ եմ իջեալ տալով զաւետիս,
Տալով զաւետիս, որ ոչ անցանէ,
Բաբունին էից ի քէն ծընանի։
Ցընծա՛, դուստր անմեղ Եւայի ունկամբն,
Իւթանիւթ մարմնով, լուծիչ տըրտմութեանց.
Փառաց թագաւորն ի քէն մեզ յայտնեալ,
Քեզ փա՛ռք վայելէ յաւիտեանս, ամէն։

25 D հրեշտակք։
27 E Ջահի։ CDE արփոյն։ ABE ընդունաւղ։ F ընդունօղ։
28 BCD ուղեալ։
30 AF տալոյ։
31 D չիք Տալով զաւետիս։
32 D Բաբունն։ AB յէից։ F յերկնից փխ էից։ D ծնանի։
33 F Ցընծայ։ CEG Ցընծա՛ դու հոգով (G հոգւով), կոյսըդ Մարիամ փխ տողի: D Ցնծայ Մարիամ մայր Բանին կենաց փխ տողի:
34 BDG Իւթ աննիւթ փխ Իւթանիւթ։ BCEG տրրտմութեան։ DF տրտմութեանց։

## 64

## ԾԸ. ՏԱՂ ԾՆՆԴԵԱՆ ՃՐԱԳԱԼՈՅՑԻՆ, Ի ՏԷՐ ՆԵՐՍԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԷ

*Անմահից արքայն եւ սրովբէից անտեսն*
*Յերկնից ի յերկիր խոնարհեցաւ կամաւ։*

*Բարձրեալ թագաւորն ըզԳաբրիէլ կոչեաց,*
*Առ Կոյսն առաքեաց, զխորհուրդըն մեծ յայտնեաց։*

*Գաբրիէլ եկեալ զողջոյնըն տայր Կուսին.*
*— Ուրախ լե՛ր, բերկրեալդ, մայր լինելով փըրկչին։*

*Դրոշմեալ ըզսուրբ Կոյսն Գաբրիելի բարբառն,*

---

**Աղբյուրներ**

A—*ձեռ. № 5328, թերթ 61բ—62բ։*
B—*ձեռ. № 423, թերթ 61աբ։*
C—*ձեռ. № 6495, թերթ 89բ—90բ։*
D—*ձեռ. № 7958, թերթ 30ա—31ա։*
E—*ձեռ. № 424, թերթ 17աբ։*
F—*ձեռ. № 554, թերթ 6բ—7բ։*

**Խորագիր**

AB *Տաղ ազնիւ։* C *Յորդորակ։* D *Տաղ Ծընընդեան, ի Ներս[ես]է կաթողիկոսէ աս[ացեալ]։* E *Մեղեդի և տաղ Ճրագալուցին ասայ։* F *Տաղ գեղեցիկ յարմար, ի տէր Ներսէս կաթողիկ[ոսէ]։*

**Ծայրակապ՝** *Ա—Ո։*

**Բնագիր**

*1* AC *սրոբէից։* B *սըրոբէից։* E *սըրովբէից։* F *սրոբէից։*
*2* B *Երկնից։*
*3* F *թագաւորըն։*
*4* C *Յերկիրս* փխ *Առ Կոյսն։*
*5* B *զողջոյնն։*
*6* B *բերկրեալըդ։* C *Բանին* փխ *փըրկչին։*
*7* ABDEF *Գաբրիէլի։*



*Եւ առընկալաւ զԱստուածըն Բանն յինքեան։*

*Երկինք հիացեալ սասանեցան յահէն,*
*ԶԲանն Աստուած տեսեալ յարգանդ Կուսին իջեալ։*

*Զաւրքն անմարմնականք ահիւ մեծաւ պակեան,*
*ԶՏալիթայն տեսեալ Աստուածածին եղեալ։*

*Էղեալ անեղին 'ստ եղականաց մարմին,*
*Կերպարանըն Հաւր առեալ զկերպ մարդկային։*

*Ընդ մարմնոյն խառնեալ եւ միացեալ լինի,*
*Բնութիւն Աստուծոյ ընդ մարդոյն մի Տէր կոչի։*

*Թագաւորն երկնի յերկրի երեւեսցի,*
*Բնութեամբ արարիչն որդի մարդոյ լինի։*

*Ժառանգ աւետեաց Աբրահամուն զարմի,*
*Այսաւր ի Կուսէն Աստուած եւ մարդ յայտնի։*

*Ի գիրկըս Կուսին Աստուած տըղայ բազմի,*
*Արարիչ լուսոյն խանձարրապատ լինի։*

*Լըւեալ Հերովդէս զհամբաւ ծնընդեան փըրկչին,*
*Չարութեամբ լըցեալ տայր կոտորել զմանկտին։*

---

*8* CDE *Բան։* B չիք *յինքեան։*
*9* B չիք *Երկինք հիացեալ։*
*10* E *իջեալ Կուսին* փխ *Կուսին իջեալ։*
*11* B *Զօրըն։* D *Զօրք։* EF *Զաւրք։* F *անմարմնական։*
*13* DE *ընդ անեղին։*
*14* BCD *Հօր։* C *զձեւ* փխ *զկերպ։*
*16* B *Բնութիւնն։*
*17* A լուսանցքում՝ *Փոխէ։* A *ի յերկրի։* B *եւ երկրի։* C չիք *յերկրի։* A *էրեւեսցի։*
*19* D *ժառանգն։* AC *աւետեացն։* B *յաւետեացն։* CDE *Աբրահամու։* BC *զարմին։*
*20* BC *Այսօր։*
*21* E *տըղաւ։*
*22* A *Արարող։* B *Արարողին։* F *խանձարրպատ։*
*23* C *Հերոդէս։* B *ծընընդեան։* A *փրկչին։*
*24* AB *Նախանձու չարին* փխ *Չարութեամբ լըցեալ։* E *զկոտորել։* B *զմանկունս։* DE *մանկտին։* F *զմանկտի։*

Խորհուրդըն ծածկեալ այսաւր ծնընդեամբ յայտնեալ,
Նախամայրն Եւա ի յանիծից փըրկեալ։

Ծնընդեամբ սուրբ Կուսին դըրախտն Ադամայ բացաւ,
Եւ ծառըն կենաց պարգեւ բնութեանս տըւաւ։

Կոյսըն Մարիամ Աստուածածին եղեալ,
Ի պարտուց նախնեաց բնութիւնս մեր ազատեալ։

Հաւր մեր Ադամայ վըճար պարտուցն եղեալ,
Եւ ազգ մարդկային յԱդինըն սուրբ դարձեալ։

Զայնիւ ցընծութեամբ ներպարառեալ խընդամք,
Յաւր նաւակատեաց ծնընդեան փըրկչին խայտամք։

Ղամբար լուսափայլ մեք հաւատով վառեալ,
Յաւր նաւակատեաց ճրագալուցիս բերկրեալ։

Ճըշմարտահաւատ ժողովք ուղղափառաց.
Այսաւր ցընծացէք ի տաւնս ծնընդեան փըրկչին։

25 B Խորհուրդն։ B Այսօր ծընընդեամբ։ DEF 25—26-րդ տողերի փոխարեն՝
Լուսոյն էական, որ ի Կուսէն ծընաւ (D ծնաւ),
Տացուք աւրհնութիւն ընդ Հաւր (D Հօր) եւ Հոգոյն յաւէտ (F յաւետ)։

26 ABC Եւայ։ B յանիծիցն։

27 DEF չիք 27—28։ C լուսանցքում՝ Փոխէ։ B Ծընընդեամբ։

30 C մեղաց փխ նախնեաց։ B բընութիւնս։

31 BC Հօր։

32 AB յԱդինն։

34 B Օր։ B ծընընդեան։ C փըկչին։ B խայտամքք։

35 B Ղամպար։ AB մեր փխ մեք։

36 B Յօր։ B ճըրագալուցիս։

37 B Ճըշմարտհաւատք։ A ուղափառաց։ C 37—48-րդ տողերի փոխարեն՝
Ճառագայթ փառաց Հօր միածին Որդին,
Կամաւ Հաւր եւ Հոգոյն եղեւ որդի Կուսին։
Մաքուր որովայն Մարիամու կուսին,
Եղեւ մարմնարան Հաւր էակից Բանին։
Յորժամ Գաբրիէլ ետ զաւետիս Կուսին,
Կոյսըն Մարիամ հաւանեցաւ բանին։
Նոր արարչութեան սկիզբն եղեւ անդէն,
Արգանդ սուրբ Կուսին մարդեղութեան Բանին։
Շարամանեցաւ արիւն սրբոյ Կուսին,
Անշըփոթ խառընմամբ ընդ անեղ Աստուած Բանին։

38 B Այսօր։ B տօնս ծընընդեան։



Մաքուր սըրբութեամբ պատրաստեցէք ըզձեզ
Տաւնակից լինել անմարմնական դասուցն։

Յերկնից խոնարհեալ անմարմնական զաւրացն՝
Տաւնակից լինին որդւոց մարդկան յերկրի։

Նոր երգ պար առեալ հրեշտակական երամքն,
Զայնիւ սըրբասաց աւրհնեն զծընունդ Կուսին։

Շնորհաւք սուրբ Կուսին եւ կուսածին փըրկչին
Արժանի լիցուք տալ գոհութիւն Նըմին։

Ուրախ ցընծութեամբ զնաւակատիս տաւնիս
Այսաւր տաւնեսցուք որդիք Հայոց ազգիս։

39 A սրբութեամբ։

40 B Տօնակից։

41 B զօրացն։

42 B Տօնակից։ B չիք լինին։ AB որդւոց։

43 B հրեշտական երամք։

44 A սրբասաց։ B օրհնեն։

45 B Շընորհօք։

46 B լիցիք։

47 B Որ ուրախ։ B նաւակատիս տօնիս։

48 B Այսօր։ A տօնեսցուք։ B տօնիսցուք։ B տողից հետո՝
Զքեզ կուսութեամբ ծընար,
Որ ըղխորս անդընդոց բանայր,
Զերկինս է պարզեալ կամար.
Մայր Մանուէլի սուրբ Կոյս։
(Տե՛ս Սրապյան Ա., Հովհաննես Երզնկացի, Երևան, 1956, էջ 249)։

65

## ՃԹ. ՏԱՂ [ԾՆՆԴԵԱՆ]

*Քերովբէից գերագոյն,*
*Սըրբոյ մաքրենից մաքրագոյն,*

*Սըրբուհի զըմուռ ծովային,*
*Ծովայնոյ բերեալ մարգարիտ։*

*Մարգարիտ լուսոյ արփենւոյն.*
*Արփենւոյն տարփմամբ սըրտի սէր։*

*Դու ծաղիկ վարդից բիւրից թերթ,*
*Թերթ փըթթեալ տերեւ բոցանիշ։*

*Արեւելեան դուռն աղխեալ փակեալ,*
*Առաւաւտ լայգւոյն մերկացեալ։*

*Կարմրերփեան արեւ ծագեցեր՝*
*Ի լերանց ի գլուխ տարածեալ։*

*Բուրաստան բուրեալ քաղցր աւղիւք,*
*Փունջ ծաղկանց ծափի հարկանեն։*

*Անտառից սաղարթ սաւս երփնից*
*Բարձր ի ծագ ծառոց զարդարին։*

*Ցաւղ իջմամբ հովիտ շուշանաց*
*Հիւսիսի մանրիկ անձրեւաց։*

*Ընդ ծընունդ քո, կոյս Մարիամ,*
*Աւետեաց հրաւէր յաւրինեմք։*

*Աւետի՛ս, եկեալ Գաբրիէլ*
*Ի յերկնից քեզ տայր զաւետիս, մե՛ծ աւետիս։*

---

**Աղբյուրներ**

A—*ձեռ. № 7785, թերթ 29ա։*
B—*ձեռ. № 3503, թերթ 25ա։*
C—*ձեռ. № 79, թերթ 322բ (Փարիզ)։*

**Խորագիր**

A *Տաղ նմին աւուր երեկոյին ժամուն [Դ աւուր]։* B *Երեկոյին ասայ, խիստ լաւ է [Դ աւուր]։* C *Տաղ նմին աւուր երեկոյին [Դ աւուր]։*

**Բնագիր**

*1* C *քերոբեից։*
*5* ABC *արփենոյն։*
*6* ABC *արփենոյն։*
*8* B չիք *Թերթ։*
*9* AB *ախեալ։*
*10* B *լայգուն։* C *լայգոյն։*
*11* B *ծագեցար։*
*13* C չիք *13—20։*
*18* A *Հիւսիւսի։*

## ՃԺ. ՓՈԽ

Ողջո՜յն ընդ քեզ, Մարիամ, աւետի՜ս,
Ի քեզ Սուրբ Հոգին եկեսցէ, մե՜ծ աւետիս։

Եւ զաւրութիւն բարձրելոյն, աւետի՜ս,
Ի վերայ քո հովանասցի, մե՜ծ աւետիս։

Ի Սիւքէմ ի նոյն ի յայրին, աւետի՜ս,
Ուր ծընաւ արքայն երկնաւոր, մե՜ծ աւետիս։

Աստեղեան ծագումն ի յայրին, աւետի՜ս,
Հովիւք զարթեան, նոր երգ երգէին, մե՜ծ աւետիս։

Յարեւելից եկեալ թագաւորք, աւետի՜ս,
Մատուցին զընծայս խորհըրդոյ, մե՜ծ աւետիս։

Ի թեման սիւն ամպոյ գործեալ, աւետի՜ս,
Թափանցիկ լոյս-յարփւոյն երեւեալ, մե՜ծ աւետիս։

Զհինաւուրց խորհուրդըն տեսեալ, աւետի՜ս,
Նոր մանուկ հրաշալի ծնընդեամբ, մե՜ծ աւետիս։

Ընդ երկնային դասուց հրեշտակաց, աւետի՜ս,
Երկնաւորք զայս հարցանէին, մե՜ծ աւետիս.

— Ո՞վ է սա, կամ ուստի՞ եկեալ, աւետի՜ս,
Նորասքանչ ծնընդեամբ յայտնելով, մե՜ծ աւետիս։

Հրեղինաց զաւրաց զըւարթնոցն, աւետի՜ս,
Հողեղէն հովուացն յայտնէին, մե՜ծ աւետիս։

Սա յերկնից եկեալ թագաւոր, աւետի՜ս,
Հաւր սահման անսահմանելոյն, մե՜ծ աւետիս։

Սա յերկրի ի Կուսէ ծընեալ, աւետի՜ս,
Աստուած եւ մարդ բնութեամբ միացեալ, մե՜ծ աւետիս։

Սըմա փա՜ռք ի բարձունս երգեսցուք, աւետի՜ս.
Քրիստոսի մեծ թագաւորին, մե՜ծ աւետիս։

---

**Աղբյուրներ**

A—ձեռ. № 7785, թերթ 49ա—50ա։
B—ձեռ. № 3503, թերթ 25բ—26բ։
C—ձեռ. № 79, թերթ 322բ—323ա (Փարիզ)։

**Խորագիր**

A Փ[ոխ. Զ ձայն երեկոյին]։ B Փ[ոխ. Դ ձայն երեկոյին]։ C անխորագիր [Դ ձայն երեկոյին]։

**Բնագիր**

4 C վերա։
6 C ծնաւ։
7 C յարին փխ յայրին։
9 C Յարեւլից փխ Յարեւելից։
10 C խորհրդոյ։
11 C չիք 11—12։ B ամբոյ։
12 A Թափանց։ A յարփոյն։

17 B սայ։
20 AC հովուաց։ AC պատմէին փխ յայտնէին։
22 AC անսահմանելոյն։
23 C ծնեալ։
25 C Սմայ։

## 66

## ՃԺԱ. ՏԱՂ ՅԱՐՈՒԹԵԱՆ

Աւետի՛ս, միշտ աւետեաց հընչումն.
— Տէրըն մեր յարեաւ:
Աւետի՛ս, նախաձայնէր հրեշտակն.
— Տէրըն մեր յարեաւ.
Այսաւր Տէր յարեաւ,
Կանա՛յք, զի՞ լայք ըզկենդանին,
Զի՞ արտասուս հեղոյք:
Շտապ շոյտ ընթացեալ փութով,
Այսր անդր արշաւմամբ.
— Ո՞ւր է իմ ծընեալ որդեակն,
Այն հրաշածաղիկն:

Աղբյուրներ

A—ձեռ. № 7785, թերթ 291ա—292ա:
B—ձեռ. № 3503, թերթ 174ա—175ա:
C—ձեռ. № 79, թերթ 365աբ (Փարիզ):
D—ձեռ. № 80, թերթ 195աբ (Փարիզ):
E—«Բազմավէպ», Վենետիկ, 1932, էջ 264:

Խորագիր

AD Այլ տաղ (A տաղք) Յարութեան, և է խիստ լաւ (A լէւ): BC Այլ տաղ Յարութեան, խոսրովային (C չիք): E Տաղ Յարութեան ս[րբոյն] Ներսիսի Շնորհալւոյ:

Բնագիր

1 C հնչումն: E արագ հնչումն:
2 CE Զի Տէրըն:
3 CE հրաշաձայնեաց փխ նախաձայնէր:
4 C Տեր: E Տէր:
5 E Այսօր: A յարեա:
6 CE զկենդանին: CE տողից հետո՝ Աւետեաց (C Աւեաց) պատգամս առնեմ:
7 C արտաւսրա փխ արտասուս:
8 D Յսր փխ Այսր:



Մի՞ դու պարտիզպան բարձեր
Զայն լուսոյ մարմինն,
Ասա՛, ո՞ւր եդիր ըզնա,
Զի ես երթեալ առից:
Ես երթեալ առից ըզնա,
Տարեալ թաքուցից
Յայն ի հրէական, ը՛, մոլախումբ ժողովոյն:
Քեզ քաղցրաձայնեալ ծանուցի
Յառեալ Մարիամ,
ԶՏէրըդ բաքունեան որդեակդ
Յոյժ կողկողանաւք:
— Ես եմ նոյն Յիսուս,
Ծընեալն ի քէն կուսութեամբ,
Եկեալ ի կոյս գերեզմանէն.
— Մի՛ յիս մերձենար,—լըսէր,—
Չեմ ելեալ առ Հայր,
Չեմ ցուցեալ ըզվէր կողիցս,
Զտեղիս բեւեռաց.
Ընդ իմոյ հետեւոցի ի վեր ելէք:
Կենացունաքեր քարոզք,
Ընդ ձեզ եմ յաւիտեան:

12 A Միքէ: C պարտիզպան: C յարձէր փխ յարձէր
14 CE զնա:
15 C առից զնա:
16 B ըզնայ: C զնայ: E չիք ըզնա:
17 ABCDE թագուցից:
18 D ա փխ ը՛: E չիք ը՛: C մոլախումբ:
19 E ծանօթ:
20 BE Առեալ:
21 CE ԸզՏէրդ:
22 E կողկողանօք:
23 C չիք 23—25: B լուսանցքում՝ Այլ ազգ:
24 D Ծընեա:
26 C լսեր: E լսէր:
27 A Չէմ:
28 B ըզվեր: C զվեր: E զվէր:
29 C 'ի ըզտեղիս:
30 C իմոց: E իմ:
31 A Կենացնունաքեր: D քարոզ:

67

## ՃԺԲ. ՏԱՂ ՍՐԲՈՅՆ ԳԷՈՐԳԱՅ ԶԱԻՐԱՎԱՐԻՆ. Ի ՆԵՐՍԻՍԷ ԿԱԹՈՂԻԿՈՍԷ

Թագաւորն անմահ յաշխարհըս երեւեալ,
Ազատեաց զազգըս մարդկան ի բանսարկուէն։

Կերպարանըն Հաւր առեալ ըզմարդկայինս,
Տնաւրինաբար մարմնով խաչի համբերելով։

Զվայրանկեալ բնութիւնս յարութեամբըն նորոգեալ,
Գերագոյն վեհագունիցն յաթոռ նըստոյց։

Թագաւորն փառաց հարեալ ըզպատերազմն,
Աւար առեալ բաշխեաց պարգեւս որդւոց մարդկան։

Հար կործանեաց, ը՛, զանմարմինն ըզԲելիար,
Նըշաւակեաց եւ ետ կոխան զաւրաց իւրոց։

Խրախոյս ձայնեաց ընդ տիեզերս որդւոց մարդկան.
— Քաջըս լերուք, իմ զաւրականք, ես յաղթեցի։

Յահեղ ձայնէն սուրբ զինաւորքըն զաւրացան,
Ծակատ առին եւ ախոյեան շարին յարեան։

Զմըկըրտութիւնն, որ ի Քրիստոս զրահ ըզգեցան,
Վահան ամուր ըզյոյսն ի Տէր ի ձեռս առին։

Ըզսաղաւարտըն փըրկութեան ի գլուխ եդին,
Զբանըն կենաց յանձինս իւրեանց փայլեցուցին։

Այսու զինեալ նոցա ի մարտըն դիմեցին
Եւ յաղթութեան արձան ի մէջ երկրի եդին։

Յորոց եւ մինն այսաւր մարտեաւ արիապէս,
Զոր ժողովեալ պատուեմք սիրով ներտաղապէս

ԶԳէորգէոս, բանին կենաց վաստակաւոր,
Որ ետ պըտուղ ըստացողին հարիւրաւոր։

---

**Աղբյուրներ**

A—ձեռ. № 7785, թերթ 454բ—456բ։
B—ձեռ. № 3503, թերթ 291բ—294ա։
C—ձեռ. № 79, թերթ 387բ—388բ (Փարիզ)։
D—Վարք սրբոյն Գէորգայ զօրավարին, Վենետիկ, 1849, էջ 60—62։

**Խորագիր**

A տե՛ս վերևում: B Տաղ սրբոյն Գէորգա զաւր[ա]վար[ին] և նմանեաց նոր[ին], ի Ներս[իսէ] Տարսոնի եպիսկոպոսէ։ C Տաղ սրբոյ Գեորգեա։ D Տաղ սրբոյն Գէորգայ զօրավարին և նմանեաց իւրոց, ի Ներսիսէ Տարսոնի եպիսկոպոսէ։

**Բնագիր**

1 C Թագաւոր։ ABC յաշխարհս։
2 BD Ազատել։ C Ազատեա զազգս։
3 D Հօր։ C զմարդկայինս։
4 D Տնօրինաբար։
5 C չիք 5—10։ A Ըզվայր զանկեալ։ BD Զվայրանգեալ։ A բնութիւնըս։ B յարութեամբ ը՛։ A նորացոյց փխ նորոգեալ։
6 B Գերայգոյն։

8 B որդոց։
9 D չիք ը՛։ A ըզԲէլիար։
10 D զօրաց։
11 A տիէզերս։ BC որդոց։
12 C Քաջալերեցարուք փխ Քաջըս լերուք։ D զօրականք։
13 C չիք 13—18։ D զօրացան։
15 A Զմըկըրտութիւն։
16 A զյոյսն որ ի Տէր։
17 A Զսաղաւարտըն։
18 CD Եւ զբանըն կենաց անդ փայլեցուցին փխ տողի:
19 C մարտն։ A դիմէին։
20 A արձանս։ D դրին փխ եդին։
21 B Յարոյց փխ Յորոց։ D մին այսօր։
23 C Գեորգեոս։
24 C պտուղ։

Խորհրդական անուանն եղեւ արդիւնաւոր,
Գործեաց զերկիրըս բանաւոր յոյժ հըմտաւոր։

Ի մէջ մըտեալ կռապաշտութեանըն խաւարի,
Լուսապայծառ աստղըս ծագեաց ի յաշխարհի։

Յարքայական հանդէս Հռովմայ մեծ քաղաքի
Ի մէջ կացեալ վըկայ անուանըն Քրիստոսի։

Հիացեալ յոյժ որըք տեսին զզինուորն արի,
Մարտեան ընդ նա պէսպէս երկամբըք վըտանգի։

Նախ ի քերումն ըզսուրբն ածին ի կախանի,
Զմարմինըն զուարթ որպէս ըզվարդ կարմիր ներկեալ։

Եղբարորդւոյն եղեւ նըման շքեղազարդեալ,
Պայծառացեալ սպիտակափայլ եւ կարմրացեալ։

Նըման փըրկչին զկողըն տիգին մատուցանէր,
Սուրն ամաչեալ յամբիծ յանձնէն յետս ընկըրկէր։

Դարձեալ ի հուր ողջակիզեալ պատարագէր,
Ամաչեցեալն ի Բաբելոն աստ շիջանէր։

Այլ սուրբ վըկայն ի վաստակոցն ոչ նահանջէր,
Որպէս ըզՏէրըն մեր ի խաչ կախեալ լինէր։

25 B խորըրդական։ C խորհրդական։
26 C հմտաւոր։
27 C մտեալ կռապաշտութեանն։
28 B լուսայպայծառ։ D աստեղս։
29 C Հռոմա։
30 C չիք Ի։ C վկա։
31 C չիք 31—32։ A չիք յոյժ։ BD որք։
32 B նայ։ A որպէս փխ պէսպէս։ A երկամբք։ B վըտանկի։
33 A յուսանցքում՝ ճատվածաբաժանման նշան [ ]։ C գերումըն։ D գերումն։ C զսուր-
րն։ A կախաղանի։
34 BD Մարմինըն։ C Զմարմինն։ A ներկեալ ուղղված՝ ներկին։
35 C չիք 35—36։ D եղբօրորդւոյն։ B շքեղայզարդեալ։
37 C փրկչին ըզկողն։
38 A յանբիծ անձնէն։ C ի յետըս կրկներ փխ յետս ընկըրկէր։
40 A անդ փխ աստ։
41 BD եւ փխ սուրբ։ C չիք սուրբ։ C վկայն։
42 C ըզՏերն։ AC խաչն ի կախ փխ խաչ կախեալ։



Դասք հրեշտակաց ակումբ զնովաւ շուրջ պարփակէր,
Զայն ի յերկնից ըզնահատակըն քաջ պըննդէր։

Ի յանիւն ապա ածեալ սուրբըն տանջէր,
Հոլանելով սուրբ աղաւնին վիրաւորէր։

Այլ որ զվըկայն ընդ փորձանացըն պըսակէր,
Վաղվաղակի ի չար վիրացըն բըժըշկէր։

Հիացումըն մեծ ըզկռապաշտսըն պաշարէր,
Ի գուբ կըրոյն արկեալ զվըկայն սաստիկ տանջէր։

Յանկալին ի հրեշտակաց ողջագուրէր,
Անտի ելեալ ի հանդիսի տեղին դիմէր։

Վըկայ խաչին Գէորգէոս բարձըր գոչէր.
— Ո՞վ յիմարեալք խաւարամածք, զլոյսըս տեսէք։

Յաղթեալ նորին բըռնաւորին դէմքն այլայլէր,
Եւ ի զըղջումն այրն ապառում երբէք չմիտէր,

Այլ ի յաւարտ զնահատակին հանդէսն ածէր
Եւ սրով ըզսուրբ գըլուխ գառինըն հատանէր։

Անուշահոտ զենմանըն հոտ յերկինս բուրէր,
Հոտոտելով երկնաւորին կամքըն հաճէր։

43 C չիք 43—44։
44 B քաչ ուղղված՝ շուրջ։
45 B ապայ։ C սուրբն։
46 B Հոլանելովն։ D Հոլովելով։
47 C ըզվկայն։ C փորձանացն պսակեր։ B պսակէր։
48 C վիրացն բժըշկեր։
49 C Հիացումն։ A զկռապաշտսըն։ C ըզկռապաշտսն։
50 C զվկայն։
51 C հրըշտակաց։ B ողջայգուրէր։
53 B Վըկա։ C Վկա։ C Գեորգիոս բարձր։
54 B զլոյսըն։
55 A դէմն։
56 C զղջումն։ A այն փխ այրն։
58 A Սըրով փխ Եւ սրով։ C գլուխ գառինն։
59 C Անոյշահոտ։ A զենման սուրբ հոտն։ C զենմանն։

Միջնորդ զանուն Նահատակին մեզ պարգեւէր,
Զոր կոչելով ի յաւգնութիւն սատ առաքէր։

Բարեխաւս միշտ տաւնողաց ըզսա շնորհէ
Եւ աշխարհի պարգեւատու տընաւրինէ։

Աստուածութեան ի մէնջ առիթ փառատրութեան,
Որ զաւրացոյց զվըկայն, աւրհնեմք միշտ յափտեան։

62 D յօգնութիւն։ C առաքել։ D առաքէ։
63 B Բարէխաւս։ D Բարեխօս։ B տաւնաւղաց։ C տաւնողացս։ D տօնողաց ։C զսայ։
64 D տընօրինէ։
65 D Աստուածութեանն։
66 D զօրացոյց։ C զվկայն։ D օրհնեմք։

68

## ՃԺԳ. ՈՂԲ ՄԵԾԻ ՈՒՐԲԱԹՈՒՆ

Աստուածածին սըրբուհին,
Ամէնաւրհնեալ տիրուհին
Կայր առ խաչին Յիսուսի
Եւ արտասուէր տըրտմալի։

Գոչէր ձայնիւ աղետի.
Զքանսն, որ ասէր սոսկալի,
Շարժէր զամէն կենդանի
Յողբս եւ ի կոծըս բանի.

— Յիսո՛ւս, որդի անձկալի,

**Աղբյուրներ**.

A—ձեռ. № 6495, թերթ 252բ—253բ։
B—ձեռ. № 8251, թերթ 209բ—211բ։
C—ձեռ. № 8108, թերթ 108բ—110ա։
D—ձեռ. № 5936, թերթ 267բ—268բ։
E—ձեռ. № 7888, թերթ 236ա—237բ։
F—ձեռ. № 671, թերթ 8բ—10ա (Վիեննա). տե՛ս «Հանդէս ամսօրեայ» 1910, № 12, էջ 376—377։

**Խորագիր**

A Ողբ Աստուածածնին։ B Տաղ զանձիս։ C տե՛ս վերևում: D Տաղ Աւագ Ուրբաթին ասա։ E Տաղ ի տէր Ներսէ[սէ]։ F Ողբ (տպագրում՝ Տաղ Աւագ Ուրբաթի)։

**Բնագիր**

1 E Աստուածածին։ CD սըրբուհի։ E սրբուհին։
2 CD տիրուհի։
4 E արտասուէր։
5 BD աղէտի։
6 BC Զքանն։
7 AEF մըսեղի փխ կենդանի։
8 ACF Յողբ։ E կոծս։
9 A անձկալի։ D անկձկալի։

Իմ միածին բաղձալի,
Ընդէ՞ր կաս մերկ ի խաչի
Եւ բեւեռեալ ի փայտի։

Սիրտըս խոցեալ կըսկըծի,
Աղիք ծնողիս գալարի,
Զքեզ տեսանեմ ծարաւի
Արբեալ քացախ եւ լեղի։

Եղուկ է մայրըս կուսի.
Զինչ որ կամիմ չկատարի.
Ո՞վ տայր ինձ ջուր ըմպելի
Արբուցանել զիմ որդի։

Ո՛վ հոլոնեալ քահանայք,
Եւ չարագործ պաշտաւնեայք,
Պիղատոսի չար զինուորք,
Դասքըն հրէից սպասաւորք,

Ընդ ո՞ր մեղաց արարիք,
Զայս փոխարէն հատուցէք,
Զկողըն տիգաւ խոցեցիք,
Զբեւեռսն ի ձեռսըն հարիք։

Յեգիպտոսէ զձեզ փըրկեաց,

---

11 D խաչին։
12 E փա փխ փայտի։
13 B կսկծի։ D կըսկծի։
14 A ծնօղիս։ CD ծնաւղի ։
16 E զլեղի։
17 DF մօրըս։
19 E տայ։ AEF յամանի փխ ըմպելի։ D ըմբելի։
21 F հոլանեալ։
22 BC չարասէր։ D պաշտաւնայք։ F պաշտօնեայք։
23 AEF զինուորք։
24 ABCD Դասըն փխ Դասքըն։ E Դասն։
25 ABCEF արարէք։
26 F Զայդ։
27 ACDE խոցեցէք։ B Զբեւեռսն ի ձեռսն հարէք փխ տողի։
28 D Զբեւեռն։ D ձեռըն։ C հարէք։ B Զկողըն տիգաւըն խոցէք փխ տողի։
29 C չիք 29—40։



Զծովըն Կարմիր պատառեաց,
Ըզփարաւոնն ընկըղմեաց,
Զձեզ ի Նմանէ ազատեաց։

Զեզ հաց յերկնից պարգեւեաց,
Մանանայիւ կերակրեաց,
Ջուր ի վիմէն ձեզ բըղխեաց
Երկոտասան վըտակաց։

Զի՞նչ գործեցիք, անաւրէնք,
Զար ընդ բարւոյ փոխարէն,
Փարիսեցիք եւ դըպիրք
Եւ քահանայք չար ժըպիրհք։

---

31 B Եւ զփարաւոն։ DEF Ըզփառաւոն։ E ընկղմեաց։
32 E Նըմանէ։
35 F վիմէ։ AD բըխեաց։
36 B Երկոյտասան։
37 B քահանայք փխ անաւրէնք։ A անաւրէն։ D անօրէնք։ F անօրէն։
38 ABE բարոյ։ D բարո։
39 BD Սադուկեցիք փխ Փարիսեցիք։ E Փարիսեցից։ D դըպիրրք։
40 B Եւ դատաւորք անաւրէնք փխ տողի։ D Եւ դատաւորք չարք եւ լիրբք փխ տողի։ E ժըպիրքհք։

23—1024

## Փ Ո Խ

*Ո՜վ Սիմէոն ծերունի,*
*Ահա բան քո կատարի,*
*Սիրտըս սըրով խոցոտի,*
*Աղիք ծնողիս գալարի:*

*Աչացըս լոյս իմ որդի,*
*Մեծ մըխիթար իմ սըրտի,*
*Կուսի կաթամբ սընուցի*
*Եւ մաւր գըթով գըգուեցի.*

*Թագաւորել յուսայի*
*Ըստ աւետեացն, որ առի,*
*Արդ տեսանեմ ի խաչի,*
*Եւ մաւրս աղիք խարշատի:*

*Թող արեգակն խաւարի,*
*Եւ լոյս լուսնին նըւաղի,*

---

**Խորագիր** A *Փոխէ զձայն ողբիս:* BEF **անխորագիր:** C *Յորդորակ է այս Տիրամաւրն Աստուածածնի:* D *Փոխէ:*

41 D *ծերոնի:*
42 B *Ահայ:*
43 A *սիրով:* BF *սրով:* E *սըրւով:*
44 F *'ի աղիք:* A *ծնօղիս:* CD *ծնաւղիս:* E *ծնողիս աղիքս:* F *ծընողիս:* D *կատարի* **փխ** *գալարի:*
45 E *Աչացս:*
46 BE *մխիթար:* AC *սրտի:*
48 F *մօր:* C *գրկաւըս բարձի* **փխ** *գըթով գըգուեցի:* D *գըթով գըթով:* E *գըգւեցի:*
49 B *մընայի* **փխ** *յուսայի:*
51 F *խաչին:*
52 AF *մօրս:* E *մաւր աղիքս:* AF *խորովի* **փխ** *խարշատի:*
54 B *Եւ եւ:* BE *լուսին:* A *նուաղի:*



*Երկիր հիմամբ շարժեսցի,*
*Վէմք ի վիմաց պատառին:*

*Ողորմեցէք գերելոյս,*
*Աշխարեցէք զեղկելիս,*
*Վա՜յ ասացէք ծընողիս,*
*Խաչեալ իմ Աստուածորդիս:*

*Պատասխանեաց Յիսուսի*
*Աստուածամաւրն եւ Կուսի,*
*Անապական ծընողի,*
*Մաքուր եւ սուրբ տաճարի.*

*— Դու իմ խորան սըրբութեան*
*Եւ առագաստ մաքրութեան,*
*Դու իմ տաճար բնակութեան*
*Անճառ Բանիս մարդկութեան.*

*Դու մի՛ տըրտմիր, բերկրալի,*
*Զքեզ ոչ թողից յաշխարհի,*
*Արդ, Յովհաննէս քեզ որդի,*
*Իմ աշակերտ սիրելի:*

---

55 F *հիմամբք:* A *սարսեսցի* **փխ** *շարժեսցի:* D *թող շարժի* **փխ** *շարժեսցի:* F *սասանի* **փխ** *շարժեսցի:*
56 CD *վիմէդ* **փխ** *վիմաց:* ABDEF *պատառի:*
57 D **չիք** *57—84:*
58 C *Աշխատեցէք:* F *'ի աշխարեցէք:*
59 A *ծընօղիս:* BC *Անմխիթար (C Անմըխիթար) ծընողի (C ծընաւղիս)* **փխ տողի:**
60 B *զիմ:*
62 A *Աստուածամօրն:* C *Աստուածամաւր:* F *Աստուածամօր:* F *իւր* **փխ** *եւ:*
63 AC *ծընաւղի:* E *ծընօղի:*
64 C *Սուրբ եւ մաքուր:*
65 AE *սրբութեան:*
66 BC *Դու իմ տաճար բնակութեան* **փխ տողի:**
67 BC *Դու առագաստ մաքրութեան* **փխ տողի:**
68 A *բանի մարթկութեան:*
69 AC *տրտմիր:*
70 B *ի մարմնի* **փխ** *յաշխարհի:*
71 AE *Յոհանէս:* BC *Յոհաննէս:*
72 B **չիք** *սիրելի:*

Վասն այնորիկ ես իջի,
Որ մեծ խորհուրդ կատարի,
Մահուամբ խաչիս սոսկալի
Յանցանք նախնոյն քաւեսցի։

Ով որ խաչիս հետեւի,
Պաշտել ըզսա յաւժարի,
Յիմ գալըստեանն երկրորդի
Նա ընդ աջմէ իմ դասի.

Փառաց լիցի արժանի
Եւ արդարոցն երամի,
Փառաւորել զիս ընդ Հաւր
Եւ ընդ Հոգւոյն ճըշմարտի։

---

73 BCE այսորիկ։
75 A Մահւամբ։ E Մահմամբ։ B խաչի։
76 BE ջընջեսցի փխ քաւեսցի։
77 C չիք 77—84։ B հետեւեսի։
78 E զսա։ F յօժարի։
79 E իմ։ B յերկրի փխ երկրորդի։
81 BE չիք 81—84։
83 A Հօր։
84 A Հոգոյն ճշմարտի։



69

## ՃԺԴ. ՏԱՂ ԾԱՂԿԱԶԱՐԴԻՆ

Խորհուրդ հայրենի աւանդ,
Աւանդ նոյնազոյ արփին,
Արփւոյն նախատես դիտին
Սէր ոսկեփողոյն վառեալ։

Վառեալ հոգեհոս հընչիւն
Խիտ անտառապատ մայրեաց,
Ձայն քաղցրանըւագս առնէր
Տաւիղս որոտման թընդիւն։

---

**Աղբյուրներ**

A—ձեռ. № 7785, թերթ 196ա—197ա։
B—ձեռ. № 3503, թերթ 123ա—124ա։
C—ձեռ. № 79, թերթ 350բ—351ա (Փարիզ)։
D—ձեռ. № 80, թերթ 132բ—133բ (Փարիզ)։
E—ձեռ. № 2061, թերթ 112ա—113բ։
F—ձեռ. № 2541, թերթ 225ա—227ա։

**Խորագիր**

A Այլ տաղ Գալստեան Տեառն յաւանակաւ յԵրուսաղէմ, Ծաղկազարդին։ B Այլ տաղ Գալըստեան Տեառն, Ծաղկազարդին։ C Այլ տաղ Գալըստեան։ D Տաղ Գալստեան Տեառն յԵրուսաղէմ, Ծաղկազարդին։ E Տաղ Գալստեանն Տեառն յԵրուսաղէմ, յաւր Արմաւեննեաց։ F տե՛ս վերևում:

**Բնագիր**

2 CE արփոյն։
3 ACDEF Արփոյն։
4 AB ոսկէփողոյն։ EF ոսկէփողեան։
5 AB հոգէհոս։ F ոսկէհոս փխ հոգեհոս։ C հնչիւն։
6 C անդառապատ։
7 C քաղցայնուագս։ EF քաղցրանուագս։ F մայրեաց առնէր։
8 ABD ցընդիւն։ C ցնդիւն։

Վազս երագընթաց գոյիւք
Լերանց հովանեաւ բարձանց,
Հրափայլ երփնասուր հովտի
Բըլուր կընդըրկի դիմաց։

Տարփող աւետեաց հընչիւն
Բարբառ սրովբէեան դասուց,
Առ քեզ, սուրբ Սիոն դըշխոյ,
Պար թեւասքաւղեալ խըմբից։

Ցընծա՛ ծաղկազարդ զարմաւք
Ի գոյն շուշանի պըճնեալ,
Հարսնարան վեհին հրաշից
Թագ արքայ եկեալ փեսայ։

Հանգոյն քառակերպ աւդոյն
Կառս յաւանակի նըստեալ,
Սաւառնատարած թեւաւք
Հրաձորձ տարածեալ ցընդմամբ։

Դիմեալ յեդեմեան ղիտէն
Ճեմ հարաւային գոլով,

---

**9** EF *գայիւք*։
**11** C **չիք** *11—14*։ EF *11—14*-**րդ տողերը 16-րդ տողից հետո:** BD *Հրազարդ*։ D *երփնազաւր*։ EF *Հրաշազարդ ծաղկազարդ հովտից* **փխ տողի:**
**12** EF *դիմից*։
**14** AE *սրոբէեան*։ DF *սրովբէականս*։
**15** EF *15—16*-**րդ տողերը 11-րդ տողից առաջ:** AE *Սիովն*։ C *դըժխոյ*։
**16** AD *թեւասքողեալ*։ F *թեւասքաւղ*։ C *խմբից*։ EF *խըմբիցն*։
**17** C **չիք** *17—18*։ AD *Ցընծայ*։ EF *զարմիւք*։
**19** CEF *վերին* **փխ** *վեհին*։ E *հրաշիւք*։ F *հրաշիւքն*։
**20** E *արքա*։ D *փառաւք* **փխ** *փեսայ*։ E *փեսա*։
**21** EF *Հանկոյն*։
**22** E *Ի կառըս*։ F *Ի կառս*։ C *նստեալ*։
**23** C **չիք** *23—28*։ F *Սաւառնայտարած*։
**24** ABD *Հրաշձորձ*։ E *Հնաձորձ*։ F *Հնայձորձ*։ EF *ցընդիւ*։
**25** D *Դիտեալ* **փխ** *Դիմեալ*։
**26** F *Ճեմեալ*։



Ժողով յոգնահոյլ խըմբից
Խիտ առ խիտ դիմիւ ելեալ։

Ջոստս արմաւեննեաց հատեալ,
Տերեւ ձիթենեաց ընծայս
Այն նորոգողին հընոյն,
Այն թագաւորին նըւէրս։

Աստ եբրայեցւոց մանկունքն
Ջերգըս սրովբէիցն առեալ,
Հեթանոսական դասուցն
Տաւնակից վեհիցն եղեալ։

**ՓՈԽ**

Յայս նոր աւետեաց աւուրս
Երկիրս պանծացեալ բերկրի,
Ծով գարնանաշարժ ալեաւք.
Ծով երկնատարած ծըփի։

Դաշտ կարմրավարդից վառեալ
Կանաչ սաղարթից թերթից,

---

**27** EF *ժողովք*։ AE *յոքնահոյլ*։ B *յոքնայհոյլ*։ E *խըմբիցն*։ F *խըմից*։
**28** F *Խիտ առ խիդ*։ EF *դիմի*։
**29** DE *Ջոստ*։ EF *արմաւենոյ*։
**30** CF *ընծայ*։
**31** C **չիք** *31—32*։ EF *թագաւորին մեծի* **փխ** *նորոգողին հընոյն*։
**32** E *նորոգողին* **փխ** *թագաւորին*։ E *նուէրս*։ F *նըւէր*։
**33** EF **լուսանցքում՝** *Փ[ոխ]*։ C *եբրայեցոյց*։ DEF *եբրայեցոց*։
**34** C *Ջերգս*։ A *սրոբէիցն*։ C *սրոբեիցն*։ EF *քրովբէիցն*։
**35** B *դասուց*։
**խորագիր** ABCD *Փ[ոխ]*։ EF **անխորագիր:**
**37** EF *մեծ* **փխ** *նոր*։
**38** C *բերկի*։
**39** F *գարնանայշարժ*։
**40** BF *երկնայտարած*։ C *ծփի*։
**41** C *կարմավարդից*։ EF *կարմիր վարդով* **փխ** *կարմրավարդից*։
**42** BCE *Կանաչ*։ E *սաղարթեալ*։ F *Կանաչայսաղարթեալ* **փխ** *Կանաչ սաղարթից*։

*Հընչիւն նըւագի բարբառ.*
*Ովսաննա՜, ալրհնեալ, որ գաս։*

*Զսա նահապետաց տեսեալ,*
*Պետ իշխանական եկեալ,*
*Սա նախագուշակ դաւթեան*
*Յաւէտազըւարճ լերանց։*

*Սա Զաքարիաս քարոզ*
*Թագաւոր ի նոյն եկեալ,*
*Նոյն ալրհներգութիւն միշտ Հաւր*
*Նոյն համագոյեան Բանին։*

*Յաւէտ էութեան Հոգւոյն,*
*Երրեակ միութեան միոյն*
*Սմա միշտ երգեսցուք ըզփառս*
*Այժմ եւ յաւիտեանս, ամէն։*

---

43 E *Նուագի։*
44 CF *Ովսաննայ։* F *եկեալ* փխ *որ գաս։*
45 B *Զսայ։* E *Սա։* F *Սայ։*
47 F *Սայ։* EF *Դաւթի։*
48 A *Աւետազըւարճ։* BCD *Աւետազուարճ։* EF *Յաւէտազուարճ ձայնիւ* փխ տողի:
49 BF *Սայ։* B *Զաքարիայ։* EF *Զաքարիային։*
50 EF *Երրեակ միակի միոյ* (E *միա*) փխ տողի:
51 F *Նոր* փխ *Նոյն։*
52 A *համագոյէն։* C *համայգոյ եին։* D *Բանի։*
53 CF *Հոգոյն։*
54 EF չիք *54—55։*
55 A *Սըմա։* C *զփառս։*



## ՃԺԴա. ՏԱՂ ԾԱՂԿԱԶԱՐԴԻՆ, Ի ՆԵՐՍԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԷ ԿԼԱՅԵՑՈՅ

*Ոստս արմաւենեաց հատեալ,*
*Տերեւ ձիթենեաց առեալ,*
*Այն նորոգողին բերեալ,*
*Թագաւորին ընծայեալ։*

*Աստ եբրայեցւոց մանկունքն*
*Զերգըս սրովբէից առեալ,*
*Հեթանոսական դասուքն*
*Տաւնակից վերնոցն եղեալ։*

*Յայս նոր աւետեաց աւուրս*
*Երկիրս պանծացեալ բերկրի,*
*Ծով գարնանաշարժ ալեաւք,*
*Ծով երկնատարած ծըփի։*

---

**Աղբյուրներ**

A—*ձեռ. № 2672, թերթ 128ա։*
B—*ձեռ. № 473, թերթ 124ա։*

**Խորագիր**

A տե՛ս վերևում: B *Տաղ և մեղեդի անոյշ, հասկացողի։*

**Բնագիր**

1 B չիք *1—4։*
2 A *Տէրեւ։*
3 A *նորոգաւղին։*
5 A *եբրայեցոց։* B *մանկունք։*
6 B *սրովէից։*
7 B *դասուց։*
8 B *եղեալ վեհից* փխ *վերնոցն եղեալ։*
12 B *Ծիծաղածաւալ ծըփի։*

*Դաշտ կարմիր վարդով վառեալ,*
*Կանաչ սաղարթիւք թերթեալ*
*Շրնչիւն նըւագի բարբառ.*
*Ովսաննա՜, աւրհնեալ, որ գաս։*

*Ջաս նահապետաց տեսեալ,*
*Պետ իշխանական եկեալ,*
*Սա նախագուշակ Դաւթի*
*Յաւէտազըւարճ լերանց։*

*Սա Զաքարիայն քարոզ,*
*Թագաւոր քո հեզ եկեալ.*
*Նոյն աւրհներգութիւն միշտ Հաւր,*
*Նոյն եւ համագոյ Հոգւոյն։*

---

13 A*Դաշտք։* A *վարդեօք։*
14 B *սաղարթ թերթիւ։*
15 A *Հընչիւ։* A *առեալ* փխ *բարբառ։*
16 A *եկեալ* փխ *որ գաս։*
17 A *Զսայ։*
19 A 19—20-րդ տողերի փոխարեն՝
*Սայ նախ Դաւթի գուշակեալ,*
*Լերինք բարձունք զուարճացեալ։*
21 A *Զաքարիաս քարոզեալ* փխ տողի։
22 B *Երրեակ միակի միոյն* փխ տողի։
23 A 23—24-րդ տողերի փոխարեն՝
*Նոյն Երրորդութեան եւ մի*
*Փա՜ռք ի յաւիտեանս, ամէն։*



## 70

## ՃԺԵ. Ի ՍՈՒՐԲ ԿԱՅԵՆ ՀՌԻՓՍԻՄԷ

*Հանճարեղ շնորհալիդ ընտրեալ է,*
*Յարքայից հըզօրաց զարմէ է,*
*Մեզ պարգեւ ի տանէն Լատինէ.*
*Հրեշտակ հրաշագեղ Հռիփսիմէ։*

*Ռահահորդ ուղեւոր երկնընթաց,*
*Օրինաց երկնայնոցն խորագգաց.*
*Ուրացեալ զանձն եւ զփառս հայրենեաց.*
*Հրեշտակ հրաշագեղ Հռիփսիմէ։*

*Իմաստուն սուրբ կուսան գերյարգոյ,*
*Հրով Բանին ի յերկիր արկելոյ*
*Վառեցեր ըզլապտեր հաւատոյ.*
*Հրեշտակ հրաշագեղ Հռիփսիմէ։*

*Փեսային Քրիստոսի մարմնացեալ,*
*Անապակ կուսութեամբ հարսնացեալ,*
*Յառագաստ անմատոյց բազմեցեալ.*
*Հրեշտակ հրաշագեղ Հռիփսիմէ։*

*Սիրասնունդ սիրամարգ սըխրալի,*
*Նըրբափայլ ոսկէթել տարփալի*
*Ծոպասակ իւղագլուխ ցանկալի.*
*Հրեշտակ հրաշագեղ Հռիփսիմէ։*

---

**Աղբյուր**
Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 474—475։*
**Ծայրակապ՝** *1. Հռիփսիմէ (տների սկզբնատառեր)։*
*2. Յօհաննէս (տների երկրորդ տողերի սկզբնատառեր)։*

*Իսկաճեմ աղաւնի օդապար,*
*Նոր Նոյեան տապանն է քոյդ դադար,*
*Օձասպան արագիլ դու արդար.*
*Հրեշտակ հրաշագեղ Հռիփսիմէ։*

*Մրտաւոր մարտիրոս մրցական,*
*Էական Բանին Հօր զօրութեան,*
*Լիակոխ քաջութեամբ ըղհընձան.*
*Հրեշտակ հրաշագեղ Հռիփսիմէ։*

*Է գումեղ թաթաւեալ ի բոսոր,*
*Սաղարթուն կարմրորակ իբր խընձոր,*
*Հարսն ազնիւ դու արեամբ քօղաւոր.*
*Հրեշտակ հրաշագեղ Հռիփսիմէ։*

# ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ՑԱՆԿԵՐ

# ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1

### Ա. ՆՈՐ ԵՐԿԻՆՔ ՅԵՐԿՐԻ... *(էջ 3)*

*Հրատարակված է.*

ա. **Ներսես Շնորհալի,** *Բանք չափաւ, էջ 366։*

*Բոլոր աղբյուրներում Ներսես կաթողիկոսի անունով է։ Ներսեսը հիշված է նաև ծայրակապում։ Բնագիրը ներկայացված է երկտող տներով, ընդ որում, անզույգ տողերը 10 վանկանի են, զույգ տողերը՝ 5։ Անհանգ է։ Բնագրի համար օգտագործված աղբյուրներից երկուսում* (A, B) *տաղն ամբողջական է, իսկ* C-*ն և* D-*ն ունեն լոկ 1—12-րդ և 45—46-րդ տողերը։* A *ձեռագրում պահպանված է բանաստեղծության նաև մեկ այլ ընդօրինակություն (թերթ 54աբ), որն իր ծավալով ու բովանդակությամբ նմանվում է* CD-*ին. հետաքրքրականն այն է, որ հիշյալ միավորը հատկացված է ոչ թե Ավետյաց, այլ Ծննդյան տոնին (է օրվան). պիտի ենթադրել, որ տաղի համառոտումը ոչ թե պատահականության արդյունք է, այլ կատարված է որոշակի նպատակով։*

*Տաղի ամբողջական օրինակն ունի* **Իմանալի սերովբէ...** *փոխը, իսկ համառոտ տարբերակը կա՛մ առանց փոխի է (օրինակ* D-*ում), կա՛մ կից ունի տարբեր միավորներ. օրինակ՝* A-*ն ունի* **Ցրնծա դու շուշան...** *փոխը, իսկ* C-*ն՝* **Աւր է աւետեաց...**։

### Բ. ԻՄԱՆԱԼԻ ՍԵՐՈՎԲԷ... *(էջ 6)*

*Հրատարակված է.*

ա. **Ա. Տեկանց,** *Հայերգ, էջ 7։*

բ. *«Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1947, № 1, էջ 46—49 (հրատ.՝ Ն. Ակինյան)։*

գ. *«Էջմիածին», 1967, Դ, էջ 30 (հրատ.՝ Արսեն վրդ. Բերբերյան)։*

*Հայտնի է նաև այլ ձեռագրերից և ներկայանում է գերազանցապես իբրև փոխ։ Բնագիրը ներկայացված է քառատող տներով. կազմված է 7 վանկանի տողերից. հանգավորված է զույգ տողերով, երբեմն՝ նաև տներով (7-րդ և 9-րդ տներ)։* A *օրինակի յուրաքանչյուր տան վերջին տողը կրկնված է, իսկ* C-*ն չորրորդ տան վերջում այդ մասին ունի համապատասխան նշում (տե՛ս բնագրի տողատակային տարընթերցումները)։ Հետաքրքրական է, որ նշված օրինակի չորրորդ տունը (սկ.՝* **Մայր կենդանեացըն...**) *ունի կարմիր սկզբնատառ։ Ձեռագրերում հաճախ այդ տողից սկսվող հատվածը ներկայանում է իբրև ուրույն միավոր. այդպես են, օրինակ,* D-*ն և Ա. Տեկանցի հրատարակածը. վերջինս ունի* **Տաղ անուշ և լաւ** *խորագիրը և «Մեծին Թորոսի» ծայրակապը, որով Թորոսը թյուրիմացաբար համարվել է տվյալ միավորի հեղինակը։*

Ձեռագրերում բանաստեղծությունը ներկայանում է գերազանցապես իբրև փոխ, իսկ երբեմն՝ իբրև տաղ։ A և B օրինակները փոխ են ու կից Նոր երկինք յերկրի... տաղին, իսկ D-ն (նույնպես փոխ)՝ Աստուածածին մայր լուսոյ... տաղին։ C օրինակը տաղ է և ներկայանում է Աստվածածնի վերափոխմանը հատկացված մի գանձի (սկ.՝ Սատանաբնեալ...) տարնթեր։

Ն. Ակինյանին հայտնի է եղել սույն փոխի ու կից գտնվող տաղի A օրինակը, բայց ընդօրինակությունը ձեռքի տակ չունենալով, հրատարակել է Վիեննայի № 663 ձեռագրում (E օրինակ) գտնվող փոխի ամբողջական բնագիրը, որի երկրորդ մասը (սկ.՝ Մայր կենդանեացըն...) նա համեմատել է Հր. Աճառյանի ընդօրինակած՝ Թավրիզի № 43 ձեռագրում գտնվող օրինակի հետ (էջ 349ա)։ Մեր կազմած քննական բնագրում օգտագործել ենք Ն. Ակինյանի ներկայացրած տարբերակը, առանց հաշվի առնելու բնագրում իր կատարած շտկումները և միջամտությունները։ Փոխն ամբողջությամբ հրատարակված է նաև «Էջմիածին» ամսագրում, սակայն անկախ համապատասխան տաղից և իբրև ուրույն միավոր, ընդ որում, վերջին երկու տողերը (սկ.՝ Դու շուշան ծաղիկ...) մեկ այլ բանաստեղծության սկիզբ են ու սխալմամբ են կցված վերոհիշյալ տաղին (տե՛ս Արսեն վրդ. Բերբերյան, Ս. Ներսես Շնորհալու անտիպ տաղերը, «Էջմիածին», 1967, Դ, էջ 30)։

Խնդրո առարկա փոխի և կից ներկայացող տաղի ծայրակապային շղթան կազմում է մեկ ամբողջական նախադասություն՝ «Ներսէսի գովեստ Աստվածածնի ի խնդրո Մեծին Թորոսի ե», որտեղ հիշվող Թորոսը, ինչպես իրավացիորեն նկատել է տալիս Ն. Ակինյանը, պիտի լինի Կիլիկիայի իշխան Լևոնի որդի Թորոսը։ Հայտնի է, որ Լամբրոնի տեր Օշին իշխանի և Թորոսի միջև ծագած գժտությունը հարթելու նպատակով Ներսես Շնորհալին անձամբ ուղևորվել է նրանց մոտ. անհավանական չէ, ուրեմն, որ տվյալ բանաստեղծությունը գրված լինի հենց Թորոս Բ իշխանի խնդրանքով, որը կոչվել է Մեծն Թորոս և հայտնի է եղել նաև իր բարեպաշտությամբ ու իբրև «շինող եկեղեցեաց և վանորէից» (տե՛ս Ղ. Ալիշան, Շնորհալի և պարագայ իւր, էջ 316)։

2

### Գ. ՆՈՐ ԾԱՂԻԿ ՑՈՒՑԱՒ... (էջ 9)

Հրատարակվում է առաջին անգամ։

Գրեթե բոլոր աղբյուրներում պահպանված է Ներսես կաթողիկոսի անունով։ Ներսեսը հիշված է նաև ծայրակապում։ Բնագիրը ներկայացված է եռատող տներով. առաջին տողը 13—14 վանկանի է, երկրորդ տողը՝ 6 վանկանի, երրորդ տողը՝ 8 վանկանի։ Բանաստեղծական չափը անկայուն է. անհանգ է, բայց մերթ (հատկապես տների երկրորդ և երրորդ տողերում) նկատվում է հանգի առկայություն։ Մեր օգտագործած աղբյուրներում տաղը կից ունի Այսաւր ցընծութիւն... փոխը, բացառությամբ C-ի, որը պահպանված է թերի ու զուրկ համապատասխան փոխից։

### Դ. ԱՅՍԱՒՐ ՑԸՆԾՈՒԹԻՒՆ... (էջ 11)

Հրատարակվում է առաջին անգամ։

Մեզ հայտնի բոլոր աղբյուրներում ներկայանում է իբրև փոխ։ Բնագիրը ներկայացված է երկտող տներով, անզույգ տողերը 9 վանկանի են, զույգ տողերը՝ 12 վանկանի, իսկ 8, 9 և 10-րդ տներում՝ ընդհակառակը։ Նկատելի են բանաստեղծական չափի մասնակի խախտումներ. անհանգ է։ Մեր օգտագործած օրինակները կից են Նոր ծաղիկ ցուցաւ... տաղին։ Բանաստեղծությունն առկա է նաև № 231 (Երուսաղեմ, թերթ 387բ) ձեռագրում, որտեղ կից է Փողելով փողէր սրովբէն... տաղին (նվիրված՝ Ծննդյան տոնին)։

3

### Ե. ԱՅՍԱՒՐ ԱՒԵՏԵԱՑ ԳԱԲՐԻԵԼԻ... (էջ 13)

Հրատարակված է.

ա. Ներսես Շնորհալի, Բանք չափաւ, էջ 369—370։

Հայտնի է նաև այլ ձեռագրերից՝ № 231 (Երուսաղեմ, թերթ 367բ՝ նվիրված Ծննդյան տոնի Բ օրվան), Ma XIII 61 (Տյուբինգեն, թերթ 134ա—136ա), Cod. Arm. 52 (Լվով, թերթ 24ա)։ Բնագիրը ներկայացված է երկտող տներով, որոնցից յուրաքանչյուրն սկսվում է Այսաւր-ով։ Այդ տողերը 10 վանկանի են, մինչ զույգ տողերը՝ 8 վանկանի (9—18-րդ տողերում բանաստեղծական չափը խախտված է)։ Անհանգ է։ Մեր օգտագործած աղբյուրներում, նաև Լվովի ձեռագրում տաղը կից ունի Նոր ծաղիկ բըղխէ... փոխը։ Երուսաղեմի օրինակն ունի Երգ նոր աւետեաց բարբառ... փոխը, իսկ Տյուբինգենի ձեռագրինը առանց փոխի է և խորագրում պահպանել է հեղինակի անունը՝ Ներսես Շնորհալի։

### Զ. ՆՈՐ ԾԱՂԻԿ ԲԸՂԽԷ... (էջ 15)

Հրատարակված է.

ա. Ներսես Շնորհալի, Բանք չափաւ, էջ 370—371։

բ. Ա. Տեկանց, Հայերգ, էջ 1—2։

Հայտնի է նաև այլ ձեռագրերից։ Հետագայի ընդօրինակություններում գերազանցապես տաղ է։ Այդպես է ներկայացված նաև Ա. Տեկանցի հրատարակածը։ Բանաստեղծությունը չի տնատված. 12 վանկանի տողեր են (3-րդ տողը 14 վանկ է)։ Անհանգ է։ Մեր օգտագործած աղբյուրներում փոխ է ու կից՝ Այսաւր աւետեաց Գաբրիելի... տաղին, բացառությամբ F-ի. վերջինս տաղ է և կից ունի փոխ՝ Անմահից արփայն...։ D օրինակը տաղից չի անջատված, բայց ունի ընդգծված սկզբնատառ և ստորին լուսանցքում «Արևագալին յորդորակին ձայն է» նշումը, որով ակներև է դառնում հիշյալ միավորի իբրև փոխ ներկայացված լինելու փաստը։ № 231 (Երուսաղեմ, թերթ [369]) ձեռագրում այն դարձյալ փոխ է, բայց կից է Ողջոյն սիրալիր... միավորին։

4

### Է. ԱՅՍԱՒՐ Ի ՍԿԶԲԱՆ... (էջ 17)

Հրատարակվում է առաջին անգամ։

Հայտնի է նաև այլ աղբյուրներից ու հատկացված է Ծննդյան տոնի տարբեր օրերի, օրինակ, ձեռ. № 8251 (թերթ 33բ, Ծննդյան Դ օրվան), 231 (Երուսաղեմ, թերթ 377բ, Ծննդյան Դ օրվան), Ma XIII 61 (Տյուբինգեն, թերթ 139բ—140բ, Ծննդյան Բ

օրվան), Cod. Arm. 52 (Լվով, թերթ 29ա, Ծննդյան Ա օրվա երեկոյին)։ Ներսես կաթողիկոսի անունը պահպանել են A և D, ինչպես նաև Լվովի օրինակները։ Բնագիրը ներկայացված է երկտող տներով, որոնցից յուրաքանչյուրն սկսվում է Այսաւր-ով։ Կազմված է 13 վանկանի տողերից։ Անհանգ է։ Մեր օգտագործած օրինակները (բացառությամբ E-ի) ունեն Նոցին համաձայնեալ... փոխը։ E-ն ունի Մայր Աստուծոյ Մարիամ... փոխը։ № 8251 ձեռագրում տաղն առանց փոխի է, իսկ Երուսաղեմի օրինակը կից ունի Իսկ դու ընդէ՞ր ես... միավորը։

## Ը. ՆՈՑԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԵԱԼ... *(էջ 19)*

*Հրատարակվում է առաջին անգամ։*

*Առկա է նաև № Ma XIII 61 (Տյուբինգեն) ձեռագրում։ Բնագիրը չի տնատված։ 10—11 վանկանի տողեր են։ Անհանգ է։ Որպես կանոն կից է Այսաւր ի սկզբան... տաղին։ C օրինակն անխորագիր է, բայց լուսանցքում ունի փոխի նշան ( ։ ), իսկ D-ն տաղից չի անջատված։*

## 5

## Թ. ՆՈՐ ԵԴԵՄ ԲԱՆԱՒՈՐ... *(էջ 20)*

*Հրատարակված է.*

ա. Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 371—372։*

բ. «Սիոն», *1867, № 1, էջ 14։*

գ. Ա. Տեկանց, *Հայերգ, էջ 6։*

դ. «Սիոն», *1949, № 3, էջ 63 (հրատ.՝ Ն. Ծովական)։*

*Հայտնի է և այլ ձեռագրերից։ Հատկացված է Ծննդյան տոնի տարբեր օրերի (գերազանցապես Բ օրվան)։ Հանդիպում է նաև իբրև Ավետյաց տաղ, դարձյալ ըստ օրերի։ Ի տարբերություն Ծննդյան տոնի, Ավետումը օրերի չի բաժանվում, և եկեղեցին այն տոնում է որոշակի օր՝ ապրիլ 7-ին։ Հնում, սակայն, այդ երկու տոները սերտորեն առնչվել են միմյանց. օրինակ, Աստվածահայտնության Ճրագալույցի օրը նվիրված է եղել Ավետմանը. վերջինիս մասին հիշատակվում է հատկապես Ծննդյան չորրորդ օրը, որովհետև, ըստ ավանդության, Աստվածածնի ավետումը տեղի է ունեցել չորեքշաբթի մի օր (տե՛ս Գ. Ավետիքյան, Բացատրութիւն շարականաց, Վենետիկ, 1814, էջ 26—27։ Նաև՝ Մ. Օրմանյան, Ծիսական բառարան, Անթիլիաս, 1957, էջ 14)։ Այսպիսով, տվյալ տաղի խորագրում Ավետյաց տոնի մասին եղած հիշատակությունը ամենևին չի խանգարում, որպեսզի տվյալ միավորը համարվի Ծննդյան տաղ։ Բանաստեղծությունը հաճախ ներկայանում է Ներսես կաթողիկոսի անունով, որն առկա է նաև ծայրակապում։*

*Բնագիրը ներկայացված է քառատող տներով. կազմված է 8 (անզույգ տողերը) և 10 (զույգ տողերը) վանկանի տողերից, անհանգ է։ Մեր օգտագործած աղբյուրներում տաղն ունի Մայր Աստուծոյ Մարիամ... փոխը, բացառությամբ E-ի և 1830 ու 1882 թթ. հրատարակությունների (ա և գ), որոնք վերջից թերի են և փոխ չունեն։ 1867 թ. հրատարակությունը (բ) ամբողջական է, նվիրված է Ծննդյան տոնի ութերորդ*



*օրվան. հրատարակիչը չի նշում՝ տվյալ օրինակը ձեռագրում փոխ ունի՞, թե ոչ։ Հայկազյան բառարանում այդ բացակայող հատվածի* օղամանուած, ռակերտեա *բառերի բացատրության համար օգտագործված են քաղվածներ հենց հիշյալ միավորից. նշանակում է, բառարանագիրներին ևս հայտնի է տաղի ամբողջական օրինակը։ Բնագրի համար օգտագործված 1949 թ. հրատարակությունը նույնպես լրիվ է (F), բայց առանց փոխի։*

## Ժ. ՄԱՅՐ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԱՐԻԱՄ... *(էջ 22)*

*Հրատարակված է.*

ա. Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 367—368։*

բ. P. Vetter, Nerses Schnorhali's Kirchenlieder, „Theol. Quartalschrift", Ravensburg (Tübingen), LXXXI (1899), Heft 1, p. 89—111 *(տե՛ս «ՀԱ», 1899, № 1, էջ 27—28)։*

*Սովորաբար փոխ է. հանդիպում է նաև որպես Ավետյաց կամ Ծննդյան տաղ, օրինակ՝ տպագրում և № 9053 ձեռագրում (թերթ 19ա)։ Բնագիրը ներկայացված է քառատող տներով. կազմված է 7 վանկանի տողերից, հանգավորված է ըստ տների։ Բնագրի համար օգտագործված ձեռագրերում կից է* Նոր եդեմ բանաւոր... *տաղին։ D-ում յուրաքանչյուր տան վերջում կա նշում տողը կրկնելու մասին (տե՛ս տողատակի տարընթերցումների համապատասխան բացատրությունը)։*

## 6

## ԺԱ. ԱՆՃԱՌ Է ԽՈՐՀՈՒՐԴ... *(էջ 25)*

*Հրատարակվում է առաջին անգամ։*

*Տաղն առկա է նաև № Ma XIII 61 (Տյուբինգեն, թերթ 138ա—139բ) և № 231 (Երուսաղեմ, թերթ 379ա) ձեռագրերում։ Տյուբինգենի օրինակը հատկացված է Ծննդյան առաջին օրվան (երեկոյին), իսկ Երուսաղեմի օրինակը՝ Ծննդյան հինգերորդ օրվան։ Ներսես կաթողիկոսի անունը պահպանված է A-ի խորագրում։*

*Բնագիրը չի տնատված. կազմված է 10 վանկանի տողերից, անհանգ է։ Բնագրի համար օգտագործված ձեռագրերից երեքում (B, C, D) տաղն առանց փոխի է։ A օրինակը կից ունի* Նորահրաշ ծննդեան քո... *փոխը, իսկ Երուսաղեմի օրինակին կից առկա է* Ցընծա դու շուշան... *միավորը։*

## 7

## ԺԲ. ԾԱԳՈՒՄՆ ՅԱՐՓՒՈՅՆ... *(էջ 28)*

*Հրատարակվում է առաջին անգամ։*

*Հայտնի է նաև այլ ձեռագրերից՝ №* Cod. Arm. *52 (Լվով, թերթ 33բ, Ծննդյան Գ օրվան) և №* Ma *XIII 61 (Տյուբինգեն, թերթ 141ա—142ա, Ծննդյան Բ օրվա երեկոյին)։ Հեղինակի անունը պահպանված է A-ի խորագրում* (Ներսիսի Կլայեցւոյ) *և Լվովի օրինակում* (ի Ներսիսէ կաթողիկոսէ)*։ Բնագիրը ներկայացված է երկտող տնե-*

րով. կազմված է 8—9 վանկանի տողերից, բայց բանաստեղծական չափը հաճախ խախտված է. գրված է տների շղթայումով, անհանգ է։ Բոլոր օրինակները կից ունեն **Ծրգ նոր առեալ...** փոխը։

### ԺԳ. ԵՐԳ ՆՈՐ ԱԻԵՏԵԱՑ... (էջ 30)

Հրատարակված է.
ա. **Ներսես Շնորհալի**, Բանք չափաւ, էջ 374—375։
բ. **P. Vetter**, Nerses Schnorhali's Kirchenlieder... (տե՛ս «ՀԱ» 1899, № 1, էջ 27—28)։

Հայտնի է նաև այլ ձեռագրերից. ներկայանում է և՛ իբրև փոխ, և՛ իբրև տաղ. ծայրակապը հոդում է Ներսեսի անունը։ Բնագիրը ներկայացված է երկտող տներով. կազմված է 12 վանկանի տողերից, անհանգ է։ ABC-ն, նաև Վիեննայի ու Տյուբինգենի օրինակները ներկայանում են իբրև փոխ ու կից՝ **Ծագումն յարփւոյն...** տաղին։ DEF օրինակները տաղ են։

**8**

### ԺԴ. ԱՍՏՈՒԾՈՅ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆՑԸՆ.. (էջ 32)

Հրատարակվում է առաջին անգամ։
Հայտնի է նաև № Ma XIII 61 (Տյուբինգեն, թերթ 142բ) և № Cod. Arm. 52
(Վիեն, թերթ 34բ) ձեռագրերից։ Հեղինակի անունն առկա է A-ի խորագրում (տեառն Ներսիսի), իսկ միևնույն օրինակի ստորին լուսանցքում (թերթ 28ա) պահպանված է ավելի ամբողջական ձևով՝ **Ներսիսի Կլայեցւոյ ասացեալ**։ Բնագիրը ներկայացված է քառատող տներով. կազմված է 11 վանկանի տողերից (5, 7, 20-րդ տողերը՝ 10 վանկանի), անհանգ է։ Բոլոր օրինակները կից ունեն **Իսկ դու ընդէ՞ր ես խռովեալ...** փոխը։

### ԺԵ. ԻՍԿ ԴՈՒ ԸՆԴԷ՞Ր ԵՍ ԽՌՈՎԵԱԼ... (էջ 34)

Հրատարակվում է առաջին անգամ։
Հայտնի է նաև այլ ձեռագրերից, օրինակ՝ № Ma XIII 61 (Տյուբինգեն), № 231 (Երուսաղեմ, թերթ 377բ)։ Ներկայանում է գերազանցապես իբրև փոխ։ ABCD-ն, ինչպես և Տյուբինգենի ու Վիեննայի օրինակները կից են **Աստուծոյ ողորմութեանցըն...** տաղին, F-ը՝ **Երգ նոր առեալ...**ին, իսկ Երուսաղեմի օրինակը՝ **Այսաւր ի սկզբան...** տաղին։ Միայն E-ն է հանդես գալիս իբրև տաղ։ Բնագիրը ներկայացված է քառատող տներով, իսկ վերջում ունի երկտող մի տուն՝ որպես ավարտ. կազմված է 11—12 վանկանի տողերից. անհանգ է։

**9**

### ԺԶ. ԱՅՍԱՒՐ ԱՒԵՏԵԱՑ ՁԱՅՆ... (էջ 36)

Հրատարակվում է առաջին անգամ։
Հայտնի է նաև № Ma XIII 61 (Տյուբինգեն, թերթ 144ա—145ա) և № Cod. Arm. 52 (Վիեն, թերթ 36ա) ձեռագրերից։ Վիեննայի օրինակը ևս խորագրում պահպանել է



հեղինակի անունը՝ **ի Ներսիսէ կաթողիկոսէ**։ Բացի այդ, Հայկազյան բառարանում **առեարացուցանեմ** բառի համար օգտագործված է քաղված հիշյալ բանաստեղծությունից ու վերջինս դիտված է իբրև Ներսես Շնորհալու տաղ։ Պետի ենթադրել, որ բառարանագիրներին ևս հայտնի է եղել այդ անունով պահպանված տաղի մի օրինակ։

Բանաստեղծությունը, գրված լինելով տողերի շղթայումով, կարող էր չտնատվել, այսուհանդերձ, գերադասել ենք բնագիրը ներկայացնել քառատող տներով։ Այս առումով հետաքրքրական է, որ A օրինակի յուրաքանչյուր տան վերջին տողն ունի **Այլ ազգ** լուսանցային նշումը, իսկ C օրինակը՝ **Փ[ոխ]**։ Սա ենթադրել է տալիս, որ յուրաքանչյուր քառատողի հետ փոխվել է եղանակը կամ կատարման ձևը։ Տաղը կազմված է 12 կամ 13 վանկանի տողերից։ Մեզ հայտնի աղբյուրներում տաղին կից առկա է **Բարբառ աւետեաց ձայնիւ...** փոխը, բացառությամբ A-ի, որն ունի այլ փոխ՝ **Ողջոյն ընդ քեզ, Մարիամ...**։

### ԺԷ. ԲԱՐԲԱՌ ԱՒԵՏԵԱՑ ՁԱՅՆԻՒ... (էջ 39)

Հրատարակված է.
ա. **Ներսես Շնորհալի**, Բանք չափաւ, էջ 365—366։
բ. **P. Vetter**, Nerses Schnorhali's Kirchenlieder... (տե՛ս «ՀԱ», 1899, № 1, էջ 27—28)։

Հայտնի է նաև այլ ձեռագրերից, օրինակ՝ № Ma XIII 61 (Տյուբինգեն), Cod. Arm. 52 (Վիեն, թերթ 36ա), 424 (թերթ 15բ)։ Ձեռագրերի մեծ մասում սույն բանաստեղծությունը փոխ է և կից՝ **Այսաւր աւետեաց ձայն...** տաղին։ № 424 ձեռագրում և տպագրում ներկայանում է իբրև տաղ, ընդ որում, առաջինում նվիրված է Ծննդյան հինգերորդ օրվան, իսկ տպագրում՝ Ավետյաց տոնին։ Ծայրակապը հոդում է հեղինակի անունը. գրված է հայրենի չափով, անհանգ է։ Քննական բնագիրը չի տնատված։

**10**

### ԺԸ. ԼՈՅՍ ՓԱՌԱՑ ԷԻՆ... (էջ 41)

Հրատարակվում է առաջին անգամ։
Հայտնի է նաև № Cod. Arm. 52 (Վիեն, թերթ 38ա) ձեռագրից ու կրկին հատկացված է Ծննդյան տոնի հինգերորդ օրվան։ Այս, ինչպես նաև D օրինակը խորագրերում պահպանել են հեղինակի անունը (**ի Ներսիսէ կաթողիկոսէ**)։ Բացի այդ, որոշ բառերի (նախեղակ, ստորակայ, փառազարդեալ) բացատրության համար Հայկազյան բառարանում բերված են քաղվածներ հենց հիշյալ բանաստեղծությունից, որը ներկայացված է իբրև Ներսես Շնորհալու հեղինակություն. նշանակում է, բառարանը կազմողներին ևս հայտնի է տաղի՝ Ներսես Շնորհալու անունով պահպանված մի օրինակ։

Բնագիրը ներկայացված է քառատող տներով. գրված է ազատ տաղաչափությամբ, ուստի կատարված է իմաստային տողատում, իսկ տնատման համար ելակետ ենք ընդունել տների շղթայումը. անհանգ է։ BCD օրինակները, նաև Վիեննայի օրինակը կից ունեն **Նոր բազուրին...** փոխը։ A-ն ինքն է ներկայանում իբրև փոխ ու կից է **Էին միայնոյ միածին...** տաղին։

## ԺԹ. ՆՈՐ ԹԱԳԱՒՈՐԻՆ... *(էջ 43)*

*Հրատարակված է.*
ա. Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 376—377։*
*Սովորաբար ներկայանում է իբրև փոխ, երբեմն նաև իբրև տաղ կամ մեղեդի։*
*Բնագիրը չի տնատված. կազմված է 14 վանկանի տողերից (առաջին տողը՝ 13 վան-*
*կանի). անհանգ է։* BCD *օրինակները, նաև Լվովի օրինակը կից են* Լոյս փառաց էին...
*տաղին։* A-*ն կից է* Քերովբէից գերագոյն...-*ին, իսկ № 424 ձեռագրում (թերթ 22ա)*
*բանաստեղծությունը ներկայանում է իբրև Ծննդյան մեղեդի։*

**11**

## Ի. ՏԻՐՈՒՀԻ ՍՈՒՐԲ ԿՈՅՍ... *(էջ 44)*

*Հրատարակվում է առաջին անգամ։*
*Հայտնի է նաև № 231 (Երուսաղեմ, թերթ 383բ), №* Ma *XIII 61 (Տյուբինգեն,*
*թերթ 147բ) և №* Cod. Arm. *52 (Լվով, թերթ 39ա) ձեռագրերից։* D-*ն և Լվովի օրի-*
*նակը խորագրում պահպանել են հեղինակի անունը* (ի Ներսիսէ կաթողիկոսէ):
*Բացի այդ, Հայկազյան բառարանում* ճիւսակ *բառի բացատրության համար օգտագործ-*
*ված է քաղված խնդրո առարկա տաղից և վերջինս հիշված իբրև Ներսես Շնորհալու*
*ստեղծագործություն. Նշանակում է, բառարանագիրներին ևս հայտնի է սույն միա-*
*վորի՝ Ներսես Շնորհալու անունով պահպանված մի օրինակ։*
*Բնագիրը ներկայացված է քառատող տներով. կազմված է 11 վանկանի տողերից,*
*անհանգ է։ Տնատման համար նկատի ենք ունեցել նաև ծայրակապի առանձնահատ-*
*կությունը, որն արտահայտում է այբուբենի տառերը («Տ—Ք»), ընդ որում, յուրա-*
*քանչյուր տառ կրկնված է մեկընդմեջ տողերում։ Ծայրակապային նման պատկեր է*
*ներկայացնում Ներսես Շնորհալու նաև մեկ այլ տաղը՝* Անեղ Որդին Հաւր միածին...
*(«Ա—Ք» ծայրակապով), որտեղ, սակայն, տառերից յուրաքանչյուրը կրկնվում է ոչ*
*թե մեկընդմեջ, այլ ամեն տողում, իսկ բանաստեղծությունը կազմված է 12 վանկանի*
*տողերից։ Բոլոր աղբյուրներում տաղին կից ներկայանում է* Անճառ Բանին... *փոխը,*
*բացառությամբ* D-*ի, որը փոխ չունի։*

## ԻԱ. ԱՆՃԱՌ ԲԱՆԻՆ ԲԱՐՁՐԵԼՈՅՆ... *(էջ 46)*

*Հրատարակվում է առաջին անգամ։*
*Հայտնի է նաև № 231 (Երուսաղեմ), №* Ma *XIII 61 (Տյուբինգեն) և №* Cod.
Arm *52 (Լվով) ձեռագրերից։ Բոլոր աղբյուրներում ներկայանում է իբրև փոխ։*
*Բնագիրը ներկայացված է քառատող տներով. կազմված է 7 վանկանի տողերից.*
*անհանգ է։ Բոլոր աղբյուրներում կից է* Տիրուհի սուրբ Կոյս... *տաղին, բացառությամբ*
D-*ի, որը կից է* Սկզբնազարդ գոյից ստեղծողն... *միավորին։*

**12**

## ԻԲ. ԷԻՆ ՄԻԱՅՆՈՅ ՄԻԱԾԻՆ... *(էջ 48)*

*Հրատարակվում է առաջին անգամ։*
*Հայտնի է նաև №* Ma *XIII 61 (Տյուբինգեն, թերթ 149բ—151ա) ձեռագրից, ուր*
*հատկացված է Ծննդյան տոնի հինգերորդ օրվա երեկոյին։* D *օրինակը խորագրում*
*պահպանել է հեղինակի անունը* (ի Ներսիսէ կաթողիկոսէ):



*Բնագիրը ներկայացված է երկտող տներով։ Յուրաքանչյուր տան առաջին տողը*
*10 վանկանի է, իսկ երկրորդ տողը՝ 14 վանկանի, բայց բանաստեղծական այդ չափը*
*կայուն չէ. գրված է տների շղթայումով, անհանգ է։* BCD *օրինակները կից ունեն*
Նորահրաշ ծնընդեան Ճո... *փոխը, իսկ* A-*ն՝* Լոյս փառաց էին... *միավորը։*

## ԻԳ. ՆՈՐԱՀՐԱՇ ԾՆԸՆԴԵԱՆ ՔՈ... *(էջ 50)*

*Հրատարակված է.*
ա. Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 375—376։*
*Հայտնի է նաև այլ ձեռագրերից. գերազանցապես ներկայանում է իբրև փոխ։*
*Ծայրակապը հոդում է հեղինակի անունը։*
*Բնագիրը ներկայացված է քառատող տներով. կազմված է 7 (երբեմն՝ 8) վանկա-*
*նի տողերից. անհանգ է։* BCD *օրինակները կից են* Էին միայնոյ միածին... *տաղին,*
*իսկ* A-*ն՝* Անճառ է խորհուրդ... *տաղին։ Տպագրում, նաև № 424 ձեռագրում (թերթ*
*21ա) սույն միավորը ներկայանում է իբրև Ծննդյան տաղ։*

**13**

## ԻԴ. ՍԿԸՍԵԱԼՆ ՅԱՆԸՍԿԻԶԲՆ... *(էջ 52)*

*Հրատարակվում է առաջին անգամ։*
*Հայտնի է նաև №* Cod. Arm. *52 (Լվով, թերթ 40բ) ձեռագրից, որտեղ հատ-*
*կացված է Ծննդյան տոնի է օրվան։ Հեղինակի անունն առկա է* C-*ի խորագրում* (ի
Ներսիսէ կաթողիկոսէ), *նաև Լվովի օրինակում* (ի Ներսիսէ): *Բնագիրը չի տնատված.*
*կազմված է 13—14 վանկանի տողերից, անհանգ է. գրված է տողերի շղթայումով։*
*Բոլոր աղբյուրներում տաղին կից առկա է* Տէր փառաց անճառ... *փոխը։*

## ԻԵ. ՏԷՐ ՓԱՌԱՑ ԱՆՃԱՌ... *(էջ 53)*

*Հրատարակված է.*
ա. Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 372—374։*
բ. **P. Vetter**, Nerses Schnorhali's Kirchenlieder... *(տե՛ս «ՀԱ» 1899, № 1, էջ 27—28)։*
*Հայտնի է նաև այլ ձեռագրերից։ Սովորաբար ներկայանում է իբրև փոխ, մերթ*
*նաև՝ իբրև տաղ։ Երբեմն հատկացված է Ծննդյան տոնի երրորդ օրվան։ Ծայրակապը*
*հոդում է հեղինակի անունը։ Բնագիրը ներկայացված է երկտող տներով. կազմված է*
*13 վանկանի տողերից, անհանգ է։* ABC *օրինակները կից են* Սկըսեալն յանըսկիզբն...
*տաղին, իսկ* D-*ում և տպագրում ներկայանում է իբրև Ծննդյան տաղ և առանց փոխի։*

**14**

## ԻԶ. ԱՅՍՕՐ ՅԸՆԾԱՆ ԴԱՍՔ... *(էջ 55)*

*Հրատարակվում է առաջին անգամ։*
*Հայտնի է նաև №* Cod. Arm. *52 (Լվով, թերթ 44բ) ձեռագրից, ուր նվիրված է*
*Ծննդյան տոնի ութերորդ օրվան։ Հեղինակի անունն առկա է* AD (ի Ներսիսէ), B (Ներ-
սիսի կաթողիկոսի) *օրինակներում, նաև Լվովի ձեռագրում* (Ներսիսի):

Բանաստեղծությունը կազմված է 8 վանկանի տողերից (չափը երբեմն խախտվում
է), անհանգ է. բաժանվում է չորս մասերի, ընդ որում, յուրաքանչյուրի սկզբի մի
քանի տողերը մեկընդմեջ սկսվում են Այսաւր բառով. դրան հաջորդում է ուղղակի
խոսք բովանդակող և ամբողջական միտք արտահայտող մի հատված. ըստ այդմ էլ,
քննական բնագիրը ներկայացված է ոչ հավասար տներով, տնատման համար ելակետ
ընդունելով խնդրո առարկա տաղի հիշյալ առանձնահատկությունը: Սովորաբար իբրև
փոխ ներկայանում են բանաստեղծության մասերը, որոնք կազմում են երեք միավոր
(սկ.՝ 1. Այսաւր ցընծայ տունն..., 2. Այսաւր անմեղըն..., 3. Այսաւր Հոգւովն...):
Բնագրում տաղի ու փոխերի հարաբերությունը ցույց է տրված սատղանիշով և Փոխ
ենթախորագրով, իսկ իմաստային ամբողջականությունն առավել ակներև դարձնելու
համար այդ չորս մասերից յուրաքանչյուրը ներկայացրել ենք երկու առանձին տնե-
րով (բացառությամբ փոխերից վերջինի, որն ունի միայն Այսաւր սկսվածքով հատ-
վածը): Փոխերից առաջին երկուսը առանձին ենթախորագրով ներկայանում են D
օրինակում, իսկ երրորդը՝ C-ում: A օրինակը համապատասխան հատվածների համար
(20, 57 և 78-րդ տողեր) ունի Այլ ազգ լուսանցային նշումը, իսկ E-ն՝ կարմիր
սկզբնատառ: Հիշյալ օրինակները այդ նշումներն ունեն նաև 10, 39 և 66-րդ տո-
ղերին կից՝ ցույց տալու համար, որ այդ հատվածներում պետք է փոխվի եղանակը
կամ կատարման ձևը:

A օրինակը կից ունի նաև Այսաւր ի սուրբ յայրին... փոխը, իսկ E օրինակը՝
Դու շուշան ծաղիկ... հորդորակը: Հիշյալ միավորներից ոչ մեկը Ներսես Շնորհալուն
վերագրելու հիմք չունենք:

## 15

## Իէ. ՔԱՌԱՆՈՒԹԻՑԸՍ ԱՍՏՈՒԱԾ... (էջ 61)

Հրատարակվում է առաջին անգամ:
Հեղինակի անունը պահպանված է D-ի խորագրում (ի Ներսիսէ): B օրինակի
Նորին նմին ի նոյն խորագիրը ևս նկատի ունի Ներսես Շնորհալուն, որովհետև ձեռա-
գրում նախորդող տաղը (Այսաւր ցընծան դասք... սկսվածքով) Ներսես կաթողիկոսի
անունն է կրում: Բնագիրը ներկայացված է քառատող տներով. կազմված է 11 վան-
կանի տողերից, անհանգ է: B և C օրինակները կից ունեն Նոյն իճճն անդրանիկըն....
փոխը: A-ին կից Մըկըրտիչն Յիսուսի... փոխն է, իսկ D-ն, որը թերի է (պահպան-
ված են 1—12-րդ տողերը), ունի Կոյսն ի յայրին... փոխը: E օրինակն անխորագիր
է և առանց փոխի: Ծայրակապը, որ հոդում է այբուբենի տառերը հետադարձ ձևով,
մնում է թերի՝ «Ք—Ջ» (պակասում են Հ—Ա տառերը), այնուամենայնիվ, բանաստեղ-
ծությունն ունի ավարտ ազդարարող վերջնատող:

Ձեռագրերում հանդիպում է նման մեկ այլ տաղ՝ Հոսեալ հրեղինացըն... սկսված-
քով, որը հետադարձ ձևով հոդում է «Հ—Ա»: Բանաստեղծությունը հայտնի է շատ
աղբյուրներից, հատկացված է Աւագ հինգշաբթի օրվան, կազմված է 11 վանկանի
տողերից, անհեղինակ է ու գերազանցապես ներկայանում է իբրև տաղ (սովորաբար
կից ունենալով Ընդ երեկոյս հասեալ ժամուն... փոխը): Ծայրակապային ու տաղա-
չափական ընդհանրությունը այդ տաղն առնչում են Ներսես Շնորհալու վերոհիշյալ
բանաստեղծությանը: Նրանք միմյանց անհարազատ չեն նաև բովանդակությամբ և



կարող էին սկզբնապես ներկայացած լինել իբրև մեկ օրգանական ամբողջություն:
Այն, որ երկուսն էլ ունեն որպես ավարտ հանդես եկող վերջնատողեր, չի բացառում
նման ենթադրությունը, քանի որ մեզ հայտնի են հենց Ներսես Շնորհալու գրչին պատ-
կանող այլ ոտանավորներ, որոնք նման ձևով կոտորակվել են ու հատկացվել տարբեր
տոների: Հնարավոր է նաև, որ հիշյալ երկու տաղերից յուրաքանչյուրը սկզբնապես
հորինված լինի իբրև ուրույն և ամբողջական ոտանավոր՝ «Ք—Ա» ծայրակապով: Առ-
այժմ ձեռագրական տվյալները մեզ բավարար հիմք չեն տալիս որոշակի եզրահան-
գումների համար, ուստի հարկ համարեցինք հիշյալ տաղի քննական բնագիրը ներ-
կայացնել այստեղ:

### ՏԱՂ ԱՒԱԳ ՀԻՆԳՇԱԲԱԹԻՆ

Հոսեալ հրեղինացըն հաւաքեալ կային,
Ջաւրըք զըւարթնոցն ի սպաս եկեալ փըրկչին.
Կերպարան եւ կնիք Հաւր սահման եւ բան
Կամաւ խոնարհեալ մեզ ի խընդիր եկեալ:

Ծով ծարաւելոց, աղբիւր կենաց Քրիստոս
Ընտրեաց յաշխարհէ զերկոտասան եղբարսն.

---

**Աղբյուրներ**

A—ձեռ. № 7785, թերթ 210 աբ:
B—ձեռ. № 3503, թերթ 138բ—139բ:
C—ձեռ. № 79, թերթ 355աբ (Փարիզ):
D—ձեռ. № 80, թերթ 144բ—145ա (Փարիզ):
E—ձեռ. № 9053, թերթ 44ա—45ա:

**Խորագիր**

A Տաղ Մեծի Հինգշաբաթոջ աւուրն: B Փ[ոխ]: C Այլ տաղ նմին աւուր երեկոյին
[Մեծի Շաբաթին]: D Այլ տաղ նմին աւուր, յետ Ոտնալուային ասի և բաղարջ ուտի:
E Տաղ Աւագ Հինկշաբաթին:

**Ծայրակապ**՝ Հ—Ա (հետադարձ):

**Բնագիր**

1 C հրեղինացն: E կաին:
2 B Ջաւրէք: C հըրշտակացն փխ զըւարթնոցն: E հրեշտակացն փխ զըւարթնոցն: CE փրկչին:
3 B նոյն սահման:
4 CE խնդիր: ABD եւեալ փխ եկեալ:
5 A աղբեւր: D աղբերն:
6 BCE Ընդրեաց: C յաշխար ձեզ երկոյտասան: E երկոտասան: A զեղբարսն: D եղ-բարրսն: E զեղբարս:

Խրատէր վերըստին, խոստանալով պարգեւս
Ջերկնից մեծութիւն զանեզրական բարիսն։

Լըքեալ լուծանէր մինն ի յընտրեալ հաւտէն,
Լինէր բնակարան լեգէոնեան զաւրացն.
Ի հրաւէր ընթրեացն ի վերնատունն եկեալ,
Առեալ լըրբութեամբ զպատառն եւ ել արտաքս։

Ժողովէր յանձն իւր ըզնենգութեան խորհուրդն,
Փութով հասանէր ի հրէական ժողովն,
Թողեալ ի սըրտէն զաստուածային զերկիւղն,
Զահ վառեալ ի յորս արարողին երթայր։

Ընկալեալ փըրկչին ըզնենգութեան համբոյրն.
— Ընկե՛ր, վասն որոյ առաքեցար,— ասէ.
Ելեալ բարձրանայր ի Գողգոթայ տեղւոջ.
Երեւեալ ի կառըս քառաթեւ խաչին։

Զարհուրեալ զաւրաց երկնաւորաց խըմբից,
Զանհասն ի բարձունս ի սիրտ երկրի տեսեալ,
Եղկելի եղեն անդընդային իշխանքն,
Եկեալ թագաւորն եւ ազատեաց զգերեալսն։

Դասապետն երկնից երեքաւրեայ յարեաւ,

---

7 E վերստին։ D զպարգեւս։
8 E զմեծութիւն։ E բարիս։
9 CE Լքեալ։ C յնդրեալ։ E յընդրեալ։
10 A լեգէովնեան։ E լեգէհոն։
11 C ընդրեացն ուղղված՝ ընթրեացն։
12 CE լրբութեամբ։
13 CE զնենգութեան։
15 C սրտե։ E սրտէն զաստուածային։ CE երկեղն։ D զերկիղն։
16 C արարաւղին։ A փութայր փխ երթայր։ E երթար։
17 BE Ընգալեալ։ B փըրկիչն։ C փրկիչն։ E փրկչին։ C զնոնգութեան։ E զնենկութեան։
18 E Ընգեր։
19 A Էլեալ։ ACD բարձրանայ։ E յայն փխ է։ E Գողգոթա։ B տեղոյն։ CE տեղւոջ։
20 CE կառս։
21 B խըմբիցն։ C խմբիցն։ E խմբից։
22 E Զարարիչն երկնից փխ Զանհասն ի բարձունս։
23 E անդընդային։ DE իշխանք։
24 E զգերեալս։
25 BD երեքաւրեա։ E երեգաւրեայ։



Դրաւքըն փակելովք առ աշակերտսն եմուտ,
Գունդք առաքելոցն ի ծովակին կային,
Գիշերամըրրիկ աշխատութեամբ տըքնեալ։

Բարեաց առաւաւտըն գայր յաճախ որսաւք՝
Բանի նիշ մեղու խորհուխ տըւեալ եղբարցն,
Առատաձեռնեաց Տէրն ի Բեթանիայ,
Աւրհնեաց զաշակերտսն եւ համբարձաւ առ Հայր։

Արդ, աւրհնեալ է Հայրն եւ համագոյ Որդին,
Հոգին ճըշմարիտ այժմ յաւիտեանս, ամէն։

*Ձեռագրերում հանդիպում է մի փոխ՝* Լքեալ լուծանէր... *սկսվածքով, որը սովորաբար կից է* Սկիզբն համայնից... *տաղին (տե՛ս ձեռ. № 7785, թերթ 212բ. 3503, թերթ 137ա. 231 (Երուսաղեմ), թերթ 442բ.* Cod. Arm. *52 (Լվով), թերթ 133բ)։ Հետաքրքրական է նկատել, որ* Լքեալ լուծանէր... *ոտանավորի որոշ տողեր առկա են և սույն փոխում. վերջինս ևս հատկացված է Ավագ Հինգշաբթի օրվան, նույնպես կազմված է 11 վանկանի տողերից, բայց զուրկ է ծայրակապից։ Պետք է ենթադրել, որ հիշյալ փոխը շարադրվել է* Լքեալ լուծանէր... *տաղի նմանողությամբ. ուստի, հարկ ենք համարում այստեղ տալ այդ փոխի բնագիրը՝ կազմված № 7785 և 3503 ձեռագրերում գտնվող օրինակների հիման վրա.*

### ՓՈԽ

Լըքեալ լուծանէր մինն ի յընտրեալ գառանցն,
Լինէր բնակարան նախաչարին կամացն.

---

26 B Դրաւքնըն։ E Դրաւքն։ CE փակելաւք։
28 C Գիշերայմարտիկ։ D Գիշերամարտիկ։ E Գիշերամրրիկ։ CE տքնեալ։
29 CE առաւաւտն։ E գար աճախ որսով։
30 E Բանին։ E մեղո։ CE տուեալ։ D առեալ փխ տըւեալ։
31 C Առատայձեռնեաց։ A Բեթանիա։ BE Բեդանիայ։
32 E Ընդրեաց փխ Աւրհնեաց։ E զաշակերտս։
33 E աւր փխ աւրհնեալ է։ E Հայր։
34 CDE Հոգոյն (D Հոգւոյն) ճշմարտի (D ճըշմարտի) փառք յաւիտեանս, ամէն փխ տողի:

**Աղբյուրներ**

A—ձեռ. № 7785, թերթ 212բ—213ա։
B—ձեռ. № 3503, թերթ 137աբ։

**Խորագիր**

AB Փ[ոխ. Մեծի Հինգշաբաթին]։

**Բնագիր**

1 B յընդրեալ։

Տէրըն խրատելով ըզսիրելի եղբարսն,
Յայտնելով նոցա զանհասութեան խորհուրդն։

Զարհուրեալ զաւրացն երկնաւորաց խըմբից,
Զանհասն ի բարձունս ի մահ մատնեալ հրէից,
Առեալ Յուդայի ըզհրէական ժողովն,
Փութով հասանէր ի կեդրոնեանըն ձորն։

Կապեալ կապեցաւ լուծիչն երկանց մահու,
Եղկելի եղեն անդընդային իշխանքն.
Գունդք առաքելոցըն զարհուրեալ փախեան,
Գիշերամարտիկ աշխատութեամբ կային։

Պետրոս միայնոյ ընթանալով ըզկնի.
Վէմըն հաւատոյ դըղըրդելով հոսէր.
Արագ հասանէր ակնարկելով նըմա,
Հաւրն խաւսելով զարթուցանէր ըզնա։

Ելեալ արտաքոյ արտասուալից ողբովք
Կոծեր՝ ասելով. Աւգնեա՛, Յիսուս փըրկիչ.
Առատաձեռնեաց աշակերտին իւրոյ,
Աւրինակ տըւեալ յանցաւորաց մարդկան.

— Արդ, Տէր իմ, Յիսո՛ւս, զմեղաւք մեռեալ հոգիս
Կանգնեա՛ վերըստին ընդ Պետրոսի վիմին.
Սըրբոց կենսատու, այլ եւ աղբիւր լուսոյ,
Շնորհեա՛ արտասուս ընդ Պետրոսի լալոյն։

Հրաշից միշտ գործող ձայն կենդանի, տո՛ւր մեզ
Ընթանալ ըզկնի աստուածային շաւղացդ.
Արժանի լինել ընդ անմահից դասուցն,
Փառս վերահըռնչել Երրորդութեանըդ միշտ։

---

5 B խըմպից։
6 A մատնել։
12 AB կէին փխ կային։
13 B միայնւոյ։
15 B նըմայ։
16 B ըզնայ։
18 B փըրկիչ Յիսուս։
23 A չիf այլ։ A աղբեւր։
25 B գործաւղ։
26 B ըզկընի։



### ԻԸ. ՆՈՅՆ ԻՆՔՆ ԱՆԴՐԱՆԻԿԸՆ... *(էջ C4)*

*Հրատարակված է.*

ա. Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 377—378։*

*Ներկայանում է և՛ իբրև փոխ, և՛ իբրև տաղ։ Հեղինակի անունն առկա է խորագրերում և ծայրակապում։*

*Բնագիրը ներկայացված է երկտող տներով. կազմված է 12 վանկանի տողերից, անհանգ է։* B *և* C *օրինակները կից են* Քառաճիւթիցըս Աստուած... *տաղին։* A-*ն կից է* Նոցին ճամաձայնեալ... *միավորին, իսկ* D-*ն՝* Անապական տաճար... *տաղին։* EFG *օրինակները ներկայանում են իբրև տաղ և առանց փոխի։*

### 16
### ԻԹ. ԱՅՍԱՒՐ ՆՈՐԱՀՐԱՇ ԼՈՅՍՆ... *(էջ C6)*

**Փ[ոխ]. Մըտեալ ի տաճարն...**

*Հրատարակվում է առաջին անգամ։*

*Հայտնի է նաև այլ ձեռագրերից՝* № Ma *XIII 61 (Տյուբինգեն, թերթ 157ա—158բ), № 9053 (թերթ 23բ), № 1193 (Երուսաղեմ, էջ 265)։* A-*ի խորագրում առկա է հեղինակի անունը*(ի Ներսիսէ)*, որը կրկնված է 107ա թերթի ստորին լուսանցքում։*

*Բնագիրը չի տնատված. գրված է տողերի շղթայումով. կազմված է 15 վանկանի տողերից (1—2-րդ և 13—14-րդ տողերը՝ 11 վանկանի), անհանգ է։* A *և* C *օրինակներում տաղի երկրորդ մասը, սկսած 13-րդ տողից, անջատված է իբրև փոխ։* B-*ում այդ մասը առանձին խորագրի փոխարեն ունի պարզապես կարմիր սկզբնատառ, իսկ* D-*ում տաղի ու փոխի անջատում չի կատարված (այսուհանդերձ, փոխ հատվածի սկզբնատառը առավել ընդգծված է)։ Հետաքրքրական է այն իրողությունը, որ և՛ տաղի, և՛ փոխի առաջին երկու տողերը (1—2-րդ և 13—14-րդ տողեր) իրենց բանաստեղծական չափով տարբերվում են բանաստեղծության մնացյալ հատվածից (11 վանկանի են), իսկ դա իր հերթին վկայում է, որ տվյալ միավորի իբրև տաղ ու փոխ ներկայանալու հանգամանքը գիտակցաբար է կատարված և հենց հեղինակի կողմից։ Ճիշտ այդպիսի առանձնահատկությամբ աչքի է ընկնում Ներսես Շնորհալու մեկ այլ տաղը՝* Նոր իմն է հրճչիւն...*, որը գրված է նույնպիսի տաղաչափությամբ, և տաղի ու փոխի նույնպիսի հարաբերությամբ (այն տարբերությամբ, որ ունի իմաստային ծայրակապ)։*

*Բանաստեղծության փոխ հատվածը հետագայի ընդօրինակություններում հանդիպում է նաև իբրև տաղ կամ մեղեդի (տե՛ս, օրինակ, ձեռ. № 1193 (Երուսաղեմ, էջ 265. 423, թերթ 96բ. 425, թերթ 126բ. 7902, թերթ 12բ. 5936, թերթ 258ա)։ Իբրև տաղ է ներկայանում նաև* E-*ն, որը կից ունի* Այսաւր Երուսաղէմ ցընծայ... *հորդորակը։*

A *օրինակում, հավանաբար հետագայի մի միջամտողի ձեռքով, յուրաքանչյուր տողից (բացառությամբ 1—2-րդ և 13—14-րդ տողերի) կատարված է ջնջում (քիմիական թանաքով, որով ջնջվածը հազիվ ընթեռնելի է) այն հաշվով, որ այդ տողերը ևս դառնան 11 վանկանի։ Հիշյալ ջնջումները ցույց ենք տվել բնագրի տողատակում։*

### 17
### Լ. ԱՆՄԱՀ ԹԱԳԱՒՈՐՆ... *(էջ C9)*

*Հրատարակվում է առաջին անգամ։*

Հայտնի է նաև այլ ձեռագրերից՝ № Ma XIII 61 (Տյուբինգեն, թերթ 180ա—181բ) և № God. Arm. 52 (Վիեն, թերթ 111բ)։ Հեղինակի անունը պահպանված է № 3503 ձեռագրի (տեառն Ներսիսի) և Վիենի (տեառն Ներսիսի Հայոց կաթողիկոսի) օրինակներում։ Բնագիրը չի տնատված. գրված է տողերի շղթայումով. կազմված է 12 վանկանի տողերից (բանաստեղծական չափը երբեմն խախտված է). անհանգ է։ № 3503 և Ma XIII 61 (Տյուբինգեն) ձեռագրերում տաղը կից ունի Նոր աւետեաց լուր... փոխը։ Վիենի օրինակը փոխ չունի։

## ԼԱ. ՆՈՐ ԱՒԵՏԵԱՑ ԼՈՒՐ... *(էջ 71)*

*Հրատարակված է.*

ա. Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 379։*

*Հայտնի է նաև այլ ձեռագրերից։ Գերազանցապես ներկայանում է իբրև փոխ։ Ծայրակապը հոգում է հեղինակի անունը։ Բնագիրը չի տնատված. կազմված է 10 վանկանի տողերից. անհանգ է։ B-ն և Տյուբինգենի օրինակը կից են* Անմահ բազառն... *տաղին։ № 423 ձեռագրում (թերթ 142բ), ինչպես և տպագրում, սույն միավորը հանդես է գալիս իբրև տաղ։*

## 18

## ԼԲ. ՏԻՐԱԿԱՆ ՏԱՒՆԻՒՍ... *(էջ 72)*

*Հրատարակված է.*

ա. Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 380։*

բ. P. Vetter, Nerses Schnorhali's Kirchenlieder... *(տե՛ս «ՀԱ», 1899, № 1, էջ 27—28)։*

*Սովորաբար տաղ է։ A-ն ներկայանում է իբրև փոխ ու կից է* Անեղանելին Աստուած... *մեղեդուն։ C-ն անխորագիր է, բայց նախորդող տաղն ունի* Տաղէրս ի Ներսէս կաթողիկոսի ասացեալ *խորագիրը, որը վերաբերում է նաև խնդրո առարկա միավորին։ Հեղինակի անունն առկա է նաև ծայրակապում։ Բնագիրը ներկայացված է երկտող տներով. կազմված է 12 վանկանի տողերից, անհանգ է։*

## 19

## ԼԳ. ԱՅՍԱՒՐ ԸՋՏԷՐԴ ԱՐԱՐԻՉ... *(էջ 73)*

*Հրատարակվում է առաջին անգամ։*

*Հայտնի է նաև № Cod. Arm. 52 (Վիեն, թերթ 129բ) ձեռագրից։ Հեղինակի անունն առկա է D-ի խորագրում* (ի Ներսիսէ կաթողիկոսէ)*։ Բնագիրը չի տնատված. կազմված է 13 վանկանի տողերից (մասնակի խախտումներով), անհանգ է։ Բոլոր տողերը (բացի վերջինից) սկսվում են* Այսաւր *բառով։ Բոլոր աղբյուրներում տաղին կից առկա է* Գառն անարատ... *փոխը։ Վերջինս երբեմն հանդիպում է նաև իբրև ուրույն տաղ, դարձյալ հատկացված Ավագ Չորեքշաբթի օրվան։ Բանաստեղծությունը կազմված է 7 վանկանի տողերից (երբեմն խախտված), գրված է անհանգ, բայց մերթ նկատվում է հանգ ստեղծելու միտում։ Իր շարադրանքով ու ոճով սույն փոխը խիստ անհարազատ է Ներսես Շնորհալուն, զուրկ է նաև ծայրակապից, որը կարողանար հավաստել*



*նրա հեղինակային պատկանելությունը, ուստի, առավել նպատակահարմար գտանք այդ հարցում ցուցաբերել որոշ վերապահություն և հիշյալ միավորի բնագիրը զետեղել այստեղ։*

## ՓՈԽ

*Գառն անարատ պատարագ,*
*Որ զմեզս բառնաս զաշխարհի,*
*Այսաւր ի սպանդ մատնեցար*
*Յաշակերտէն քո նենգեալ։*

*Որ քո կամաւ ընտրեցեր*
*Փոխան մարդկան չարչարիլ,*
*Զխորհուրդ մահուն յայտնեցեր*
*Նախ քան զհրէից ժողովել.*

*Ի Բեթանիայ նախ եկիր*
*Եւ ի կանանց պատուեցար,*
*Զիւղ հաւատով մատուցեալ,*
*Յաստուածեղէն գլուխդ թափեալ։*

*Ո՜վ իւղ թափեալ Տէր Յիսուս,*

---

**Աղբյուրներ**

A—*ձեռ. № 7785, թերթ 204բ—205բ։*
B—*ձեռ. № 3503, թերթ 133ա—134ա։*
C—*ձեռ. № 79, թերթ 353աբ (Փարիզ)։*
D— *ձեռ. № 80, թերթ 138բ (Փարիզ)։*
E—*ձեռ. № 6495, թերթ 240բ։*

**Խորագիր**

ABCD *Փ[ոխ]։* E *Տաղ ազնիւ։*

**Բնագիր**

*1* D *անանարատ։*
*2* E *Բառնաս ըզմեղս աշխարհի* փխ տողի:
*3* E *Այսօր։* E *վարեցար* փխ *մատնեցար։*
*5* BC *ընդրեցեր։* E *խոնարհեալ* փխ *ընտրեցեր։*
*6* ACD *չարչարել։* E *չարչարեալ։*
*7* E *մահու քո յայտնեալ* փխ *մահուն յայտնեցեր։*
*8* B *ըզհրէից։* D *զհրեից։* E *ժողովեալ։*
*9* E չիք *Ի։* A *Բեթանիա։* B *Բեդանիայ։* E *դու եկար* փխ *նախ եկիր։*
*10* E *Տան Սիմոնի բազմեցար* փխ տողի:
*11* ACD *Զեւղ։* B *Զեղ։* E *Իւղ մեծագին* փխ *Զիւղ հաւատով։*
*12* E *Աւծմամբ ի գլուխդ ընկալար* փխ տողի:
*13* E չիք *13—16։* ACD *եւղ։*

Որոյ անունդ է Աւձեալ,
Սրբոտից բնաւից սիրելի,
Որ խոնարհիս առ բաղձանս։

Միոյ սիրով արտասուաց
Թողեր ըզթիւըս չարեաց,
Որ հերով զոտս քո ջընջեաց,
Ջընջեցեր ի նմանէ զբիծ մեղաց։

Աստուած ճըշմարիտ աւձեալ.
Ի պոռնըկաց խընկեցար.
Յոյս քաւութեան մեզ ետուր
Եւ առ քեզ համարձակ արարեր։

Որ վասըն մեր, բարերար,
Ի Յուդայէ մատնեցար,
Ընդ արծաթոյ վաճառեալ,
Որ յերկինս երկնից ես բազմեալ։

Քեզ հաղորդ ընկալ չարչարնաւք,
Ջանդամս ի գլուխըդ յեցեալ,
Որք հաղորդին քո վըշտացդ
Անճառ սիրոյ բաղձանաւք։

Ընդ երջանիկ պոռնըկայս
Այսաւր եւ մեք, մարդասէ՛ր,
Իւղով սիրոյ զքեզ խընկեմք
Եւ արտասուաւք զոտսդ ջընջեմք։

---

15 B Սըրրտի։ C Սրտի։
17 C չիք 17—20։ E կամօք փխ սիրով։
18 E զպարտիս յանցանաց փխ ըզթիւըս չարեաց։
19 B Որ հերովն իւր զոտսդ ջընջեաց փխ տողի: E Իւղովն որով զքեզ աւծեաց փխ տողի:
20 E Բարձեր ըզբիծսըն չարեաց փխ տողի:
23 E Թողուլ ըզմեղս հաճեցար փխ տողի:
24 E Ջաւծումըն պարտ քեզ վարկար փխ տողի.
25 C վասն։
28 E ի յերկինսդ փխ յերկինս երկնից.
29 C չիք 29—32։ E չիք 29—48։ A չիք Քեզ։
31 B քոց։
33 B պոռընկացն։ C պոռնկացն։
35 BC ծղով։ C խնգեմք։
36 C զոտս ջնջեմք։



Ձնոյնդ համբուրիւ ընդգըրկեմք,
Որ զմեզս կոխեաց՝ ողջունեմք,
Հերով ըռփմամբ, ը՛, սըրբեմք,
Ծայրիւք զըթոց աւծանեմք։

Թողուլ ըզպարտսն հաւատամք,
Քե՛զ, որոյ կարդ է անչափ,
Նոյն եւ սիրով, Տէր, հարուստ.
Դու յողորմելն յոյժ առատ։

Խաղաղութեամբ արձակեա՛
Զմեզ ի կայանսդ անմարմնոց՝
Տալ քեզ զոհութիւն ընդ նոսին,
Այժմ եւ յաւէտ յապառնին։

## 20

### ԼԴ. Ի ՅՈՒՐԲԱԹՈՒ ՄԵԾԻ… *(էջ 74)*

*Հրատարակվում է առաջին անգամ։*

*Հայտնի է նաև №* Cod. Arm. *52 (Լվով, թերթ 142բ) ձեռագրից։ Կոչվում է նաև* ոդբ: *Հեղինակի անունն առկա է միայն* C *օրինակում* (Ներսիսի): *Բնագիրը ներկայացված է եռատող տներով, որոնցից յուրաքանչյուրի առաջին և երկրորդ տողերը 7 կամ 8 վանկանի են, իսկ երրորդ տողը՝ 12 վանկանի. անհանգ է։* ABC *օրինակները կից ունեն* Դուստր Սիոնի… *փոխը։* D-*ին կից* Ծառանցա Տէրն ի խաչին… *փոխն է, իսկ* E *օրինակը կից ունի* Շնորհաւք Սըրբոյ Հոգւոյն… *միավորը։*

### ԼԵ. ԴՈՒՍՏՐ ՍԻՈՆԻ… *(էջ 77)*

*Հրատարակվում է առաջին անգամ։*

*Այլ աղբյուրներից հայտնի չէ. ներկայանում է իբրև փոխ։ Բնագիրը ներկայացված է եռատող տներով, որոնցից յուրաքանչյուրի առաջին տողը 5 վանկանի է, երկրորդ տողը՝ 10, իսկ երրորդ տողը՝ 6 վանկանի. անհանգ է։ Բոլոր աղբյուրներում կից է* Ի Յուրբաթու Մեծի… *տաղին։*

---

37 A ըդգըրկեմք։ C ընդգրգեմք։
38 B չիք՝ տողը:
39 B տըրփմամբըս։ C տրփմանըս։ BC չիք ը՛։ C սրբեմք։
40 A Ծայրիւ գըթոյ։ C գթոց։
41 C զպարտս։
45 C արձակեայ։



25—1024

21

## ԼԶ. ԱՆԵՂ ՈՐԴԻՆ... *(էջ 81)*

*Հրատարակված է.*

ա. Ա. Տեկանց, *Հայերգ, էջ 12—14։*

*Հայտնի է մի շարք ձեռագրերից և ունեցել է մի քանի հրատարակություններ։*
*Պահպանված օրինակները միանման չեն ո՛չ իրենց ծավալով, ո՛չ էլ բովանդակությամբ.*
*համապատասխանաբար միմյանցից տարբերվում են նաև հրատարակությունները. ըստ*
*այդմ, հարմար համարեցինք քննական բնագրին կից ներկայացնել նաև տաղի երկու այլ*
*տարբերակ (տե՛ս ԼԶա և ԼԶբ)։ Քննական բնագրի համար օգտագործված աղբյուրնե-*
*րում տաղն անհեղինակ է։ Հիշյալ տարբերակն առկա է նաև № 10827 ձեռագրում*
*(թերթ 303բ—304բ), ուր խորագրված է՝* Ի տէր Ներսէսէ։ *Ներսեսի անունը պահպանել*
*է և № 6495 գրչագրի օրինակը, որը թերի է (տե՛ս ԼԶբ)։ Թերի է նաև վենետիկյան*
*հրատարակությունը. Հայկազյան բառարանում, սակայն, կան մի շարք բառերի բա-*
*ցատրություններ (օրինակ՝* պապանձեցուցանեմ, սաղարթազուարճ, տարաբնակ, 'իւր,
'իւր, ցայթեմ, ռամաբեռ), *որոնց համար իբրև օրինակ ծառայել են քաղվածներ*
*տաղի երկրորդ հատվածից (45—72-րդ տողերը, որոնք «Բանք չափաւ»-ում բացակա-*
*յում են)։ Այդ քաղածոների աղբյուրը հիշված է մերթ իբրև* տաղ, *մերթ իբրև* Ներսես
Շնորհալու տաղ։ *Նշանակում է, բառարանը կազմողներին հայտնի է բանաստեղծու-*
*թյան ամբողջական մեկ օրինակը՝ պահպանված Ներսես Շնորհալու անունով։*
*Բնագիրը ներկայացված է երկատող տներով, կազմված է 12 վանկանի տողերից,*
*որի յուրաքանչյուր տունը հանդես է գալիս զույգ տողերով։ Նման ձևով է կազմված Ներսես Շնորհալու*
*անհանգ է։ Ծայրակապը ներկայացնում է այբուբենը («Ա—Ք»), նաև մի այլ տաղը՝* Տիրուհի սուրբ կոյս... *(«Տ—Ք»), սակայն այդտեղ յուրաքան-*
*չյուր տուն կրկնված է մեկընդմեջ տողերում։ Ներկա բնագրի հիմքում այն օրինակ-*
*ներն են, որոնք ամբողջական են և բնագրային առումով կազմում են մի խումբ։ Այս-*
*տեղ օգտագործված աղբյուրներից երեքը* (A, B *և* C) *հնագույն շրջանի ընդօրինա-*
*կություններ են, իսկ երկուսը* (D *և* E)՝ *ԺԷ դ. գրչագրեր։ Հիշյալ բնագրի նման է*
*Ա. Տեկանցի հրատարակածը։* C *օրինակը թերի է ձեռագրից թերթ ընկած լինելու*
*պատճառով։ Որպես կանոն, տաղը ներկայանում է առանց փոխի, բացառությամբ* B
*օրինակի, որին կից առկա է* Շնորհաւք Սրբոյ Հոգւոյն... *միավորը (վերջինիս մասին*
*տե՛ս ԼԶբ-ի ծանոթագրությունը)։ Ուշագրավ է, որ* A*-ի 45-րդ տողն սկսվում է նոր*
*պարբերությունից, և ստորին լուսանցքում (թերթ 221ա) կա նշում եղանակային կա-*
*տարման մասին՝ «...Ծարաւեցաւ Տէրն ի խաչ[ին] ձայնն է», մինչդեռ բանաստեղծու-*
*թյան առաջին հատվածի համար ստորին լուսանցքում (թերթ 219բ և 220ա) կա այլ*
*նշում՝ «Որք ընկալայք ի գործ գքանքար ձայնն է»։ Հնարավոր է, որ տաղի հենց*
*45-րդ տողից սկսվող հատվածը օգտագործված լինի իբրև փոխ ու, որպես այդպիսին*
*անջատվելով տաղից, խաթարած լինի վերջինիս ամբողջականությունը։ Թերևս այդ է*
*պատճառը, որ այժմ և՛ ձեռագիր, և՛ տպագիր աղբյուրների մի մասում տաղը ներ-*
*կայանում է լոկ իր առաջին մասով։*



## ԼԶա. ԱՆԵՂ ՈՐԴԻՆ... *(էջ 86)*

*Հրատարակված է.*

ա. «Սիոն», *1949, № 3, էջ 63—64 (հրատ.՝ Ն. Ծովական)։*

*Այլ աղբյուրներից մեզ հայտնի չէ. տպագրի համար հիմք ծառայած ձեռագիրը*
*ԺԴ դարի ընդօրինակություն է, իսկ* A*-ն ԺԷ դարից է։ Բանաստեղծությունն ամբող-*
*ջական է և մեր ներկայացրած քննական վերոհիշյալ բնագրից (ԼԶ) տարբերվում է*
*լոկ իր երկրորդ մասով, սկսած 45-րդ տողից, որով այս տարբերակը պիտի դիտել*
*իբրև այլ խմբագրություն։* A *օրինակը փոխ չունի, իսկ* B*-ին կից առկա է* Քրիստոս
փառաց թագաւոր... *փոխը։*

## ԼԶբ. ԱՆԵՂ ՈՐԴԻՆ... *(էջ 91)*

*Հրատարակված է.*

ա. Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 381—384։*

*բ.* «Поэзия Армении с древнейших времен до наших дней». Ред., вступ. очерк и примеч. В. Брюсова. М., 1916, с. 168—169.

*գ.* «Поэзия Армении с древнейших времен до наших дней... Ереван, 1966, с. 164.

*Հայտնի է նաև այլ ձեռագրերից (տե՛ս ձեռ. № 425, թերթ 219ա. 1756, թերթ*
*416բ. 7708, թերթ 3բ և այլն), որոնց խորագրերում հաճախ առկա է հեղինակի*
*անունը։ Բանաստեղծությունը թերի է, պահպանված են սոսկ 1—44-րդ տողերը («Ա-Ն»*
*ծայրակապով)։ Ռուսերեն հրատարակություններն ընդգրկում են բնագրի լոկ 21—38-րդ*
*տողերը։ Տաղը բանաստեղծության ամբողջական օրինակի համեմատությամբ ունի*
*բնագրային չնչին տարբերություններ. կից ունի* Շնորհաւք Սրբոյ Հոգւոյն... *փոխը։*
*Վերջինս, որ հայտնի է նաև ձեռագիր այլ աղբյուրներից և պահպանված է թերի վի-*
*ճակում, միշտ ներկայանում է իբրև փոխ ու սովորաբար կից է* Անեղ Որդին... *տա-*
*ղին։ Հիշյալ փոխը նույնպես ունի այբուբենի տառերը հոդող ծայրակապ («Շ—Ջ»)՝*
*յուրաքանչյուր տառն արտահայտված կրկնակի անգամ, մեկընդմեջ տողերի սկզբնա-*
*տառերով. գրված է հայրենի չափով (7—8 վանկանի տողեր), անհանգ է։ Սույն*
*բանաստեղծությունը, որն ընդգրկված է Ներսես Շնորհալու տաղերի վենետիկյան հրա-*
*տարակության մեջ, մեր կարծիքով, սկզբնապես եղել է ամբողջական ու միանգամայն*
*անկախ կից հանդես եկող* Անեղ Որդին... *տաղից, որից տարբերվում է և՛ իր բա-*
*նաստեղծական չափով, և՛ ծայրակապային առանձնահատկությամբ։ Նման հանգա-*
*մանքներում տարակույսի տեղիք է տալիս հիշյալ միավորի հեղինակային վերագրու-*
*մը, ուստի նպատակահարմար գտանք* Անեղ Որդին... *տաղի մեր ներկայացրած բնա-*
*գիրը բերել առանց այդ փոխի, որը տալիս ենք ստորև։ Օգտագործված աղբյուրներից*
A*-ն և* B*-ն վերջում ունեն ևս մի տուն, իսկ* D*-ն՝ երկու տուն, որոնք առանց ծայ-*
*րակապի են ու, մեր կարծիքով, հետագայի հավելումներ. դրանք բնագրից դուրս ենք*
*թողել և բերել տողատակի տարընթերցումներում։*

## ՓՈԽ

Շնորհաւք Սուրբ Հոգւոյն
Լցեալ եղեն սուրբ մարգարէքն,
Շարժեալք ի նմին ժամու
Մեծ գոհութիւն առաքելով։

Որ իջեր, զմեզ փրկեցեր
Աստուածութեամբ քո ի խաչին,
Որ ընդ Հաւր ես յէութեան
Եւ ի յաթոռ փառաց նստիս։

Չիշխէին նայել ի քեզ
Հոյլք երամից սերովբէիցն,
Զարաչար նախատանաւք
Լցեալ եղեն մեծ քերովբէքն։

Պառակից եղեալ նոյա՝

---

**Աղբյուրներ**

A—ձեռ. № 7785, թերթ 227ա։
B—ձեռ. № 3503, թերթ 148բ—149ա։
C—ձեռ. № 6495, թերթ 255բ։
D—ձեռ. № 2541, թերթ 233բ—234բ։
E—Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 384—385։*

**Խորագիր**

ABD *Փ[ոխ]։* C *Փոխէ զձայնն [Թաղման երեկոյ.]։* E *Յորդորակ։*

**Մայրակապ՝** *Շ—Զ։*

**Բնագիր**

1 E *Շնորհօք։* B *Հոգոյն Սրբոյ։* D *Հոգոյն։*
3 CE *Շարժեալ։*
4 C *գոհութիւնս։* CE *մատուցանեն* փխ *առաքելով։*
5 CE 5—8-րդ տողերի փոխարեն՝

*Որ ընդ Հօր ես յէութեան,*
*Եւ ի յաթոռ փառաց նստիս.*
*Որ իջեր զմեզ փրկեցեր*
*Արարչական քո զօրութեամբդ (E զըթութեամբ)։*

6 D *սուրբ խաչիւն* փխ *ի խաչին։*
9 CDE *հայել* փխ *նայել։*
10 CDE *երամիցըն։* A *սէրոբէիցն։* B *սէրովբէիցն։* C *սրոբէից։* DE *սրովբէից։*
11 E *նախատանօք։*
12 CE *եղեր։* A *քէրոբէքն։* DE *ի յատենի* փխ *մեծ քերովբէքն։*
13 B *նոցայ։* CE *վերնոցըն* փխ *նոյա։*



Զայս գոչեցուք արտասուելով.
«Պատուական արեամբըդ քո
Փրկեա՛ զգերեալքս ի թշնամւոյն։

Զքոյդ կենաց փափագէաք,
Ըզմեզ արբո՛, ըզծարաւեալքս,
Զքով 'ւ արեամբդ, որ ի կողէդ,
Ըզմեզ լըւա՛ ի հնութենէ»։

## 22

## ԼԷ. ԿԱՅՐ ՄԱՅՐ ՏԵԱՌՆ... *(էջ 94)*

Փ[ոխ]. Ո՜վ Մարիամ կոյս...
Փ[ոխ]. Արդ, ո՜վ Տէր...
Փ[ոխ]. Ո՜վ անմեղ աղաւնի...

*Հրատարակված է.*

ա. *«Բազմավէպ», 1894, Ապրիլ, էջ 166—167։*

*Հրատարակված օրինակի համար հիմք է ծառայել Վենետիկում պահվող մի ձեռագիր, որն ընդօրինակված է 1848 թվականին Սսում, Հեսու փիլիսոփայի ձեռքով։ Հրատարակիչը ձեռագրի թվահամարը չի բերում։ Հեղինակի անունը պահպանել են* B

---

14 CE չիք *Զայս։*
15 D *արեամբդ։* E *քոյ։*
16 D *Փրկեա՛յ։* C *զգերեալսն։* BCD *թըշնամոյն։*
17 D *Զքոյ։* A *փափագէաք։* B *փափաքէաք։* CE *փափագեցաք։*
18 BD *արբոյ։* C *արբո ըզմեզ։*
19 ABCD *եւ* փխ *'ւ։* B *արեամբս։* D *արեամբ։* D *կողէն։*
20 ABD *լըւա՛յ (*A *լըւա՛) ըզմեզ։* C *լըւայ։* AB *հնութենէս։* D *հնութէնէ։* AB տողից հետո՝

*Որով հանցուք քեզ գոհութիւն*
*Ընդ Հաւր յաւէտ անլըռելի.*
*Եւ Հոգւովըդ (*B *Հոգովըս) քո Սըրբոյ (*B *Սրբով)*
*Ելցուք ի փառսըն յառաջին։*

D տողից հետո՝

*Որով հանցուք քեզ գոհութիւնըն*
*Հաւր յաւէտ անլըռելի.*
*Եւ Հոգովըդ քո Սըրբով*
*Ելցուք ի փառսն յառաջինս։*

*Կենդանացոյ զմեղաւք մեռեալս*
*Երգել ըզփառս քեզ ընդ հրեշտակս,*
*Յաւիտեանս յաւիտենից,*
*Քրիստոս աւրհնեալ է յաւիտեանս։*

ե. C օրինակները (ի Ներսիսէ կաթողիկոսէ)։ Հրատարակչի կարծիքով, հիշյալ բանաստեղծությունը իր շարադրանքով ու ոճով առավել կպատշաճեր Ներսես Լամբրոնացուն, այսուհանդերձ, ըստ նրա, բացառված չէ, որ բազմաշնորհ Ներսես Շնորհալին նաև այդպիսի ոճով շարադրեր։ Պետք նկատել, որ խնդրո առարկա միավորը բոլոր աղբյուրներում կոչվում է ոչ թե տաղ, այլ ոդը՝ նվիրված Ավագ Ուրբաթ օրվան, ըստ այդմ էլ շարադրված է համապատասխան տրամադրությամբ ու ոգով։

Բանաստեղծությունը և՛ ձեռագրերում, և՛ տպագրում հանդես է գալիս փոխերով, որոնց հետ միասին կազմում է ձույլ ամբողջություն։ Քննական բնագիրը ներկայացված է կից գտնվող այդ փոխերով, որոնք երեքն են՝ 1. Ո՞վ Մարիամ կոյս... 2. Արդ, ո՞վ Տէր..., 3. Ո՞վ անմեղ աղաւնի..., իսկ վերջում, որպես ավարտ, առանձնացված է 6 տողանի մի հատված (120—125-րդ տողեր)։ Բանաստեղծությունը անհանգ է, տաղի ու փոխերի բանաստեղծական չափը միանման չէ։ Ի տարբերություն տպագրի, մեր ներկայացրած բնագիրը տնատված է, ընդ որում տաղը (1—32-րդ տողեր) բերված է քառատող տներով. ունի ոչ կայուն տաղաչափություն, զույգ տողերը 5 կամ 6 վանկանի են, իսկ անզույգ տողերը՝ 6, 7 կամ 8։

1. Ո՞վ Մարիամ կոյս... (33—86-րդ տողեր)—Բանաստեղծության այս հատվածը ներկայացված է քառատող տներով (վերջին տունը՝ 6 տող)։ B-ում սույն փոխը բացակայում է, իսկ տպագրում տաղից առանձնացված է միայն աստղանիշով։ Իր տաղաչափությամբ այն չի տարբերվում բանաստեղծության առաջին մասից, բայց գերակշռում են 8 վանկանի տողերը (անզույգ տողերի համար) և 5 վանկանի տողերը (զույգ տողերի համար)։

2. Արդ, ո՞վ Տէր... (87—107-րդ տողեր)—Բոլոր աղբյուրներում այս հատվածը ունի Փոխ ենթախորագիրը։ Բնագիրը ներկայացված է եռատող տներով, ընդ որում, յուրաքանչյուր տան առաջին և երրորդ տողերը 7 վանկանի են, իսկ երկրորդ տողը՝ 5 վանկանի (մասնակի խախտումներով)։

3. Ո՞վ անմեղ աղաւնի... (108—119-րդ տողեր)—Ձեռագրերում ունի Փոխ ենթախորագիրը, իսկ տպագրում նախորդ հատվածից անջատված է աստղանիշով։ Բնագիրը ներկայացված է եռատող տներով։ Ունի կայուն տաղաչափություն՝ 7 վանկանի տողեր։

Բանաստեղծության հրատարակված օրինակը ներկայացված է առավել երկար տներով, քան մեր կազմած բնագիրը, և կազմում է ընդամենը 69 տող։

## 23

### ԼԸ. ՏԱՐԱՒԵՑԱՒ ՈՐՊԷՍ ԸՂՄԱՐԴ... (էջ 100)

Հրատարակված է.

ա. Ներսես Շնորհալի, Բանք չափաւ, էջ 386—388։

բ. P. Vetter, Nerses Schnorhali's Kirchenlieder... (տե՛ս «ՀԱ» 1899, № 1, էջ 27—28)։

գ. «Поэзия Армении с древнейших времен до наших дней»... М., 1916, с. 167—168.

դ. «Армянская поэзия в переводах В. Я. Брюсова». Ереван, 1956, с. 140—141.

ե. «Поэзия Армении с древнейших времен до наших дней».. Ереван, 1966, с. 163—164.



գ. «Армянская средневековая лирика», вступ. статья, составл. и примеч. Л. М. Мкртчяна. Л., 1972, с. 202—203.

Հայտնի է նաև այլ ձեռագրերից։ Ձեռագիր օրինակները ներկայանում են անհեղինակ։ Բնագիրը ներկայացված է երկտող տներով. կազմված է 12 վանկանի տողերից. գրված է –ին հանգով։ Բնագրի համար հիմք ծառայած ձեռագրերը ուշ շրջանի ընդօրինակություններ են, որոնցում տաղը պահպանվել է ընդարձակ ծավալով և իբրև ուրույն տաղ ու առանց փոխի, այնպես, ինչպես «Բանք չափաւ»-ում։ Բանաստեղծությունը հանդիպում է նաև իբրև փոխ և ծավալային ու բնագրային տարբերություններով։ Այդ տարբերակը ներկայացնում ենք առանձին (ԼԸա)։

### ԼԸա. ՏԱՐԱՒԵՑԱՒ ՏԷՐՆ Ի ԽԱՉԻՆ... (էջ 103)

Հրատարակվում է առաջին անգամ։

Հայտնի է նաև այլ ձեռագրերից՝ № Ma XIII C1 (Տյուբինգեն, թերթ 190ա—191ա), Cod. Arm. 52 (Լվով, թերթ 144բ), 231 (Երուսաղեմ, թերթ 452ա) և այլուր։ Այս տարբերակը աղբյուրներում ներկայանում է և՛ իբրև տաղ, և՛ իբրև փոխ, ու առանց հեղինակի անվան հիշատակության։ Հնագույն աղբյուրներում գերազանցապես փոխ է ու կից Սեռովբէից թագաւորն... մեղեդուն։ Այդպես են ներկայանում նաև Տյուբինգենի և Լվովի օրինակները, իսկ Երուսաղեմի օրինակը կից է Աստուածածին կոյսըն Մարիամ... տաղին։

Բնագիրը ներկայացված է երկտող տներով. կազմված է 12 վանկանի տողերից, ծավալով շատ ավելի փոքր է, քան նախորդը (ԼԸ), և ունի բնագրային տարբերություններ, որով երբեմն խախտված է նաև –ին հանգը։ Այս տարբերակը բնագրային առումով նման է տպագրվածին։ Պետք ենթադրել, որ տվյալ միավորը համառոտվել է ընդարձակ մի այնպիսի օրինակից, որը հանդիսացել է տպագրվածի հիմքը։

## 24

### ԼԹ. ԱՌԱՒԱՏԻՆ ՇԱՒՂԻՆ... (էջ 104)

Հրատարակված է.

ա. «Բազմավէպ», 1932, էջ 160 (հրատ.՝ Ն. Փէչիկյան)։

Հայտնի է նաև № Ma XIII 61 (Տյուբինգեն, թերթ 203բ, 201աբ) ձեռագրից։ Հեղինակի անունը պահպանված է B-ի խորագրում (Ներսիսի կաթողիկոսի)։ Հրատարակված օրինակի հիմքում ընկած է C-ն, որն անհեղինակ է. հրատարակիչը հիշյալ տաղը որակում է իբրև գրական մի գոհար՝ գրված Գրիգոր Նարեկացու տաղերի ներշնչանքով, բայց ոչ մի ակնարկ չի անում, թե ո՞վ կարող է լինել խնդրո առարկա բանաստեղծության հեղինակը։ Հայկազյան բառարանում Նուախային բառի բացատրության համար բերված է օրինակ, որը քաղված է հիշյալ տաղից (9—12-րդ տողեր) և ոտանավորը ներկայացված է իբրև Ներսես Շնորհալու ստեղծագործություն։ Պետք ենթադրել, որ բառարանը կազմողներին հայտնի է եղել տաղի՝ Ներսես Շնորհալու անունով պահպանված մի օրինակը։

Բանաստեղծությունը չի տնատված. կազմված է 7—8 վանկանի տողերից (հայրենի չափ), մասնակի խախտումներով. գրված է մեկընդմեջ տողերի վերջընթեր բառերի շղթայումով. անհանգ է։ Քննական բնագիրը կազմելիս նկատի ենք ունեցել բանաստեղծական չափը և վանկարար «ը» տառը պահպանել միայն անհրաժեշտ դեպ-

քերում։ Բանաստեղծությունն ունի ակնհայտ նմանություն Գրիգոր Նարեկացու Գոհար վարդըն վառ առեալ... տաղի հետ (նվիրված Այլակերպության տոնին) և՛ տաղաչափությամբ, և՛ շարադրանքով։ Ձեռագրերում տաղը կից ունի Նըստեալ կանայքն... փոխը, բացառությամբ D-ի, որը պահպանված է խիստ թերի վիճակում և փոխ չունի։

## Խ. ՆՇԾՏԵԱԼ ԿԱՆԱՅՔՆ... (էջ 106)

*Հրատարակված է.*

ա. Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 395—396։*

բ. «Սիոն», *1949, № 4, էջ 94 (հրատ.՝ Ն. Ծովական)։*

*Հայտնի է նաև այլ ձեռագրերից։ Գերազանցապես ներկայանում է իբրև փոխ, երբեմն իբրև տաղ։ Ծայրակապը հոդում է հեղինակի անունը։*

*Բնագիրը ներկայացված է քառատող տներով. կազմված է 7 վանկանի տողերից. գրված է -ին հանգով։* ABC *օրինակները կից են* Առաւատին չաւիղին... *տաղին, «Սիոն»-ում հրատարակվածը՝* Յընծան այսաւր երկինք... *միավորին։ № 6495 ձեռագրում բանաստեղծությունն ունի երկու ընդօրինակություն. դրանցից մեկը* ($E_1$) *փոխ է ու կից* Առ պարտիզպանն ձայնէր... *տաղին, իսկ մյուսը* (E) *տաղ է, գրված է այլ ձեռքով ու հավանաբար ավելի ուշ, տվյալ ձեռագրում ազատ մնացած տարածությունը զբաղեցնելու նպատակով։ Նշված երկու տարբերակները բնագրային էական տարբերություններ չեն ցուցաբերում, այսուհանդերձ, քննական բնագրի համար երկուսն էլ օգտագործված են։ «Բանք չափաւ»-ում տպագրվածը ևս ներկայացված է իբրև տաղ։*

## 25

## ԽԱ. ԱՅՍԱՒՐ ԼՈՅՍ ԾԱԳԵԱՑ... (էջ 108)

### Փ[ոխ]. Լըւան զաւետեաց ձայն...

*Հրատարակված է.*

ա. «Սիոն», *1949, № 4, էջ 93 (հրատ.՝ Ն. Ծովական)։*

*Հայտնի է նաև այլ ձեռագրերից։ Հնագույն գրչագրերում տաղը, որն ընդգրկված է Հարության տոնին նվիրված Ներսես Շնորհալու տաղերի շարքում, ունի խորագիր այդ ամբողջ շարքին վերաբերող՝ վերջում Մատթեոսի Ավետարանի մասին հիշատակությամբ։ Ամենայն հավանականությամբ խորագրի հենց այդ վերջին հատվածն է վերաբերում տվյալ միավորին։ Մեր օգտագործած աղբյուրների այդ ընդարձակ խորագրերը, որոնք քննական բնագրի տողատակում չեն արտացոլված, ամբողջությամբ բերում ենք այստեղ։*

A *օրինակ*—Տաղեր Յարութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ սրբոյ Զատկին, զկնի եղաբերից Աւետարանացն, տեառն Ներսիսի ասացեալ. ըստ Մատթէոսին Աւետարանին:

B *օրինակ*—Տեառն Ներսիսի կաթողիկոսի Հայոց եւ այլ սրբոցն ասացեալ տաղ սրբոյ Զատկին, զկնի Եղայբերից Աւետարանացն, նայեւ բովանդակ կիրակէիցն. Մաթէին է:

C *օրինակ*—Տաղ Յարութեան Զատկին, զկնի իւրաքանչիւր Եղաբերից Աւետարանացն, ի պարագայութեան շուրջ բզՍիոնի. Մաթէին է:

D *օրինակ*—Տեառն Ներսեսի կաթողիկոսի Հայոց եւ այլ սրբոց ասացեալ տաղ սրբոյ Զատկին, զկնի Իւղաբերից Աւետարանաց, նաեւ բովանդակ կիրակէիցն. Մատթէոսին:

F *օրինակ*—Տաղեր Յարութեան սրբոյ Զատկին, զկնի Եղաբերիցն Աւետ[արանացն]. Մաթէոսի, տեառն Ներսէսի երգ:

*Բնագիրը ներկայացված է եռատող տներով. կազմված է 10 վանկանի տողերից, անհանգ է։ № 6495 ձեռագրում բանաստեղծությունն ընդօրինակված է երկու անգամ։ Քննական բնագրում այդ երկուսն էլ օգտագործված են։ Նշված օրինակներն առավել ծավալուն են։ Մեր ներկայացրած բնագրում ընդգրկված են որոշ հատվածներ՝ բանաստեղծությունն ավելի ամբողջական դարձնելու նպատակով։ Սովորաբար տաղը կից ունի* Լըւան զաւետեաց ձայն... *փոխը, որը տաղի մասն է։*

## Փ[ՈԽ]. ԼԸՒԱՆ ԶԱՒԵՏԵԱՑ ՁԱՅՆ... (էջ 109)

*Հրատարակված է.*

ա. «Սիոն», *1949, № 4, էջ 93 (հրատ.՝ Ն. Ծովական)։*

*Նախորդ տաղի մասն է, միշտ ներկայանում է նրան կից իբրև փոխ։ Բնագիրը չի տնատված. կազմված է 10 վանկանի տողերից (ինչպես կից գտնվող տաղը), անհանգ է։* $EE_1$ *օրինակներում իբրև փոխ առանձնացված է բանաստեղծության ոչ թե այս մասը, այլ 13-րդ տողից սկսվող հատվածը (տե՛ս՝* Մի զիճուոր վերին...)։

## 26

## ԽԲ. ԱՅՍԱՒՐ, Ը՜, ԼՈՅՍ ՀԱՍՏԱՏԻ... (էջ 110)

*Հրատարակվում է առաջին անգամ։*

*Հայտնի է նաև № Ma XIII 61 (Տյուբինգեն, թերթ 193բ—194բ) ձեռագրից։ Հեղինակի անունն առկա է B-ի խորագրում* (Ներսեսի կաթողիկոսի)։ *Սա Հարության տոնին նվիրված Ներսես Շնորհալու երկրորդ տաղն է, որը վերաբերում է Մատթեոսի Ավետարանին։ C-ի խորագիրը բնագրի տողատակում չի արտացոլված, որովհետև այն վերաբերում է ոչ միայն տվյալ միավորին, այլև Հարության տոնին նվիրված Ներսես Շնորհալու տաղերի շարքին* (Տաղ Յարութեան բովանդակ տարոյն, զկնի Իւղաբերիցն Աւետարանացն, և ապա զգիշերին ասեն. Մարկոսի Աւետարանին)։

*Բնագիրը չի տնատված. կազմված է 13 վանկանի տողերից (մասնակի խախտումներով). անհանգ է։ Ընդամենը 7 տող է, ընդ որում, առաջին երեք տողերն սկսվում են «Այսաւր» բառով։ Ձեռագրերում տաղը կից ունի* Նոր ծաղիկ պայծառ ցուցաւ... *փոխը, բացի D-ից, որն ունի այլ փոխ՝* Նըստեալ կանայքն ողբային...։

## ԽԳ. ՆՈՐ ԾԱՂԻԿ ՊԱՅԾԱՌ ՑՈՒՑԱՒ... (էջ 111)

*Հրատարակվում է առաջին անգամ։*

*Հայտնի է նաև № Ma XIII 61 (Տյուբինգեն, թերթ 194բ) ձեռագրից։ Բոլոր աղբյուրներում ներկայանում է իբրև փոխ։ Ծայրակապը հոդում է հեղինակի անունը։ Բնագիրը չի տնատված. կազմված է 8 վանկանի տողերից (1, 3, 5-րդ տողերը 7 վանկանի են). անհանգ է։ Աղբյուրներում բանաստեղծությունը կից է* Այսաւր, ը՜, լոյս հաստատի... *տաղին, բացի D-ից, որը կից է* Նոր ձայն աւետեաց...*-ին։ Սույն փոխի երկրորդ մասը (սկսած 14-րդ տողից) երբեմն իր հերթին առանձնացված է իբրև*

փոխ. օրինակ՝ C-ն այդ տողին կից լուսանցքում ունի Փ[ոխ] նշումը. A-ում, այդ տողի դիմաց գրված է՝ «Սրբէջանման ձայնն է», մինչդեռ առաջին մասի համապատասխան տեղում գրված է. «Աւետիս մեծ խորհրդոյ ձայնն է»: Պիտի նկատել, որ եղանակային փոփոխություն ակնարկող հիշյալ նշումները հետագայի լրացումներ են: Բանաստեղծության այս մասը նախորդ հատվածից տարբերվում է նաև նրանով, որ ծայրակապ չունի, մինչդեռ 1—13-րդ տողերը մեկընդմեջ տողերի սկզբնատառերով հագում են՝ «Ներսեսի»: Ձեռագրերում հանդիպում է մի տարբերակ, որի երկրորդ մասը հօգում է ծայրակապի շարունակությունը՝ «ե բանս», և դա շնորհիվ տողերի իր ունեցած տարբեր դասավորության, նաև բնագրային ու ծավալային որոշ անհամապատասխանությունների: Պիտի ենթադրել, որ բանաստեղծության երկրորդ մասը իբրև փոխ առանձնացվելու հետևանքով ենթարկվել է աղավաղումների, տողեր են տեղաշարժվել, ավելացել կամ պակասել (հենց այն հանգամանքը, որ ներկայացվող բնագիրը բաղկացած է 31 տողից, ինքնին այդ է վկայում), ու այժմ դժվար է ասել, թե ինչպիսի՞ն է եղել ոտանավորի նախնական տեսքը. այդ պատճառով հարկ համարեցինք կից ներկայացնել նաև մյուս տարբերակը (ԽԳա):

## ԽԳա. ՆՈՐ ԾԱՂԻԿ ՊԱՅԾԱՌ ՅՈՒՅՍԻ... *(էջ 113)*

*Հրատարակված է.*

ա. Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 398*:

բ. *«Սիոն», 1949, № 8, էջ 216 (հրատ.՝ Ն. Ծովական)*:

*Բոլոր աղբյուրներում ներկայանում է իբրև տաղ: «Սիոն»-ում տպագրվածի համար հիմք են ծառայել № 1193 (Երուսաղեմ) ձեռագրում գտնվող տաղի երկու տարբերակները, որոնց բնագրային անհամապատասխանությունները հրատարակիչը ցույց է տվել տողատակային նշումներով: Մեր կազմած բնագրում այդ երկուսը ներկայացրել ենք իբրև B և C: A օրինակը կից ունի* Նըստեալ կաճայՖՆ ողբային... *փոխը:* B-*ի երկրորդ մասը (սկսած 15-րդ տողից) առանձնացված է իբրև* փոխ, *իսկ* D-*ն թերի է:*

*Բնագիրը չի տնտեսված: Բանաստեղծությունն իր տաղաչափությամբ նման է նախորդին (ԽԳ), որից շատ չի տարբերվում նաև բնագրային առումով (առաջին մասում): Անհամապատասխանությունը նկատվում է երկրորդ մասում. այստեղ մի շարք տողեր տեղաշարժված են, որոշ հատվածներ այլ շարադրանք ունեն, իսկ ծավալով ավելի փոքր է՝ ընդամենը 24 տող, ընդ որում, սկսած 11-րդ տողից, նաև հանգավորված է զույգ տողերով, իսկ ծայրակապը («Ներսեսի ե բանս») հօգում են մեկընդմեջ տողերի սկզբնատառերը: Նշված առանձնահատկությունները թելադրում են սույն տարբերակը դիտել իբրև սկզբնական ու անաղարտ բնագիր, բայց հենց կանոնավոր հանգավորումը (որը առաջին մասում չի նկատվում) ցույց է տալիս, որ սա ևս ենթարկված է խմբագրման ու մշակման:*

27

## ԽԴ. ԱՅՍՕՒՐ ԸՆԴ ԾԱԳԵԼՆ... *(էջ 115)*

Փ[ոխ]. Աստուածասէր եւ սուրբ կաճայՖ...

*Հրատարակված է.*

ա. *«Սիոն», 1949, № 4, էջ 93 (հրատ.՝ Ն. Ծովական)*:



*Հայտնի է նաև այլ ձեռագրերից՝ №* Cod. Arm. *52 (Վիեն, թերթ 171ա) և* Ma *XIII 61 (Տյուբինգեն): Այս վերջինում կից է* Այսաւր լոյս ծագեաց... *տաղին (թերթ 196բ—200ա), որը բերված է Հարության տոնին նվիրված Ներսես Շնորհալու տաղերի շարքում: Աղբյուրներից ոչ մեկը Ներսես Շնորհալու անունը չի պահպանել, բայց բանաստեղծությունը հանդես է գալիս նրան վերագրվող և Հարության տոնին հատկացված տաղերի շարքում ու հրատարակված է Ներսես Շնորհալու անունով: Տպագրի համար հիմք է հանդիսացել № 231 (Երուսաղեմ) ձեռագրի օրինակը: Բոլոր աղբյուրներում Հարության տոնին նվիրված այս տաղը վերաբերում է Մարկոսի Ավետարանին:*

*Բնագիրը ներկայացված է երկտող տներով, որոնցից յուրաքանչյուրն սկսվում է* Այսաւր *բառով. կազմված է 8 վանկանի տողերից, անհանգ է:* ABD *օրինակներում առաջին 3 տների երկրորդ տողերը կրկնված են, իսկ* C-*ի երկրորդ տողի վերջում կա նշում այդ մասին: Բնագիրը կազմելիս այդ բանը հաշվի չենք առել ու իբրև առանձին տող չենք ներկայացրել, քանի որ դա նկատի ունի սոսկ կատարման ձևն ու եղանակը: Բոլոր աղբյուրներում տաղին կից իբրև փոխ հանդես է գալիս բանաստեղծության մասը՝* Աստուածասէր եւ սուրբ կաճայՖ...

## Փ[ՈԽ]. ԱՍՏՈՒԱԾԱՍԷՐ ԵՒ ՍՈՒՐԲ ԿԱՃԱՅՖ... *(էջ 116)*

*Հրատարակված է.*

ա. *«Սիոն», 1949, № 4, էջ 93 (հրատ.՝ Ն. Ծովական)*:

*Նախորդի մասն է, ունի նույն տաղաչափությունը, անհանգ է: Բնագիրը չի տնտեսված, միշտ ներկայանում է իբրև փոխ ու կից՝* Այսաւր ընդ ծագելն... *տաղին:*

28

## ԽԵ. ՆՈՐԱՃՐԱՇ ԱՐԵԳԱԿՆ ԱՅՍՕՒՐ... *(էջ 117)*

*Հրատարակվում է առաջին անգամ:*

*Հայտնի է նաև №* Ma *XIII 61 (Տյուբինգեն) ձեռագրից: Հեղինակի անունն առկա է* B-*ի խորագրում* (Ներսիսի կաթողիկոսի), *արտահայտված է նաև ծայրակապով: Բոլոր աղբյուրներում ներկայանում է իբրև տաղ, բացի Տյուբինգենի օրինակից, որը փոխ է ու կից* Այսաւր լոյս ծագեաց... *տաղին: Բանաստեղծությունը, որ ձեռագրերում ներկայանում է իբրև Հարության տաղ, վերաբերում է Մարկոսի Ավետարանին:*

*Բնագիրը ներկայացված է երկտող տներով: Յուրաքանչյուր տան առաջին տողը 13, 14 կամ 15 վանկանի է, իսկ երկրորդ տողը՝ 5 վանկանի. գրված է անհանգ: Ձեռագրերում տաղը կից ունի* ԿեաճՖՆ ընդ Հաւր... *փոխը:*

## ԽԶ. ԿԵԱՆՔՆ ԸՆԴ ՀԱՒՐ... *(էջ 119)*

*Հրատարակված է.*

ա. Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 396—397*:

*Գերազանցապես ներկայանում է իբրև փոխ, իսկ № 424 ձեռագրում (թերթ 164ա) տաղ է: Բնագիրը ներկայացված է երկտող տներով: Յուրաքանչյուր տան առաջին տողը 10 վանկանի է, իսկ երկրորդ տողը՝ 5 վանկանի. անհանգ է: Բնագրի համար օգտագործված ձեռագրերում կից է* Նորաճրաշ արեգակն այսաւր ... *տաղին: Տպագիր օրինակը կից է* Նըստեալ կաճայՖՆ ողբային... *միավորին:*

## 29

## ԽԷ. ԱՅՍԱՒՐ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՄԵԶ ՄԱԳԵՑԱՒ... *(էջ 121)*

*Հրատարակվում է առաջին անգամ։*

*Հայտնի է նաև №* Ma XIII *61 (Տյուբինգեն, թերթ 200ա) ձեռագրից։ Աղբյուրներում Ներսես Շնորհալու անունը չի պահպանված, բայց բանաստեղծությունն ընդգրկված է Հարության տոնին նվիրված նրա տաղերի շարքում (որի ընդհանուր խորագրում հեղինակի անունն առկա է) և վերաբերում է Ղուկասի Ավետարանին։ Բնագիրը ներկայացված է եռատող տներով։ Տնատման համար նկատի ենք ունեցել տնավերջի բառերի շղթայումը. գրված է ազատ տաղաչափությամբ, անհանգ է։ Ձեռագրերում տաղն ունի* Ցընծան այսաւր երկինք... *փոխը, բացի Տյուբինգենի օրինակից, որն ինքը փոխ է ու կից՝* Այսաւր լոյս ծագեաց...*-ին։ Տնատման և շղթայման իր ձևով սույն միավորը նմանվում է Գրիգոր Նարեկացու* Էն ի միշտ էէն... *տաղին (նվիրված Համբարձման տոնին)։*

## ԽԸ. ՑԸՆԾԱՆ ԱՅՍԱՒՐ ԵՐԿԻՆՔ... *(էջ 123)*

*Հրատարակված է.*

ա. Ա. Չոպանյան, *Հայ էջեր, էջ 49։*

բ. *«Սիոն», 1949, № 4, էջ 93—94 (հրատ.՝ Ն. Ծովական)։*

*Հայտնի է նաև այլ ձեռագրերից։ Ներսես Շնորհալու անունով հանդիպում է հետագայի ընդօրինակություններում։ Այդ շրջանի գրչագրերում բանաստեղծությունը գերազանցապես հանդես է գալիս իբրև տաղ, իսկ հնագույն օրինակներում փոխ է։ Ա. Չոպանյանի տպագրածը ներկայանում է անհեղինակ և իբրև տաղ, բայց հրատարակչին հայտնի է մի այլ ձեռագիր՝ Էջմիածնի հավաքածու, № 47 (այժմ՝ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 2672), որտեղ բանաստեղծությունը պահպանված է Ներսես կաթողիկոսի անունով։ «Սիոն»-ում տպագրվածի հիմքը № 231 (Երուսաղեմ) ձեռագրի օրինակն է, որը հանդես է գալիս Հարության տոնին նվիրված Ներսես Շնորհալու տաղերի շարքում և կից ունի* նըստեալ կանայքն ողբային... *փոխը։*

*Բնագիրը ներկայացված է երկտող տներով, որոնցից յուրաքանչյուրն սկսվում է* Ցընծայ *(կամ՝* Ցընծան, Ցընծամք) *բառով։ Յուրաքանչյուր տան առաջին տողը 6 վանկանի է, իսկ երկրորդ տողը՝ 8 վանկանի։ Ունի հանգավորում ըստ տների (սակավ խախտումներով)։* ABC *օրինակները կից են* Այսաւր յարութեան մեզ ծագեցաւ... *տաղին։* D *և* E *օրինակները ներկայանում են իբրև տաղ, ընդ որում,* D*-ի 17-րդ տողից սկսվող հատվածը (սկ.՝* Ցընծան որդիք մարդկան...) *անջատված է առանձին խորագրով՝* Յորդորակ։

## 30

## ԽԹ. ՆՈՐ ԻՄՆ ԱՒԵՏԵԱՑ... *(էջ 126)*

*Հրատարակված է.*

ա. Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 388—389։*

*Հայտնի է նաև այլ ձեռագրերից։ Հեղինակի մասին հաճախ հիշված է խորագրերում։ Ծայրակապը ևս հոդում է հեղինակի անունը։ Տաղը հատկացված է Հարության տոնին, Ղուկասի Ավետարանին։ Բնագիրը ներկայացված է երկտող տներով. կազմված է 12 վանկանի տողերից. անհանգ է, բայց երբեմն նկատվում է* -ին *հանգ ստեղծելու միտում, հատկապես* EF *օրինակներում։ Բնագրի համար օգտագործված աղբյուրներում տաղը կից ունի* Հաւր կամաւ իջեալ... *փոխը։*



## Ծ. ՀԱՒՐ ԿԱՄԱՒ ԻՋԵԱԼ... *(էջ 128)*

*Հրատարակված է.*

ա. Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 390—391։*

*Ներկայանում է գերազանցապես իբրև փոխ։ Բնագիրը չի տնատված։ Բաղկացած է 12 վանկանի տողերից. անհանգ է։ Բնագրի համար օգտագործված աղբյուրներում կից է* Նոր իմն աւետեաց... *տաղին։*

## 31

## ԾԱ. ՆՈՅՆԱԳՈՅ ԸՆԴ ՀԱՒՐ... *(էջ 130)*

**Փ[ոխ]. Յարեաւ փառաց թագաւորն...**

*Հրատարակված է.*

ա. Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 398—399։*

բ. **P. Vetter**, Nerses Schnorhali's Kirchenlieder... *(տե՛ս «ՀԱ», 1899, № 1, էջ 27—28)։*

*Հայտնի է նաև №* Cod. Arm. *52 (Լվով, թերթ 174ա) ձեռագրից, ուր խորագրված է՝* Տաղ Իւղաբերից, Յոհաննու։ *Բոլոր աղբյուրներում Հարության սույն տաղը վերաբերում է Հովհաննու Ավետարանին։* C*-ն խորագրված է՝* Յոհաննու Ոսկեբերանի, *որն, անշուշտ, նկատի չունի Հովհան Ոսկեբերանին, քանի որ սույն միավորը բերված է Հարության տոնին նվիրված այլ տաղերի շարքում, ըստ առանձին Ավետարանների (Մատթեոս, Մարկոս, Ղուկաս, Հովհաննես)։* C*-ի խորագրին կից գտնվող* Փ *նշումը ևս անտեղի է։ Ծայրակապը հոդում է հեղինակի անունը։ Բնագիրը ներկայացված է երկտող տներով. կազմված է 8 վանկանի տողերից. գրված է տների շղթայումով, անհանգ է։ Բոլոր աղբյուրներում տաղը կից ունի* Յարեաւ փառաց թագաւորն... *փոխը, որը տվյալ բանաստեղծության մասն է։ Հիշյալ փոխը գրված է տարբեր տաղաչափությամբ և ունի այլ շարադրանք, բայց իր վերջնատողերի* աւետիք *և* մեծ աւետիք *բառերով կապվում է տաղի հետ, որն ավարտվում է* ձեզ աւետիք *խոսքերով։*

## Փ[ՈԽ]. ՅԱՐԵԱՒ ՓԱՌԱՑ ԹԱԳԱՒՈՐՆ... *(էջ 131)*

*Հրատարակված է.*

ա. Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 399—400։*

բ. **P. Vetter**, Nerses Schnorhali's Kirchenlieder... *(տե՛ս «ՀԱ», 1899, № 1, էջ 27—28)։*

*Հայտնի է գերազանցապես իբրև փոխ, երբեմն հանդես է գալիս նաև իբրև տաղ (օրինակ՝ ձեռ. № 423, թերթ 103բ և 162ա. 554, թերթ 149բ)։ Բնագիրը ներկայացված է երկտող տներով։ Յուրաքանչյուր տան առաջին տողը 11 վանկանի է, իսկ երկրորդ տողը՝ 13 վանկանի (կան խախտումներ)։ Անզույգ տողերն ավարտվում են* աւետիք, *իսկ զույգ տողերը՝* մեծ աւետիք *բառերով։ Ձեռագրերում այդ բառերը կրճատ են կամ հապավված։ Բոլոր աղբյուրներում փոխը կից է* Նոյնագոյ ընդ Հաւր... *տաղին (բացի* D*-ից), որի օրգանական մասն է։* D*-ն կից է* Յարեաւ յաւուր երրորդին... *միավորին ու հատկացված է Հարության տոնի չորրորդ օրվան։*

32

### ԾԲ. ՆՈՐ ՁԱՅՆ ԱՒԵՏԵԱՑ... (էջ 133)

*Հրատարակված է.*

ա. Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 391—392։*

բ. Ա. Տեկյանց, *Հայերգ, էջ 14։*

գ. *«Սիոն», 1949, № 4, էջ 94 (հրատ.՝ Ն. Ծովական)։*

*Հայտնի է նաև այլ ձեռագրերից։ Խորագրերում հաճախ առկա է հեղինակի անունը, որը հոդում է նաև ծայրակապը։ Համկացված է Հովհաննու Ավետարանին։ Աղբյուրներում հանդիպում է նաև իբրև մեղեդի։ Բնագիրը ներկայացված է եռատող տներով։ Յուրաքանչյուր տան առաջին տողը 11 վանկանի է, երկրորդ տողը՝ 12, իսկ երրորդ տողը՝ 10 վանկանի. անհանգ է։* EFH *օրինակները, նաև 1882 թ. հրատարակությունը թերի են։ Բնագրի համար օգտագործված աղբյուրներում տաղը կից ունի* Կանայքն արտասուաւք... *փոխը, բացառությամբ* E-*ի, որը կից ունի* Նոր ծաղիկ պայծառ ցուցաւ... *միավորը։* Λ-*ում հետագայի մի գրչի ձեռքով որոշ բառեր ջնջված են ու փոխարինված այլ բառերով։ Քննական բնագրի տողատակի տարընթերցումներում դրանք ցույց են տրված ջնջված նշումով, իսկ կատարված հավելումները հետևյալներն են.* մեր *(տող 6),* եղեալ *(տող 9),* բէ *(թող 11),* եւ *(տող 14),* զի *(տող 17),* նըւէրըս *(տող 18),* մարդկան *(տող 20),* մեզ *(տող 21),* ամէն *(տող 24)։*

### ԾԳ. ԿԱՆԱՅՔՆ ԱՐՏԱՍՈՒԱՒՔ... (էջ 136)

*Հրատարակված է.*

ա. Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 393—395։*

բ. Ա. Տեկյանց, *Հայերգ, էջ 15—16։*

*Հայտնի է նաև այլ ձեռագրերից։ Ներկայանում է գերազանցապես իբրև փոխ։ Հանդիպում է նաև իբրև տաղ։ Բնագիրը ներկայացված է երկտող տներով. կազմված է 12 վանկանի տողերից, անհանգ է։ Բնագրի համար օգտագործված աղբյուրներում կից է* Նոր ձայն աւետեաց... *տաղին, բացառությամբ* E-*ի, որը կից է* Ո՜վ խաղաղաձայնեալ... *տաղին։ 1882 թ. հրատարակությունը թերի է։* A-*ն 19-րդ տողին (սկ.՝* Ի գերեզմանէն...*) կից լուսանցքում ունի փոխի նշան [ ], իսկ* E-*ն այդ տողում ունի կարմիր սկզբնատառ. նշանակում է՝ այդ հատվածից փոխվել է եղանակը, կատարման ձևը։ Հետաքրքրական է, որ № 10156 ձեռագրում (թերթ 47բ) առկա է սույն ոտանավորի լոկ այդ հատվածը, և վերջինս ներկայանում է իբրև առանձին տաղ՝* Տաղ նոր կիրակէի *խորագրով։*

33

### ԾԴ. ՆԵՐՊԱՐՈՒՆԱԿԵԱԼ ԻՆՆԵԱԿ ԴԱՍՈՒՑ... (էջ 139)

*Հրատարակված է.*

ա. Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 401։*

*Հայտնի է նաև №* Ma *XIII 61 (Տյուբինգեն, թերթ 311բ) ձեռագրից։ Բոլոր ձեռագրերում պահպանված է հեղինակի անունը, որն արտահայտված է նաև ծայրակապով։* A-*ն և Տյուբինգենի օրինակը խորագրված են իբրև Սուրբ հոգուն նվիրված տաղ, մինչդեռ մյուսներում բանաստեղծությունը կոչվում է* երգ, *որը եկեղեցու զավակները*



*(«եկեղեցւոյ մանկունք») երգում են ի պատիվ սուրբ Երրորդության։ Վերջինիս համար եկեղեցին հատուկ տոն չի ունեցել, ու քանի որ Երրորդության խորհուրդն առնչվել է Հոգեգալստյան հետ, այդ տոնին կից է նկատվել նաև սուրբ Երրորդությունը (տե՛ս* Մ. Օրմանյան, *Ծիսական բառարան, էջ 27)։*

*Բնագիրը ներկայացված է երկտող տներով։ Յուրաքանչյուր տան առաջին տողը 5 վանկանի է, իսկ երկրորդ տողը՝ 10 վանկանի (տողատումը վերապահությամբ պիտի ընդունել. բանաստեղծությունը կարելի էր ներկայացնել նաև 5 վանկանի տողերով ու եռատող տներով, կամ 15 վանկանի տողերով ու առանց տնատման)։ Բոլոր օրինակները (բացի տպագրվածից) կից ունեն* Ներհիւսեսցուք... *փոխը։* A-*ն ունի հետագայում կատարված լրացումներ, որոնք քննական բնագրում չեն ընդգրկված ու տողատակում ցույց են տրված առանձին նշումով («տողից հետո»)։*

### ԾԵ. ՆԵՐՀԻՒՍԵՍՑՈՒՔ... (էջ 141)

*Հրատարակվում է առաջին անգամ։*

*Հայտնի է նաև մի շարք այլ ձեռագրերից։ Հնում ներկայանում է իբրև փոխ, իսկ հետագայի ընդօրինակություններում գերազանցապես տաղ է ու նվիրված Հոգեգալստյան տոնին և անհեղինակ է։ Հնագույն աղբյուրներում կից է Ներսես Շնորհալու անունը հոդող* Ներպարունակեալ իննեակ դասուց... *տաղին (ծայրակապ՝ «Ներսես»), որի հետ առնչվում է նաև իր ծայրակապով («Նվագե Հոգւոյն տըվողին իմաստ բանի ընդ ձայնի»)։ Բացի այդ, Հայկազյան բառարանում* ներհիւսեսցուք *և* դօղեմ *բառերի համար բերված օրինակները քաղված են խնդրո առարկա բանաստեղծությունից, և աղբյուրը հիշված է իբրև Ներսես Շնորհալու տաղ. նշանակում է՝ բառարանը կազմողներին հայտնի է եղել հեղինակի անունով պահպանված մի օրինակ։*

*Բնագիրը ներկայացված է քառատող տներով. կազմված է 8 վանկանի տողերից. հանգավորված է մերթ ըստ տների, մերթ՝ զույգ տողերով (կան նաև անհանգ տողեր)։ Բնագրի համար օգտագործված աղբյուրներում կից է* Ներպարունակեալ իննեակ դասուց... *տաղին, բացառությամբ* E-*ի, որը կից է* Աստանաւր ծագեաց... *տաղին։*

34

### ԾԶ. ԱՐՓԻԱԿԱՆ, Ը՜, ԼՈՅՍՆ... (էջ 144)

*Հրատարակվում է առաջին անգամ։*

*Հայտնի է նաև այլ ձեռագրերից։* AB *և* D *օրինակները խորագրում պահպանել են հեղինակի անունը* (Ներսես կաթողիկոս)*։ Հետագայի գրչագրերում բանաստեղծությունը ներկայանում է նաև իբրև մեղեդի ու հաճախ շատ ավելի փոքր ծավալով։*

*Բնագիրը ներկայացված է երկտող տներով. գրված է տների շղթայումով և ազատ տաղաչափությամբ. անհանգ է։ Տողատումը, որ կատարված է ըստ իմաստի, պիտի ընդունել որոշ վերապահությամբ։ Բնագրի համար օգտագործված աղբյուրներում տաղը կից ունի* Տէր փառաց այսաւր... *փոխը, իսկ* E-*ն հիշյալ փոխից անջատված է մեկ այլ փոխով՝* Խաւսէր բանիւ նա...*։*

### ԾԷ. ՏԷՐ ՓԱՌԱՑ ԱՅՍԱՒՐ... (էջ 146)

*Հրատարակված է.*

ա. Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 401—402։*

*Հայտնի է նաև այլ ձեռագրերից։ Ծայրակապը հոդում է հեղինակի անունը։ Սովո-*

բաբար ներկայանում է իբրև փոխ, բայց հանդիպում է նաև իբրև տաղ՝ հատկացված Վարդավառի երկրորդ կամ երրորդ օրվան։ Բնագիրը ներկայացված է երկտող տներով. կազմված է 12 վանկանի տողերից, անհանգ է։ Բնագրի համար օգտագործված ձեռագրերում կից է Արփիական, ը՜, լոյսն... տաղին. E-ն տաղից անջատված է մեկ այլ փոխով՝ Խաւսէր բանիւ նա...։ Տպագիր օրինակը ներկայացված է իբրև տաղ։

## 35

### ԾԸ. ՆՈՐ ԻՄՆ ԱՀԱՒՈՐ... *(էջ 148)*

### Փ[ոխ]. Հայր վրկայելով...

*Հրատարակվում է առաջին անգամ։*

Բանաստեղծությունը պահպանվել է մի շարք ձեռագրերում, բայց ոչ միատեսակ ծավալով, նաև բնագրային տարբերություններով։ Այդ պատճառով կից ներկայացնում ենք ևս երկու տարբերակ (ԾԸա և ԾԸբ)։ Աղբյուրներում տաղն անհեղինակ է։ Ներսես Շնորհալուն վերագրելու հիմքը ԾԸբ տարբերակի՝ Ներսես Շնորհալու տաղերի վենետիկյան հրատարակության մեջ ընդգրկված լինելու հանգամանքն է։

Բնագիրը ներկայացված է երկտող տներով. կազմված է 12 վանկանի տողերից, անհանգ է։ Բանաստեղծության երկրորդ մասը, սկսած 23-րդ տողից (սկ.՝ Հայր վրկայելով...) ներկայանում է իբրև փոխ։ B-ում այդ հատվածն առանձին խորագիր չունի, բայց ունի կարմիր սկզբնատառ։ A-ում կան ջնջված ու եղծված բառեր կամ տառեր, որոնք լրացվել են հետագայի մի գրչի ձեռքով։ Դրանք են. աւետիս (տող 2), խորհուրդ (տող 3), արարչութեան (տող 4), լեառըն (տող 5), տեսեալ (տող 6), զվէմն (տող 8), զորդիսն (տող 8), բազմեալ (տող 14), հոսեալ (տող 15), Սինեայ (տող 15), Ձորգի (տող 16), բազմեալ (տող 16), Սիովնի (տող 17), Հերմոնէ (տող 18), անսուրբ (տող 19)։

### ԾԸա. ՆՈՐ ԻՄՆ ԱՀԱՒՈՐ... *(էջ 151)*

*Հրատարակվում է առաջին անգամ։*

Աղբյուրներում տաղն անխորագիր է։ B և C օրինակները կից են մեղեդիների, իսկ A-ն ընդգրկված է Ներսես Շնորհալու հատված-տաղերի շարքում, ունի կարմիրով արտահայտված սկզբնատող, իսկ 5-րդ տողին կից լուսանցքում (սկ.՝ Աստանաւր տեսիլ...) գրված է՝ «Գլուխ է»։ Նախորդի համեմատությամբ ունի բնագրային որոշ տարբերություններ, իսկ ծավալով ավելի փոքր է. այստեղ բացակայում է իբրև փոխ ներկայացող հատվածը (23—32-րդ տողեր), բացառությամբ վերջին տան (33—34-րդ տողեր), որը նաև այս տարբերակում հանդես է գալիս իբրև ավարտ։

### ԾԸբ. ԱՍՏԱՆԱՒՐ ՏԵՍԻԼ... *(էջ 153)*

*Հրատարակված է.*

ա. Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 402—403։*

Ներկայանում է մերթ իբրև տաղ, մերթ՝ իբրև փոխ։ Տաղի ամբողջական օրինակի համեմատությամբ ունի նկատելի տարբերություններ և՛ բնագրային առումով,



և՛ ծավալով։ Այս տարբերակը շատ ավելի համառոտված է, ընդամենը 18 տող է։ Այստեղ բացակայում են տաղի ընդարձակ օրինակի 1—4-րդ, 15—22-րդ, 25—26-րդ տողերը։ Ինչ վերաբերում է իբրև փոխ հանդես եկող հատվածին, ապա դա այստեղ առկա է, սակայն իբրև փոխ չի առանձնացված։ Բացի այդ, վերջին երկու տներն (15—18-րդ տողեր) ունեն բոլորովին տարբեր շարադրանք։ Նշված անհամապատասխանությունները վկայում են այն մասին, որ տվյալ դեպքում գործ ունենք տաղի խմբագրված մի տարբերակի հետ։

## 36

### ԾԹ. ՆԵՐՊԱՐՈՒՆԱԿԵԱԼ ԽՈՐՀՈՒՐԴ... *(էջ 155)*

*Հրատարակված է.*

ա. Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 404—405։*

Հաճախ հանդես է գալիս Ներսես կաթողիկոսի անունով, որն առկա է նաև ծայրակապում։ Բնագիրը ներկայացված է երկտող տներով. կազմված է 13 վանկանի տողերից, անհանգ է։ Բնագրի համար օգտագործված աղբյուրներում, նաև № 231 (Երուսաղեմ, թերթ 481բ) ձեռագրում տաղը կից ունի Ընդ որս և մանկունք... փոխը, բացառությամբ E-ի, որը փոխ չունի։ A-ում ջնջված (ամբողջությամբ կամ մասամբ) որոշ բառեր լրացված են հետագայի մի գրչի ձեռքով։ Դրանք են. լուսոյ փայլեալ (տող 12), Թաբաւր (տող 13), Երրորդութեանն (տող 13), երեք (տող 14), երգս առեալ (տող 15), նախաձայնէր (տող 15), քո ցընծացեն (տող 16)։

### Կ. ԸՆԴ ՈՐՍ ԵՒ ՄԱՆԿՈՒՆՔ... *(էջ 157)*

*Հրատարակված է.*

ա. Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 406։*

Սովորաբար ներկայանում է իբրև փոխ։ Երբեմն հանդես է գալիս առանց համապատասխան տաղի։ Բնագիրը չի տնատված. կազմված է 12 վանկանի տողերից. անհանգ է։ Բնագրի համար օգտագործված աղբյուրներում, նաև № 231 (Երուսաղեմ) ձեռագրում կից է Ներպարունակեալ խորհուրդ... տաղին, բացի E-ից, որը կից է Այսաւր է շաբաթ... տաղին ու նվիրված է Ավագ Շաբաթ օրվան։ Տպագիր օրինակը թերի է, բացակայում են 1—12 և 17-րդ տողերը։ A-ում ջնջված կամ եղծված որոշ բառեր լրացված են հետագայի մի գրչի ձեռքով։ Դրանք են. վրկայելով (տող 5), որ ճանեցայ (տող 6), գոչմամբ (տող 7), զարհուրեալ (տող 8), Հեղիաս (տող 9), յԵրուսաղէմ (տող 10), փրկել (տող 11)։

## 37

### ԿԱ. ԱՅՍԱՒՐ ԳԱԲՐԻԷԼ... *(էջ 159)*

*Հրատարակված է.*

ա. Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 407—408։*

Հայտնի է շատ ձեռագրերից ու հաճախ ներկայանում է Ներսես կաթողիկոսի անունով։ Բնագիրը ներկայացված է երկտող տներով, որոնցից յուրաքանչյուրն սկըսվում է Այսաւր բառով. կազմված է 11 վանկանի տողերից, անհանգ է։ Բնագրի համար օգտագործված աղբյուրներում տաղին կից Անճառ տաճար... փոխն է։



26—1024

### ԿԲ. ԱՆԱՐԱՏ ՏԱՃԱՐ... *(էջ 161)*

*Հրատարակված է.*

ա. Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 409—412։*

բ. P. Vetter, Nerses Schnorhali's Kirchenlieder... *(տե՛ս «ՀԱ», 1899, № 1, էջ 27—28)։*

*Հայտնի է շատ ձեռագրերից։ Գերազանցապես ներկայանում է իբրև փոխ ու կից՝* **Այսաւր Գաբրիէլ...** *տաղին։ Բնագիրը ներկայացված է երկտող տներով. կազմված է 11 վանկանի տողերից, անհանգ է։*

## 38

### ԿԳ. ՆՈՐ ՔԵՐՈՎԲԷ ՀՈՂԱՆԻՒԹ... *(էջ 165)*

*Հրատարակվում է առաջին անգամ։*

B *օրինակը խորագրում պահպանել է հեղինակի անունը* (ի Ներսէսէ), *որն առկա է նաև ծայրակապում։ Բանաստեղծությունը հանդես է գալիս նաև իբրև մեղեդի։ Բնագիրը ներկայացված է քառատող տներով։ Անզույգ տողերը 14 վանկանի են, իսկ զույգ տողերը՝ 11—12 վանկանի (կան մասնակի խախտումներ). անհանգ է։ Բնագրի համար օգտագործված օրինակները կից ունեն* Նարդոս բուրեալ... *փոխը։* A-*ում կան ջնջված կամ եղծված բառեր ու տառեր, որոնք լրացված են հետագայի մի գրչի ձեռքով։ Դրանք են.* ընդ վիմօf *(տող 23),* գերգս *երգելով (տող 27), պատճառին (տող 36),* խնդութեամբ *(տող 38)։*

### ԿԴ. ՆԱՐԴՈՍ ԲՈՒՐԵԱԼ... *(էջ 166)*

*Հրատարակվում է առաջին անգամ։*

*Սովորաբար հանդես է գալիս իբրև փոխ։ Բնագիրը ներկայացված է քառատող տներով։ 8 վանկանի տողեր են. հանգավորված է զույգ տողերով (կան խախտումներ)։ Բնագրի համար օգտագործված աղբյուրներում կից է* Նոր Քերովբէ հողանիւթ... *տաղին, բացի* E-*ից, որը հանդես է գալիս իբրև տաղ ու նվիրված է Գրիգոր Լուսավորչի տոնին։*

*Փոխի ծայրակապը տաղի ծայրակապի հետ միանալով կազմում է ամբողջական մի նախադասություն, որտեղ առկա է նաև հեղինակի անունը՝* «Ներսես+Նըվագե Աստվածածնին երգ»:

## 39

### ԿԵ. ՆՈՐԱԶՈՒԱՐՃ ԽՆԴՈՒԹԵԱՄԲ... *(էջ 169)*

*Հրատարակվում է առաջին անգամ։*

*Հայտնի է նաև այլ ձեռագրերից՝ №* Ma *XIII 61 (Տյուբինգեն, թերթ 224բ—227ա), 423 (թերթ 231ա), 425 (թերթ 294ա)։ Հետագայի ընդօրինակություններում տաղը սովորաբար հանդես է գալիս թերի վիճակում՝ սոսկ առաջին երկու տները, ու որպես մեղեդի. այդպիսին է նաև* D-*ն։* ABC *օրինակները խորագրում պահպանել են հեղինակի անունը* (Ներսիսէ կաթողիկոսէ), *որն առկա է նաև ծայրակապում։ Բացի այդ Հայկազյան բառարանում* Նորազուարճ *բառի համար բերված օրինակը քաղված է սույն բանաստեղծությունից, որը հիշված է իբրև Ներսես Շնորհալու տաղ. ուրեմն, բառաքանը կազմողներին ևս հայտնի է տաղի՝ Ներսես Շնորհալու անունով պահպանված մի օրինակը։*



*Բնագիրը ներկայացված է եռատող տներով. գրված է ազատ տաղաչափությամբ. անհանգ է։ Տներից յուրաքանչյուրն ավարտվում է* Ո՜վ սուրբ եկեղեցի *բառերով։ Հայկազյան բառարանում բերված հատվածը նույնպես ավարտվում է* սուրբ եկեղեցի *բառերով. նշանակում է՝ նրանց հայտնի օրինակում բանաստեղծության նաև առաջին տողն ունի այդպիսի ավարտ։* ABC *օրինակներում, նաև Տյուբինգենի ձեռագրում, տաղը կից ունի* Ի լուսոյն արփւոյ... *փոխը։* D-*ն փոխ չունի։*

### ԿԶ. Ի ԼՈՒՍՈՅՆ ԱՐՓՒՈՅ... *(էջ 172)*

*Հրատարակվում է առաջին անգամ։*

*Գերազանցապես ներկայանում է իբրև փոխ։ № 10156 ձեռագրում (թերթ 54բ) սույն միավորը տաղ է ու նվիրված Վերափոխման տոնին։ Բնագիրը չի տնատված. կազմված է 12 վանկանի տողերից. անհանգ է։ Բնագրի համար օգտագործված աղբյուրներում, նաև Տյուբինգենի ձեռագրում, սույն միավորը կից է* Նորազուարճ խընդութեամբ... *տաղին։ Վերջինս ունի Ներսեսի անունը հոդող ծայրակապ («Ներսեսի է երգս»), որը սույն փոխի ծայրակապի հետ («Ի սուրբ եկեղեցի») կազմում է ամբողջական նախադասություն։*

## 40

### ԿԷ. ՅԱՒԷԺ, ԵԿԵՂԵՑԻ, ՑԸՆԾԱ՛... *(էջ 173)*

*Հրատարակվում է առաջին անգամ։*

B-*ն խորագրում պահպանել է հեղինակի անունը* (ի Ներսիսէ կաթողիկոսէ)*։ Հայկազյան բառարանում* յաւէժ *և* յորջորջ *բառերի համար բերված օրինակները քաղված են սույն միավորից, որը հիշվում է իբրև Ներսես Շնորհալու տաղ՝ հատկացված եկեղեցու տոնին։ Բնագիրը չի տնատված։ Գրված է ազատ տաղաչափությամբ. անհանգ է։ Տաղը կից ունի* Ի յերգս սիրեցեալ... *փոխը։*

### ԿԸ. Ի ՅԵՐԳՍ ՍԻՐԵՑԵԱԼ... *(էջ 175)*

*Հրատարակվում է առաջին անգամ։*

*Ներկայանում է իբրև փոխ։ Հայկազյան բառարանում* երջ *բառի համար բերված օրինակը քաղված է սույն միավորից, որը հիշված է իբրև Ներսես Շնորհալու տաղ։ Բնագիրը ներկայացված է քառատող տներով։ Կազմված է 7 վանկանի տողերից. անհանգ է (երբեմն նկատվում է հանգավոր տողեր ստեղծելու միտում)։* A *և* B *օրինակները կից են* Յաւէժ եկեղեցի... *տաղին։* C-*ն կից է* Երգ զարմանալի... *տաղին։*

## 41

### ԿԹ. ՆՈՐ ԴՐԱԽՏԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ... *(էջ 178)*

*Հրատարակված է.*

ա. Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 412—413։*

բ. *«Սիոն», 1949, № 7, էջ 176 (հրատ.՝ Ն. Ծովական)։*

*Հայտնի է նաև այլ ձեռագրերից։ Ծայրակապը հոդում է հեղինակի անունը, որն առկա է նաև խորագրերում։ Բնագիրը ներկայացված է քառատող տներով։ Կազմված է 7 կամ 8 վանկանի (երբեմն՝ 6) տողերից. անհանգ է։* F *օրինակը թերի է։ Բոլոր աղբյուրներում տաղը կից ունի* Կենաց փայտ ընկեալ... *փոխը։* A-*ում ջնջված որոշ*

*բառեր ու տառեր լրացված են հետագայի մի գրչի ձեռքով։ Դրանք են.* Զօր *(տող 3),* Դու *(տող 8),* Րոպէից *(տող 9),* կայիւք *(տող 12),* սիրոյ *(տող 13),* տայով *(տող 15),* Հրեղէն *(տող 20),* Դու *(տող 32)։*

### Հ. ԿԵՆԱՑ ՓԱՅՏ ՏԸՆԿԵԱԼ... *(էջ 181)*

*Հրատարակված է.*

ա. Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 413—416։*

*Հայտնի է նաև այլ ձեռագրերից։ Գերազանցապես ներկայանում է իբրև փոխ. երբեմն, հատկապես ուշ շրջանի ընդօրինակություններում, տաղ է (տե՛ս, օրինակ, ձեռ. № 424, թերթ 254բ. 8251, թերթ 268բ)։ Բնագիրը ներկայացված է երկտող տներով։ Կազմված է 12 վանկանի տողերից. անհանգ է։ Բոլոր օրինակները կից են* Նոր դրախտին եկեղեցւոյ... *տաղին։ № 231 (Երուսաղեմ) ձեռագրի օրինակը, վենետիկյան հրատարակության համեմատությամբ բնագրային տարբերություններ չունենալով, «Սիոն»-ում չի տպագրվել, ուստի մեր կազմած բնագրում այն օգտագործելու հնարավորություն չենք ունեցել։ Որոշ ձեռագրերում բանաստեղծությունը հանդիպում է մասնատված տեսքով, 13-րդ տողից սկսվող հատվածը (երբեմն՝ 21-րդ տողից) իր հերթին ներկայանում է իբրև փոխ։ Այդպիսին է* D *օրինակը։*

## 42

### ՀԱ. ՄԻԱԿՆ Ի ՄԻՈՅՆ... *(էջ 184)*

*Հրատարակված է.*

ա. *«Բազմավէպ», 1889, սեպտեմբեր, էջ 269—270։*

*Հայտնի է նաև № Ma XIII 61 (Տյուբինգեն, թերթ 230ա—232բ, 235բ—236ա) ձեռագրից։* AB *և* E *օրինակները խորագրում պահպանել են հեղինակի անունը* (Ներսիսի կաթողիկոսի)։ *Բնագիրը ներկայացված է երկտող տներով. գրված է տների շղթայումով։ Յուրաքանչյուր տան առաջին տողը 12 վանկանի է, իսկ երկրորդ տողը՝ 11 վանկանի. անհանգ է։* B *և* C *օրինակները, նաև Տյուբինգենի ձեռագրում գտնվողը, կից ունեն* Արդ, աւրհնեալ ես... *փոխը։* D*-ն փոխ չունի, իսկ* E *օրինակը հրատարակված է առանց որևէ բացատրության, թե ի՞նչ աղբյուրից է քաղված և ունի՞ փոխ կամ ոչ։* A*-ին կից իբրև փոխ հանդես է գալիս տվյալ բանաստեղծության երկրորդ մասը՝ սկսած 25-րդ տողից (տե՛ս՝* Փայտըն կենաւար...*)։* B*-ում, այդ նույն տողին կից լուսանցքում կա համապատասխան նշում։ Քննական բնագրում հիշյալ հատվածը բանաստեղծության առաջին մասից անջատել ենք աստղանիշով։*

### ՀԲ. ԱՐԴ, ԱՒՐՀՆԵԱԼ ԵՍ... *(էջ 187)*

*Հրատարակված է.*

ա. Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 416—417։*

*Հայտնի է նաև № Ma XIII 61 (Տյուբինգեն) ձեռագրից։ Գերազանցապես ներկայանում է իբրև փոխ։ Բնագիրը ներկայացված է երկտող տներով։ Կազմված է 11 վանկանի տողերից. անհանգ է։* BC *օրինակները և Տյուբինգենի ձեռագրում գտնվողը կից են* Միակն ի միոյն... *տաղին.* A*-ն կից է* Սրբոյ խաչին զաւրութիւն... *տաղին։ Հրատարակված օրինակը սկզբից թերի է (սկսվում է* Բարունակ բերող... *տողից) և հանդես է գալիս իբրև տաղ։*



## 43

### ՀԳ. ԱՌԱՋԻՆԸՆ ԼՈՅՍ ԵՐՐԵԱԿ... *(էջ 190)*

*Հրատարակված է.*

ա. Ներսես Շնորհալի. *Բանք չափաւ, էջ 418—420։*

*Հայտնի է նաև այլ ձեռագրերից՝ № Ma XIII 61 (Տյուբինգեն, թերթ 247բ), 231 (Երուսաղեմ, թերթ 515բ)։ Հեղինակի անունը հաճախ առկա է խորագրերում* (Ներսիսի կաթողիկոսի)։ *Բնագիրը ներկայացված է երկտող տներով։ Կազմված է 13 վանկանի տողերից. անհանգ է։ Բոլոր աղբյուրներում տաղը կից ունի* Նոր տարիս երկնաւորաց... *փոխը, բացի Երուսաղեմի օրինակից, որին կից առկա է* Զեզ ձայնակից զուարթունք... *միավորը։*

### ՀԴ. ՆՈՐ ՏԱՐԻՍ ԵՐԿՆԱՒՈՐԱՑ... *(էջ 193)*

*Հրատարակված է.*

ա. Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 421—423։*

*Հայտնի է նաև այլ ձեռագրերից։ Սովորաբար ներկայանում է իբրև փոխ, իսկ երբեմն՝ իբրև տաղ (օրինակ՝ ձեռ. №* Cod. Arm. *52, Լվով, թերթ 286ա. 9053, թերթ 36բ. 424, թերթ 286բ)։ Ծայրակապը հոդում է հեղինակի անունը։ Բնագիրը ներկայացված է երկտող տներով։ Յուրաքանչյուր տան առաջին տողը 13 վանկանի է (կան խախտումներ), իսկ երկրորդ տողը՝ 11 վանկանի. անհանգ է։ Բնագրի համար օգտագործված աղբյուրներում, նաև № Ma XIII 61 (Տյուբինգեն) ձեռագրում, բանաստեղծությունը կից է* Առաջինըն լոյս երրեակ... *տաղին։*

## 44

### ՀԵ. ԱՌԱՔԵԱԼՔ ԱՍՏՈՒԱԾՈՐԴԻՈՅՆ... *(էջ 196)*

*Հրատարակված է.*

ա. Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 423—426։*

բ. P. Vetter, Nerses Schnorhali's Kirchenlieder... *(տե՛ս «ՀԱ», 1899, № 1, էջ 27—28)։*

*Հայտնի է նաև այլ ձեռագրերից։ Խորագրերում հաճախ առկա է հեղինակի անունը* (ի Ներսիսէ կաթողիկոսէ)։ *Բնագիրը ներկայացված է քառատող տներով։ Կազմված է 8 վանկանի տողերից (անզույգ տողերը հաճախ 7 վանկանի են)։ Կան հանգավորված տողեր, ընդ որում ոչ միանման. մերթ հանգավորված են տների առաջին ու երկրորդ և երրորդ ու չորրորդ տողերը. մերթ առաջին, երկրորդ և չորրորդ տողերը, երբեմն միայն առաջին երկուսը, կամ միայն երրորդն ու չորրորդը։* AB *և* E *օրինակները կից ունեն* Եկայք զուարճացեալք... *փոխը։* C*-ն փոխ չունի։* D *օրինակի 21-րդ տողից սկսվող հատվածը առանձնացված է* Փոխէ *ենթախորագրով, իսկ 37-րդ տողն ունի կարմիր սկզբնատառ, որը նույնպես մատնանշում է, թե տվյալ հատվածը պիտի կատարվի այլ կերպ, տարբեր եղանակով։*

### ՀԶ. ԵԿԱՅՔ, ԶՈՒԱՐՃԱՑԵԱԼՔ... *(էջ 201)*

*Հրատարակված է.*

ա. Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 426—427։*

*Հայտնի է նաև այլ ձեռագրերից։ Սովորաբար հանդես է գալիս իբրև փոխ, եր-*

թեմն՝ իբրև տաղ։ Ծայրակապը հոդում է հեղինակի անունը։ Բնագիրը ներկայացված է քառատող տներով։ Կազմված է 11 վանկանի տողերից. անհանգ է։ AB և D օրինակները կից են Առաքեալք Աստուածորդւոյն... տաղին։ C-ն ներկայանում է իբրև տաղ։

45

## ՀԷ. ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԽՈՐՈՑՆ ԱՆՃԱՌ... (էջ 203)

Հրատարակված է.

ա. Ներսես Շնորհալի, Բանք չափաւ, էջ 428—430։

բ. P. Vetter, Nerses Schnorhali's Kirchenlieder... (տե՛ս «ՀԱ», 1899, № 1, էջ 27—28)։

Հայտնի է նաև այլ ձեռագրերից։ Բնագիրը ներկայացված է քառատող տներով։ Կազմված է 8 վանկանի տողերից (անզույգ տողերում երբեմն 7 վանկանի)։ Որոշ հատվածներ հանգավորված են և հատկապես զույգ տողերով։ ABC-ն նաև № Ma XIII 61 (Տյուբինգեն, թերթ 237բ) և № 231 (Երուսաղեմ, թերթ 520բ) ձեռագրերում գտնըվող օրինակները կից ունեն Նորահրաշ տաւնիս... փոխը։ D-ին կից իբրև փոխ հանդես է գալիս Ով սուրբ մարգարէք... միավորը, իսկ E-ն փոխ չունի։ Առանց փոխի է նաև F օրինակը։ Վերջինիս կից առկա է Նորահրաշ տաւնիս... միավորը, բայց ոչ իբրև փոխ, այլ իբրև առանձին տաղ՝ նվիրված նույն տոնին։

## ՀԸ. ՆՈՐԱՀՐԱՇ ՏԱՒՆԻՍ... (էջ 208)

Հրատարակված է.

ա. Ներսես Շնորհալի, Բանք չափաւ, էջ 431—432։

Հայտնի է նաև այլ ձեռագրերից։ Գերազանցապես հանդես է գալիս իբրև փոխ, երբեմն, հատկապես հետագայի ընդօրինակություններում, ներկայանում է իբրև տաղ։ Ծայրակապը հոդում է հեղինակի անունը։ Բնագիրը ներկայացված է երկտող տներով։ Կազմված է 13 վանկանի տողերից. անհանգ է։ ABC-ն կից են Աստուածային խորոցն անճառ... տաղին։ D և E օրինակները ներկայանում են իբրև տաղ։

46

## ՀԹ. ԱՅՍԱՒՐ ՄԱՅՐ ՍԻՈՆ... (էջ 210)

Հրատարակված է.

ա. Ներսես Շնորհալի, Բանք չափաւ, էջ 433—435։

բ. Ա. Տեկաեց, Հայերգ, էջ 23—24։

Հայտնի է նաև № Ma XIII 61 (Տյուբինգեն) ձեռագրից և այլ աղբյուրներից։ Հազվադեպ ներկայանում է իբրև մեղեդի (ձեռ. № 424, թերթ 227բ)։ Հեղինակի անունն առկա է B և D օրինակների խորագրում։ A օրինակը ձեռագրում (№ 7785) կրկնված է (թերթ 137բ—138բ)։ Վերջինս բնագրային տարբերություններ չունի, ուստի քննական բնագրում չի օգտագործված։ Բնագիրը չի տնատված։ Կազմված է 10 վանկանի տողերից. անհանգ է։ ABC-ն, նաև Տյուբինգենի և № 424 ձեռագրերի օրինակները, կից ունեն Նորոյ գինւոյն իմաստութեան... փոխը։ D-ում բանաստեղծության երկրորդ մասը՝ սկսած 19-րդ տողից, անջատված է իբրև փոխ (սկ.՝ Ճառագայթ լուսոյ...) և առանձին խորագրով։ E-ն ներկայանում է առանց փոխի։



## Ձ. ՆՈՐՈՅ ԳԻՆՒՈՅՆ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ... (էջ 213)

Հրատարակված է.

ա. Ներսես Շնորհալի, Բանք չափաւ, էջ 437։

Հայտնի է նաև այլ ձեռագրերից։ Գերազանցապես ներկայանում է իբրև փոխ։ A օրինակը ձեռագրում կրկնված է (թերթ 138բ)։ Վերջինս բովանդակային առանձին տարբերություն չունի, ուստի քննական բնագրում չի օգտագործված։ Ծայրակապը հոդում է հեղինակի անունը։ Բնագիրը ներկայացված է երկտող տներով։ Կազմված է 8 վանկանի տողերից. անհանգ է։ ABC-ն, նաև Տյուբինգենի և № 424 ձեռագրերի օրինակները կից են Այսաւր մայր Սիոն... տաղին։ D-ն հանդես է գալիս իբրև առանձին տաղ և առանց փոխի ու հատկացված է Բժ առաքելոց տոնին։ Առանձին տաղ է նաև E-ն։

47

## ՁԱ. ԱՐԵԳԱԿՆ ԱՐԴԱՐ ԸՋՀՈՒՐ... (էջ 215)

Հրատարակված է.

ա. Ներսես Շնորհալի, Բանք չափաւ, էջ 438—443։

բ. Ա. Տեկաեց, Հայերգ, էջ 16 (հատված)։

գ. „Армянская средневековая лирика", с. 202.

Հայտնի է մի շարք ձեռագրերից։ Խորագրերում հաճախ առկա է հեղինակի անունը։ Ա. Տեկանցի հրատարակած տարբերակը տաղի մի հատվածն է միայն (29—36-րդ տողեր)՝ Մեղեդի անուշ խորագրով, ընդ որում այդ հատվածի առաջին երկու տողերը (սկ.՝ Կենդանի վկայք...) Առաւօտ լուսոյ արեւելեան ազանց... բանաստեղծության մասն են ու սխալմամբ են կցված սույն տաղին։

Բնագիրը ներկայացված է քառատող տներով։ Կազմված է 11 վանկանի տողերից. անհանգ է։ ABC և F օրինակները կից ունեն Բանիւ աւետաւոր... փոխը։ E-ն հանդես է գալիս առանց փոխի. այդպես է ներկայանում հատկապես հետագայի ընդօրինակություններում, որոնցում հաճախ տաղը կոտորակված է փոխերի։ Օրինակ՝ D-ն ձեռագրում պահպանված է լրիվ, բայց ոչ որպես մեկ ամբողջական բանաստեղծություն. 409ա։ թերթերում առկա են 1—36-րդ տողերը՝ կից Մարտիրոսաց տոնին նվիրված մի գանձի, ընդ որում, 17—36-րդ տողերը անջատված են իբրև փոխ։ Այնուհետև, նույն տոնին հատկացված մեկ այլ գանձի կից բերված են խնդրո առարկա տաղի 37—72-րդ տողերը (թերթ 411բ—412բ)։ Այս դեպքում էլ տաղի 51—72-րդ տողերն են ներկայանում իբրև փոխ՝ Յորդորակ է խորագրով։ Պատահում է նաև, երբ տաղից պահպանված են սոսկ հատվածներ, ընդ որում, երբեմն բանաստեղծության միջին մասերը, և առաջին հայացքից դժվար է կռահել մասի ու ամբողջի հարաբերությունը. օրինակ՝ հենց նույն № 6495 ձեռագրի 407աբ թերթերում առկա են քննվող տաղի 29—36-րդ տողերը, որոնք բերված են Կուսանաց տոնին նվիրված գանձին կից՝ Մեղեդի Կուսանաց խորագրով։

## ՁԲ. ԲԱՆԻՒ ԱՒԵՏԱՒՈՐ... (էջ 220)

Հրատարակված է.

ա. Ներսես Շնորհալի, Բանք չափաւ, էջ 443—446։

բ. P. Vetter, Nerses Schnorhali's Kirchenlieder... (տե՛ս «ՀԱ», 1899, № 1, էջ 27—28)։

Հայտնի է նաև այլ ձեռագրերից։ Սովորաբար ներկայանում է իբրև փոխ, բայց հատկապես հետագայի ընդօրինակություններում հանդիպում է նաև իբրև տաղ ու նվիրված այլ տոնի՝ Խաչի Նավակատյաց տոնին։ Ծայրակապը հողում է հեղինակի անունը։ Բնագիրը ներկայացված է քառատող տներով։ Կազմված է 14 վանկանի տողերից (որոշ խախտումներով). անհանգ է։ ABC և E օրինակները կից են Արեգակն արդար բզհուր... տաղին։ D-ն տաղ է ու նվիրված Խաչի Նավակատյաց տոնին։ Բնագրի համար օգտագործված աղբյուրներում (բացառությամբ C-ի) բանաստեղծության 21-րդ տողին կից լուսանցքում կա Այլ ազգ նշումը։ D-ն այդ նշումը չունի, բայց տողն ունի կարմիր սկզբնատառ։ Տաղի հիշյալ հատվածը (21—36-րդ տողեր) հետագայի շատ ձեռագրերում հանդես է գալիս նաև առանձին՝ կա՛մ իբրև փոխ, կա՛մ իբրև առանձին տաղ (օրինակ՝ ձեռ. № 474, թերթ 227ա) ու նվիրված մերթ Մարտիրոսաց, մերթ Նավակատյաց Խաչի տոնին։

## 48

### ՁԳ. ԱՆՏՈՆ ՍԿԻԶԲՆ ԵՐԿՆԱՒՈՐ... (էջ 223)

Հրատարակվում է առաջին անգամ։

Ձեռագիր օրինակները խորագրում պահպանել են հեղինակի անունը։ № Ma XIII 61 (Տյուբինգեն, թերթ 244ա—245ա) ձեռագրում առկա են Անտոն անապատականի տոնին հատկացված երկու տաղեր, րրոնք ունեն նույն սկզբնատողը՝ Անտո՛ն, ոստ անապատի...։ Դրանցից առաջինը կից ունի Նոր դրախտին քո, Տէ՛ր... փոխը, իսկ երկրորդը (որը հայտնի է շատ ձեռագրերից ու միշտ ներկայանում է անհեղինակ) առանց փոխի է և ունի նշում այն մասին, թե նախորդ տաղից տարբերվում է։ Հնարավոր է, որ հիշյալ տաղերից առաջինը լինի հենց մեզ հետաքրքրող տարբերակը, որին համապատասխանում է կից հանդես եկող իր փոխով, իսկ սկզբնատողը կարող է պարզապես մյուս տաղի նմանողությամբ սխալմամբ կրկնված լինի։ Աղբյուրներում բանաստեղծությունը խորագրված է իբրև Անտոնին նվիրված տաղ, բայց շարադրանքը վերաբերում է նաև մյուս անապատականներին։ Հենց այդ նկատի ունի A օրինակի ստորին լուսանցքում (թերթ 88ա) կատարված նշումը՝ «Անտոնի անապատականին և այլ ճգնաւորաց սրբոց»։ Բնագիրը չի տնատված։ Գրված է ազատ տաղաչափությամբ ու անհանգ։ Օրինակները կից ունեն Նոր դրախտին քո, Տէ՛ր... փոխը։

### ՁԴ. ՆՈՐ ԴՐԱԽՏԻՆ ՔՈ, ՏԷ՛Ր... (էջ 225)

Հրատարակված է.

ա. Ներսես Շնորհալի, Բանք չափաւ, էջ 435—436։

բ. Ա. Տեկանց. Հայերգ, էջ 22—23։

Հայտնի է նաև այլ ձեռագրերից։ Գերազանցապես փոխ է. հետագայի ընդօրինակություններում երբեմն ներկայանում է իբրև տաղ կամ մեղեդի ու հատկացված է Վարդապետաց կամ Հայրապետաց տոնին։ Ծայրակապը հողում է հեղինակի անունը։ A-ն ստորին լուսանցքում (թերթ 89ա) ունի նշում՝ «Անտոնի անապատականին և այլ ճգնաւորաց սրբոց»։ Բնագիրը չի տնատված։ Կազմված է 11 վանկանի տողերից. անհանգ է։ A և B օրինակները կից են Անտոն սկիզբն երկնաւոր... տաղին։ D-ն կից է



Այսաւր մայր Սիոն... տաղին, որը նվիրված է Հայրապետաց տոնին, իսկ C օրինակը տաղ է։ Իբրև տաղ է ներկայացված նաև Ա. Տեկանցի հրատարակածը՝ Տաղ անուշ և լաւ խորագրով։

## 49

### ՁԵ. ԱՆՄԱՐՄՆՈՑԸՆ ՀՐԵՂԻՆԱՑ... (էջ 227)

Հրատարակված է.

ա. Ներսես Շնորհալի, Բանք չափաւ, էջ 446—449։

բ. P. Vetter, Nerses Schnorhali's Kirchenlieder... (տե՛ս «ՀԱ», 1899, № 1, էջ 27—28)։

Հայտնի է նաև այլ ձեռագրերից։ Խորագրերում հաճախ առկա է հեղինակի անունը։ Բնագիրը ներկայացված է քառատող տներով։ Կազմված է 8 վանկանի տողերից (անզույգ տողերում երբեմն՝ 7 վանկ). անհանգ է, բայց հատկապես բանաստեղծության երկրորդ մասում կան հանգավորված տողեր։ A և Б օրինակները կից ունեն Բարբառոյն յանապատէ... փոխը։ D և E օրինակները ներկայանում են առանց փոխի։ C-ն կից ունի Ի բանդէն մաղթէր... փոխը։ Տաղն առկա է նաև № Ma XIII 61 (Տյուբինգեն, թերթ 160բ—163ր) ձեռագրում և կից ունի Բարբառոյն յանապատէ... փոխը։

### ՁԶ. ԲԱՐԲԱՌՈՅՆ ՅԱՆԱՊԱՏԷ... (էջ 232)

Հրատարակվում է առաջին անգամ։

Հայտնի է նաև № Ma XIII 61 (Տյուբինգեն) ձեռագրից։ Բոլոր աղբյուրներում փոխ է ու կից Անմարմնոցըն հրեղինաց... տաղին։ A-ի ստորին լուսանցքում (թերթ 422ա) գրված է. «Յովհաննու Մկրտչին, ի Ներսիսէ կաթուղի[կոսէ]»։ Ծայրակապը հողում է հեղինակի անունը։ Բնագիրը ներկայացված է երկտող տներով։ Կազմված է 12 վանկանի տողերից (կան խախտումներ). անհանգ է։ A օրինակում, հետագայի մի միջամտողի ձեռքով կատարված են ջնջումներ (1, 3 և 18-րդ տողերում), նաև հավելումներ, որոնք անհարկի են (6, 7, 15 և 18-րդ տողերում)։ Բնագրի տողատակի տարընթերցումներում ցույց են տրված այդ ջնջումներն ու հավելումները՝ համապատասխան նշումներով։

## 50

### ՁԷ. ՈՐԴԻՔՆ ՈՐՈՏՄԱՆ... (էջ 234)

Հրատարակված է.

ա. Ներսես Շնորհալի, Բանք չափաւ, էջ 449—452։

Հայտնի է նաև այլ ձեռագրերից։ Խորագրերում հաճախ առկա է հեղինակի անունը։ Բնագիրը ներկայացված է երկտող տներով։ Կազմված է 13 վանկանի տողերից. անհանգ է. գրված է տների շղթայումով։ Բոլոր աղբյուրներում տաղը կից ունի Նոր լոյս յարփենւոյն... փոխը։ E օրինակը հանդես է գալիս մասնատված տեսքով. 15-րդ տողից սկսվող հատվածը (սկ.՝ Ի սպառ սիրեաց...) բանաստեղծության առաջին մասից անջատված է առանձին խորագրով ու բերված մի քանի այլ տաղերից հետո, բայց միևնույն ցանձին կից։ Այդ երկրորդ հատվածը, իր հերթին, 25-րդ տողին կից լուսանցքում (սկ.՝ Բանն որ էր Աստուած...) ունի Փոխէ նշումը։ Վերջինս իբրև փոխ տաղից ան-

չատված է նաև այլ աղբյուրներում (տե՛ս, օրինակ, ձեռ. № 5936, թերթ 282ա. 423, թերթ 49բ)։

### ՁԸ. ՆՈՐ ԼՈՅՍ ՅԱՐՓՆՈՒՈՅՆ... (էջ 237)

*Հրատարակված է.*

ա. Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 452—454։*

*Հայտնի է նաև այլ ձեռագրերից։ Սովորաբար հանդես է գալիս իբրև փոխ, բայց հատկապես հետագայի ընդօրինակություններում՝ նաև իբրև տաղ (տե՛ս, օրինակ, ձեռ. № 8251, թերթ 327ա. 424, թերթ 320բ)։ Ծայրակապը հոդում է հեղինակի անունը։ Բնագիրը ներկայացված է երկտող տներով։ Կազմված է 12 վանկանի տողերից. անհանգ է, բայց երկրորդ մասում կան հանգավորված հատվածներ։ Բոլոր աղբյուրներում կից է* Որդիքն Որոտման... *տաղին։*

### 51

### ՁԹ. Ի ԽԱՉԻՆ ՏԸՆԿԵԱԼ... (էջ 239)

*Հրատարակված է.*

ա. Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 454—455։*

բ. Ա. Տեկանց, *Հայերգ, էջ 18—19։*

*Հայտնի է նաև այլ ձեռագրերից։ Խորագրերում հաճախ առկա է հեղինակի անունը։ Հետագայի ընդօրինակություններում բանաստեղծությունը հանդես է գալիս նաև իբրև մեղեդի ու երբեմն կոտորակված տեսքով։ Բնագիրը ներկայացված է քառատող տներով։ Կազմված է 7 վանկանի տողերից (երբեմն՝ 6 վանկանի), անհանգ է. գրված է տների շղթայումով։* ABCD *օրինակները կից ունեն* Նոր ծառոյն կենաց... *փոխը, իսկ վերջինիս կից ևս մի փոխ՝* Ի զաւազանէն Յեսսեայ...։ *Տաղի ու այդ երկու փոխերի ծայրակապային շղթան կազմում է մեկ ամբողջական նախադասություն՝* «Ի Ստեփանոս+Նախավկայն է+Ի Ներսիսե կաթողիկոսե»։ *№ Ma XIII 61 (Տյուբինգեն) ձեռագրում գտնվող օրինակին կից առկա է փոխերից առաջինը միայն (թերթ 258ա), իսկ* E *և* F *օրինակները, նաև Ա. Տեկանցի հրատարակածը կից ունեն փոխերից միայն երկրորդը։* E-*ն հանդես է գալիս կոտորակված տեսքով. Նրա երկրորդ մասը, սկսած 25-րդ տողից (սկ.՝* Նըստեալն յառնէր...*), անջատված է առանձին խորագրով՝* Տաղ Օրբոյն Ստեփ[աննոսի]։

### Ղ. ՆՈՐ ԾԱՌՈՅՆ ԿԵՆԱՑ... (էջ 242)

*Հրատարակվում է առաջին անգամ։*

*Հայտնի է նաև երկու այլ ձեռագրերից՝ № Ma XIII 61 (Տյուբինգեն, թերթ 261ա-բ) և 231 (Երուսաղեմ, թերթ 527բ)։ Գերազանցապես հանդես է գալիս իբրև փոխ, իսկ Երուսաղեմի օրինակը տաղ է՝* Տաղ սուրբ Ստեփաննոսի Նախավկային *խորագրով։ Բնագրի համար օգտագործված աղբյուրներում կից է* Ի խաչին տընկեալ... *տաղին և ինքն էլ իր հերթին կից ունի փոխ՝* Ի զաւազանէն Յեսսեայ...։ *Երուսաղեմի օրինակը ևս կից ունի սույն փոխը, իսկ Տյուբինգենի օրինակը՝ չունի։ Բնագիրը ներկայացված է եռատող տներով, որոնցից յուրաքանչյուրն ավարտվում է* սուրբըն Ստեփանոս *բառերով (բացի վերջին երկու տներից)։ Յուրաքանչյուր տան առաջին տողը 11 վանկանի է, երկրորդ տողը՝ 12, իսկ երրորդ տողը՝ 10 վանկանի. անհանգ է։*



### ՂԱ. Ի ԳԱՒԱԶԱՆԷՆ ՅԵՍՍԵԱՅ... (էջ 245)

*Հրատարակված է.*

ա. Ներսես Շնորհալի, Բանք չափաւ, *էջ 456—458։*

բ. Ա. Տեկանց, *Հայերգ, էջ 19—20։*

*Հայտնի է նաև այլ ձեռագրերից։ Գերազանցապես հանդես է գալիս իբրև փոխ։ Հետագայի ընդօրինակություններում հանդիպում է նաև իբրև տաղ ու հաճախ կոտորակված։ Հեղինակի անունը պահպանված է շատ խորագրերում, ինչպես և ծայրակապում։ Բնագիրը ներկայացված է երկտող տներով։ Կազմված է 12 վանկանի տողերից. անհանգ է։* ABCD *օրինակները կից են* Նոր ծառոյն կենաց... *փոխին, որն իր հերթին կից է* Ի խաչին տընկեալ... *տաղին։* E *և* F *օրինակները, նաև Ա. Տեկանցի հրատարակածը կից են տաղին* (Ի խաչին տընկեալ...)։ *Երուսաղեմի օրինակը կից է* Նոր ծառոյն կենաց...*-ին, որը տվյալ ձեռագրում ներկայանում է իբրև տաղ։* E-*ի երկրորդ մասը, սկսած 17-րդ տողից (սկ.՝* Կենդանի վըկայ...*), անջատված է* Փոխէ զձայն *ենթախորագրով. այդպիսին է նաև Ա. Տեկանցի հրատարակածը. այս դեպքում փոխված է նաև տնատումը, ընդ որում, առաջին մասը (1—16-րդ տողեր) ներկայացված է քառատող տներով, իսկ երկրորդ մասը (17—36-րդ տողեր)՝ երկտող տներով։*

### 52

### ՂԲ. ՍՐՈՎԲԷԻՑ ՁԱՅՆԻՒ... (էջ 248)

*Հրատարակված է.*

ա. Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 459—462։*

բ. *«Սիոն», 1949, № 5—6, էջ 132—133 (հրատ.՝ Ն. Ծովական)։*

*Հայտնի է նաև այլ ձեռագրերից։ Հեղինակի անունն առկա է ինչպես խորագրերում, այնպես էլ ծայրակապում։* A-*ի խորագրից պարզվում է, որ տվյալ բանաստեղծությունը հեղինակը գրել է Քեսունի Կարմիր վանքում ուսանելու տարիներին, նախքան կաթողիկոս ընտրվելը, և Սիմեոն եպիսկոպոս Սեբաստացու խնդրանքով. վերջինիս մասին կենսագրական տվյալներ մեզ հայտնի չեն։ Բնագիրը ներկայացված է երկտող տներով։ Գրված է տների շղթայումով։ Կազմված է 11 վանկանի տողերից. անհանգ է։* C *և* H *օրինակները վերջից թերի են։ «Սիոն»-ում հրատարակվածը համեմատված է Երուսաղեմի Մատենադարանի № 1193 ձեռագրում գտնվող (էջ 889) օրինակի ու վենետիկյան թերի տարբերակի հետ և անհամապատասխանությունները ցույց են տրված տողատակում։ Մեր կազմած բնագրում № 1193 (Երուսաղեմ) ձեռագրի օրինակը չի օգտագործված, որովհետև բնագրային էական տարբերություններ չեն նկատվում։* ABCG *օրինակները, նաև № Ma XIII 61 (Տյուբինգեն) ձեռագրում գտնվողը կից ունեն* Ի յելս արևու... *փոխը (որը համարվում է Ներսես Շնորհալու եղբոր՝ Գրիգոր Պահլավունու հեղինակությունը)։* D *և* H *օրինակները փոխ չունեն։* E-*ին կից առկա է ուրիշ փոխ՝* Բարձրացիր պայծառ..., *իսկ* F-*ը ինքն է բաժանված փոխերի, ընդ որում, 21-րդ տողից սկսվող հատվածը (սկ.՝* Ուրախ լինելով...) *անջատված է առաջին մասից* Փոխ *ենթախորագրով, իսկ 45-րդ տողից առաջ (սկ.՝* Սէրն որ առ Աստուած...) *կա* Յորդորակ *խորագիրը։*

## 53

### ԴԳ. ԳՐԻԳՈՐԻՈ՛Ս, ԱՌԱՔԻՆԻ ՀԸՍԿՈՂ... *(էջ 253)*

*Հրատարակված է.*

ա. *«Սիոն», 1949, № 9, էջ 236 (հրատ.՝ Ն. Ծովական)։*

*Հայտնի է նաև այլ ձեռագրերից։ Հետագայի ընդօրինակություններում հանդես է գալիս նաև իբրև մեղեդի։ Հեղինակի անունն առկա է C-ի խորագրում (*տեառն Ներսեսի*), իսկ A-ի ստորին լուսանցքում (թերթ 160ա) այդ մասին կա նշում՝ «Տէր Ներսիսի ասացեալ է»։ Հրատարակված օրինակը հանդես է գալիս անհեղինակ։ Բնագիրը ներկայացված է եռատող տներով, որոնք սկսվում են* Գրիգորիոս *բառով։ Յուրաքանչյուր տան առաջին տողը 10 վանկանի է, իսկ երկրորդ և երրորդ տողերը՝ 11 վանկանի. անհանգ է։ ABC և F օրինակները կից ունեն* Բարձրացիր դըշխոյ փառաւք... *փոխը. D-ին կից առկա է այլ փոխ՝* Յայն իմանալի հրաշիցն...։ *E-ն, որը թերի է, ձեռագրում ներկայանում է երկու առանձին ոտանավորներով, երկուսն էլ իբրև մեղեդի։ Առաջինը (թերթ 209բ) ընդգրկում է բանաստեղծության 1—6-րդ տողերը, իսկ երկրորդը (թերթ 326բ)՝ 7—12-րդ տողերը։ Այս օրինակը փոխ չունի։*

### ԴԴ. ԲԱՐՁՐԱՑԻՐ, ԴԸՇԽՈՅ, ՓԱՌԱՒՔ... *(էջ 256)*

*Հրատարակված է.*

ա. *«Սիոն», 1949, № 9, էջ 236—237 (հրատ.՝ Ն. Ծովական)։*

*Հայտնի է նաև այլ ձեռագրերից։ Գերազանցապես հանդես է գալիս իբրև փոխ. № 8108 ձեռագրում (թերթ 81բ) տաղ է։ Սովորաբար կից է* Գրիգորիո՛ս, առաքինի հըսկող... *տաղին։ A-ի ստորին լուսանցքում (թերթ 161ա) կա նշում՝ «Տեառն Ներսի[սի] ասա[ցեալ]»։ Հրատարակված օրինակը անհեղինակ է։ Բնագիրը ներկայացված է երկտող տներով։ Կազմված է 12 վանկանի տողերից։ Բանաստեղծությունը մեծ մասամբ հանգավորված է ըստ տների։ ABC և F օրինակները կից են* Գրիգորիո՛ս, առաքինի հըսկող... *տաղին։ E-ն կից է* Ի յեւս արեւու... *միավորին, իսկ D-ն՝* Արովբէից ձայնիւ... *տաղին։*

*Բանաստեղծության հրատարակված օրինակի 37-րդ տողը հրատարակչի կողմից համարված է աղավաղված ու համեմատված է հիշյալ տողի՝ Հայկազյան բառարանում բերված տարբերակի հետ. վերջինիս նման է նաև մեր օգտագործած ձեռագրերի համապատասխան հատվածը։*

## 54

### ԴԵ. ՆՈՐ ԵՒ ԱՌԱՋԻՆ ԼՈՅՍ... *(էջ 260)*

*Հրատարակված է.*

ա. Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 463—464։*

*Հայտնի է նաև № 231 (Երուսաղեմ, թերթ 496ա) ձեռագրից։ Խորագրերում գրեթե միշտ հիշված է հեղինակը։ Ծայրակապը ես հոդում է հեղինակի անունը։ Բնագիրը ներկայացված է երկտող տներով։ Կազմված է 6 վանկանի (երբեմն՝ 7 վանկանի) տողերից. անհանգ է։ A և B օրինակները, նաև Երուսաղեմի ձեռագրում գտնվողը կից ունեն* Գովեմք այսաւր... *փոխը։ C և D օրինակները ներկայանում են առանց փոխի*



### ԴԶ. ԳՈՎԵՄՔ ԱՅՍԱՒՐ... *(էջ 262)*

*Հրատարակված է.*

ա. *«Սիոն», 1949, № 7, էջ 175—176 (հրատ.՝ Ն. Ծովական)։*

*Գերազանցապես հանդես է գալիս իբրև փոխ։ Ունի ծայրակապ, որը միանալով տաղի ծայրակապի հետ (տե՛ս ԴԵ)՝ կազմում է ամբողջական նախադասություն՝ «Ներսէսի նվաստի+Գովեստ մեծին հոմանվանն նմին»։ Բնագիրը ներկայացված է քառատող տներով։ Կազմված է 8 վանկանի տողերից. հանգավորված է մերթ տներով (օրինակ՝ Ա, Բ, Է, Ը և Ժ տները), մերթ՝ զույգ տողերով։ ABD օրինակները կից են* Նոր եւ առաջին լոյս... *տաղին։ C-ն հանդես է գալիս իբրև տաղ և առանց փոխի։ A-ում ջնջված կամ եղծված որոշ բառեր ու տառեր լրացված են հետագայի մի գրչի ձեռքով։ Դրանք են.* յանդրանկի *(տող 4),* ըղձման *(տող 5),* տաճարիս *(տող 6),* արժանօր *(տող 7),* մաճուր *(տող 8),* յիշատակաց *(տող 10),* տանն *(տող 11),* պղալնկերպ *(տող 26),* հրաշից *(տող 27),* գործով *(տող 28),* աղբեացեալ *(տող 29),* ըղխեալ *(տող 30),* եղեալ *(տող 31),* հանեալ *(տող 32)։*

## 55

### ԴԷ. ՆՈՐ ԻՄՆ Է ՀԸՆՉԻՒՆ... *(էջ 265)*

### Փ[ոխ.] Քառասնից սրբոց... *(էջ 266)*

*Հրատարակված է.*

ա. Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 464—468։*

*Հայտնի է նաև № Ma XIII 61 (Տյուբինգեն, թերթ 169բ, 176աբ) ձեռագրից։ Խորագրերը պահպանել են հեղինակի անունը, որը հոդում է նաև ծայրակապը։ Բնագիրը չի տնատված։ Գրված է տողերի շղթայումով, որի հետևանքով միևնույն նախադասությունն են հոդում նաև տողավերջի բառերի սկզբնատառերը, այն տարբերությամբ, որ բանաստեղծության «Ն» սկզբնատառը հանդես է գալիս իբրև սկիզբ և՛ տողասկզբի, և՛ տողավերջի ծայրակապային շղթայի համար, որով երկու միանման նախադասությունների տողերը չեն համապատասխանում միմյանց։ Բանաստեղծությունը կազմված է 15 վանկանի տողերից (1—2 և 12—13-րդ տողերը՝ 11 վանկանի). անհանգ է։ A-ի երկրորդ մասը՝ սկսած 12-րդ տողից, անջատված է իբրև փոխ։ B-ում այդ մասը առանձին խորագրի փոխարեն ունի կարմիր սկզբնատառ, իսկ C-ն՝ առանձին խորագրի փոխարեն ունի փոխի համապատասխան նշան [ ]։ D-ն տաղի և փոխի անջատում չունի։ Հետաքրքրական է, որ և՛ տաղի, և՛ փոխի առաջին երկու տողերը (1—2-րդ և 12—13-րդ տողեր) իրենց բանաստեղծական չափով (11 վանկանի) տարբերվում են բանաստեղծության մնացյալ հատվածից (15 վանկանի)։ Սա, իր հերթին վկայում է, որ տվյալ միավորի իբրև տաղ ու փոխ ներկայանալու հանգամանքը գիտակցաբար է կատարված և հենց հեղինակի կողմից։ Նույնպիսի առանձնահատկություն ունի նաև Ներսես Շնորհալու* Այսաւր նորահրաշ լոյսն... *տաղը։*

## 56

### ԴԸ. ՆՈՐԱՀՐԱՇ ԱՐԵԳԱԿ ԻՄԱՆԱԼԻ... *(էջ 269)*

*Հրատարակվում է առաջին անգամ։*

*Հայտնի է նաև № Ma XIII 61 (Տյուբինգեն, թերթ 212բ—214բ) ձեռագրից։ Բոլոր օրինակները (բացառությամբ C-ի) խորագրում պահպանել են հեղինակի անունը։*

Ծայրակապը ևս հոդում է հեղինակի անունը։ Բացի այդ, Հայկազյան բառարանում ասկետիպ բառի համար բերված օրինակը քաղված է սույն բանաստեղծությունից, որը հիշված է իբրև Ներսես Շնորհալու ստեղծագործություն։

Բնագիրը ներկայացված է եռատող տներով, որոնցից յուրաքանչյուրն ավարտվում է ո՜վ սուրբ Հռիփսիմէ բառերով. գրված է ազատ տաղաչափությամբ. անհանգ է։ Բոլոր օրինակները կից ունեն Առաւօտ լուսոյ արեւելեան... փոխը։ D-ում տնավերջի Հռիփսիմէ բառը առկա է միայն առաջին երկու տներում, իսկ մյուսներում սղված է. բնագրի տողատակի տարընթերցումներում այդ սղումների մասին ոչ մի նշում չկա։

## ԴԹ. ԱՌԱՒԱՒՏ ԼՈՒՍՈՅ ԱՐԵՒԵԼԵԱՆ... *(էջ 271)*

Հրատարակված է.

ա. Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 468—471։*

Հայտնի է նաև այլ ձեռագրերից։ Հնագույն աղբյուրներում գերազանցապես փոխ է, իսկ հետագայի գրչագրերում հանդիպում է նաև իբրև տաղ կամ մեղեդի, աւ հաճախ Ներսեսի անունով. այդպիսի օրինակները երբեմն հանդես են գալիս մասնատված, ընդ որում, 21-րդ տողից սկսվող հատվածը (սկ.՝ Կենդանի վըկայք...) անջատված է լինում իբրև փոխ. այդպես է բնագրի համար օգտագործված E օրինակը։։ Բանաստեղծությունն իր ծայրակապով ամբողջացնում է կից հանդես եկող տաղի (տե՛ս ԴԸ) ծայրակապային շղթան և կազմում մեկ լրիվ նախադասություն, որտեղ առկա է նաև հեղինակի անունը՝ «Ներսեսի+Առ Հռիփսիմե կոյսն է»։

Բնագիրը ներկայացված է քառատող տներով։ Կազմված է 11 վանկանի տողերից. անհանգ է։ ABCD օրինակները, նաև № Ma XIII 61 (Տյուբինգեն) ձեռագրում գտնվողը կից են Նորաճրաշ արեգակ իմանալի... տաղին։ E և F օրինակները ներկայանում են իբրև տաղ։

57

## Ծ. ԵՐՋԱՆԻԿ ՀՈԳԻԱՀՐԱՇՔ... *(էջ 274)*

Հրատարակված է.

ա. Inno a Santa Ripsima [traduzione di **Luigi** Carrer]. (*տե՛ս* Storia di Agatangelo, versione italiana..., Venezia, p. 226—232).

Հրատարակվածը ձեռագիր օրինակների համեմատությամբ ունի բնագրային փոքր տարբերություններ և բաղկացած է 96 տողերից (վերջին երկու տները՝ 93—100-րդ տողերը բացակայում են)։ Մեր օգտագործած ձեռագրերում տաղն անհեղինակ է, բայց Հայկազյան բառարանում մի շարք բառերի համար բերված օրինակները, որոնք քաղված են սույն բանաստեղծությունից, հիշված են իբրև Ներսես Շնորհալու հեղինակություն. Նրա անունով է հանդես գալիս նաև տպագիրը, որի համար հիմք են ծառայել հինգ ձեռագիր աղբյուրներ։ Պարզ է ուրեմն, որ և՛ Հայկազյան բառարանը կազմողներին, և՛ իտալերեն թարգմանությունը ներկայացնող հրատարակչին բանաստեղծությունը հայտնի է եղել իբրև Ներսես Շնորհալու ստեղծագործություն։ Վերջինիս տաղերի վենետիկյան հրատարակության մեջ ընդգրկված Հռիփսիմյանց տոնին հատկացված և միևնույն սկզբնատողով հանդես եկող բանաստեղծությունը խնդրո առարկա



օրինակի համեմատությամբ ունի բնագրային նկատելի անհամապատասխանություններ։ Պիտի ենթադրել, որ տվյալ դեպքում գործ ունենք տաղի երկու տարբեր մշակումների հետ, ըստ այդմ էլ, իբրև առանձին տարբերակ ներկայացրել ենք նաև այդ օրինակը (տե՛ս Ծա)։

Բնագիրը ներկայացված է քառատող տներով։ Կազմված է 8 վանկանի տողերից (երբեմն՝ 7 վանկանի). անհանգ է։ Բանաստեղծության վերջին երկու տները (93—100-րդ տողեր) բովանդակային առումով առանձնանում են ամբողջից և հանդես են գալիս իբրև սովորական ավարտ, որը կարող էր կցված լինել տաղին ոչ անպայման հեղինակի կողմից։ Քննական բնագրում այդ հատվածը անջատել ենք աստղանիշով։ Հետաքրքրական է, որ իտալերեն թարգմանության մեջ հիշյալ տներն առհասարակ չկան։ Տաղի բոլոր օրինակները ներկայանում են առանց փոխի։

## Ծա. ԵՐՋԱՆԻԿ ՀՈԳԻԱՀՐԱՇ... *(էջ 280)*

Հրատարակված է.

ա. Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 471—473։*

Հայտնի է նաև այլ ձեռագրերից։ Աղբյուրներում հանդես է գալիս առանց հեղինակի անվան հիշատակության։ Նախորդից (Ծ) տարբերվում է և՛ ծավալով, և՛ բովանդակությամբ ու կարող է դիտվել իբրև տարբեր մի մշակում։ Բնագիրը ներկայացված է քառատող տներով։ Կազմված է 8 վանկանի տողերից (երբեմն՝ 7 վանկանի). անհանգ է, բայց հանդիպում են հանգավորված տողեր, երբեմն՝ տներով։ Աղբյուրներում բանաստեղծությունը հանդես է գալիս առանց փոխի։

58

## ԾԱ. ՆՈՐԱՀՐԱՇ ՏԵՍԻԼ... *(էջ 284)*

Հրատարակված է.

ա. Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 475—476։*

Հայտնի է նաև այլ ձեռագրերից։ Խորագրերում հաճախ առկա է հեղինակի անունը, որը հոդում է նաև ծայրակապը։ Բնագիրը ներկայացված է երկտող տներով։ Յուրաքանչյուր տան առաջին տողը 13 վանկանի է (հինգերորդ տան առաջին տողը 14 վանկանի է), իսկ երկրորդ տողը՝ 14 կամ 15 վանկանի. անհանգ է։ ABD օրինակները կից ունեն Լոյսն անեղական... փոխը։ E-ին կից առկա է ուրիշ փոխ՝ Եւ Տրդատ գոռոզ արքայն..., իսկ C և F օրինակները հանդես են գալիս առանց փոխի։

## ԾԲ. ԼՈՅՍՆ ԱՆԵՂԱԿԱՆ... *(էջ 286)*

Հրատարակվում է առաջին անգամ։

Այլ ձեռագրերից հայտնի չէ։ Բոլոր աղբյուրներում հանդես է գալիս իբրև փոխ ու կից է Նորահրաշ տեսիլ... տաղին։ Բնագիրը ներկայացված է երկտող տներով։ Յուրաքանչյուր տան առաջին տողը 13 վանկանի է, իսկ երկրորդ տողը՝ 8 վանկանի (կան խախտումներ). անհանգ է։

## 59

### ՃԳ. ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԶԱՒՐՈՒԹԻՒՆ... *(էջ 288 )*

*Հրատարակված է.*

ա. Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 478—484։*

*Հայտնի է նաև այլ ձեռագրերից։ Խորագրերում հաճախ առկա է հեղինակի անունը, որը հոդում է նաև ծայրակապը։ Ձեռագրի թերթերի մաշվածության հետևանքով A օրինակի որոշ բառեր անընթեռնելի են կամ ջնջված. բնագրի տարընթերցումներում այդ բառերը ներկայացված են հենց այդպիսի թերի վիճակում։*

## 60

### ՃԴ. ՆՈՐԱՀՐԱՇ ՏԱՒՆԻՍ ԿՈՒՍԱԿԱՆ... *(էջ 297)*

*Հրատարակված է.*

ա. Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, էջ 485—491։*

*Հայտնի է նաև այլ ձեռագրերից։ Խորագրերում հաճախ առկա է հեղինակի անունը, որը հոդում է նաև ծայրակապը։*

## 61

### ՃԵ. ԱՍՏՈՒԱԾ ԱՆԵՂ... *(էջ 307)*

*Հրատարակվում է առաջին անգամ։*

*Հայտնի է նաև № Ma XIII 61 (Տյուբինգեն, թերթ 121ա), 231 (Երուսաղեմ, թերթ 252ա) և 98 (Անթիլիաս, թերթ 213բ) ձեռագրերից։ Λ և D օրինակները, նաև Անթիլիասի ձեռագրում գտնվողը, իրենց խորագրերում պահպանել են հեղինակի անունը* (Ներսիսի կարողիկոսի), *իսկ ծայրակապը հոդում է այլ բառակապակցություն՝ «Անմահից քարոզ»։*

## 62

### ՃԶ. ՆՈՐ ԱՒՐՀՆՈՒԹԻՒՆ ԸՆԴ ՀԱՅՑՈՒԱԾՈՑ... *(էջ 322)*

*Հրատարակված է.*

*ա. Կանոն օրհնութեան սրբալոյս մեռոնին, էջ 37—44։*

*Հայտնի է նաև Զմմառի № 118 ձեռագրից (թերթ 14բ)։ Հեղինակի մասին հիշատակված է C-ի խորագրում, նաև տպագրում։ Ծայրակապը նույնպես հոդում է Ներսեսի անունը։ Գանձը, որպես կանոն, ընդգրկված է Հայր Մաշտոցներում։ Վերջիններս, ի տարբերություն սովորական Մաշտոցների, բովանդակում են եպիսկոպոսի և կաթողիկոսի ձեռնադրության կանոնները, մի արարողություն, որը իրավասու էր կատարել սոսկ հոգևոր բարձրագույն դասի ներկայացուցիչը՝ կաթողիկոսը (նրա չգոյության դեպքում՝ եպիսկոպոսները)։ Կիրառության այս սեղմ շրջանակով էլ պիտի բացատրել հիշյալ ժողովածուների խիստ սահմանափակ թիվը և տպագիր հրատարակությունների բացակայությունը։ Հայր Մաշտոցներում մյուռոնօրհնության կանոնը բերված է կաթողիկոսի ձեռնադրության կանոնին կից. դա միանգամայն հասկանալի է, քանի որ այդ ծեսը եղել է կաթողիկոսի մենաշնորհը։ Կանոնն ամբողջությամբ, ներառյալ Ներսես Շնորհալու գանձը, զուտ գործնական նկատառումներով առանձնացվել է Մաշտոց ժողովածուներից ու հրատարակվել 1876 թվականին Էջմիածնում, փոքրաթիվ օրինակներով։ Խնդրո առարկա գանձը, որ ներկայանում է իբրև «Տեառն Ներսէսի քարոզ», հաջորդում է մի շարք սաղմոսների, ընթերցվածների ու աղոթքների, ի թիվս նրանց նաև մի մեղեդու՝* Հայր ամենակալ, որ առաքեցեր... *սկզբնատողով։ Տպագրում սույն մեղեդու և համապատասխան գանձի մասին հիշատակություն կա նաև կանոնի վերջում, ուր նշված է, թե արարողության ավարտին «երգեն դպիրք զմնացորդս մեղեդւոյ սրբոյ մեռոնի՝* «Հայր ամենակալ...», *և զմնացորդս քարոզի տեառն Ներսիսի» (էջ 36)։*

*Մյուռոնօրհնությանը նվիրված մեղեդու ու գանձի այս առնչությունը ստեղծում է համակարգային մի պատկեր, որը հիշեցնում է Գանձարանի* գանձ-տաղ-փոխ-մեղեդի *համակարգը։ Այն իրողությունը, որ բոլոր աղբյուրներում մեղեդին անհեղինակ է ու միշտ հանդես է գալիս Ներսես Շնորհալու գանձից անբաժան (դրանք միմյանցից անջատված են մի քանի սաղմոսներով ու ընթերցվածներով), ինքնըստինքյան ենթադրել է տալիս վերջինիս հետ միաժամանակ ու միևնույն հեղինակի կողմից հորինված լինելու հնարավորությունը (կից ներկայացնում ենք մեղեդու քննական բնագիրը)։*

*Այսպիսով, ի տարբերություն Ներսես Շնորհալու մյուս գանձերի, նրա «Նոր օրհնութիւն ընդ հայցուածոց...» բանաստեղծությունը ներկայանում է ոչ իբրև գանձարանային միավոր։ Մաշտոցներում, ինչպես հայտնի է, հաճախ են հանդիպում և՛ գանձեր, և՛ տաղեր։ Դրանք, սակայն, մեծ մասամբ կապվում են առավել ուշ շրջանի հետ ու գերազանցապես թաղման ծեսին վերաբերող ողբանման ստեղծագործություններ են։ Ներսես Շնորհալու անունով պահպանված այս գանձը առայժմ մեզ հայտնի հնագույն նմուշն է, որը գրված է գանձարանային սկզբունքներով և ունի ծիսական կիրառություն։ Ներսես Շնորհալուց հետո, ու թերևս նրա հետևությամբ, նման փորձ կատարել է Մխիթար Այրիվանեցին, որի այդ բնույթի բանաստեղծությունները, սակայն, դուրս չեն եկել Գանձարանների շրջանակից և պահպանվել են խիստ սակավ ընդօրինակություններով (հիշյալ ստեղծագործությունների մասին տե՛ս Գ. Հովսեփյան, Մխիթար Այրիվանեցի, Նորագիւտ արձանագրութիւն և երկեր, Երուսաղեմ, 1931, էջ 6—8։ Նաև՝* Է. Հարությունյան, *Մխիթար Այրիվանեցու «Գանձարանը», «Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 3, էջ 110—111)։ Ինչ վերաբերում է մյուռոնօրհնությանը հատկացված Ներսես Շնորհալու գանձին, ապա վերջինիս լայն կիրառությանն ու առ այսօր օգտագործվելուն անշուշտ նպաստել է նաև տվյալ կանոնի նշանակությունն ու կարևորությունը։ Հայտնի է, որ ինքը՝ Ներսես Շնորհալին, կարգավորել է եկեղեցական շատ կանոններ ու զբաղվել ծիսական արարողությունների հետ կապված զանազան հարցերով։ 1165 թվականին Մամեստիայում գրած Դավանության իր թղթում, որն ուղղված է Մանվել կայսեր փեսա դուքս Ալեքսին, հեղինակն, ի թիվս մի քանի այլ ծեսերի ու սովորությունների, անդրադառնում է նաև մյուռոնօրհնությանը։* Ղ. Ալիշանի *կարծիքով, հենց հիշյալ գանձի առկայությունը վկայում է այն մասին, որ Ներսես Շնորհալին «Մյուռոնօրհնեից բովանդակ կանոնն ալ ինքն նորեն կարգավորեր և ճոխացուցեր է, հավասար ուրիշ եկեղեցական հանդիսից և տոնից. այսպես բարեզարդելով այն կաթողիկոսաց սեփական արարողությունն ալ՝ փոխանակ մեզադրանացն ստաբաց՝ ձեթենվո յուղով չըլլալուն համար» (տե՛ս* Ղ. Ալիշան, *Շնորհալի և պարագայ իւր, էջ 449)։*





27—102

### Մեղեդի միւռոնօրհնութեան

*Հայր ամենակալ, որ առաքեցեր զմիածին Որդիդ քո*
*Ի փրրկութիւն մարդկան,*
*Հեղեր եւ զՀոգւոյդ պարգեւս.*
*Հե՛ղ զորդեգրութեան քո զշնորհս յիւղս յայս քեզ նուիրեալ։*

*Որդի Աստուծոյ, իւղ թափեալ անուն*
*Աւծեալ քան զընկերս.*
*Ուրախութիւն իւղով, զոր հեղեր ի դասս առաքելոցն,*
*Հե՛ղ զորդեգրութեան քո զշնորհս յիւղս յայս քեզ նուիրեալ։*

*Հոգիդ ճշմարիտ յաւծումն աւծելոյ,*
*Որ եւ ծընար իսկ*
*Աւծմամբ այսու ըզմեզ Աստուծոյ շնորհիւ.*
*Հե՛ղ զորդեգրութեան քո զշնորհս յիւղս յայս քեզ նուիրեալ։*

*Երրեակ միութիւն միաստուածութեան,*

---

**Աղբյուրներ**

A—*ձեռ. № 1043, թերթ 94բ—95ա։*
B—*ձեռ. № 1088, թերթ 60բ—61ա։*
C—*ձեռ. № 953, թերթ 467աբ։*
D—*Կանոն օրհնութեան սրբալոյս մեռոնին, էջ 20—23։*

**Խորագիր**

AC *Եւ ապա ասեն զմեղեդիս անուշ* (C *անոյշ*)։ B *Եւ ապա ասեն մեղեդի անուշ։* D **տե՛ս վերևում:**

**Բնագիր**

*1* B *Այր* **փխ** *Հայր։* D *ըզմիածին։* AB *Որդիտ։* D **չիք** *քո։*
*2* B *փրկութիւն։*
*3* ABCD *զՀոգոյդ։*
*4* AB *զորդէգրութեան։* C *զորդէգրութիւն։* ABD *ըզշնորհս։* A *յեւղս։* B *յեաւղս։* D *յիւղըս։* C *այս։* A *նըւիրեալ։* B *նուիրեալս։* D *նըուիրեալ։*
*5* A *եւղ։* B *եաւղ։*
*6* B *Յաւծեալ։* D *Օծեալ։*
*7* D *Ուրախութեան։* D *առաքելոց։*
*8* AB *Հեղ զորդ* **փխ տողի:** C *զորդէգրութիւն։* D *ըզշնորհս։* D *յիւղըս։* C *այս։* D *նըուիրեալ։*
*9* B *Հոգիտ ճշմարիտ։* A *աւծումն։* CD *օծումն։* AB *աւծելոյ։* C *օծելոյ։* D *օծելոց։*
*10* D *ծընանիս* **փխ** *ծընար իսկ։*
*11* C *Օծմամբ։* D *Օծմամբս։* B *զմեզ։*
*12* AB *Հեղ զորդ* **փխ տողի:** C *զորդէգրութիւն։* D *ըզշնորհս։* D *յիւղըս։* C *այս։* D *նըուիրեալ։*
*13* D *Երեակ։* D *միաստուածութիւն։*



*Քեզ վերագոչեմք ընդ սերովբէսըն՝ Սուրբ, սուրբ, սուրբ.*
*Սրրբեա՛ զընծայս խորհըրդոյ ի վերածընելոցըն*
*Սովաւ երգել յաւէժ քեզ փառք։*

**63**

## ՃԷ. ԱՅՍՕՐ ԵՐԵՒԻ ԱՆՏԵՍՆ Ի ԲԱՐՁԱՆՑ... *(էջ 333)*

*Հրատարակված է.*
ա. *«Բազմավէպ», 1907, № 2, էջ 62։*

*Հայտնի է նաև մի շարք այլ ձեռագրերից։ Սովորաբար ներկայանում է իբրև տաղ. որոշ դեպքերում կոչվում է* **մեղեդի** *(տե՛ս, օրինակ, ձեռ. № 424, թերթ 15ա: 473, թերթ 14բ։ 2707, թերթ 18բ)։ Գերազանցապես նվիրված է Աստվածածնի Ավետմանը, իսկ երբեմն՝ Ծննդյան տոնին (*F *և* G *օրինակներ, նաև № 231 (Երուսաղեմ), թերթ 365ա)։ Խիստ սակավ դեպքերում տաղը հանդես է գալիս իբրև փոխ (*B *օրինակ) կամ հորդորակ (ձեռ. № 5936, թերթ 254ա։ 7888, թերթ 60ա—61բ)։ Աղբյուրներում տաղը հաճախ անհեղինակ է։* F*-ը Ներսես Լամբրոնացու անունով է, իսկ* C *և* G *օրինակները՝ Ներսես Շնորհալու։* D*-ի* **Նոյն Ներսեսի,** *և № 1193 (Երուսաղեմ, թերթ 552) ձեռագրի* **Նորին** *է խորագրային նշումները նույնպես նկատի ունեն Ներսես Շնորհալուն, քանի որ նախորդող միավորները պատկանում են նրա գրչին։ Պետք է նկատել, սակայն, որ այդ բոլորը համեմատաբար ուշ շրջանի ընդօրինակություններ են (*G *օրինակը, ըստ հրատարակչի, ԺԶ դարից է), ուստի տվյալ տաղի հեղինակային վերագրումները կարոտ են հետագա ճշգրտման։*

*Բնագիրը չի տնատված։ Կազմված է 10 վանկանի տողերից. անհանգ է։ Ձեռագրերի մեծ մասում տաղը ներկայանում է առանց համապատասխան փոխի։ № 7888 ձեռագրում գտնվող օրինակը (թերթ 60ա—61բ), որը կից է գանձի, բայց հանդես է գալիս ոչ իբրև տաղ, այլ հորդորակ, 22-րդ տողին կից լուսանցքում (սկ.՝* **Նորասխանչ է բանս...**) *ունի Փ[ոխ] նշումը։*

**64**

## ՃԸ. ԱՆՄԱՀԻՑ ԱՐՔԱՅՆ... *(էջ 336)*

*Հրատարակվում է առաջին անգամ։*

*Հայտնի է նաև այլ ձեռագրերից։ Գերազանցապես ներկայանում է իբրև տաղ, մերթ՝ իբրև մեղեդի։* C*-ն հորդորակ է ու կից* **Նոր ծաղիկ բղխէ...** *տաղին։ Աղբյուրներից երկուսում (*D *և* F*) տաղը պահպանված է Ներսես կաթողիկոսի անունով, մնացյալներում անհեղինակ է։ Սույն միավորը բովանդակող բոլոր ձեռագրերը հետագայի ընդօրինակություններ են, ուստի հեղինակային վերագրումը թելադրում է ցուցաբերել որոշ վերապահություն։*

*Բնագիրը ներկայացված է երկտող տներով։ Կազմված է 11 վանկանի տողերից. հանգավորված է ըստ տների, թեև կան խախտումներ։ Բանաստեղծությունը, որ տների*

---

*14* A *սէրովբէսըն։* B *սէրոբէսըն։* D *քերովբէսն* **փխ** *սերովբէսըն։*
*15* B *Սրբեայ։* B *խորհըրդո։* D *խորհըրդոցն։* AC *վերածնեցելոցըն։*
*16* D *փառս։* D **կրկ.՝** *երգել յաւէժ քեզ փառս։*

սկզբնատառերով հոդում է այբուբենի տառերը, թերի է և ենթարկված խմբագրման։ Աղբյուրների մի մասում առկա է սոսկ առաջին մասը՝ 1—24-րդ տողերը («Ա—Լ» ծայրակապով), որին հաջորդում է մի երկտող՝ իբրև ավարտ։ ABC օրինակներն առավել ընդարձակ են՝ համապատասխան ավարտով, չնայած ծայրակապը («Ա—Ո») դեռևս չի ամբողջացնում այբուբենը։ B-ի վերջում սխալմամբ կցված է մի քառատող՝ Հովհաննես Երզնկացու Առաջնաճաշակ պլտղոյն... տաղից, իսկ C-ն 37—48-րդ տողերի փոխարեն ունի բոլորովին այլ շարադրանք։ Որոշ աղբյուրներում բանաստեղծության զանազան մասերը (17-րդ կամ 27-րդ տողերից սկսած) անջատված են իբրև փոխ։

Հետաքրքրական է, որ Մատենադարանի ձեռագիր երկու աղբյուրներում (№ 7785 և 424) մեզ հանդիպել է նույնպիսի սկսվածքով տաղային մեկ այլ միավոր։ Վերջինս ևս կազմված է 11 վանկանի տողերից, հանդես է գալիս իբրև փոխ՝ հատկացված Ծննդյան կամ Աստվածածնի Ավետյաց տոներին, բայց անհանգ է, իսկ բովանդակային համապատասխանությունը սահմանափակված է առաջին երկու տողերով։ Հիշյալ միավորը, որի բնագիրը բերում ենք ստորև, անհեղինակ է։

Այս բոլորը վկայում են այն մասին, որ Անմահից արքայն... տաղի մեզ հասած օրինակները ենթարկված են այնպիսի խմբագրման ու փոփոխության, որ այժմ դժվար է վերականգնել այն՝ իր սկզբնական անաղարտ տեսքով ու ճշտել նրա հեղինակային պատկանելությունը։

**Փ Ո Խ**

*Անմահից արքայն եւ սրովբէից անտեսն,*
*Յերկնից ի յերկիր խոնարհեցաւ կամաւ։*

*Զհրեշտակն առաքէր ողջունաբեր Կուսին՝*
*Պատրաստել տեղի իջման Հոգւոյն Սրբոյ։*

*Ուստի հրեշտակին զեկուցանել Կուսին*
*Զաւետիս կենաց, զոր շնորհելոց էր մեզ։*

*Խաղայր Գաբրիէլ հրեշտակապետն յերկնից,*

Աղբյուրներ

A—ձեռ. № 7785, թերթ 66ար։

B—ձեռ. № 424, թերթ 15աբ։

Խորագիր

A Փ[ոխ. Ծննդեան]։ B անխորագիր [Աւետեաց Աստուածածնի]։

Բնագիր

1 B սրբովբէիցըն։ B Տէրն փխ անտեսն։

4 B Հոգոյն։

5 B հրբեշտակին։ B ծանուցանել փխ զեկուցանել։

6 B շնորհելով։

7 B Իջեալ փխ խաղայր։ A երկնից։



*Յայտնէր ըզխորհուրդ Երրորդութեան առ Կոյսն։*

*Ի յականչ Կուսին ձայն աւետեաց գոչէր.*
*—Ուրախ լե՛ր, բերկրեալ, կոյս յըղացեալ ըզԲանն։*

*Կոյսըն զարմանայր ընդ աւետիս նորին,*
*Ուստի եկն ողջոյնս ուրախութեան երկնից։*

*Աստղըն գուշակէր արեւելից մոգուցն,*
*Եկեալ ի վերայ ուր ծընանէր զՅիսուս։*

*Լոյս ճառագայթեալ յարեւելից մոգուցն,*
*Յանբանից մըսուր ի խանձարուրս եդեալ։*

*Մոգքն յարեւելից ընծայաբերք եկին,*
*Զոսկին եւ զկընդրուկըն մատուցին փըրկչին։*

*Կոյսըն ծընանէր զամենեցուն փըրկիչն,*
*Հովիւքն երգէին՝ փա՜ռք ի բարձունըս Տեառն։*

**65**

**ՃԹ. ՔԵՐՈՎԲԷԻՑ ԳԵՐԱԳՈՅՆ...** *(էջ 340)*

Հրատարակվում է առաջին անգամ։

Հայտնի է նաև երկու այլ ձեռագրերից՝ № Ma XIII 61 (Տյուբինգեն, թերթ 146ա) և Cod. Arm. 52 (Լվով, թերթ 37ա, Սերովբէից գերագոյն... սկսվածքով)։ Տաղը նվիրված է Ծննդյան տոնի չորրորդ օրվա երեկոյին, բացառությամբ A-ի, որը հատկացված է երրորդ օրվա երեկոյին։ Բոլոր աղբյուրներում բանաստեղծությունն անհեղինակ է ներկայանում. միայն Լվովի օրինակը պահպանված է Ներսես Շնորհալու անունով (ի Ներսէս կաթողիկոսէ)։ Ղ. Ալիշանը (Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 91), իսկ այնուհետև Ն. Ակինյանը (Ն. Ակինյան, Ներսէս Լամբրոնացի, էջ 232) տաղի հեղինակ ճանաչել են Ներսես Լամբրոնացուն, սակայն չեն մատնանշել, թե ի՞նչ տվյալներ են հիմնավորում այդ վերագրումը։ Տաղը Ներսես Շնորհալուն է հատկացվել Գր. Հակոբյանի կողմից (Գր. Հակոբյան, Ներսես Լամբրոնացի, էջ 177—178)։ Վերջինիս հայտնի չի եղել Լվովի օրինակը, և իր ենթադրությունը նա հիմնավորում է բանաստեղծության լեզվաոճական առանձնահատկություններով (որոնք, իրոք, անհարիր չեն Ներսես Շնորհալուն), նաև հաշվի առնելով այն, որ Մատենադարանի № 7785 ձեռագրում գտնվող օրինակին նախորդում է միևնույն տոնի միևնույն օրվա առավոտյան ժամին հատկաց-

8 B Կուսին փխ առ Կոյսն։

10 B յըղանաւ։ B ըզՏէրն փխ ըզԲանն։

13 B յարեւելեան։

14 B վերաւ։

17 B Մոգնւ

ված հեղինակի մեկ այլ տաղը: Սա, անշուշտ, չի կարող իբրև կռվան ծառայել, որով-հետև ամենևին բացառված չէ, որ ժողովածուում միևնույն տոնի տարբեր օրերի կամ ժամերի համար միմյանց կից ներկայացված լինեն այլևայլ հեղինակների համապա-տասխան ստեղծագործությունները: Ուշագրավ է, սակայն, որ Հայկազյան բառարա-նում մաւրենի, կարմրերփեան, սաւս բառերի բացատրության ժամանակ բերված օրի-նակները քաղված են խնդրո առարկա տաղից, որը հիշված է իբրև Ներսես Շնորհալու. առաջ. նշանակում է՝ բառարանը կազմողներին հայտնի է եղել նրա անունով պահպան-ված մի օրինակ: Բացի այդ, տաղի բոլոր օրինակները (բացառությամբ A-ի) կից ունեն Ողջոյն ընդ քեզ, Մարիամ... փոխը, որն իր տողավերջի աւետիս և մեծ աւետիս բառերի մեկընդմեջ հարակրկնությամբ, նաև տաղաչափությամբ նմանվում է Հարու-թյան տոնին հատկացված Ներսես Շնորհալու Յարեաւ փառաց թագաւորն... փոխին. քնդ որում, տաղաչափական նմանություն նկատվում է նաև կից հանդես եկող տաղի (Նոյնագոյ ընդ Հաւր...) և խնդրո առարկա՝ Քերովբէից գերագոյն... տաղի միջև: Այս-պիսով, առկա տվյալները վկայում են գերազանցապես Ներսես Շնորհալու օգտին, մանավանդ որ Ծննդյան տոնին նվիրված նրա տաղերի շարքում, ուր յուրաքանչյուր օր սովորաբար ներկայացված է զույգերով (առավոտյան և երեկոյան ժամերի համար), չորրորդ օրվա համար առկա է միայն մեկը:

Բնագիրը ներկայացված է երկտող տներով, կազմված է 8 վանկանի տողերից. Տաղի վերջին գրված է անհանգ (սկզբի տներից մի քանիսը՝ տների շղթայումով): Տաղի վերջին տողն ավարտվում է աւետիս, մեծ աւետիս բառերով, որով և առնչվում է կից հանդես եկող՝ Ողջոյն ընդ քեզ, Մարիամ... փոխի հետ: A-ն կից ունի Նոր թագաւորին ան-ժամանակ... միավորը, իբրև փոխ:

## ՃԺ. ՈՂՋՈ՜ՅՆ ԸՆԴ ՔԵԶ, ՄԱՐԻԱՄ... *(էջ 342)*

*Հրատարակվում է առաջին անգամ:*

Հայտնի է նաև № Ma XIII 61 (Տյուբինգեն) և Cod. Arm. 52 (Լվով) ձեռագրե-րից: Միշտ հանդես է գալիս իբրև փոխ: Բնագիրը ներկայացված է երկտող տներով: Յուրաքանչյուր տան առաջին տողը 11 վանկանի է, իսկ երկրորդ տողը՝ 13 վանկանի (կան խախտումներ): Անզույգ տողերն ավարտվում են աւետիս, իսկ զույգ տողերը՝ մեծ աւետիս բառերով: Իր այս առանձնահատկությամբ տվյալ միավորը նմանվում է Ներսես Շնորհալու Յարեաւ փառաց թագաւորն... փոխին, որին նմանվում է նաև իր տաղաչափությամբ: Բոլոր աղբյուրներում բանաստեղծությունը կից է Քերովբէից գե-րագոյն... տաղին, որն ավարտվում է աւետիս, մեծ աւետիս բառերով, և դրանով իսկ տաղն ու փոխը առնչվում են միմյանց հետ:

**66**

## ՃԺԱ. ԱՒԵՏԻ՜Ս, ՄԻՇՏ ԱՒԵՏԵԱՑ... *(էջ 344)*

*Հրատարակված է.*

*ա. «Բազմավէպ», 1932, էջ 264, (հրատ.՝ Ե. Փեչիկյան):*

Հայտնի է նաև այլ ձեռագրերից: Սովորաբար ներկայանում է իբրև տաղ, իսկ կից հանդես են գալիս տարբեր փոխեր (Սեաւ եմ գեղեցիկ..., Ով քաղցրաձայնեալ..., Ո՜վ կանայք, զարթիք, տեսէք...): Բանաստեղծությունը հանդիպում է նաև իբրև մեղեդի, (տե՛ս ձեռ. ... ընդ որում, շատ ավելի փոքր ծավալով՝ առաջին 7 կամ 11 տողերը միայն (տե՛ս ձեռ.



№ 427, թերթ 41ա: 430, թերթ 168ա: 474, թերթ 196բ): C-ի վերջում պահպանված է գրչի հետևյալ հիշատակարանը. «Քրիստոս Աստուած, քո սուրբ չարչարանաւքդ և սուրբ յարութեամբ ողորմեա երգողի սոցա՝ տեառն Ներսիսի, և եղկելի գծողիս՝ Յո-հաննիսի» (թերթ 365բ): Պետք ասել, որ տվյալ միավորին նախորդում են Հարության տոնին նվիրված Ներսես Շնորհալու մի խումբ տաղեր: Ձեռագրի գրչի տված այդ տե-ղեկության հիման վրա տաղի հիշյալ օրինակը հրատարակվել է «Բազմավէպում» իբրև Ներսես Շնորհալու ստեղծագործություն, բայց մեզ հայտնի օրինակներից ոչ մեկը խո-րագրում հեղինակի անունը չի պահպանել, իսկ հիշատակարանի այդ նշումը բավարար հիմք չենք համարել:

